Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99-192
Ա-13

ՎԱՋԳԷՆ

ԵՐԳԱՐԱՆ

ԳՔԻՔԱՖԵՑ

ՏԻԳՐԱՆ ՏԷՐՈՅԵԱՆ

(ՎԱՋԳԷՆ)

Նահատակած յունուար 2, 1898



ՊՕՍԹՐԸՆ
ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի
61 Essex st. Boston, Mass. U. S. A.
1901

73.239

07 AUG 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ա. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

5658-70.

26 NOV 2011



Յորոյտան արեւուտք չեր աւերգիւն,
Զոր չնորհեցիք հայ ազգին,
Երջոյս վիրաց վիրաւորեալ
Հիւանդ արեամբ չեր՝ ալ կենաց.
Ո՜հ, ընկիր տառապեալ քրիստոնեի
Չեր առեալոհ գոյժ ապրեցիս:
Չեր առաջ չիրաց ոխտ գաղ
Երկրագեալ է ձեր աչարտ,
Չեր առաջ աւետաւած գանիլ երգար
Դարուց իրարու աչարտ է ձեզ:
Օհ, հանգիստ ընդ չեր հոգիք,
Չեզ ընկ տառապեալ հաւատարիք:

Լուսաստաւած վազգէնի ձեռագրէն

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ

Երգերու այս հաւաքածուն հրատարակելով՝ մեր նպատակն է եղած գոհացնել այն պահանջը որ լաւ երգարանի մը համար կ'զգացւի ամբողջ հայութեան մէջ։ Երգը ժողովուրդի մը զգացումներուն, վիճակին արտայայտութիւնը, պատկերացումն է։ Մեր ընդվզումի այս օրերուն, մարտնչումի ու պատերազմի հոգեչունչ տաղերը մեծ դեր ունին կատարելիք։ Ոչ Թիւրքիոյ, ոչ ալ Ռուսիոյ մէջ կարելի էր այսպիսի հատոր մը լոյս բերել։ Ու մենք ուրախ ենք, որ կարող ենք այսօր հրատարակել քաջամարտիկ վազգէնի հաւաքած հին ու նոր երգերու այս հատորը, որ նաև յիշատակ մը պիտի մնայ իր անմոռաց անունին։

Հրատարակիչները



Միայն թէ կարքն է որ գիս կը մղէ,
Առաջ միշտ առաջ, հոգ չէ թէ փուշ է.
Կարքիս հետ ես ալ կը կրկնեմ առաջ,
Թող ամբողջ կեանքս դառնայ սոսկ հառաչ։

ՎԱԶԳԷՆ

ՏԻԳՐԱՆ ՏԷՐՕՑԵԱՆ (ՎԱԶԳԷՆ)

1873—1898

«Յառաջ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել, փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինենք»։ ՎԱԶԳԷՆ

(«Դրօշակ», 1896 թիւ 19)

Հայ յեղափոխութեան փայլուն աստղերէն մէկը և մէկը վաստակաւորներէն — Տէրոյեան Տիգրան ծրնած է Վանի Ցայնկոյսներու Թաղը, 1873ին, բարեկեցիկ ընտանիքի մը մէջ։

Հայրը, արհեստով դերձակ, կարևոր դեր խաղացած է Պօղոս—Ապօղոսեան կռիւներու առեն. ինքը, ապօղոսեան մը (ազատամիտ), մեծամեծ զոհողութիւններ ըրած էր իր գաղափարներու յաղթանակին համար։

Արժանաւոր հօր արժանաւոր զաւակը եղաւ Տիգրան, իր կարճ բայց բեղմնաւոր կեանքին մէջ, որուն քանի մը գծերը միայն արձանագրել պիտի կրնանք հոս։ Տիգրանի կեանքը այնքան սերտիւ կապուած է Վանի արդի ապրող սերունդին հետ, որ խոհեմութիւնը կը հարկադրէ մեզի սակաւախօս ըլլալ շատ մը անցքերու մասին, ապագայի պատմագրին թողնելով անոր լրիւ կենսագրութիւնը գրել փորձելը։

Տիգրան դպրոցին մէջ եղած է շատ ուշիմ ու աշխատասէր աշակերտ մը և միանգամայն խոհուն ու լուրջ. այդ երկու պարագաները ընկերներու նախանձը չարժած են և պատճառ եղած որ Տիգրան կղզիացած ապրի իր դպրոցական չրջանին մէջ։ Ուսուցիչները գնահատած էին սակայն

այդ լուակեաց պատանին և անոնց բարեխօսութեամբ ալ Տիգրան կրցաւ մանել համբաւաւոր կեդրօնական վարժարանը, որ ինքնաճանաչումի և ապա ըմբոստացումի գաղափարին գլխաւոր վառարանն եղած էր վաստպուրականի նոր սերունդին համար: կեդրօնականը կը գոցէր սակայն 1885ին և վազգէն իր ընթացքը չաւարտած՝ կեանքին մէջ կը նետուէր, հօրը արհեստը ձեռք կ'առնէր իր բազմանդամ ընտանիքը պահելու համար:

Այդ միջոցին կենդանի շարժում մը սկսած էր ուսանող սերնդին մէջ. կեդրօնականի աշակերտները թափած էին Ցայնկոյներու վարժարանը ուր կը դասախօսէին Ագրիպպասեանի և Աւետիսեանի պէս խանդավառ ու գաղափարական ուսուցիչներ: Դպրոցականներու խումբ մը կազմուած էր արդէն, ինքնազարգացման աշխատելու, ուր եռանդը կ'եռար:

Շատ չանցաւ Տիգրան ընկերացաւ ատոնց, սակայն հաւատարիմ իր նկարագրին՝ համեստ, զգուշաւոր դիրք մը բռնեց միշտ. իր խանդավառ ընկերակիցներուն մէջ, և գաղափարակիցներու անձուկ շրջանակի մը մէջ առանձնացած, գործելէն աւելի կը դիտէր և կ'ուսումնասիրէր զինքը շրջապատող չարժումը: Այդ միջոցին Տիգրան դերձակուած, վարժապետ եղած էր, ընարելով այն ճամբան, որ այն ատեններս մխիթը կը համարէր ժողովրդին օգտակար ըլլալու համար:

Շարժումը սակայն կը լայնար հետզհետէ, դէպքերը՝ վրէժի, դատաստանի, արդար զայրոյթի նշանակալից դէպքերը կը յաճախէին կամաց կամաց և որոշ գոյն մը կուտային պատրաստուող փոթորիկին, կը պատահէր 1886ի նշանաւոր կռիւը Թիւրք պինուրներու դէմ, Աւետիսեանի կազմակերպութեամբ:

Երիտասարդութիւնը կազմակերպուելու վրայ էր արդէն, կ'զգար իր ահեղ ուժը, աղայութիւնը ջախջախած էր..., Սլլասեռած հոգիները իրենց յուսահատ կատաղութեան մէջ կը դիմէին ամէնաստոր պէնքերու. մատնութիւնը կ'սկսէր

ծագիլ. բայց աքսոր ու բանտը խեղդելու տեղ, աւելի կը հրահրէր նոր չարժումը...:

կը հասնէր վերջապէս 1889 մայիս 26ի տխուր բայց անմոռաց օրը, Զուխա—կեսատուկի կռիւը, ուր հերոսաբար ինկան Յ. Ագրիպպասեան և վարդան Գոլըշեան, այն օրը ուր գաղափարի զինուորներուն արիւնը առաջին անգամ ըլլալով սրբագործեց հայ յեղափոխական չարժումը:

Մե՜ծ էր ազդեցութիւնը. գաղափարը, խօսքի չրջանը անցած էր ալ, գործի թեականը կը բացէր. երկու նահատակներու դիակները կամուրջը կը ձգէին խօսքէն դէպի գործը:

Զուխա—կեսատուկի նահատակներուն հանդիսը արձագանգ տուաւ վաստպուրականէն մինչև կովկաս ու Տարոն:

Վաստպուրականի երիտասարդութիւնը վրէժի բոցով կը տոգորէր:

Քնացող առիւծը արթնցաւ Տիգրանի սրտին մէջն ալ, իր սիրելի ուսուցչին մահը խորապէս ազդեց անոր վրայ և Տիգրան ոգեւորութեան վայրկեանին մէջ երգեց.

Դու ո՛վ ցանկալի վան, իմ հայրենիք,
Սիրոյդ կարօտով մաշիմ ես հերիք...

Այդ ոտանաւորը անհուն յաջողութիւն ունեցաւ վանի մէջ, բայց ոչ ոք կրցաւ գիտնալ անոր հեղինակը. համեստ Տիգրան թղթիկներու վրայ գրած դանէ մը ներս նետած էր:

Գրելով ալ չէր աւարտանար: Տիգրան սկսաւ եռանդուն գործունէութեան — խումբեր կազմակերպել, պատրաստել, ոգեւորել անոնք, թաղային գործերու մէջ ժողովրդին չափերը պաշտպանել աղաներու քմահաճոյքին դէմ — բայց միշտ իր սովորական խոհեմութեամբ, դեռ ո՛չ հասարակութիւնը և ո՛չ ալ կառավարութիւնը կասկած ունէին անոր վրայ:

Հասարակական պայքարն սկսած էր արդէն. գաղափարական բուռն զեռուտի մէջ էր վանի երիտասարդութիւնը: Պետրոն, դաշնակցական այդ անխոնջ գործիչը, մտած էր արդէն վան և սկսած իր փրօփականտան պահպանողական Հեղափոխականներու դէմ: Տիգրան իր խմբերուն հետ չէ-

զոք դիրք մը կը բռնէր դեռ, թէև բարեկամութեամբ կապուած էր Պեռօի հետ, որ յաճախ անոր տան մէջ ապատան գտած էր։

Հակառակ Տիգրանի այնչափ զգուշաւոր ընթացքին, հակառակութեան և թուլսրտութեան չար ոգին անոր ալ հարուածեց. 1893ին Տէրօյեանի տունը խուզարկուեցաւ և Տիգրան ձերբակալուեցաւ։ Տիգրան չաս յաջող կերպով կըրցաւ պաշտպանուիլ, բայց խուզարկութեան առեն դանուած Համառ—Քաթիպալի «վանեցի Գեղջուկ»ը երգը առիթ մը եղաւ տարեան մը բանտարկութեան դատապարտելու։

Տիգրանի ընտանիքը թշուառ վիճակի մէջ կ'իյնայ։ Պեռօն որ տան բարեկամը եղած էր, ընկերաբար դրամական աջակցութիւն մը կ'ուզէ ընել Տիգրանի ընտանիքին։ Ընկերներուն ախորժելի չի գար այդ աջակցութիւնը և կը թելադրեն որ ետ տրուի դրամը։ Պեռօն կ'առաջարկէ այն առեն որ դրամը Տիգրանին խրկուի բանտը, որպէս զի չատախօսի պատճառ մը կ'ըլլայ որ Պեռօի հակառակորդ մարդիկ իրը յանցանք մը նկատեն Տիգրանին համար և թշնամանան հեռը։

Տարեան մը բանտարկութենէ ետք, Տիգրան ևս աւելի յեղաշրջուած էր. բառին ամբողջ իմաստով ալ նեխրուած էր գործին։ Իբր դատապարտեալ մը վարժապետութիւն ընելու արգիլուած. գրածախութեան կ'սկսի և եռանդուն փրօփականախտ մը կը դառնայ։

Տիգրանի անկախ գործնէութիւնը նոր դժգոհութիւններ կը ծագեցնեն իր հին ընկերներուն մէջ։ Երկար վիճաբանութիւններ տեղի կ'ունենան, հիներ ու նորերու բաժանում մը առաջ կուգար։ Տիգրան արդէն մբերմացած ու ընկերացած էր Պեռօին, որ 1894ին կրկին անգամ վան մտած էր։

Անջատման գիծը այնքան բացորոշ էր ալ, որ Տիգրան իր խուզարկուեցաւ հետ յայտնապէս կը յարի Դաշնակցութեան որ անկէ ետք կ'սկսի զարգանալ ու առաջդիմել վանի մէջ։ Շատ չանցած՝ Տիգրան Պարսկաստան կ'անցնի քանի մը

ընկերներով զէնք փոխադրելու համար։ Մեծ կոտորածներու չարագուշակ թուականն էր, Բաղէշի և ուրիշ տեղերու չարդի բոթը Սալմաստ կը հասնէր։ Յեղափոխականներ չվարանեցան և 1895 հոկտեմբեր 25ին միացեալ ուժերով խումբ 44 դաշնակցական և 16 արմէնական, դէպի վան կը փութար ոպառնացող վտանգին կուրծք դնելու։ Ճամբուն վրայ, տեղի կ'ունենայ Սարաի և Պօղազ Քեասանի փառաւոր կռիւները։ Խումբը մաս-մաս ընթանալուն, Տիգրանի 12 հոգինոց խումբը կռիւներու չի մասնակցիր իր աննպաստ դիրքին պատճառով, և ապահով վան կը հասնի։

Տիգրան անկարող էր այլևս իր գործնէութիւնը թաքցընել, և ստիպուած իր խանութին ալ կը ձգէ, փախստական մը կը դառնայ, գիշերը պտըտիլ՝ ցորեկը նկուղներու մէջ հանգստանալ, իր սովորական կեանքը կը դառնայ։

Կառավարութիւնը տարեան ամէն եղանակներուն, օրուան ամէն ժամերուն կը փնտռէր Տիգրանը, բայց ան հոն էր և ո'չ մէկ տեղ էր. քաղաք ու գաւառ ոտքի տակ կ'առնէր, խումբեր կը կազմակերպէր, ընկերներ պինելու ջանքեր կ'ընէր, դուրսը գտնուղ ծանօթներն ու բարեկամները երկիր կը հրաւիրէր։

Այսպէս չարունակուեցաւ մինչև 1896 յունիս ամիսը, վանի ջարդին օրը, նաև մեծ գործերէն մէկը հայ ինքնապաշտպանութեան և հայ կուսակներու համերաշխութեանը։

Դաշնակցական, արմենական և հնչակեան — ամէնքն ալ միացած էին սուղ ծախելու իրենց և իրենց հարազատներու կեանքը։

Տիգրան ամէնէն վտանգաւոր տեղերէն մէկն էր, Շանթաղը, զէյթունցի Հաճիին հետ։ Շատ անգամ իրեններն էին որ օգնութեան կը հասնէին տակաւացած կէտերուն։ Հոն էր որ տեղի ունեցաւ և յիշատակելի դէպք մը. հայ աղջիկ մը քիւրդերու ձեռքը կ'իյնար, զէյթունցի Հաճին անմիջապէս վրայ կը հասնի, քիւրդը կը զարնէ ու աղջիկը կ'ազատէ։ Ուրիշ քիւրդ մը անդիէն իր ընկերոջը հետ դիակը վերցնելու կուգայ, բայց Տիգրանի գնդակն ալ այդ քիւրդը կը գետրէ։

Հայերու կռիւը փառաւոր էր, բայց օտար հիւպատոսնե-
րը կը միջամտեն, պարագլուխները ձեռք ձգելու միտումով.
կռուողները չեն թողուր որ իրենց այդ ընկերները յանձնեն,
և 1000 հոգիի բազմութիւն մը կը հեռանայ քաղաքէն: Մաս
մը հակակարծիք կը գտնի հեռանալուն և մինչև Պարսկաս-
տան երթալուն: Վիճաբանութիւնները 3—4 օր կ'ըրաղեցը-
նէ այդ բազմութիւնը վարագի վրան: Տիգրան իրեն հա-
մարեա 70—80 ընկերներով ետ կը դառնայ Վան: Պարսկաս-
տան դիմողներուն դարձը վախնալը ծանօթ է արդէն. մին-
չեւ վերջին մարդը կոտորուեցան, ասոր ուղեցոյցն մը զատ
էին: Քիչերը պահած էին իրենց պաղարիւնը և հաւասքը.
փառքի և ոգևորութեան օրերը կ'անցնէին. սուգի օրեր
ասոնցմէ մէկն էր Տիգրան, որ չարունակ նե՛րս, ներ՛ս կը
կանչէր իր զինակից ընկերները: Երկու դաշնակցական
խումբ Տիգրանի հրաւէրով Վան կը մտնեն գաղտնի, բայց
կը մատնուին վատերու ձեռքով: Կառավարութիւնը այս ան-
գամ թնդանօթով դարս կ'ելլէ Ֆէտայիներուն դէմ, որոնք
քաջութեամբ ու ճարպիկութեամբ կը դիմադրեն ու անվնաս
կը քաշուին լեռները: Տիգրան հոս ալ ներշնչող ոգին էր քա-
ջերուն, չնայելով որ տենդը թուլցուցած և անկարող ըրած
էր զինքը զէնք գործածելու:

Այս ճգնաժամին ալ անցուց Տիգրան և նորէն սկսաւ իր
եռանդուն գործունէութեանը Վանի մէջ: Կառավարութիւ-
նը և ժողովուրդը ահաբեկած էին անկէ, և թիւրքերն ան-
գամ առասպելները սկսած էին պատմել անոր քաջութեան և
ճարպիկութեան մասին:

Այդ միջոցին Դաշնակցութեան կողմէ կը ծրագրէր
Յանասօրի հոյակապ արշաւանքը, Աղբակի զոհերուն վրէժն
առնելու, ահաբեկելու քիւրդերն ու կառավարութիւնը և
սիրտ տալու համար տառապող հայաստանցիին: Վասպու-
րականի դաշնակցական ընկերներու համաձայնութիւնը և
գործակցութիւնը անհրաժեշտ էր այդ ձեռնարկին համար,
և Տիգրան իբր ասոնց ներկայացուցիչը գնաց Պարսկաստան:
Արշաւանքէն քանի մը օր առաջ 60էն աւելի ընկերներու
հետ 70 հրացաններով ու առատ փամփուշտով սպառազին-
ած Վան մեկնեցաւ: Ճամբան, Սպահան լճակի մօտ նշանա-
կելի կռիւ մը կունենան, ուր հայասարանցի քիւրդերը կո-

րուստ կուտան 7—8 հոգի իսկ խումբը անվնաս ու ապահով
իր տեղը կը հասնի, տագնապի օրերուն դիմադրելու պատ-
րաստ:

Յանասօրի արշաւանքին սարսափը մեծ եղած էր կա-
ռավարութեան և թիւրք խուժանին վրայ. Լապտերներով
կը փնտռէին հիմա յեղափոխականներու հետքերը. ծանր էր
Տիգրանի վիճակը: Խստութիւնները, խուզարկութիւնները
կրկնապատկեցան Տիգրանը ձեռք ձգելու համար: Քոյրը
բանտարկեցին, թաղապետները, անգլիական հիւպատոսը
մէջտեղ ձգեցին համոզելու համար զինքը որ անձնատուր
ըլլայ, խոստանալով թիւրքիան դարս հանել տալ զինքը:
Տիգրանի անողոք կամքին առջև ամէն բան խորտակեցաւ.
Տիգրան կը ծաղրէր կառավարութեան ապիկարութիւնը և
կը չարունակէր իր գործը...

Դաւաճանութեանը միայն վիճակած էր, ինչպէս յա-
ճախ, այս թանկագին կեանքն ալ խորտակելու: Զինքը չըր-
ջապատողները, քանի մը թուլսիրտներ, ստիպեցին որ դարս
ելլայ քաղաքէն, վերահաս վտանգէ մը խուսափելու համար:
Տիգրան այս անգամ տեղի տուաւ: Խմբապետ Միքօի և գին-
ուոր Արշակի հետ գնաց կուռուպաշ գիւղը, հայու մը տուն
1898 յունվար 2ին: Տան տէրը ցուրտը պատճառ բռնելով կը
գինովցնէ երեքն ալ, և ապա լուր կուտայ թէ գիւղը պիտի
պաշարեն, մինչդեռ արդէն տունը պաշարած էր վախկոտ
ոստիկաններով... Տիգրան և իր երկու ընկերները անմիջա-
պէս զէնքերնին առած, դարս կը նետուին, դիրք մը բռնե-
լու համար գիւղէն դարս... Դարանի մտած վատերը գըն-
դակներու տարափ մը կը տեղացնեն երեք քաջերուն վրայ,
որոնք անշնչացած կ'իյնան գետին:

Այսպէս անփառունակ վերջ գտաւ փոթորկալից ու մա-
քուր կեանքը վազգէնին, որ չատ թանկ կրնար ծախել իր
կեանքը իր պաշտած գաղափարներու յաղթանակին համար:

Որքան ալ մեծ ըլլայ իրմէն ետքը եկողներու դերը,
վազգէնի դէմքը միշտ պայծառ, միշտ աչքի զարնող տեղ
մը պիտի գրաւէ ռահվիրաններու այն երկար ու փառաւոր
արքին մէջ, որոնք Ազատութեան ճանապարհը հարթեցին,
Ցարգա՛նք իր յիշատակին:

ՉՈՒԽ—ԿԵԱՏՈՒԿ

Ելէք երթանք Զուխա—կեաւուկ,
Ուրտ մի տանինք Զուխա մ'անուկ.
Մըր ախպէրներն են տխա պառկուկ,
Գրկենք, պաչենք, դնենք անուկ:

Զուխա—կեաւուկ չայիր չիման,
Զուխա մ'կարիճ ընտեղ մեռան.
Մէկն Օհաննէս, մէկն ի Վարդան,
Հայու սրտիկն արին վէրան:

Աստղերն էլան չարան չարան,
Զուխա—կեաւուկայ վրէն կայնան.
Վախէն սարեր կարմրցեր են,
Երկինուց աստղեր չիվարեր են:

Սրինոտ խալաւ քաղաք բէրին,
Փաչէ սարից վար կախցին.
Ախայու սրտիկ խօրովեցին,
Չիգեարը փորին կարաեցին:

Ա՛խ, իմ ախպէր, ես քի կուրպան,
Տաճի՞ն էրաւ քի էտա բան.
Տաճի՛կ, տաճ՛իկ տիւ սատանա,յ
Մըր մուլք կըտես քե ծեռ չըտայ:

Տաճի՛կ, տաճի՛կ, էրա՛, էրա՛,
Աստուած սրընայ քեկ փուճ տ'էննայ.
Իմ Ախայ ախպօր տիւ խեղճ էրիր,
Ես էլ տեսնի՛, տիւ խեղճ էլնիր:

ՎԱՋԳԷՆ

ՎԱՆՑԻ ԳԵՂՋՈՒԿԻ ՏԱՂԸ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթնելու.
Էրթամ ախոռ, գոմչուկներըս լծեմ՝ գութան վարելու:
Դէ՛հ, գոմչուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արագ երթանք աչխատինք,
Հարկ ու խարճին վատէն մօտ է, վօխենք արուն ու քրտինք:

Հայի գութան, հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզ իմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հայ կուտաս.
Այն օր, երբ քեզ ձեռքըս առի, ազատ օրըս կորուցի.
Անվախ սիրտըս վհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի:

Բաւ՛ է, գութան, մեր տանջանքը՝ համբերութիւնն վերջ ունի.
Դուն տեսա՞ր որ մեր դուշմանը՝ ամօթ, խելք ու գութ չունի:

Սրի՛ փըշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,
Կըռենք-կոփենք սուր ու սուսեր, դուշմանի դէմ կուելու:

Եղբարք հայեր, առէք խոփը՝ տէք դարբինին կըռելու,
Կռել - կոփել սուր ու սուսեր Հայաստանը փրկելու:

ԳԱՄԱՌ — ԲԱԹԻՊԱ

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՑՐԵՆԱՍԷՐԸ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,
Չը գնահատած ոչ ոքից.
Բայց հաւատեաւ անձնանըւէր,
Ազգիս մշակ կը հաչւիմ:

Ազնիւ ընկեր, չըմոռանաս,
Անգաւաճան ջերմ սիրով,
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գնա՛ և դուն նոյն չաւդով:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՏ-ԱՈՒՄ ՏՕՐ
им. А. Мар
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

Աղճատթիւնը հայոց ազգի,
Կարեկցարար մտածիր.
Ոսկէ գրքոյկն եզիչէին,
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։

Այն տեղ տուրը կրօն, ազգ միտան,
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ վարդան, անմահ վարդան,
Իր խնկելի քաջերով։

Հայրենիք, սեպհական սրբութեան
Ես Աստուծոյ առաջև.
Շատ կ'աղաչեմ չատ կ'արտասուեմ
Որ ծագէ քեզ նոր արև։

Իմ մտերիմ, մահս մօտ է.
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ձշմարտութեան ջատագով։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

Ս. ՏԻՐԵԴԱՔՋ
ԱՋԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արիք, հայկազունք, յառաջ ընթանանք
Սահմանադրութեան նոր բարև մալ տանք
Որ ազգն երբ գանի փրկարար կոչեց,
Նոր հոգի նոր կեանք անոր պարգևեց.
Եկէք բարեկամք, առ բարձեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք, տուրը սրտէ բղխած։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն իղուռ հայոց ազգութեան,
Սահմանադրութիւն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց.
Ցառաջդիմութեան բացաւ ասպարէզ,

Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական
Խեղդեց ահեղայն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային.
Այն որ յԱստուծոյ ձայն տեաւ մեզի՝
Մենէ թող առնու ձայն մ'այսպիսի,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայերս անարգած՝ փրկեց, բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզ զոր ազատ Աստուած
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած.
Որու չնորհիւ յարդ ստացանք մենք.
Անոր յարդ տալով ապրինք ու երգենք,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն

Դուն ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,
Ալ այսուհետև մի' սգար լռիկ.
Չի ալ քու որդիքդ նոր ոգով բերկրեալ՝
Չքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ։
Ալ մի' լար, մայրիկ, լացդ իպար փոխէ
Եւ ձայնիւ գոզարիկ որդոցդ հետ երգէ,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայե'ր, միանանք, մեր մօր հետ օրհնենք
Զանունք որ մեզի տուին տուրը օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ կեանք մը փառունակ.
Թող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ց. Գ. ՍԼՎԱՃԵԱՆ

ՎԱՆԱՑ ԾՈՎԱԿ

Ամէն տեղ տիրած խորին լռութիւն,
կարծես թէ մեռած լինի բնութիւն.
Նաւած ագաւոր, պանդուխտ, միայնակ,
Ո՛հ, քեզ եմ տեսնում, ո՛վ փայլուն լուսնակ:

Աշխարհի սկիզբից դու մինչ իվախճան
երկնակամարով առնում ես չրջան,
Ո՛հ, դու տեսե՞լ ես հայ ազգն բարեփառ,
Արդեօք տեսնու՞մ ես նորա ցաւ անճար:

Արդեօք դու ես, խղճալոյս նման,
Տեսած Հայաստան ժանտ ոտից կոխան,
Թափո՞ւմ ես աչքիցդ աղի կաթիլները,
եւ սրտիդ միջում ցնցւում են նետեր:

Քար է քու սիրտը, և խիղճդ մեռած,
Քանի՛ արիւններ, քանի՛ կոտորած
Տեսար՝ լռեցիր և դարձեալ պայծառ
Հայ երկրին վրայ կապում ես կամար:

Զայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս.
Շարժեցէ՛ք, զեփիւռք, ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք արտօսր այս չրերիս հետ:

Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկիզբից մինչ ցայժմ, խնդրեմ ինձ ասա,
Մի՞թէ միշտ այսպէս կը մնայ Հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան:

Մի՞թէ միշտ այսպէս ազգը խղճալի,
կը մնայ ստրուկ օտար իշխանի.
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին
Անարժան է հայն ու հայի արդին:

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ.
եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք,
Դիմել դէպ իրենց սիրուն հայրենիք:

Դժուար այդ միայն, տեսուչդ վերին,
կենդանացրու հայութեան ոգին.
Ծագիր նոցա դու քո լոյս գիտութեան,
Որով իրը էակք նոքա բանական,
կը ճանաչեն մարդուս կեանքի խորհուրդը
կը լինեն գործով տիրոջդ փառաբան:

Ցանկարծ ծովակի երեսին մի լոյս,
Ջրից դուրս եկաւ նազելի մի կոյս.
Մի ձեռքումն ունէր նա վառուած լապտեր,
Իսկ միւսում, քնար փայլուն փղոսկեր:

Արդեօք հուր՞ի էր, հրեչտակ աննման.
Ո՛չ, հայ մուզաների տիպ մ՛աննման:
— Հայոց ճակատագիրը կարդա, ո՛վ մուզա,
Ներկայ և գալոց գուշակի՛ր, ասա՛:

(Ասաց երկնային այն ոգի քաղցրիկ)

« — Աւետիք տամ քեզ, նժդեհ պատանի,
Սրբիր աչքերիդ արտասուք աղի.
կըգան նոր օրեր, օրեր երջանիկ,
Երբ տիրոջ կամքը ազատ ու արդար
կը թագաւորէ, կրկին ոսկեդար:»

« — Հայոց մուզայք կը զարթնուն կրկին,
Հայոց Պառնասը կը ծաղկի վերստին,
Եւ Ապողոնեան կառքը լուսաբար
կը բոլորէ հայոց թուխ երկնակամար:»

« — Մենք ևս քո պէս, երբ խորին գիշեր
Պատեց Հայաստան, ագաւոր օրեր
Շատ ենք անցուցել. այժմ, սիրելի,
Մենք ևս հաչտութեան ատացանք ձիթենի:

« Սրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,
Ելէք Հայաստան երգով եռանդոտ,
Զարթեցրէք հայոց աչխոյժքը մեռած.
Լցեցաւ կամքը, հասաւ ժամանակ.
Օրը կը բացւի, ահա Արուսեակ
Ձեզ յայտնի նչան,» ասում է Աստուած:

կրկին մթնցաւ։ Ջքացաւ պատկերը.
Երկար ժամանակ դիւթական ձայնը
Լսւում էր խառն ալիքների հետ.
Օդին տիրել էր բուրումն հոտաւէտ։
Ախորժելի լուր, ուրախք քաղցրիկ,
Որպիսի հրճւանք, մուղայդ գեղեցիկ,
Ա՛ա մեզ, մեկնիր, արդեօք հնարին
Մի մեռած մարմնի զարթնուլ վերատին։

ՐԱՖՖԻ

ՍԱՂԼՈՐԴԸ

Ահա աւերհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թռչում,
Եւ վայտայի տխուր զանգակը
Կամարի տակն է դողանջում։

Արթուն սայլորդը գիշերւայ դէմ,
Իր վիճակին վրայ տխրեց.
Եւ սիրեկնի աչաց կաթսայը
Նա տխրագին ձայնով երգեց։

«Կապուտ աչեր, ա՛խ, կապուտ աչեր,
Կարիճխս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոսխներ,
Ինչո՞ւ սրտերնիս բաժնեցիք։

Մնաս բարեաւ, իմ տուն հօրական,
Մնաս բարեաւ, իմ սիրական.
Ես կը հանգիմ գինէ բոց կրակին,
Այս անբնական դաշտի միջին։

Արևիս լոյսը խաւարել է.
Այս աչխարհումս ես որբ եմ.
Սրտիս կաթսայ աղջկայ տեսնելից
Մինչև իմաշ գրկած եմ ես։»

Այս որ ասաց չարժեց մարակը,
Երեք ձիանց մէջքին խփեց.

Իր սիրեկնի պարզ յիշատակը,
Այսպէս երգով նա փարատեց։

Կապուտ աչեր, ա՛խ, կապուտ աչեր,
Կարիճխս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոսխներ,
Ինչո՞ւ սրտերնիս բաժնեցիք։

ԱՑԾԵԱՄ

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին,
Պարուսմ են խեղճուկ անձիդ վնասը,
Գամբռներով, բարակներով մխասին
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս.
Զագուկներդ տխուր, լալիս են լալիս։

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
Կ'ուզէ ձեռքերը արիւնովդ լւայ.
Խղճալի քո տղաք սար ու ձոր կուլան
Փախիր, այծեամ, փախիր ևայլն։

Որսկանը դութ չունի, կ'անէ կրակը,
Կամ քեզ կ'սպաննէ կամ քո գաւակը.
Իզուր չի անցնիր հրացանի գնդակը։
Փախիր, այծեամ, փախիր, ևայլն։

Զորեր մի մտներ՝ վտանգաւոր է.
Որսկան ման կուգայ այնտեղ, սովոր է,
Քարայրից խրելով քեզ կը գլորէ։
Փախիր, այծեամ, փախիր ևայլն։

Դաշտումը ման մի գար, թէ մտածես լաւ,
Քեզ կը վիրաւորեն կ'ստանաս մեծ ցաւ.
Դուրս մի ելնիր խիտ անտառից դու բնաւ։
Փախիր, այծեամ, փախիր, որսկան է գալիս.
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

ԱՇԸՔ ՋԻՎԱՆ

ՆԱԽԱՍՏԻ ՊԱՐԸ

Աչխուժ նաւասին
Անվեհեր ճակատ
Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ զարթ
. Լարէթ, թիւմլէրէլէլէ, հ՛ա, հ՛ա, հ՛ա:
Կոհակը վրիպրագէպ
Ջեն սոսկում՝ վախ մեզ.
Հողմուռնք սաստկաձար
Գոգռեն մեզ իպար:
Լարէթ, ևայլն:
Օ՛ն, խմենք զարթ
Գինին մեզ յառուկ.
Օ՛ն, գրկենք իրար,
Պարենք անդադար:
Լարէթ, ևայլն:
Լսեցէք, դիտեցէք,
Մինչդեռ մենք հոս եկած ենք,
Ահա ծերն իր ոտքերն
Հոս հոն չուտ տանի փոյթ:
Լարէթ, ևայլն:
Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պիտի իյնայ,
Օ՛ն բռնենք, մեզք է մեզք.
Չ՛ա,հ՛ա, հ՛ա, կը խնդայ,
Հոս եկէք, ամէնքս ծափ զարնենք:
Լարէթա ևայլն:
Զանգակն ուժգնապէրկ
Կոչէ մեզ եկարզ.
Վերջ տանք խնդութեան,
Ջալենք մեր պարան:
Լարէթա, ևայլն:

ՈՒՍԱՆՈՂ

Այն ինչ ազգ է, այն ինչ ցեղ է որ միշտ անկախ է,
Որու տունը ամէն տեղ է, ինքն անփող ուրախ է.
Ուսանողն է այն զարթ մարդ.
Կենաց քէֆն է նորա ցանկացած բան:

Այն ո՞վ է արև ծագելիս ինքն էլ զարթնում է
Ու քաղցր ձայնով երգելիս փողոցներ չափում է:
Ուսանողն է այն, ևայլն:

Ո՞վ երբեք սէրից չի վախնում ու միշտ հարս ունի.
Եւ իր ճոխ, անպերճ կեանքում զարդ ու հոգս չունի:
Ուսանողն է այն ևայլն:

Ո՞վ է միշտ առաջին կռւում հայրենեաց համար.
Փայլուն գինիի չիշով կոնծում ուրախ, բայց արդար:
Ուսանողն է այն, ևայլն:

Եղբայրք դուք որ այն ազգից էք գինին պատւեցէք,
Ուսանողական պատիւը հաստատ պահեցէք:
Իրաւ մենք ենք այն զարթ ազգը,
կենաց քէֆն է ամենուս ցանկացածը:
(Թարգ. ռուսերէնից Ֆ. Տ. Պատկ.)

ԱԿՈՌԻԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ակռաւի մեծ կարասին
Բոլորաւքն են բազմեր,
Աւազ իշխանք, մեծ պարոնայք
Ժողովք են հոն կազմեր.
Այո. այո ժողովք են հոն կազմեր:

Սաստիկ է վէճ, մեծ է խնդիր
Զոր հոն տեղը կը խորհին,
Թէ ինչ կերպով դարման մ՛ընեն
Հիւանդ մեր աշխարհին.
Այո, այո հիւանդ մեր աշխարհին:

Մէկն աս կ'ըսէ, մէկն ան կ'ըսէ,
Կը ծագի Լոյսն առաւուն.
Ինձ լսեցէք, տեարք, կը գոչէ
Աւանին պետն արթուն
Այո, այո աւանին պետն արթուն:

Թող թագ առնու, կ'ըսէ, Բագոս
Եւ փառօք ապրի չատ.
Իսկ ցնծութիւն ըլլայ դչխոյ,
Եւ գահն ալ Արտաչատ.
Այո, այո և գահն ալ Արտաչատ:

Այսպէս մեզի նոր գարթութիւն,
Արևները կը ծագին.
Ուրախ ըլլայ մեր ժամանակ
Եւ փառք մեր աշխարհին.
Այո, այո և փառք մեր աշխարհին:

Հ. Վ. ՋԱԳԼՃԵԱՆ

ՎՐԷԺԳ Ի ՇԱԻԻՐՇԱՆ

Բա՛մբ, որոտան բարձուստ բամբիւնք Այրարատեան
դաշտն ի վայր
Արի արանց արիւնք յեռանդ առատանան ի հրապայր:
Հրաւէր հայրենեաց հռչակի 'Նդհանուր.
Ոգիք հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորին պսակին էք կարօտ,
Որք երկրաւորիս փառաց երկնայորդ.
Հապո՛ն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժ հայկազունք:
Հապո՛ն, ի ղէն, գունդ ի գունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ.
Ի ղէ՛ն, ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ.
Ի ղէ՛ն, ի վրէ՛ժ, մի ձախ, մի յաջ,
Օ՛նանդր յառաջ,
Մի ձախ, մի յաջ.

Օ՛ն, անդր յառաջ.
Յառաջ, յառաջ,
Հապո՛ն յառաջ:

Հայկեան փանդռանց որոտընդոստ դընդնչին բարբառք
մարտագոռ,
Դառնագոռոչ անդրադարձեալ պարսիկ կերկերի չեփոր.
Շարժեն հրեշատակք թևս լուսադողդոջս,
Ճիւաղք ճիւաղաց կայցսին ի դժոխս,
Շունչք չանթառաք զեթերօք փարի,
Սարսափին սանդարք ի խոլ խաւարի:
Հապո՛ն, արի արանց մանկունք, ևայլն:

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս պոզ ծալ
ի ծալ,
Ի ճակատուց ի թշնամեաց սա ոչ գիտաց յուբաստ կալ.
Հեծեալ հրանժոյդ վհին վահանայ,
Վրէժ կանչէ արեան կարմիր վարդանայ:
Փռնչեալ բոցաչունչ տափր ի գարշապար,
Ռագմամուտ վարգի յանժոյժ երիվար:
Հապո՛ն, արի արանց մանկունք ևայլն:

Ի գոլպարիլ մարտայարդար գարշապարաց Արամայ,
Գոռան կորդրիք, Մասիսք սարսին, հընդնչեն սահանք
երասխայ.
Ի գոռոհ գոռոհ տալ բիւրոցն ոտնատրոփ,
Տատանին դաշտակք, յառնէ չռինդ ապշողք.
Կռուի առ կռուի կոփին կմբայք ոտիգ առ ոտիգ,
Դղորդ առնուն տարերք՝ կորովեաց ի վէգ:
Հապո՛ն, արի արանց մանկունք, ևայլն:

Սրիք ի կռիւ, քայլակորովիգ ընդ կորակոր հրոսն
արեաց,
Հապա համհարզք մեր բիւրայաղթ ձեղ նոր հանդէսք
են փառաց.
Թռէք ի ռագմ, ի խազմ, առէք զէն և զարդ, ն
Երեսնիւք, յիսնիւք հարուլ բիւրս հազարս.
Ի սուր ի սուսեր, կարչնեղ յաղեղունս,
Զսեաւ սատանեանց ջարդել կառափունս:
Հապո՛ն, արի արանց մանկունք, ևայլն:

Մինչ ցերը, ցերը սուգ լինի ի Հայս, հատէք զարտօսր
որբք, այրիք,
Հարանց, հարսանց, եղբարց, որդւոց, հանուրց հայոց
վրէժխնդիրք.
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց,
Ցերկնից հնչեն ձայն արեան սիրելեաց.
Սօսափիւնք վերինք, արհաւիրք յերկրէ,
Ջալացս օժանդակ, զպարս հերքեսցէ.
Հապօն, արի արանց մանկունք, ևայլն:

Օ՛ն անդը, ի բաց հայկեան հողոց հակայազանց և սրբոց,
ի բա՛ց, ջոլիր չեառական մոխրապաչախից պղծաց:
Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անդամ
Սրիւնք վրկայից գճապաղխան անժամ,
Որն ընդ դիս տառնեալ դարձցին ի փախուստ,
Մատնակուրծք ընդ հայս հայեացին հեռուստ:
Հապօ՛ն, արի արանց մանկունք, ևայլն:

Արք աղեղանց բարձր ի թիրախ թռուածիք, վերջին
ձեզ խրախոյս,
Առեալ դարձցուք գանթիկնապարձ պայս վարդապոյն
դրօշն անխոյս:
Ի վերայ յիանից յաղթից վարդանայ,
Պարսկավան բաղկաւ արւոյն վահանայ,
Շեշտ ի ծայր չիրմի դաշտին Շաւարշան
Տնկել յաղթանակ անմահ յաղթութեան:
Հապօ՛ն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժ հայկագունք,
Ի Շաւարշան գունդագունդ
Ցեռեալ իպար թունդ ի թունդ,
Ի յաղթանակ, օ՛ն անդը յառաջ.
Օ՛ն անդը յառաջ,
Մի ձախ, մի յաջ,
Օ՛ն անդը, յառաջ,
Հապօ՛ն յառաջ,
Ի յաղթանակ:

Հ. Դ. ԱԼԻՇԱՆ

Ո Ր Ո Ր

Անուշ քնիկ աչերն առեր
Անուշ հովերն ալ տարուբեր.
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ըսեմ օրօր:

— Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերիք աչերս կապես, հերիք,
Մէկ պահիկէն կ՛ընեմ պառիկ.
Ձիս արձակէ մ՛ըսեր օրօր:

— Մինչև չիլան մատաղ մանկտիք,
Ծիծ չեն իտար անոնց, գառնիկ,
Դուն չլացած, իմ մէկհատիկ,
Ես ծիծ կուտամ՝ կ՛ըսեմ օրօր:

— Աղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճրվճրվամ դուն չես լսեր.
Անուշ ձայնիդ ես զմայլեր,
Ես կուլամ, դուն կ՛ըսես օրօր:

— Արցունքներդ մարգարտի պէս
Երեսդ իվար ինչ կը թափես.
Մի լար ձագուկ, մի լար խեղճ ես,
Ով կուգես՝ ան ըսէ օրօր:

— Գիրկդ ինծի հանգստարան,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան,
Իրիկան գէմ պառկիմ օրրան
Աչքըս գոցէ՝ ըսէ օրօր:

— Քնացնեմ իմ աղաւնիս,
Մեծացնեմ սիրով որդիս.
Կարմիր վարդի նման բացիս,
Շուքդդ նստիմ ըսեմ օրօր:

— Քիչ մը թուլցուր թևերս, ոտքերս,
Ալ թմրեցաւ փափուկ մսերս,
Անուշ մրափն առնու աչերս,
Ապա սիրէ՝ կարդա օրօր:

— Այդ սուտերովդ չեմ խաբւիր ես.
Կ'ուզես որ գիս նստեցնես,
Զի քնանաս, ծիծս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օրօր:

— Քիչ մը ճորճոր, քիչ մը ճարճար,
Քիչ մը տանտան, քիչ մը պարպար,
Քիչմալ պապան՝ առ հօպպա տար,
Քիչ մ'ալ մէնմէն, եաքը օրօր:

— Այդ քու լեզուդ կ'ուտեմ հիմա.
Քու կանգունովդ կտաւ չկայ:
Տանտան, մէնմէն ալ հարաբա,
Աչուկ պահպահ, ըսեմ օրօր:

— Սիրտդ քար է, ալ հասկցայ,
Լացի, լացի ճար չգտայ.
Ալ քնանամ, ճարը չկայ,
Երկա՛ն, երկա՛ն ըսէ օրօր:

Բ. Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ԵՐԳ

Սրկածք հայոց ժամանակին ընդ անիւ
Փչբին տակաւ, մինչդեռ սիրոյ համբուրիւ
Ուխտեմք ի սէր եղբօր զկեանս դնել գրաւ,
Օն անդը ի մէնջ, այր ընկերին լարել դաւ:

Սրացաւ ի մէնջ բախան անհամբոյր,
Սրդ նոր բախախս քաղցր է համբոյր,
Եղբայր զեղբայրն գգ՝ է սիրով,
Ձոխն աղքատին մատչէ գթով:

Էանց գիշեր, արդ առաւօտ,
Ի ցող ժպտի Մասեաց արօտ,
Եւ վառ ի վառ չողշողելով
Լոյսն արեգին ծփայ ի ծով:

Հապ՛ա մանկունք,
Վեհ քաջազունք
Ի գլուխ պսակ,
Ի յաղթանակ
Առեալ նւագս
Արագ արագ,
Օ՛ն փութաջացուք,
Օ՛ն երգեցուք,
Սէր և գութ.
Մեր պսակ
Առ մեր բախտ
Հրաւիրակ.
Ցնծասցեն՝
Որք լսեն,
Թէ «Ուր Հայ,
Զիք անդ վայ:»

Ե. ՄԵԼԻՔԵԱՆ

ԸՆԿԵՐՔ

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Որ փայլեցնէ արևի պէս պատկերը մարդուն:

Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Ընկեր իմաստուն, աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Կեանքըդ նւիրես ընկերիդ լաւին, քէչ է դարձեալ.
Այնպէս է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:

Թշնամիները իր վրայ քալած ժամանակը,
Կարիճ, հարազատ ընկերըն է սուսերը մարդուն:

Ինչ մարդ ունենայ մտերիմ ընկեր, ճիվան Աչըգ,
Չի սպիտակիր ամենևին մէկ հերը մարդ ուն:

ԱՇԸԳ ՃԻՎԱՆ

ՕՐՕՐ

Արի՛, իմ սոխակ, Թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Եկ, արեղաճագ, Թո՛ղ արա ու արօա,
Օրօրէ՛ տըղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ճագուկ, մի՛ գալ
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուվվուլով տըղիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սըքաւոր դառնալ:

կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի գրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է, կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդիս կ'ուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԱԻԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ահ՛ա աղաւնին
Նոյեան տապանի,
Թռած Մասեաց մառախլապատ երկնքէն,
Հրաւէր կարդայ ա ղ ա տ ո ւ թ ե ա ն Հայրենեաց,
Ադին անդին թափառական հայերուն,
Ջայն աւետաց Հայաստանի բերանէն,
Ողջոյն կուտայ հայոց, ողջոյն նոր փառաց.
Հերի՛ք, կ'ըսէ, այսչափ հարիւր տարուան քուն,
Օ՛ն, աչք
Մեր հայրենեաց հրաւիրակին
Ակա՛նջ
Զի պատգամ է այս երկնային:
Արթնութիւն արդ, պանդուխտ հայեր,
Հասաւ կ'անցնի հայոց օրեր.
Առէք ողջոյն ազատութեան,
Ողջոյն սիրոյ եղբայրութեան:
Վերջ վիճակի ձեր գերութեան,
Յերկնից հայոց այս է պատէր:
Դարերէ իվեր արիւն արցունքով
Թացաւ հայրենեաց քաղցր աւերակներ.
Թռչող հրեշտակն ալ ահա լինձ ընկեր
Վկայ է խօսքիս խնդումն երեսով:
Ա՛յո, այո, հայ տղաք,
Վկայ, ես՝ ձեր հրեշտակ
Հայաստանի նոր գարնան
Ծաղկունքն ահա ձեզ կուտամ:
Օ՛ն անդը, քորք և եղբարք, որդիք դիւցազանց.
Ջերթ թռչներ գարնան գեղ գայլայլիկով
Սուրանք փոյթ ի գիրկ հայրենի փառաց:
Հոս թողունք, հոս,
Վատթար սրտեր,
Հետ առնունք սէր.
Հոս թողունք, հոս,

Աստուածին,
Ոսկեղ հայուն,
Հոս թողունք, հոս։
Ազգերնիս մէկ, լեզուներս մէկ, հաւատքնիս մէկ,
Հայրենիք մէկ, հայրերնիս մէկ, փառքերնիս մէկ,
Ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ։
Եւ արդ հոս ի սեւ կրից զինաթափ,
Ամէնքս ալ հաւասար հայ եղբարք,
Մեր պէնքը խաչ՝ ի կուրծս վառ ի վառ,
Օն, պհեա հրեշտակիս ծափ ի ծափ՝
Զարնենք տաւիղք ոսկեքնար,
Սրբենք դառն ցաւի աչեր.
Աչխոյժ ի սիրտ ձայն վար ու վեր,
Ազգի հայոցս աւետաբեր,
Ուրախութիւնն այս հայոց տար։
Օն պար, խաղ,
Մէն մ'ի ձախ,
Մէն մ'ի յաջ,
Եա, յառաջ,
Ուրախութիւնն այս հայոց տար։

Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք

Անի քաղաք նաեւ կուլայ,
Զհայ բառդ՝ մի՛ լար, մի՛ լար.
Կ'ըսեն թէ, չ'է, թող նաեւ լայ,
Ա՛հա, երբ լսեմ մի՛ լար, մի՛ լար։
Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,
Զուռնիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ հոգեալոյս գայ մօտենայ
Գոնէ ըսէ մի՛ լար, մի՛ լար։

Ա՛յ, հայ տղայ, խղճա՛ ինծի,
Տես՛ քո Անին չատ ախտոտ է։
Հերիք ես լամ, դու չըգթաս,
Չէ՞ քո Անին չատ ախտոտ է։

Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալով աչերըս կուրացաւ,
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բախտս խպտաւ իս մոռացաւ։

Կարաւանը եմ թագաւորներ,
Ժողովեր եմ գլխուս բուեր,
Որ միշտ կ'երգեն Անին անցաւ,
Անին անտէր աւերեցաւ։
Ա՛յ, հայ տղայ հայլն։

Անին եմ չատ մարդաբնակ,
Մնացեր եմ դառն աւերակ։
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ,
Անտէր որբոցն է նմանակ։

Երբեմն էի չատ անմոռան
Հայոց քաղաքն արքայական.
Ա՛յժմ աւեր հիմնայատակ
Նաեւ կուլամ ես միայնակ։
Ա՛յ, հայ տղայ հայլն։

Եկար, տեսար, դարձար կ'երթաս,
Լալով կ'ըսես «բարեաւ մնաս.»
Աստուած սիրես չմոռանաս
Մասիս սարին երբ մօտենաս,

Ա՛ա իմ քայլ Արարատին
Նաեւ կուլայ քո խեղճ Անին.
Կ'ըսէ երբ գաս աւետիք տաս,
Թէ իմ Անի, հերիք է լաս։
Ա՛յ, հայ տղայ հայլն։

(Հայ Տղան)

Ողբերգութիւնդ հերիք, Անի,
Թչտառացեալ դու լաս քանի՛,

Օր մը գթած աչն Անեպին,
Մարդասիրեալ աս քեզ հայի։

Գան ժողովին հայք մխարան,
Գեղեցկանաս չատ աննման.
Հապա մի՛ լար, սիրուն Անի,
Անի, Անի, իմ ջան Անի։

Ա. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնուենք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով.
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։

Բերնեբերա տանինք անվախ,
Չէ դա խառնած կամ խաբկախ.
Նէկտար է և ոչ գինի,
Ամենք՝ մեզ անուշ լինի։

Աբաքսայ ջրով ցողած,
Հայոց արևով հասած.
Հայոց աղջիկ է քաղել,
Քնքուշ ձեռներով քամել։

Այս բերքն է հայոց երկրին,
Հայաստան աշխարհ նոյին.
Անմահ երկնային գինի.
Նա խմեց երբ Լջաւ սարէն։

Այս անուշ գինին խմողը,
Սրտէն Թող հանէ ախը.
Ամէնքս ալ բանենք ամէն,
Որ չատ տայ մեզ ամ էն։

ԳՈՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԳՈՂԹԱՆ ՄԱՆԿՏԻԿ

—o—

Գողթան մանկտիք, ահա ձեզ
Ճքեղ փառաց ասպարէզ.
Օ՛ն փութացէք, խումբ կազմեցէք,
Պատկ անթառամ մնայ ձեզ։

Գիտէք,ոյ՞ք են ձեր նախնիք,
Բանաստեղծից էք որդիք,
Որ քնարով ոսկի լարով
Հայրենիքին փառք բերին։

Դուք ամէնից էք զրկուած,
Փառքեր ունիք, բայց կորած.
Հարք ու եղբարք մերկ և քաղցած
Հայրենիքը ատերած։

ԿԱՐՕՏ ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Գարուն է եկել գեղեցկատեսիլ,
Կարօտ ենք տեսքիդ, չուտ արա՛, Հասիր.
Տարակաց սրտեր դու մորմոքեցիր,
Երբ քաղցր հայրենիք Թողիր գնացիր։

Մեր սիրտն ու հոգին քո գլխին կուռպան,
Հրեշտակ հայ ազգին, դարձիր դէպի վան.
Վօսփօրի վայելք գիտեմ սիրել չես,
Վարագայ վանքին կարօտ կու քաշես։

Գալիլեան աստղիկ, բուրաստան ծաղկանց
Սիրով տեղի տան Արծուդդ հայրենեաց.
Ողջ վասպուրական երկրին կեանք տուիր,
Սիրոյդ կրակով զամէնք վառեցիր։

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ, հանչելով հանեն հառաչանք
Իսկ անտէր որբեր, արտասուք աչքին,
Կարօտ կը մնան քո հովանիքին։

Սոլոն, Սոկրատէս, Ճարտարն կիկերոն,
Զուներան խօսքերդ · հովիւ ես դպօն,
Թշուառին բողոք, զրկեալին պաշտպան,
Դու ես հայ ազգին զոհ նուիրական :

Ուր որ ալ լինիս, ուր որ ալ գնաս,
Քու փայլուն յահռովդ մեզի լոյս կուտաս ·
Եւրոպ ճանաչեց զո բարձր արժանիք,
Ունիս մի սիրտ՝ հայր և նահապետ հայերուն :

Գ · ՇԵՐԵՆՑ

ՄԱՀ ՀՕՑՈՐԴՒՈՑՆ

—o—

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ,
Եկ, մի՛ դողար, մօտեցիր հոս,
Անլաց աչօք դիտէ զորդիդ,
Ու իր վէրքերն արիւնահոս :
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Փափուկ ձեռամբ փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր ·
Իրրև հրեշտակ նւագելով ·
Դիս հանդչեցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Նորեկ որդւոյս կենաց արև
Ջեզի համար փայլի, հայեր,
Այսպէս յայնժամ դու երգեցիր,
Օրօրոցիս նստեալ քովեր ·
Անոնց համար չկլաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Կարմիր կայլակիք ցայտեն վէրքէս,
Սակայն մայր իմ, նայէ չարչափին,

Զարիւնոռուչա քիւրտերըն տես,
Հազարներով փռուած գետին ··
Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս վիշապ, մռնչելով
Յանկարծ մեր վրայ յարձակեցան ·
Ցնցեց Զէյթուն գլուխն ժայռոտ՝
Որ վըհից մէջ թոթափեցան :
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ու ծափ պարկին մեր հարց սուերք,
Չի չէ մեռած հայոց կրակ ·
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Չի լուծաւ վրէժ յարեան վտակ ·
Ինդաց Մասիս, մայր իմ, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,
Հառաչանես գայն սիրուհւոյս ·
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ոյր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս :
Աչ մը անկէ վրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Մ · ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԻՄ ՄԱՀԸ

Եթէ ահագին մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...
Շոգիանան ցաւքս ու հոգիս՝
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակատս պատօրօպած
Չիս պառանի մէջ, ցաւդ պերպ վէմ,
Փաթթուն, դնեն սև պապակը՝
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ հնչէ ախուր կաչնակ,
Թրթռան ծխտպ մահու պժխեմ.
Դագաղս առնէ իր յամր քայլ՝
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունեն և խոժոռ դէմ,
Համասփռեն խունկ ու ապօթք՝
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Թէ յարդարեն իմ հողակոյս,
Եւ հեծեծմամբ ու ազալէն,
Իմ սիրելիքը բաժնըւին՝
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Իսկ աննշան եթէ ճնայ
Երկրի մէկ խորշն հողակոյսի իմ,
Եւ յիշատակս ալ թաւսամբ՝
Ահ, այն տեղն ես կը մեռնիմ:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՉԻՆԻՈՐԻ ՄՕՐ ԽՕՍՔԸ

Չարթիր՛ արդեակ, ուշ բեր՛ վեր կաց,
Պատերազմի փողն հնչեց.
Չարթի՛ր, գոչեց ձայն հայրենեաց,
կենաց մահու ժամն հնչեց.

Պատրաստեր եմ քո պէնքերը
Եւ քո գօտին ոսկեթել,
Եւ մի պատկ ոսկեփեսուր
Երկինք կանխէ պատրաստել:

Հատաքեր եմ քո պէնքերը
Ահա գլխիդ վերև կան.
Ինչպէս երբեմն քո գրքերը,
Երբ կ'երթայիր վարժարան:

Նէր կապեմ սուրը մէջքիդ,
Հապար կախեմ քո ուսէդ,
Եւ սուրը դրօշակն հայրենիքիդ
Թող ծածանի ալ թևէդ:

Մի՞թէ դու չես յիշեր երբոր
Գրիչ ու թուղթ աբուի քեզ,
Փոխան գոցա, ըսի մի օր
Ուրիշ բաներ կուտամ քեզ:

Ահա փոխան գրչի, քեզ սուր
Փոխան թղթի, կռուի դաշտ.
Ազգի համար գնա կեանք տուր,
Քո մայր ժպտի, երկինք հաչտ:

Գրչով ուսար ազգ, հայրենիք,
Սուրով գնա՛ փրկել զայն.
Մեր հայրենեաց վշտաց հերիք՝
Զըսաւ աշխարհը համայն:

Մեր հայրենեաց թշուառութիւն,
Երկրիս ազգին մէկը չունի.
Մեր խղճութեան կարեկցութիւն,
Երկրիս վրայ մարդ մը չունի:

Գնա՛, որդեակ, այդ սև չարիք
Խեղդեց հունչը քո ազգի,
Գնա՛ փրկել քո հայրենիք,
Թէ ոչ, է՛լ քեզ ծնէի:

Քանի տարի կերակրեցի
Մինչ հասակդ այս առիր,
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քո ազգին մեռիր:

Խանձարուրիդ տնար մրմունջ
Օրօրոցիդ հուրջը օրալ,
Ազգ, հայրենիք երգեց իմ հուրջ
Դու հայրենեաց ես մատաղ:

Դու հայրենեացդ սիգանին գոհ
Մարտիկը, որդեակ, ժամ հատաւ,
Երկինք ու ազգ յայդ ճիան գոհ·
Մայրդ ալ վանն այդ քեզ ծնաւ:

Աբշալոյսին, վերջալոյսին,
Աղօթքէ վերջ՝ ու առաջ
«Զքեզ ծներ եմ ազգին համար·»
Զըս՞ի, որդեակ, օն յառաջ:

Ցառաջ, որդեակ, ահա կ՛երթան
Քու ընկերներդ բիւրաւոր·
Որպէս ընկեր պատրոցական՝
Քաղցր է ընկեր կռւարաք:

Ցառաջ, որդեակ, իմարտ անմահ,
Տէրք անվախ կուրծք ու ճակատ·
Հոգ չէ թէ քեզ կը պոնէ մահ,
Չի յաղնժամ է ազգն ազատ:

Պ· Վ· ՆԱԹԱՆԵԱՆ

ՂԱՐԻԲ ՄՇԵՑԻ

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Ձեզ չատ բարև բերեր եմ հայի գեղերէն·
Ախբէրքըս ինձ ղրկեցին պէպ էս կուման --
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման)
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր·
Խղճացէք հայ ազգիս, տէք մէկ մէկ թ ո ւ ր:

Հայ ազգը մեր տեղ նեղ օր կը քաշէ,
Սամանլին ու քիւրդը կեանքերս կը մաշէ·
Օր կ՛ըլլայ՝ գերեվար կ՛անէ մեր ազգս,
Օր կ՛ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց·
Թէ չօգնէք՝ մենք ալ չուտ կ՛ըլլանք ցիր ու ցան·
Խղճացէք հայ ազգիս, տէք մեզ հ ր ա ց ա ն:

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կոյանք,
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք·
Խեղճ հայն օրնիբուն ծազր է ու ծանակ,
Ո՛վ ազբարք, բերեր եմ ձեզ այսպէս սև բօթ,—
Զուզենք մենք ձեր ոսկին, տէք մեզ վ ա ռ օ ղ:

Ա՛յսքան չատ տանջանքին ինչպէս դիմանանք,
Մինչև ե՞ր ձեր դիպց անօգ պիտ ճնաք·
Ա՛ր ազգը տէր չունի սլավօնի նման,
Բարի՝ դուք ըլլայիք մեզի օգնական,
Հոգիներս արորած է, չանքերս ցաւոտ·
Զուզենք մենք ձեր փարան, տէք թ ն պ ա ն օ թ:

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի գէնքէն,
Շատ ալ մահ դուշման կերաւ մեր ձեռքէն,
Առանց տառ աշխարհքը մեր չէ բազմամարդ,
Հիմի փուշ կը բռնի, ուր առաջ էր վարդ·
Բայց մենք ձեր սընտուկի փողին կարօտ չենք,—
Հայ ազբարք, չնորհեցէք դուք մեզ մէկմէկ գ է ն ք:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԱԻԱՐՍՑՐԻ ՆԱՀԱՏԱԿԸ

Թէ հայրենեաց պատկառիր
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց քաջերն պատկել։

Մատեաց գազաթ թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Ասուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հոտոտել։

Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղը։
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնով։

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Ախն գաշտին մէջ ոչ խոտ, վարդ։
Այլ վարպանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հատատ։

Քանդակագործ քաջ եղիշէ
Գրիչն իձեռ գայ յԱրտազ,
Ձափէ, ձևէ, գրէ, դրոշմէ,
Կեանք, մահ, հատատաք վարդանայ։

Ա՜հ, վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնէ մահարձան
Մենատաններ, խաչին գմբէթ,
Աւետարան սուրբ տաճար։

Ծագէ արև քոյդ ճառագայթ,
Ձագանայ լեռներ, մութ խորչեր։
Այն տեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այնտեղ պատկեր նահատակ։

Լուսին, լուսին, աշքովդ անքուն,
Պահէ հայոց ոսկորներ,
Եւ մայիսի զարթ ցօղով՝
Ցօղէ անոնց չերմիճներ։

Արծիւք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլք ամրան հիւր,
Դուք հակեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն։

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ չինէք բոյն։
Ու ծիծեռնակ գայ ու երթայ
Մինչև հայոց գայ գարուն։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

ՀԱՅԵՐՈՒԱ ԹՈՒԽԸ

Դու խելօք, հաչուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կ'ասեն, չաս ունես·
Բայց թէ փողէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, փողիդ ալ վըրան։

Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր·
Բայց թէ թըրէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, թըրիդ ալ վըրան։

Ի վերս սա քանքար քեզի աւած է
Հեղինակ անունդ աշխարհ փուած է·
Բայց թէ գրչէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, գրչիդ ալ վըրան։

Հեռատես մաքով դուն գարդ արեցար,
Հզօր իշխանի սիրելի դարձար·
Բայց թէ մըտքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, մըտքիդ ալ վըրան։

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ·

Բայց թէ ձեռքէդ չահ չունի Հայաստան՝
Թըքել ենք քո ալ, ձեռքիդ ալ վըրան։

Երկինք չնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի սացար հռչակ ու հանճար.
Բայց Ա՛ն լեզուէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, լեզուիդ ալ վըրան։

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լցած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, ուսմանդ ալ վըրան։

Կուտամ քեզ պատիւ, կ'ուննաս դու յարգ,
Ու կը դնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ.
Երբ օրօրանէդ մինչև գերեզման
Ջըգամուռնքդ լինի փ ր կ ե լ Հայաստան։

ԴԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ.

ԵՂԲԱՑԸ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան չքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար.
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ գարնեն վարուկ քնար,
Զանիմ ձայն մի այնքան սիրուն,
Քան զանճկալի եղբայր անուն։

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մենք,
Որ մրրկաւ էինք գաւազած.
Բախտին ամէն սև չարանենգ,
Ի մի համբոյր ցրին ի բաց։
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանճկալի եղբայր անուն։

Երբ ալեւոր մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէքով,
Սրտի խորունկ վէրքերն դաժան,
Քաղցր արտասուաց բուժին ցողով։
Ընդ ատեղօք եայլն։

Մէկտեղ լացինք մենք ի հնուս,
Եկէք գարձեալ յար անբաժան
Խառնենք զարտասր և զխնդուս,
Որ բազմածնունդ ըլլայ մեր չան։
Ընդ ատեղօք եայլն։

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ.
Ջհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր։
Ընդ ատեղօք ինչ կայ սիրուն
Քան զանճկալի եղբայր անուն։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՑԸ ԱՄԵՐԻԿԱՑՈՒՄ

Էս հակատնեայ աշխարհում
Ամենայն ինչ է փոխւել,
Կրօնք, լեզու, ազգութիւն,
Մօտայի է վերածւել։
Էս ինչ է — մօտա է։

Հայ պատանին թէ բռես,
Օ՛, նա գիտէ ամէն բան.
Դատարկ գլխով փաթաթէս,
Խօսքով փրկէ Հայաստան։ Էս ինչ է եայլն։

Եկեղեցի գնալիս
Քաֆէ-չանթան է կարծում,
Ոտքը ոտքի վրայից
Նա երբեք վար չէ առնում։

Մէկ էլ տեսնես փողոցում,
Ոսկի ակնոցը քթին,
Անգլիերէն է ջարդում,
Ծծնոզ ժպիտն երեսին։

Հայ սիկինը իր զաւկին
Անգլիերէն է խօսում,
«Փափա, մամա, կուա մօրնինկ։»
Անպէտ թութակ է պարծնում։

Հայ քարոզիչ-պաւելին
Հայաստանն է մոռացել։
Վարդան, Ներսէս, Սահակին,
Նա երբեք չէ քարոզել։

Հայհոյում է և Բաֆֆին,
Զայն սրիկայ է կոչում։
Իրանց փոխան Հիշքօքից
Իւղոտ ռոճիկ է պանծում։

Դուք չէ՛ք տեսնի վարդապետ
Լայն մօրուքով ու վեղար,
Հագած ունի բրինձ ալպէրթ
Ու սիլինդրը շողահար։

Նա չէ պահում և մեծ պահք։
Մ՛հա, ստամոքսն է տկար։
Բայց ամպիոնից պահք ու ծոմ
Քարոզում է անդադար։

Հայ օրիորդ նազելի,
Օ՛, չատ սիրում է ոսման,
Սենեկումը հայելի,
Դէմքն է զննում անպատման։

Նա չէ սիրում հայ տղայ,
Սա կարճ է, միւսը ցած,

Դա տգեղ է, նա աղքատ,
Աչքն օտարին է անկած։

Թէ ուզում ես բախտ չինել,
Ճաշբանապետ կը լինես։
Բայց քիչ օրից անպատճառ
Շուռնչդ եգիպտոս կը քաշես։

Ճաշարանում չիք պարոն
Կոկոզավիզ, թեթևիկ։
Հոն պառկում է, հոն ուտում,
Վճարում է ապառիկ։

Եւ խօսում է ա լ ա մ օ տ,
«Պօնժօռ միւսիւ» քեզ կ'ըսէ։
Բայց հէնց իր պարտք թէ ուզես,
Ֆիթն բերան կը կախէ։

Մի էլ տեսնես երկու հայ
Ընկերութիւն են կազմել,
Բայց հաշիւներ քննելիս
Իրար գլուխ են պատռել։

Էսէնց է, մօտա է։

Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի ՉԷՆ ՀԱՅԵՐ

—o—

Ի պէն՛ հայեր, ի սուր՛ և ի հրացան՛,
Տաճկահայաստանէն կոչում է մի ձայն։
Լեռնից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք, հայեր, թռէք՛ դէպի Հայաստան։

Արևելք, արևմուտք, հարաւ ու հիւսիս,
Դպրեցից, թնդաց քաղցր աւետիս։

Հայկայ քաջ զաւակաց առոյգ կրծքերից
Ազատութիւն հնչեց, ամէն կողմերից։

Խումբ խումբ հայեր դէպի Տաճկահայաստան
— Փրկութեան աւետիս առած իրենց —
Դիմում են ցնծութեամբ իրրև հարսանիք,
Ուխտած ոտքը արիւնով փրկել հայրենիք։

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում
Արիւնածարաւ վրէժ, վրէժ է գոչում.
Սրիւնով ներկւում են բոլոր գաշտերը,
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ աւար ու պանձ հայերին թողնում.
Ցոպութիւն, յաղթութիւն գոչ ենք մխաձայն,
Թշնամին յաղթած է. կեցցէ Հայաստան։

ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ հայրենիք ես կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդուն կը վայել՞է
Հեռանալ Հայաստանէն։

Մխիթ արծաթ, ոսկի, գոհար,
Կ'սիրե՞է Հայաստանը,
Այն որ կ'ողբայ որդոց համար՝
Խղճալի Հայաստանը։

Խոր տխրութեան մէջ է թաղւեր։
Թագուհի Հայաստանը,
Բոբիկ ոտքով, արձակ մազով,
Կ'արտասւէ Հայաստանը։

Անգութ երկինք ալ չէ յիշեր,
Մոռացեր է Հայաստանը,

Անարիւն հայեր՝ ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը։

Ո՛հ, թողէք իս՝ խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննման Հայաստանը։

Արև ծածկեր է իր դէմքը,
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևն ալ մարեր է,
Միւս է հազեր Հայաստանը։

Թշւառ որդիս ձայն կը ձգէ
Ողբալով Հայաստանը,
Ո՛հ, չկայ հայ որ սփոփէ
Նւաղեալ Հայաստանը։

Մինչև կարի իմ վերջին շունչ
Պիտի կանչեմ Հայաստան,
Պըլլըմ մէյ մ'իմ հայրենեացս
Հապա մոռնեմ ի գերեզման։

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կարել այս ձայն չէ՛, չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին։

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

Վ Ա Ր Դ Ա Ն

Իմ հայրենեաց հոգի վարդան,
Հոգիս հոգոյդ եղնի ղուրպան.
Որ Տղմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կարիճներով,
Զարկիր, զարկար, ինկար՝ քաջքաջ
Պարսիկ սփռած իճախ ու աջ:
Իմ հայրենեաց արև վարդան,
Արևս ար՛ուդ եղնի ղուրպան:

Աւետարան ու խաչ առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ Թողիր գացիր,
Անուշ արևդ հողին տուիր.
Որ հայրենեաց հղաչ արև
Շաւարշանայ դաշտին վերև:
Իմ հայրենաց, հայլն:

Արիւնդ կարմիր կարմիր թաւիաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ թափեց ցօղիկն աչից.
Որ հայրենեաց վարդեր բացւին,
Պլպուլն երգէ դրախտի սարին:
Իմ հայրենեաց արև վարդան,
Արևս ար՛ուդ եղնի դուրպան:

Ս. Հ. ՖԻԼԻԿԵԱՆ

ՎԱՆՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Պզտիկ տղայ, չեմ օրօրիլ օրօրանքըդ որ քուն ՚լաս,
Հայ աղբարքըդ ոտքի եան, մենակ դո՞ւ ետ պիտ մնաս.
Զարթէ՛, հոգիս, անուշ քունէդ, թող աչերըդ լուս տեսնին,
Արևմուտքէն արև ծագեց, բախտը բանեց հայ ազգին:

Զար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ.
Ով որ չուտով ոտքի ելլէ, ազատութիւն կը գանէ,
Սիրուն որդի՞ս մինէկ մենակ չար լուծի տակ պիտ մանէ:

Մենք սուլթանին չատ խնդրեցինք կողկողագին ու լացինք.
Աղի աղի արտասուքով ձեռք ու ոտը լուացինք.
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի հայերուն,
Այժմ, նայինք, ան կը լսէ՞ չառաչիւնը սուրերուն:

Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ
Ու այդ թուլիկ աչիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ.
Ըսարուկ գնա՛ արեան դաշտը, վերադարձիր ազատած,
Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

Լ Ճ Ա Կ

Ինչ՛ու ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քո ալեակք,
Մինէկ ալեացդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

Եւ կամ մինէկ կ՛ղմայլի՞ն
Ալեակդ երկնի կապուտին,

եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նմանին փրփուրիդ :

Մելամաղձոտ լճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ.
Սիրեմ քեզ պէս ես ալ
Գրաւիլ, լռել ու խոկալ :

Որքան ունիս դու ալի,
Ճակատս այնքան խոկ ունի.
Որքան ունիս դու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ գոզդ ալ թափին
Բոյլք աստեղաց երկնքին,
Նմանիլ չես կրնար դուն
Հոգւոյս որ է բոց անհուն :

Հոդ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկները հոդ չեն թառմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ էք դու և օդ :

Լճակ, դու ես թագուհիս,
Չի թ'հովէ մ'ալ խորհրդիս՝
Դարձեալ խորքիդ մէջ խառով
Ձիս կը պահես դողդըղալով :

Շատերը պիտ մերժեցին,
«Քնար մ'ունի սոսկ» - ըսին,
Մին՝ «դողդոջէ, գոյն չունի.»
Միւսն ալ ըսաւ, «կը մեռնի :»

Ոչ ոք ըսաւ - «հէք աղայ,
Ուրդեօք ինչու կը մխայ,
Թերևս ըլլայ գեղանի,
Եթէ սիրտս չըմեռնի :»

Ոչ ոք ըսաւ, «սա տղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք ինչեր կան գրւած.»
—Հոն հրդեհ կայ, ոչ մատեան :

Հոն կայ մոխիր...յիշատակ...
Ալեակիդ յուզին թող լճակ,
Չի քու խորքիդ մէջ անճկաւ
Ցուսահատ մը նայեցաւ :

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՍԻՐԷ ՀԱՅԸ

—o—

Սիրէ հայը թէ ըլլայ
Աղքատ, տնանկ, անկարող,
Հագուստները հին ու մին,
Դռնէ իդուռ մուրացող.
Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս :

Սիրէ հայը թէ ըլլայ
Հարուստ, փարթամ, մեծատուն,
Ունենայ պէյ, էֆէնտի,
կամ ամիրա պատուանուն.
Անունն է հայ՝ եայլն :

Սիրէ հայը թէ ըլլայ
Հայր-սուրբ, տէրտէր, վարդապետ,
Վրան փիլոն, ծոցը խաչ,
կաթողիկոս, հայրապետ.
Անունն է հայ՝ եայլն :

Սիրէ հայը թէ ըլլայ
Բողոքական, այլ կրօն,
Ըստ քո կարծեաց անապաշտ,
Հերետիկոս, անկրօն.
Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս :

Գ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

Իմ սիրելի զաւակունքըս,
Կը թափառին օտար աշխարհ.
Ես ու՞ր գիմեմ, ու՞ր փնտռեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ:
Եկայք, որդեակըք իմ
Ձեր մօրն այցելութեան:

Դարեր անցաւ լուր մը չառի,
Իմ քաջերս մեռան, կորան,
Կուլամ՝ արիւնս կը սառի...
Մէկը չունիմ տայ ինձ դարման:
Եկայք ևայլն

Արիւնս ցամքած, սիրտըս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտով իմ որդեկաց
Պիտի իջնեմ սև գերեզման:
Եկայք ևայլն

Եւ դու հովիւ Թափառական,
Կ'երգես տխուր իմէջ հովտաց.
Եկ՛, արտասուենք Թանկ կորստեան...
Տխուր մահուան մեր որդեկաց:
Եկայք ևայլն:

Իսկ դու կռունկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու, աչքէս իրաց.
Ցեղին ողջոյն տուր զաւակաց,
Չի կեանքիս մէջ յոյս է մեռած:
Եկայք, որդեակըք իմ,
Ձեր մօրն այցելութեան:

ՀԱՑ ՀԱՑԴՈՒԿՆԵՐ

Մինչ բնութիւնն էր զարթ
Բացօդեայ պարզ երկնից տակ.
Հայ հերոսներ անտառի մէջ,
Երգում էին երգ մ՛յուտակ:

«Մենք ենք ազատ հայ պատանիք,
Աչխարհն է այս լեռները.
Սուրն է միայն մեր սիրելին,
Եւ ընկերը՝ պէրտանը:

Մեր պարգերն են՝ գէնքերը,
Եւ Թանկ ոսկի վամփչատան.
Անկողինը կանանչ խոտ,
Փնփուկ, մաքուր, պատւական:

Ապատարան՝ ժայռ քարերը,
Եւ լապտերը՝ վառ լուսնակ.
Բնակարան՝ անտառները,
Եւ հայելին՝ պարզ վտակ:»

Կարկաչատահ առուակները,
Օճապատյա Թաւալմամբ,
Անտառի խոր ձորերու մէջ
Թռփուում էին ցղացմամբ:

Ֆազըրահնչիւն պուլպարիներ
Մատների նուրբ չոչափմամբ
Մեղմիկ մեղմիկ գարնուում էր,
Մելամաղձիկ չառաչմամբ:

Բնութեան չքեղ այս վայրերը,
Սիրահարած սրտով,
Թնդացնուում էին անտառները
Երգ երգելով, պարելով:

Ծածանուում էր նրանց գլխին
Ոսկի բանած մի դրօշ
Նահատակի արեամբ ներկուած
Սա բառերը բացորոշ—

«Ա զ ա տ ու թ ի ւ ն, ա ր դ ա ր ու թ ի
Թշնամիների լոկ պաշտպան.
Անճնանելէր հայ ազգութիւն՝
Ընդդէմ չարին բռնութեան»

Միօրինակ զգեստները՝
կարճ ռազմի ձևի տակ.
Ոսկի բանած բաշլըխները՝
փայլում էին լուսնի տակ:

Փամփուշտները նրանց կրծքին
Խաչաձև ուսից ձգուած,
Փոքրիկ սիրուն պէրտանիները՝
Ծննկաց վրայ մինչ դրուած:

Ճանկարծ հսկիչ մը այդ խումբէն,
Խորհրդաւոր մի սուլով
Դադար տուեց այդ հանդէսին՝.
Դէպ ընդ առաջ քալելով:

Երիտասարդ լրաբերը
Արագաշարժ նժոյգով,
Բերում էր յաջող լուրեր
Զարթեցրեց, վառ ճակատով:

Լրտեսապետն էր խրկեր
Հրահանգ մը այդ խմբին.
Դէպի լեռն Տաւրոսի,
Սպասել մի մտանէի:

«Տղերք,» գոչեց խմբապետը,
«Շուտընդփոյթ հմանապարհ,
Զարնենք փչրենք այդ վտառը
Թող խնդայ Հայաստան Մայր:»

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

—o—

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ,
երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չէ կախում մեր լաց ու կոծին,
Ասացէ՛ք, եղբարք հայեր, ինչ՞ անենք,
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին.
Ջնջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ և խօսք և պէնք —
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր չղթան կռեց.
Վ՛այ մեզ, չղթայով կապուած գերի ենք —
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի գէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարշ բողոք վաղուց ապիրատ.
Մեր գլուխ լալու ե՞րբ պըտռենք —
Հիմի է՞լ լռենք.

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ դառդուխեամբ լցրած իր հոգին,
Արդարութեան ձայն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.
Պանդ՛ուխտ, հալածե՛ալ, եղբարք, ու՞ր դիմենք.
Հիմի է՞լ լռենք:

ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻՆ

)o(

Թուրքը հասաւ՝ ելնեմ երթամ եղնուկներս հաւաքեմ.
Տանիմ անոր անկուշտ աչքից մի խալվաթ տեղ պահեմ.
Տաս ու քսան ջուխտ եղներիցս՝ միայեր են երկու հատ,
Անոնք էլ անշուշտ իմ ձեռքիցս կ՚առնու՝ թիւրքը
անհատատ:

Հերու կրակ տւեց՝ վառեց տուն ու տեղս, դէզերըս,
Մալ ու միւլքս պիթուն խլեց, տարաւ կոյս աղջիկներըս.
Խեղճ Արսէնիս, ա՛խ պալա չան, անօրէնը սպաննեց,
Հարևանիս մեծ աղջկան աչքը ճամբան նա թողեց:

Խեղճ Արսէնիս, աղջկներուն, թէ տանս չորս
պատերին
Անոնք մեռան, տուն այրւեց — ղազապի գայ օսմանլին.
Պարպատ էլնի թուրքի տունը, թախտը չարդւի
տուլթանին.
Պալքի հայի մարած աստղը՝ գինա վաղւան պէս փայլի:

Հօ՛, հօ՛, հօ՛, չուտ արէք եղներս, գաւրինք, կորչինք
այս տեղէն,
Հրէն թուրքը, հրէն քրդերն կուգան ուղիղ մեր վրէն.
Ջէ, եղնուկներս, հոս կայնեցէ՛ք՝ թող ձեզ տանի
օսմանլին,
Ասկէ ետև ալ ու՞մ համար պիտի վարէք դուք գետին:

Ա՛հա, դուն Աստուած, անգութ Աստուած՝ ո՞ր տանեն
պիտի լըսես
Մեր աղօթքը, մեր լաց ու կոծ, մեր ողողակ, աղէտներս:

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,
Իր լիրբ նզոված ձեռքը կարկառեց,
Աղգութեան վերջին կապը պատառեց.
Հայի կորուսաը մտա է, ինչ՞ անենք —
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր վառքն ազգային,
Մեր եկեղցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնագղեաա գայլին մեզ գլուխ դրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ուր՞ աղօթենք.
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ինչ՞ կ՚ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն.
Չե՞ն ասիլ որ հայք արժանի էին
Այդ ըսարկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք:

Թող լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով ետ խլենք,
Ու այնպէս լռենք:

ԳԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆՍՑ

(օ)

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ·
Ծագեց լուսնակ երկնքից,
Հովքուի փողն էր անուշ:

Հոտաղ եղներ կ'արածայ·
Մաճկալ պառկեր քունն անուշ·
Զրզղըղուն քամին կը փչէ,
Ծովակի հովն էր անուշ:

Դաշտեր, ձորեր ծիլեր են,
Ջրեր գըլգըլան՝ ձէնն անուշ·
Հաւքեր թառան իրենց բոյն,
Պլպուլի տաղն էր անուշ:

Անմահական հոտ կը բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ:

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

օ)(օ

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ կենաց բաժակը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսին աչերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:

Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անուտ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ բարեկամաց
Մէկտեղ սիրով ճօն կատարելը·
Ջատկի օրւայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ»ը՝ չէ ինձ համար:

Ինձ համար չէ ծնողաց լացը,
Ինձ համար չէ աղջկայ տխրիլը·
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ ինձ համար:

Բայց ինձ համար կուգայ ժամը
Կ'երթամ թշնամեաց պատերազմը·
Եւ մահաւէտ սպանիչ գնդակը՝
Անդ պատրաստուած է ինձ համար:

(Թարգ·) Ք· Տ· Գ· ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ

«»

Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է չարժելու,
Ժամ է, ժամանակ ոտքի կանգնելու·
Հասել է արդէն հայերիս օրհաս,
Լինել չլինել մեզնից է կախուած·

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք,
Հերիք ուրիշից օգնութիւն հայցենք·
Մենք ենք տանջուողը, մենք չարչարուողը,
Մենք պիտի լինինք մեզի փրկողը:

Մերն է հայրենիք դարերով ճնշած,
Դարեր չաս ու չաս արիւնով ներկւած։
Պահանջէ մեզնից արիւնը մաքրել
Թշնամու արեամբ՝ մեր լեռներ, ձորեր։

Շտապի՛ր, եղբայր, ահա առ քեզ ղէնք,
Սրանով մենք միայն փրկւելու ենք.
Այս է գործածուած մեր դէմ թշնամին,
Այս պիտի լինի գործիք մեր ձեռքին։

Շտապիր, եղբայր, իդաչա պատերազմ,
Սպասում է մեզ թշնամին իկադմ.
Աչխարհի սկիզբից ամբողջ մարդկութիւն
Այս տեղ է դեռ իր պատասխանը։

Գ. ԹԱԴԻՈՍԵԱՆ

ՎԱՆՑՈՑ ՀԱՑՐ-ՄԵՐԸ

-o-

Հայր մեր երկնաւոր, սուրբ ՝լա քո անուն,
Հային երկրաւոր տուր արքայութիւն.
Ամէն բանի մէջ քու կամքը թող ՝լայ,
Միայն թէ հայը լուծի տակ չի ՝լայ
Ոչ չոր, ոչ կակուղ հացդ մենք կ՝ուզենք,
Միայն տուր ամէն հայի ձեռք ղէնք.
Զենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թէք վերցուր թուրքի խայտառակ հարկը.
Գլորէ մեզ, Աստուած, մարտի փորձութեան,
Որ չուտ ազատի ազգը քո Հայկեան։

ԳՈՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԱՒԵՏԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—o—

Առիւծի պէս գետին ինկած վիրաւոր,
Մըռնչեցիր ահեղ ձայնովդ զօրաւոր.
«Ա՛խ, դու ոսոխ, անգութ ոսոխ, անօրէն,
Այս ցած կերպով առիր վրէժ դու հայէն։

Քանի քաղցր էր քեզ՝ հրացանը ձեռիդ,
Կռւի դաշտին դուրս գար քո դէմ թշնամիդ.
Մարտնչէիր հերոսի պէս աննման,
Հարւած տայիր ու մանէիր գերեզման։

Քու պարթևազն հասակ ու քաղցր լեզուն
Սիրտ էր տւեր, կեանք էր տւեր խեղճ հայուն.
Աչխատութեանդ պտուղն, աւա՛ղ, չըվայլած,
Մեռար, ո՛վ քաջ, թողլով զմեզ սգամած։

Ազատութիւն հայ գեղջուկին, հայ ազգին —
Քու նպատակն էր, ո՛վ նահատակդ անգին.
«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» գոչեցիր մինչ վերջին չունչ՝
Երբ չարաչի մէջ պառկեցար անմըռունչ։

Կըտակ թողիր հայ պատանուն, սուրբ ուխտով,
Զըմոռնալ քու անհուն սէրը ու գորով,
Զըմոռնալ քու ներչնչած վրէժի ոգին.
Վըրէժ լուծել, ջարդել, փչրել վատ քիւրտին։

Ալ դու երբոր հանգիստ առիր հողին ծոց,
Նորոգեցիր մեր սրտերի դառն խոց.
կ՝ուխտենք այժմէն, չըմոռնալ քեզ, քու անուն,
Մինչև ծագի մեզ մի նոր յոյս — փրկութիւն։

Ու երբ հասնի գարուն անուշ զեփիւռով,
Քու դամբանիդ չուրջը հաւաքւինք խումբով,
Պսակ հիւսենք, երգեր ձօնենք քու անւան,
Ծաղիկներով ծածկենք բոլոր քու տապան։

ՎԱՋԳԷՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Օ՛ն, փութացէ՛ք, հասեալ է ժամ,
Հարէք մարտի փողերն ուժգին.
Մեզ ահարկու կայ պատերազմ,
Արեամբ պինեալ է թշնամին:
Փչրենք, ազատ բանանք դռներ
Զար նախանձին մեր ոխերիմ,
Որ դարերով է մեզ փակեր
Ի կուրութեան, ի բանտ մթին:
Ի զէ՛ն, օ՛ն փութացէ՛ք,
Գունդ ի գունդ հայկազունք,
Լուսովն այս նոր տարւոյս վանենք
Բռնութիւն, դաւ ու նենգ:

Մեր մարք, մեր քորք խոցեցան չատ
Շղթայակապ ի գերութեան,
Մինչդեռ մեր հարք, եղբարք ազատ
Անփոյթ էին կոյրկուրան:
Արդ և սոքա լուսովն ուսման
Տեսան վէրքերն իրենց ապդած.
Ուսոի լինին մեզ օգնական
Առնել նախանձ արտահալած:
Ի զէն, օ՛ն փութացէք, ևայլն:

Ազատութեան կանգնենք դրօշ,
Մեր իգական փափուկ սեռին.
Տեսնեն մեր քալ ընկերք անյուշ
Թ՛այնու իրենց է մեծ բարին:
Նոր տարւոյ զէնք առէք, զինուորք,
Մեր բառն ընենք հաւատ, յոյս, սէր,
Իմաստութեան դատերք ենք, քորք,
Այս մեզ փառք՝ պսակ, այս ձեզ հրաւէր:
Ի զէն, օ՛ն փութացէք,
Գունդ ի գունդ, հայկազունք.
Լուսովն այս նոր տարւոյս վանենք
Բռնութիւն, դաւ ու նենգ:

ՀԱՍՍԻ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէ՛, քաշեցէ՛ք, ։իրուն եզներ,
Առաջ տարէք արօրը:

Վարը վարենք, ակօս փորենք,
Ի՛որ ակօսներ հողի մէջ.
Սերմ ցանենք որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալի մէջ:

Կըգայ ձմեռ, մենք վախ չունենք,
Ուրախ կ՛անցնի մեր օրը.
Ուտելու միչտ պաչար ունենք,
Լի և կուչտ է մեր փորը:

Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թող չասեն մեր դրաց իներ,
«Ծոյլ են Հասօի եզները:»

ՐԱՖՖԻ

ՀԻՄԻ Է՞Լ ԶՈՒՏԵՆՔ

—o—

Հիմի է՞լ չուտենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ ոսպ, լուբիան ամբողջ Մեծ Պասում
Մեր խեղճ փորերըն էր կըրկռացնում,
Ահա Զատիկը մեզ բերաւ ուտիք.
Ասացէք, եղբարք հայեր, ինչ՞ անենք,
Հիմի է՞լ չուտենք:

Հիմի է՛լ չուտենք, երբ քառասուն օր
Ապաշխարեցինք ու պաս պահեցինք,
Խժան ապրանքներ թանկ թանկ ծախեցինք,
Իւղ, պանիր, գառ կէս գնով առինք,
Թանկագին հաւեր էժան գնեցինք.

Հիմի է՛լ չուտենք:

Հիմի է՛լ չուտենք, երբ համոզւած ենք
Թէ աշխարքում մենք լաւ ապրելու ենք,
Շատ մեզք գործել ենք, բայց չենք կարմրել,
Թող կարմըրեցնի կախէթու գինին,
Իսկ հաւկիթներն էլ մենք կարմըրցրենենք.

Հիմի է՛լ չուտենք

Հիմի է՛լ չուտենք, երբ մենք դարպ չունենք,
Մեր դարպը փորն, է պէսաք է լըքցնենք,
Լաւ խորովածը իր հոտը բուրեց,
Մատղաշ գառնուկը փուռը կարմրեց,
Մեր բերաններն էլ քաղցից չըոտեց.

Հիմի է՛լ չուտենք

Հիմի է՛լ չուտենք, երբ Հայաստանում
Այս տարի, փառք որ սով չէ լսւում,
Դա էլ մի դարպ էր. քանզի մեզանից
Շարունակ հացի փող էին ուզում.
Իսկ մենք այս տարի էդ դարպից պրծանք,

Հիմի է՛լ չուտենք

Հիմի է՛լ չուտենք, երբ մեր փորերը
Միշտ լաւ ուտելով մենք հաստացրինք,
Հաստափոր անուն իսկ արժանացանք,
Անիծեալ սիսեռը մեր զահլէն տարաւ,
Եւ մենք Մեծ Պասում քիչ ըղաբացանք,

Հիմի է՛լ չուտենք

Հիմի է՛լ չուտենք, երբ օրացուցում
Ուտիք է գրւած մինչև Համբարձում,
Շատ հայեր Մեծ Պասին ուտիք են ուտում,

Ասում են հայ ենք և չեն ամաչում,
Բայց մենք Մեծ Պասը զայրմ բռնել ենք.

Հիմի է՛լ չուտենք:

Հիմի է՛լ չուտենք, խոզերն ինչ կ'ասեն,
Երբ մեր տեղ եղներ, գոմէշներ խօսեն.
Զե՞ն ասիլ, դոքա խոտ ուտողներ են,
Եւ իրանց բերնի համը չըգիտեն.
Ամէնքս մսակեր քաջ գազաններ ենք,

Մինչև ե՞րբ չուտենք:

Եկէ՛ք անինայ գառն ու հաւն պատռենք:
Տըռաքւելու չափ լազաթով ծամենք,
Ու այնպէս լռենք:

ԿԸՌՈՑ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա.

Երբոր բացւին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռն.
Զքնաղ երկիրն մեր Արմէնիոյ
Երբ փայլէ իր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,
Երբոր ծառեր հագնին տերև.
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիա
Աշխարհն՝ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Սիւրիոյ,
Լեռն Լիբանան և իր մայրեր,
Տեսի երկիրն Իտալիոյ,
Վենետիկ և իր կօնտօլներ.

Կղզի նման չէիք մեր կիպրեաց,
Եւ ոչ մէկ վայր է արդարև.
Ցանկամ տեսնել իմ կիլիկիա
Աչխարհն որ ինձ եառուր արև:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ
Ցիչատակաց իր կարօտի.
Ցորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարև,
Երթամ ննջել յիմ կիլիկիա
Աչխարհն որ ինձ եառուր արև:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՈՒ

—o—

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հնչա բարբառ մայրական.
Փափկահնչիւն բառերուդ
Նման, արդեօք ալ տեղ կա՞ն:
Դու որ նախ ինձ հնչեցիր
Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս
Դեռ իմ մտքէն չէ ելեր:
Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից, ծաղկաւէտ:

Ի՞նչ դառըն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու,
Բռնի իրեն գիս քաչեն,
Սրտէս արիւն կը հեղու:
Ո՛հ, այն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող իսրտէ.
Ջէ՛, այն չէ՛ քաղցր իմ լեզու
Որ սիրով գիս կ'ողջունէ:
Իմ մայրենի, եայլն:

Լեզու համակ սիրաչարժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ,
Մինչ կը հնչես դուն քեզի
Սրտերն ամէն գողացար.
Հնչէ՛ք, հնչէ՛ք յաւիտեան
Վեհ դիւցազանց պերճ երգ դու.
Թոթուէ փոշիդ, խոր մութէն
Ել երևան, պերճ երգ դու:
Իմ մայրենի, եայլն:

Ցաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեաց միշտ նորէն ու նորէն.
Կչռեալ անուշ քոյդ տողեր
Թող ամէն սիրտ արծարծեն,
Շնորհ ունել արարչէն,
Կամ պէտք ըլլայ ալ օթել.
Շրթունքս սրտէ բորբոքած
Կ'աղաղակէ անարգել,
Իմ մայրենի քաղցր լեզու
Կեաց անսասան, կեաց յաւէրժ.
Կեաց միշտ լեզուդ հայկարժան,
Կեաց ծաղկալից, ծաղկաւէտ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ, ին՛չ անուշ և ինչպէս գով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենեաց.
Գնա՛, անցիր սրտէս իրաց։

Ո՛հ, ին՛չ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան իւր ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թռիր սրտէս իրաց։

Ո՛հ, ին՛չ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային գիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես վտակ իմ հայրենեաց.
Գնա՛, հոսէ սրտէս իրաց։

Թէպէտ թռչնիկ և հովն հայոց
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն հայոց
Նոճիներու մէջ կը սողայ։
Նոքա՛ հառաչք են հայրենեաց.
Նոքա՛ չերթան սրտէս իրաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԿՈՉ ՄԱՐՏԻ

Տղայք, ժողվըւինք հեռուէն ու մօտէն,
Զինւոր կանչելու փողեր ձայն կը հանեն.
Մաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք։

Առաջ ալ քալենք, ո՛հ, առաջ ալ քալենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք.
Մաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք։

Ահա մեր առջև կայ անթիւ թշնամի,
Բայց մեզ վանելու զօրութիւն, ուժ չունի.
Զօրութիւն է մեր կամք, մեր երգն այս ընենք,
Ու քաջութիւնով միշտ առաջ ալ քալենք։

Առաջ ալ քալենք, եայլն։

Մինչ մահ կը հասնի մենք կ'ուզենք մարտնչիլ,
Մեր քաջ զօրապետ չի կրնար յաղթուիլ.
Հայկայ փայլուն սուրը մեր ձեռքը առնենք,
Ցաղթութիւն տանինք ու առաջ ալ քալենք։

Առաջ ալ քալենք, եայլն։

Շատ նեղութիւնով կ'ստացւի յաղթութիւն,
Թշնամուն երբեք չընենք մենք գթութիւն.
Սակայն վտահ ենք թէ պիտի մենք յաղթենք,
Երբ անյողդողդ մենք միշտ դէպ առաջ քալենք։

Առաջ ալ քալենք, ո՛հ, առաջ ալ քալենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք.
Մաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք։

(կրօնական երգէ մը բարեփոխուած)

ՍԵԻՐԱԿ ԱՉԵՐ

—

Սևորակ աչե՛ր, աչե՛ր սևորակ,
Ձեր մէջ փայլուն է մի վառվռուն կայծակ.
Դուք իմ սրտիս մէջ կրակներ էք թափում,
Դուք էք իմ սէրը, ես ձեզ եմ պաշտում:

Աչեր սևորակ, սևորակ աչեր,
Ձեր մէջ տեսնում եմ մի երկնային սէր.
Դրանց սիրելու եմ մինչև դագաղ,
Դոցա պէտք է ես լինեմ զոհ, մատաղ:

Դուք սիրուն աչեր, դուք քնքուշ աչեր,
Սև էք դարձրել իմ պայծառ օրեր.
Դուք մաշում էք ինձ անողորմագին,
Եւ չէք խնայում հասակիս ծաղկին:

Շողում էք սիրով մինչ իմաՀ գրաւիչ,
Լցած էք չնորհով, հոգեկան աչեր,
Ինչո՞ւ ձեր մէջից այդպէս կախարդիչ
Թափում են տաք տաք բոցեղէն կայծեր:

Քանի՛ սպանիչ ցանում էք վիշտեր,
Սրտիս մէջ անփորձ և դեռատի սիրուհի.
Քանի՛ տրտմութիւն, քանի՛ դառն վէրքեր,
Սպդում էք նրան անբուժ, թափանցիկ:

Թափեցէ՛ք, ուրեմն, բռնաւոր աչեր,
Ձեր ողջ թունաւոր նետերն իմ վրայ.
Թող այրեն, ուտեն իմ կեանքիս թելեր,
Երջանիկ վայրկեան ինձ համար չկայ:

Բայց կը մոռնաս, կայս դու նազելի,
Այն խաղաղ, պայծառ ժամեր սիրելի,
Երբ մենք ձեռն ի ձեռն լուսնակ գիշերով
Զրուցում էինք անուշ խօսքերով:

Երբ ուսիս վրայ գլուխդ խոնարհած
Իբրև մի քնքուշ սրտակից ընկեր,

Համբուրում էինք միմեանց, ցնորած,
Աստանալով սէր և ոսկի յոյսեր:

Դեռ չէ թառամել քո վարդն ինձ տւած,
Ինչան անմեղ դրկախառնութեան.
Ինձ դու մոռացար, անգութ, անաստւած,
Այո, մոռացար և պարտք սրբութեան:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ԼԵՒՈՆ ՎԵՑԵՐՈՐԴ

—

Մատաւ արև երջանկութեան
Գլխուս պատեց մութ.
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս,
Ինչպէս անցան չուտ:

Գիշեր ցորեկ կը հառաչեմ
Զկայ ինձ հանգիստ.
Ես իմ ցաւերս, ես իմ վիշտերս,
Որո՞ւ ես պատմեմ:

Աշխարհն ինծի աւերակ է
Մինչ գահէս զուրկ եմ,
Իմ հայրենիք, պալատ, գինւոր,
Ինչպէ՞ս չըյիշեմ:

Միթէ իմ սիրտս ապառա՞ժ է,
Որ չհառաչեմ,
Ո՛հ, կիլիկիոյ անտէր որդիք
Երբ ես կը յիշեմ:

Եգիպտացիք, ազգ խուժադուժ
Քանդեն զհայրենիս.

Ո՛հ, հայրենեացս պաշտպան Լեւոն
Գնաց տարագիր։

Ի գառագիղ փակեալ Լեւոն,
Սէգ առիւծ հայոց.
Ազատութիւն կը մռնչեմ,
Ո՛հ, էլ չկայ յոյս։

Վերջին ծիլն իմ, վերջին ճիւղն իմ
Ռուբենեաց տոհմին.
Չիս քանդեցին ձեռք խուժադուժ,
Հատաւ չառաւիղ։

Վերջին կտակ ձեզ, ո՛վ հայեր,
Սիրով մխացէք,
Ձեր միութեան և սիրոյ կապ
Սատար խնդրեցէք։

Էլ ոչ ոքից չկայ ձեզ ճար,
Դուք ձեզ օգնեցէք.
Ես իմ վիշտեր, ես իմ ցաւեր
Ձեզ պատմեմ հայեր։

ՄՇԵՑՈՑ ՀՂՃՈՒԿ ՁԱՅՆ

—o—

Ընցաւ տարին, հայոցս էլ փառք ընցաւ հետ,
Դրախտի տարէն գարուն յետին բարև ետ.
Կարիճք առան զէնքերը, լքան տակ հողին,
Վա՛յ մըր գլխին, ան մուր էկաւ էն օրին։
Հայու աչքեր թող մեզ լան,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լան։

Հայերս գերի եղանք բախտին անողոք,
Աստւած, հրեշտակ, մարդ չլսեց մեր բողոք.
Մըր լալերու ձէն ծածկըւաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրտիս հառաչանք։

Հայու աչուղք թող մեզ լան,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լան։

Մըր աշխըրհի քակվու կ չէնքերու ներքև
Նստուկ մամ, պապ, ճժեր ճնացին անարև.
Նօթի, տկլոզ, ա՛խ, չկայ տէր տիրական,
Անգութ քրդու զուլմին եղած են խուրպան։

Ղարիպ ախբէրք թող մեզ լան,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լան։

Մատղաշ աղջիկ ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի.
Էնպէս դրած ձեռքերն աչից ամչկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ։

Հայ աղջիկներ թող մեզ լան,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լան։

կեցէ՛ք, Մշու դաշտի քամիք, քիչ մ՚ կեցէ՛ք,
Մըր ողբաձէն բարևն էլ ձըր հետ տարէք.
Ու երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հոնկաց ըսէք ղարիպ մըր հայ ախբրատանց.

Մըր արտասուք սրբեն թող մըր աչվընուց,
կ՚ընցնի տարին էլ չլանք, էլ չլանք։

ՏԱՐԱԳԻՐՆ

—

Ընդ աստեղօք օտար ափանց
Տարագրելոյս չիք բերկրանք.
Լքեալ հոգւոյս յոյս հայրենեաց,
Դու ես միայն սփոփանք:

Օտար, աստղեր լոյս չունին
Օտար երկիր ինձ մթին,

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Ջրեր պղտոր ու լեղի.
Դաշտք, անապատք, հովիտք, արտեր,
Ու պարտէզներն անբերի:

Օտար ծառեր չուք չունին,
Օտար ծաղիկք հոտ չունին:

Օտար երկիր երջանկաբեր
Ծանր այդ պայման ինձ համար.
Ջիւն, ձմեռ են իր զարուններ
Ջունին երբեք ինձ ամառ:

Օտար երկինք ամպոտ են,
Օտար արտեր անպուղ են:

Օտար թէև չնչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր.
Քեզ, Հայաստան, սիրակարօտ
Սիրտս համայն քեզ նէր:

Օտարուքիւն դուն փուչ ես,
Այլ հայրենիք դուն վարդ ես:

Մ. ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՀԱՑ ԱՂՋԻԿԸ

—

Ո՞վ ես որ գաս առանձին,
Ջեռքդ կուրծքիդ խաչապէս.
Ծունր դրած իգեաին՝
Լռիկ առ ո՞ բողոքես:
Ասա՛ թէ ինատած կը սիրես,
Ո՞վ ես և ու՞ր, ո՞ր աշխարհ,
Եռանդագին խնդրում ես՝
Մատաղ սիօգդ տակար:

—Ես հայ աղջիկ մ'եմ զինուր,
Տղմուտի մէջ մկրատած.
Պատմուճաններս են բոսոր,
Ջէնքս է խաչն յաղթապանծ:
Ջինուր կ'երթամ Հայաստան՝
Օրօրոցիս օրօրով.
Ջինուր կ'երթամ Հայաստան՝
Իմ հայրենեաց կարօտով:

Անբիծ ճակատդ է կնճռոտ,
Ցօնքերդ լծով ալեկոծ.
Կոյս՛, սիրտդ ինչի է կարօտ,
Որ հրաշունչ հանես բոց:
Երթալ կ'ուզես, կը յուզիս,
Արդեօք սիրովը մարդո՞ւ՝
Թէ սուրբ սիրովը կրօնի,
Որ Աստուածն է սրտերու:

—Իրաւ աղջիկ մ'եմ տակար,
Սակայն խաչի եմ զինուր.
Աղատութեան սիրահար՝
Ջոփեմ զաչխարհ ես բոլոր:

կայծակ ու չանթ ինչ են որ
Գլխուս թափին բոցալիր.
Գնդակ ու ռումբ բիւրաւոր,
Վարդից թերթեր են կարմիր։

ԱՂԱՒՆԻ ՅԻԼԼԿԵԱՆ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

—o—

Ո՛վ ծիծեռնակ, վարանած թռչնիկ,
Ինչ՛ չախրագին ձայնիւ
Կ՝եղանակես մօտ իմ բանտիս.
Միթէ վարուժանդ սիրուն
Հոս մի այն՞ակ թողուց քեզ,
Եւ դուն անմխիթար կը հեծեծես.
Ո՛հ, լաց ուրեմն ինծի պէս։
Բայց երանի քեզ, բիւր երանի,
Կրնաս թռչիլ՝ թեթեւ
Թեւոցդ ինծայր ընդ սար և ձոր.
Իսկ հոս՝ արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց.
Եւ ոչ մեղմ հովիկ մ՛ալ կը փչէ։
Գէթ դուն պնա՛ դանել սիրելիդ.
Սլացիր արագ, սակայն
Դարձիր նորէն մօտ չտառիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն
Լեր դու վկայ տխուր մահուանս.
Եւ իմ չերմիս վրայ ճըճըւալով
Գէթ դու յիշէ պիս անմոռաց։

ԱՐԱՔՍԻ ԱՐՑՈՒՆՔԸ

—o—

Մայր - Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պարում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եզերքին՝
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։

—«Արաքս, ինչ՞ու ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգաւոր ես ինձ նման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի պղտորիլ յաւակդ,
Հանդարտ հոսէ խաչտալով.
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թըփեր թող բըսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ,
Սառ ծոցի մէջ քո չրին.
Ձկուն ոստն ու տերև
Թող թաց անեն առավօրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք Թողղ դան համարձակ,
Գառն ու ուլը քու վճիտ
Ջուրը մանեն միշտ արձակ։»—

Մէջքը ուռցուց Աբրաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով՝
Խպէս խօսեց յառակից։

—«Ախպա՛ր, անմիտ պատանի,
Ներհնըս ինչո՞ւ գարնար
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։»

«Սերեվիի մահից յետ
Եր՞բ ես տեսել որ այրին
Ոտքից գլուխ պճնուի
Իր զարդերով Թանկագին։»

«Ո՞րի համար զարդարուիմ,
Ո՞րի աչքը հրապուրեմ.
Շատերն ինձ են տեսլի,
Շատերին ես օտար եմ։»

«Իմ պրոցի պիժ կուրը՝
Թէև այրի ինձ նման,
Սարկօրէն տանում է
Գայթակղչի կուռ չղթան։»

«Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես հայ՝ հային կը ճանչնամ.
Օտար վհատայ չուզելով,
Ես միշտ այրի կը մնամ։»

«Կար ժամանակ որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով.
Փախչում էի ափերէս։»

«Ծառակս պարզ ու վճիտ,
Կոհակները ոլորուն.
Լուսաբերը մինչև այգ
Ջրիս միջին էր լողում։»

«Ինչո՞ւ մնաց էն օրից,
Ո՞ր չրամօտ դեղերը,
Ո՞րը իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերը։»

«Տուրքը չըրի, ամէն օր
Իր սուրը ծոցէն Արաբատ,
Մայրախնամ ինձ սնուեդ
Պարգևում է Լիառատ։»

«Բայց ես այն սուրը ջրերով
Սուրբ Ակօրի աղբիւրին,
Պիտի ցօղեմ արտօրա՞յքն
Իմ առելի օտարին։»

«Կամ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կըկըզած,
Իր նամա՞զը կատարէ
Թուրք կամ պարսիկը հոտած։»

«Մինչ իմ որդիք, —ո՞վ գիտէ —
Ծարաւ, նօթի, անտէրունչ,
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...»

«Հեռո՛ւ, հեռո՛ւ քշեցին
Բընիկ ազգն իմ հայկեան.
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկրօն, մոլեկան։»

«Դոց՞ա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը,
Եւ կամ դոց՞ա հրապուրեմ
Ճոպոտ, պըլչած աչերը։»

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ,

Ինձ մի՛շտ սգաւոր կը տեսնէք.
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»—

Էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք ուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԳԵՐԻԻ ԵՐԳԸ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ, հոգովս անդադար.
Բայց, աւաղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռուում և ես:

Հանապազ տանջւեցայ քու ճակատագրով,
Սրտումս չդիմաների ճայները կրեցով...
Թող այստեղ չարչարւիմ, անծանօթ, կապուած,
Միայն քեզ, հայրենիք, տեսնեմ ազատուած:

Ա՛խ, քո ազատութիւն վտիտորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քու օր կարմրում է.
Զըգիտեմ ինչպէս է կռիւն հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...

Տարուում է միշտ համբաւ ապանութեան ահեղ,
Թափում է ազգն արիւն, բայց ես չեմ էնտեղ:

Կը փշրեմ շղթան, կ'ելնեմ ես բանտից,
Սրբել դառն արցունք քու սեգ աչերից.

Քաջ ընկերներով հետ է ինձ կռւել,
Եւ սուրը գործի համար քաղցր է մեռանել.
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչընչանալ, կամ լինել ազատ:

Ց. ՔՈՒՉՈՒՊԻԳԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՍՏՂԻՆ

—o—

Մեր սիրուն հայրենեաց
Բեւեռը չողչողող,
Մեր սիրուն քաջազանց
Աճիւններն ցարդ հսկող,
Պայծառ աստղ որ այժմիկ
Լոյսդ կ'ընես թափանցիկ.
Մինչև հայ պանդխտաց
Սրտերուն կուտաս բոց:
Ո՛վ քաղցր յոյս դու մխիթար
Տարագիր հայոցս թշուառ,
Ինչ՞ աշխուժ նորինոր,
Ինչ աշխուժ ոգեւոր,
Կ'արծարծես սրտերնուս,
Ո՛վ հայոց միակ յոյս:
Չէ ալ չըվհատինք բնաւ, ո՛վ հայեր,
Մեզ քաջալեր են յոյս և ժամանակ.
Չ'է, ալ չըվհատինք բնաւ, ո՛վ հայեր,

ժամանակին հետ առաջ ընթանանք·
Առաջ ընթանանք հոն, ուր հրաւէր
Հրաւէր կարդան մեզ նախահարց աստղեր·
Թէ Հայկայ որդիք ենք,
Թէ Հայկայ արիւն կրենք·
Ամէնքս ալ խոստբը սէր
Հայրենեաց ինչէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլանք միշտ արժանի:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՈՐԿՐԱՄՈՂԻ ԱՂՕԹՔԸ

Արեւելք առաջին
Եւ արեւմուտք որ է վերջին՝
Նառեալ Հային դէմ փարչին
Եւ զանազան իւր փըչին:
Բարեխօսեա մեծ կարապին,
Որ զանազանէ իւր գինին:

Բարեխառն է գինի
Եւ յայս փայլուն սեղան իւր,
Գէր գէր հաւեր զանազան
Եւ այլ կարագ խառն ընդ մեղրի:
Բարեխօսեա Աայլն:

Գերապոյն լաւ մազա
Եղով տապկած ճուկն թագա,

Խումար մարդուն բաղ պտուկ,
Բըղղով բռնած սիրուն բաղա:
Բարեխօսեա Աայլն:

Դարձեալ հայիր թէ ինչ կայ·
Հալվա, բէօրակ և փախլավա,
Գառըն ըրած ղափամա,
Եւ փորն իլիք պահարլամա:
Բարեխօսեա Աայլն:

Երանեալ հերիսա,
Եւ պաուլական քալափաչա·
Սամիթ, թարխուն, ասիդա,
Ցոլով եփած փալուդա:
Բարեխօսեա Աայլն:

Զարդարեալ է սեղան
Ղապլու փըլլավ մըսով եփման,
Ցեղ ու ցեղ պիպէռով
Եւ քիշմիշովըն միաբան:
Բարեխօսեա Աայլն:

Էրևեցաւ օրհասարակն,
Փութով եկեալ լահանա,
Եաիրաշ, քիւֆթէ, ղալիա,
Այխի եկուն և ղապուրղա:
Բարեխօսեա Աայլն:

Ընարեալ ընտիր աղաւնի
Եւ պըլաըրչին սեղանոյս իբաբ,
Ոչխարի միս, իլիկամ,
Փանճակէօշն է լաւ քէպապ:
Բարեխօսեա Աայլն:

Թագաւոր է խոռոզըն
Եւս առաւել գեղեցկագոյն,
Կարմիրերանգ գոյնըզգոյն,

Թագ ու պարծանք մեր սեղանոյն։
Բարեխօսեա Հայլն։

Ժողովեցան ի սեղան,
Արձակեցին վխտրջան.
Ուտեն, խմեն անուշ գինին
Եւ փառըս տան անճառելոյն։
Բարեխօսեա Հայլն։

Ի կաքաւուց բերեալ միս,
Ի սալամուց Լաւ նաֆտալիս.
Աղաւնոյ ձագ մեղ ընթրիս
Հանոյ թըւեցաւ բազմականիս։
Բարեխօսեա Հայլն։

Լռեցին միաբան
Եւ ննջեցին ամենեքեան,
Երբոր քնեցան ու զարթեան
Շուտով հասեալ գաւն ու կըթղան։
Բարեխօսեա Հայլն։

Ննջացին և զըւարճացան
Երբոր պեսան գաւն ու կթղան,
Նստան բոլոր ի սեղան
Ըմպեն զարաղն ուրախանան։
Բարեխօսեա Հայլն։

Ծաղիկ բերեալ ի սեղան,
Վարդ, մանուշակ և ռէհան.
Զարանգիլ և սուսամ,
Նարգիզ գիւմպուլ և չուշան,
Բարեխօսեա Հայլն։

Կարմրացեալ գոյնզգոյն
Կանանչ բերեալ զվարդենին,
Մանուշակ թիւ պարանոց
Ջաղցրահոտեալ հոտոտելի։
Բարեխօսեա Հայլն։

Հազարավարդն ալ բոլոր
Զգունովն գեղ և ազուր,
Կոկոնին հետ միաւոր
Ի մէջ նոցա փառաւոր։
Բարեխօսեա Հայլն։

Զևացան ի սեղան
Պայծառ տեսլեամբն աննման,
Արձակեցին հոտ անուշ
Ջաղցրացուցին զքիմս մարդկան։
Բարեխօսեա Հայլն։

Զամբարանման փայլէին
Պայծառ գոյնով մէջ սեղանին,
Նոքա առեալ վայելեցին
Եւ փառս տին պարգեւողին։
Բարեխօսեա Հայլն։

Ճըռաթափ արարին
Ճըննդուկն մեծ և ահագին,
Բերին յառաջ զենեցին
Զփեսուրն իւրմէն կողոպտեցին։
Բարեխօսեա Հայլն։

Մեծամեծք խորհուրդ արին
Բերին ըզսագն ընդ արօսին
Մանրամասն կտրատեցին
Եւ ճըննճըղկան փորը լցին
Բարեխօսեա Հայլն։

Ցետոյ սինի մեծ կազմեցին
Անուշահամ զարդարեցին,
Բերեալ յառաջ մատուցին
Մէջ սեղանին բազմեցուցին։
Բարեխօսեա Հայլն

Նորոգեցան նոր սեղան,
Ցերբոր եհաս զճըննճըղկան՝

Ի յայն քառասուն մարդ մխաբան
Մէկ թևըն կերան կշտացան։
Բարեխօսեա Հայլն։

Շնորհեցին ի մրգերաց,
Ցառաջ բերեալ մատուցին.
Գեղեցիկ և զանազան
Նորոյ սեղան զարդարեցին։
Բարեխօսեա Հայլն։

Ուղիղ բոլսր և աղուոր
Սպիտակ, կարմիր և փառաւոր
Համով, հոտով լի խնծոր,
Մէջ մըրգեղացն թագաւոր։
Բարեխօսեա Հայլն

Ջամիչ, կըթուն եկեալ չաս,
Սրմաւ և թուզ մէկ մէկ հատ.
Շահրալուճ, լապլապուն,
Խառնեալ ի մէջ նոցա վշատ։
Բարեխօսեա Հայլն։

Պնդուկն եկեալ ամաններով,
Եւ նուշն ի հետ անուշ համով.
Ֆըստուխին է մազոտաբով
Քան զամենայն մրգերն յոլով։
Բարեխօսեա Հայլն։

Ջանաց խնկարն յառաջ մենակ,
Եւ յետ նորա խաբպիզակ, սեխ,
Եւ ընկուզն զմբերուկ
Շուտով հասուցէք դանակ։
Բարեխօսեա Հայլն։

Ռեհանն քաղցրիկ, մանանայ,
Նոզըն չաքար միանայ.
Ջաղուց մեղր ծաղր բոլոր

Մէջ սեղանին զօրանան։
Բարեխօսեա Հայլն։

Սերկեւիլ թըթուաչիկ
Նուռն ալ հետ լինի քաղցրիկ.
Անուշ մաճառայ տանձ, մալաչի.
Աբոսսի և մէկհրէնիկ։
Բարեխօսեա Հայլն։

Վասըն մեր գայ խարանփիլ,
Քաղցր տարշին և զանջաֆիլ.
Ղարապիպէռ, ղաղուլայ,
Ջաւըզ և բագում տարիփիլփիլ.
Բարեխօսեա Հայլն։

Տէրտէրներն և սիրացուքն
Ցորժամ սեղանոյս հանդիպին,
Հնչեցուցէք վանգն ու ծընծղան,
Երգեցուցէք տաղ և չարական։
Բարեխօսեա Հայլն։

Բամք թաւերաց սուզան Դաւթի,
Եւ քաղցրաձայն սանտուռ հըզօր,
Մխըինի և փող, տամպուրայ,
Նարինհասակ քամանչայ։
Բարեխօսեա և այլն։

Ցաւն էր պատեր զիս չորս զիմաց
Եւ ես տկար էի մտաց.
Զայսչափ կարէ ժողովեցի,
Որոնելով կամաց կամաց։
Բարեխօսեա Հայլն։

Իւսեալ պատիւս զարթացէք,
Ո՛վ մեծամեծք և տանուտէրք,
կերէ՛ք, արբէ՛ք, ուրախացէք,

Այսչափըս բաւ է, թէ գիտէք։
Բարեխօսեա Հայլն։

Փառըս տացուք ըսահեղծողին,
Այսչափ բարեաց պարգեւողին.
Օրհնէ, տէրտէր, ղհայր-մեր-յերկին,
Ելեալ գընայք յեկեղեցին։

ՄԻՒԱՑԵԼ սարկաւագ

ՀԱՑՈՐԴԻԻ ԹԱՂՈՒՄԸ

—o—

Ոչ փող գարկինք, ոչ արճագանգ լեռնասոյզ
Յարէ խաբ չարաչըղուկ տարին լուր.
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ
Երբ պատանւոյն բացինք մռայլ փոսի դուռ։

Գիշերական մունջ ըսաւերներ չուրջ կային,
Երբ հրացանի կոթով գհող փորեցինք.
Լուսին միայն դողդոջ չողար մեր գլխին,
Սուգ էր պատեր գդաշտ, բլուր և երկինք։

Պէտք չէր գագաղ և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցէր ազատորդի գէմքն ունցին.
Նա յետ մարտին կարծես յոգնած կը հանգչէր,
Եւ վերարկուն կարմիր բաւէր իր անձին։

Անձայն ու կարճ ննջեցեալոց մը գրուցեց,
Մեր քաջ տէրտէրն, գինւոր հայոց ե՛Աստուծոյ,

Գովեց գմահ և գքաջութիւն իր օրհնեց,
Թողլ չըտաւ հառաչմ ու ճիչ հանելոյ։

Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշէն
Տեսանք գգեղ ճակտին և վէրքն պայծառ.
«Ո՛վ պատանեակ,» ասինք ամէնքս մկկերնէն,
«Վասն հայրենեաց մեռար, դու չատ ապրեցար։

«Գնա՛, գրուց՛է, հայկազարմից մեծ ոգւոց
«Որ կան այստեղ ազատ ու քաջ գեռ հայեր.
«Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց,
«Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր։»

Մէյմ ալ քամին յանկարծ փչեց ցրտաչունչ,
Լուսնի չողերն եկաւ գոցեց մթին ամպ.
Եւ մեր սրտերն գերդ ուրւական անմըռունչ՝
Սև գլուխնին անկած գիտեն ապշութեամբ։

Ցայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իր վրան,
Խաչ մը դրինք ինչպէս իր մօր պատուէր եաւ.
Ոչ ալ չքեղ տապանագիր, ոչ տապան,
Ձինքը մենակ թողուցինք իր փառքին հետ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՐԴԱՐ ՁԱՑՐՈՑԹ

—

Հերի՛ք, որդեակ, այսքան տարւոյ տառապանք,
Հերի՛ք դաժան անդութ քիւրտի ոտն ինկանք.
Գանի խոնարհ գլուխ տւինք գայլերին,
Այնքան ծանր բեռը դրին մեր վզին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք՝ թէ մենք հարազատ
Հին քաջերի արիւնից ենք և ազատ.
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
Մեր բահերն էլ կ՚անեն նրանց չանաչակ:

Ինչո՞վ են նրանք մեզ սիրելու արժանի,
Նրանք մարդ չեն, այլ գազաններ վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսում ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք ելբրա սէրն արդար:
Հերի՛ք, ելլենք ևայլն:

Նրանց է մեր կոյս աղջկունք, հարսունքը,
Նրանց է մեր ճակտի քրտանց արդիւնքը
Նրանց սրի ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց գամբռ մեզնից չատ է թանկագին:
Հերի՛ք, ելլենք ևայլն:

Մենք եղբայրներ ունինք հեռու աշխարհում,
Նրանք մեր վրայ լուիկ արցունք են թափում.
Ձեն խնայիլ թև ու թիկունք, կը հասնին,
Շուտով կը գան՝ կը միանան սուրը գործին:
Հերի՛ք ելլենք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հին քաջերի արիւնից ենք և ազատ.
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
Մեր բահերն էլ կ՚անեն նրանց չանաչակ:

ՄՆԱԿԵԱՆ

ԿՏՐՒՃԻ ՁԱՅՆԸ

— o —

Թող կորնչին տաճիկները
Հայաստանի սուրբ հողից,
Իսլամական անարգ լուծը
Ջընջուի հայրենիքից:

Բաւական է որքան նրանք
Հայի արիւն ծըծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով,
Պետութիւն հաստատեցին:

Հայի հայը, հայի փողը,
Մինչև երբ տաճիկն ուտէ.
Իր գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ:

Աչքի տեղ աչքեր հանել,
Ատամի տեղ ատամներ.
Մեր մէկ հաւը գողացողին
Ամբողջ տունը թալանել:

Վրիժուց կայծակ թող բորբոքի
Հայ առիւծների սրտում,
Թաղենք խալամի գլուխներ
Դիւցազների երկրում:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

—o—

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ՝ ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք ակար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար։

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ինչպէ՞ս քաղցր հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապերն ու հայրեր խոր գերեզմանից։

Հնչի՛ր դու, հնչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Սրբի՛ բարձրացիր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու մոռացած վաղուց.
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառ՛ի քո սիրով։

Ամէն տեղ փչում է Աստուծոյ հունչը.
Սուրբ է այ՛ն միւս, այլ ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր.
Իմ երանական մտածութիւնքը —
Ապա կը խօսեմ իմ հօրըս խօսքը։

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՅՆԸ

—o—

Օտար ափունք ցրուած խափիւռ
Ո՛վ սիրասուն իմ զաւակունք,
Ձեր հայրենիք տրտում, տխուր,
Ձեզ կը դիտէ արցունք յաչկունս։
Իմ տաճարներս՝ սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս՝ արիւն սրբէ։

Ո՜հ, այս քանի՞ տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.
Ամուլ մրցում, հեռ, վիշտ և ցաւ,
Այս իմ բաժին ա՞յս է ձեր ջանք։
Իմ տաճարներս՝ սէր կը կանգնէ,
Իմ նախատինք՝ արիւն սրբէ։

Հնոց, ո՛վ ցաւք, որ օտարին
Փառաց, պատուոյ էք խնկարկու,
Անմահութեան դրոշմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք՝ ծախած չքոյ։
Իմ տաճարներս՝ դուք չէ՛ք կանգներ,
Իմ նախատինքս՝ դուք չէք սրբեր։

Կ՛անցնին այսպէս անթիւ օրեր,
Եւ յաւերակս նստած յերեր,
Իբրև այրի՝ հրոյ մատնած,
Կոյս՝ ոյր օժիտն է անարգուած։
Գոչեմ տաճարս ո՞վ կը կանգնէ,
Իմ նախատինքս ո՞վ կը սրբէ։

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՍ ՊԱՏՐԱՆՔԸ ՍԻՐԵՑԻ

—o—

Շուրջիս տափակ ցամքած կեանքէն զայրացկոտ՝
կանչեցի ես խեղճ կենսածին.
Բայց եաեէս կծու ծաղրով անամօթ
«Ի՛, ան միայն գրքի մէջն է» պոռացին.
Ես ալ գիրքը ինձի ընկեր ընտրեցի,
Ես պատրանքը սիրեցի:

Մենութեան մէջ լուռ մուրընչող սենեակիս՝
Զիրագործուղ երազներու մէջ թաղուած
Հեռու ու վեր սաւառնեցաւ միշտ հոգիս,
Հո՛ն, ուր կեանքիս գոհար յոյսերն են մազուած.
Ես, մօր մը պէս, անուրջներս գըգուեցի,
Ես պատրանքը սիրեցի:

Երբ գեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցաւ՝
Սիրտս դողաց յուզումով մը ներդաշնակ.
Սիրեցի ալ, միայն ոչ ան, որ անցաւ,
Այլ անոր տուրը յափշտակիչ դէմքին տակ
Նոր էակ մը, որ մտքէս հան անցուցի.
Ես պատրանքը սիրեցի:

Հայրենիքի հուր կարօտը բնածին
Երբ բըռընկցուց յուզուած լանջըս աենդօրէն,
«Դուն հայրենիք, դուն հող չունիս» հըծծեցին.
Ես դառնացայ. բայց ալ ուժգին այդ օրէն
Իմըս չեղող հայրենիքըս պաշտեցի.
Ես պատրանքը սիրեցի:

Ինձի համար այն ժամերը թանկ եղան,
Երբ ներըմնչուած սահղծեցի միշտ անդոյ,

Բայց անձնուրաց աղնիւ դէմքեր սիրեցի.
Երբ իրական աշխարհի մէջ միշտ դժգոհ
Իտէալի կեանքէն երգել ուզեցի.
Ես պատրանքը սիրեցի

ՇԱՆԹ

ՊԱՆԴՈՒԽՏԸ ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

—

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դուն գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ու՞ր, ինձ ա՛ւա,
Թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թռի՛ր ծիծեռնակ,
Ծնած տեղըս — Աչտարակ.
Անդ չինիր քո բոյնը
Հայրենի կտուրի տակ:

Անդ հեռո՛ւ, ալեւոր
Հայր մ՛ունիմ ես սգաւոր,
Որ մինակ իր որդւոյն
Սպասում է օրէօր:

Երբ տեսնես դուն նորա
Ինձնից չատ բարև արա,
Ա՛ւա թող նսաի լայ
Իր անբախտ որդւոյն վրայ:

Դու պատմէ թէ ինչպէս
Ատ անտէր ու խեղճ եմ ես.
Մինչ լալով ողբալով
կեանքս մաշեցի եղել է կէս,

Ինձ համար ցորեկը
Մութ է ընդմէջ արեգը.
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չէ գալիս:

Ախ՛ր որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ
Հայրենի հողից զրկուած:

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր թռիր արագ,
Դէպի հայոց երկիրը
Ծնած տեղը — Աշտարակ:

Գ. ԴՈՂՈԽԵԱՆ

ՉԻՆԻՈՐԻ ՉԳՈՑՈՒՄԸ

—o—

Մայր իմ մեր գոռ ճակատ կազմ կայ.
Ես կը խորհիմ քո վըրայ.
Պահապան կանք մինչ ի դաշտի,
Թշնամին մեր առաջի.

Ընկերք քաջք իմ չուրջս խռնած,
կը խորհիմ ի տուն, յԱստուած.
Չի քալ գիտեմ թէ պիտ առ վաղիւ
Ոմանք ննջեն ընդ հողիւ:

Մայրիմ, ողջ լեր, պիս թերևըս
Չէ հնար գրկել այլևս.
Այլ քաւ քեզ որ մոռնաս պիս, մայր իմ,
Թ'և ընդ մեռեալս գտնիմ:

Ո՛հ կ'անձկամ յոյժ տեսնել, մայր իմ,
Քեզ և բոլոր սիրայինք.
Այլ ո՛չ երբեք դասալիք ոք,
Քա՛ւ, մինչև դառնամ պատուօք:
Լուր տուր մանիչ այդ դասուց թէ
Անգութ խօսքն ամէն գիտէ,
Ժամեն, ճակատն, մեր զօրքն կը կտրեն
Մինչ Թշնամոցն թիկն կ'ածեն:

Մայր իմ, ևայլն:

Ահա ականջներըս կը հնչեն,
Որ գուշակէ յել ի զէն.
Իջիս, մայր, քեզ Աստուած պահէ
Որպէս արդարն միշտ կ'ընէ.
Ահա մարտին գոռիւն, գոչում
Որքան օդին տայ թնդում,
Ցոյս մեծ ունինք չուրջ պատել զրօչն՝
Գամ քաջիկ մեռնիլ որոշ:

Մայր իմ, ողջ լեր, պիս թերևըս
Չէ հնար գրկել այլևս.
Այլ քաւ քեզ որ մոռնաս պիս, մայր իմ,
Թ'և ընդ մեռեալս գտնիմ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԳ

Հուր բարկութեան համայն հայոց,
Բորբոքեալ գերդ բոց բարկաճայթ,
Ու կայծականցըս բիւր բիւրոց,
Զարթոյց ի մարտ սարս սառնասպառ:
Ջի վարանիմք արդ ասա, եղբարք,
Դաւարկ ձեռամբ, դաւարկ ձեռամբ,
Ձեռամբ յԱրտաշ, Տգմուտ, օ՜ն դերոյդ ի դերոյդ
Ի դերոյդ թռչիմք պանամք, պանամք, պանամք:

Հուր գէն ի ձեռին
Եւ վըրէժ ահագին,
Սպառեն և կան
Քաջք Արշակունեան:
Եւ յոր երկինք հանդիսասես
Զաշխոյժ նախնեաց յեղուս ի մեզ:
Հապ՜ն, քաջք քաջաց,
Ընդ սասան կուրծս
Մխեսցուք մկունս
Ուժգին ի հարուած:

ՍԻՏՏԻՑՃԵԱՆ

ԳԱՆԳԱՏ

— o —

Իմ հայրենիք թշուառ, անտէր,
Քու հողն ու ջուրն ինձ սիրուն.
Լոյսըդ, բոյսըդ և օդդ ընտիր,
Բայց կեանք չի տար հայերուն:

Հայի ստացուածք թէ ճոխ լինի
Կը կողոպտէ զայն օտար.
Հայն միշտ բոկոտն թող պըտըտի,
Ո՞վ է իրեն հոգատար:

Հայի կալուածք թէ ճոխ լինի
Կ'ըլլայ աւար օտարին,
Հայ չինուխիւնք, տուն և այգի
Ցափշտակէ թշնամին:

Հայի արեամբ ներկուեցաւ
Հայաստանի լեռն ու ձոր.
Հայի վրկիչ վերէն տեսաւ՝
Բայց լուռ կեցաւ անտովոր:

Աստուած՛, մինթէ դուն դուխ չունի՞ս,
Թշուառ հայի սերընդին.
Հայ արիւնէն չա՞տ կ'ախորժիս,
Կ'ուզես իսպառ կորընչի՞ր:

Թէպէտ հայի մեղքը չատ է,
Նոյնպէս չատ է իր տանջանք.
Շուտով եւիր գինքն ազատէ՝
Գործ մը գործէ ընդունակ:

Ողջոյն տէրք նոցա խամրած և այրած սև սրտիկ-
ներուն

Ողջոյն տէրք քրտնավաստակ ու բազմաւուժ հա-
րուստներուն,

Ողջոյն տէրք մերկ և նօթի տարաթափառ աղքատ-
ներուն

Ողջոյն տէրք ինձ սիրելի քաղցրաբարբառ գիտուն-
ներուն:

Ո՛հ, չեմ մոռնար և ողջոյնս տալ արիւնգերի
չինականերուն,

Որոնց վաստակ սուրբ և արդար կուլ եղած է վատ
քիւրտերուն.

Ողջոյն տէրք հայկեան մանկտւոյն որ մրմնջէ փառքն
անցեալոյն,

Թող մրմնջէ, թող հառաչէ, մինչև տեսնէ կենաց
գարուն:

Գ. ՇԷՐԵՆՑ

ՄԱՏՆԻՉ

—

Ո՞վ իր հարազատ եղբօրն է սատւմ,
Նորա սրտի հետ կեղծօրէն վարւում.
Պարզամիտներին ցոյցերով խաբւում,
Ծառրի ձեռքին գործիք է դառնում:

ՈՂՋՈՅՆ

—o—

Ողջոյն տէրք իմ հայրենեաց կիսակործան տաճար-
ներուն,

Ողջոյն տէրք, տերեակաց Սրարատեան գետառներուն.

Ողջոյն տէրք, դժբախտ հայուն, թշուառ հայուն,
չուառ հայուն,

Ո՛հ, ձեռք տէրք, ո՛հ, սիրտ տէրք, ոգի տէրք անկեալ
հայուն:

Ողջոյն տէրք Աւարայրի արիւնաներկ սուրբ վայ-
րերուն,

Ողջոյն տէրք տխուր Լուսինին, որ Լուսցնէ սև չիրիմ-
ներուն.

Ողջոյն տէրք ի հող լծած արքայական պալատներուն,

Ողջոյն տէրք գետնատարած սրբոց անբիծ մասունք-
ներուն:

Ողջոյն տէրք ոլոր, գլոր, մոլոր վազող գետակներուն,

Ողջոյն տէրք բոլոր պղտոր, աղի, լեղի աղբիւրներուն,

Ողջոյն ծաղկանց տուք որ խումբ խումբ կան թալկուն
մէջ հողերուն,

Ուր հայ տխակ թուխբէ ի թուխբ կեանք կը խնդրէ
դեռ վարդերուն:

Ողջոյն տէրք հայ մուսային որ լայ փառս իւր
հայրենիքին.

Ողջոյն տէրք իմ քնարին որ Հայկայ սանն է ողբեր-
գու.

Ողջոյն տէրք Հայաստանի լքեալ բեկեալ որդիներուն,

Ողջոյն տէրք գոռ և հուժկու, առոյգ ահաս քաջերուն:

Ո՞վ է որ մոռցած իր սուրբ հայրենիք,
Ուրացած եղբարք, ընկերք, սիրելիք,
Լոկ անարդ ոսկու և պատւի համար
Օտարին ջոհւում է յիմարաբար:

Ո՞վ է որ տեսնում մի հայ պատանեակ,
Նրա սրտում է արծարծում վառ կրակ
Ինչպէս մեերիմ ընկեր հարազատ.
Բայց վերջ դառնում է նրա դահիճ վատ:

Ո՞վ է որ լացնում է հատ մայրերին,
Անէծք են թափում իր կարիճ կեանքին.
«Ժուռ ու մուռ մեռնես առջև քո խօր մօր,
Ջեզնե քե խանգիստ ու խաղաղ մի օր»

Մ Ա Տ Ն Ի Զ՝, դու վիպեր ունես աս ձիրքեր,
Դու մեայն գործես այսկերպ վատ գործեր.
Դու քո կեանք յանձնում ես օտարի ձեռք,
Ա՛խ դու քանդում ես հայի տուն ու տեղ:

Բայց հատ մ'ի հատպիը, հասաւ ժամանակ
Սրթընցաւ հայը, կ'անէ հանատակ
Քեզ, ղի անարդ մահ մեակ հատուցում
Ունեննք մենք քեզ վարձք հայոց աչխարհում:

Ջկայ մէկը որ քո վէրքեր լըւայ,
Ջկայ ողբացող քո չերմին վըրայ.
Անէծք, նախատինք միշտ և յաւիտեան
Պիտի ողողեն քո անարդ տապան,

ՎԱՋԳԷՆ

ԵՐԳ

—

Երբ ալեկոծ ծովու վրայ,
Իմ մակոյկը խորտակւի.
Ես փրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կորի:

Բոլոր ուժովս և համարձակ
Բազուկներըս կը չարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափը կը թըռչեմ:

Անհատասար այս կռւի մէջ
Թէ ուժերըս չի թողնին,
Ալիքները յորձանք տալով
Դէպ անդունդը զիս տանին.

Այն ժամանակ ես սիրտիանք
Ես կը գտնեմ անոր մէջ,
Որ մեռնուր եմ քաջի նման
Կռիւ տալով մինչև վերջ:

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՀԱՑՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում ես ա՛խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ.
Ա՛խ, սիրտս խորւում ցաւիս չկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակում ածած,
Սեղանի վրայ առջևս է դրած.
Աչքս ակամայ վերան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, ա՛խ, միտքս մոլորւում,
Դառն արտասուքով աչքս պղտորւում.
Կարծում եմ բոլոր աշխարհ մըթնեց,
Արևն էլ խաւարեց էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ երբ կը տեսնեմ.
Էն սև սև աչերն՝ սև ունքով պատած,
Կարծես երկնային ղալամով քաշած:

Էն սև սև աչերն որ չտեսնեց սպանեց,
Բայց էլի չտեսնն դժոխքից հանեց.
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կրակի էրած, խորոված:

Էլ երբ կը տեսնեմ ես քեզ ման գալիս,
Բաղ բաղչայում սէյրան անելիս.
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբոր ձեր կարմիր թշերը տեսնում:

Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում.

Եւ իր արարչի տեսածն ասելիս,
Փառք քեզ, տէր Աստուած, փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ինչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ, հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ, բէդամազ կանեմ,
Ուրեմն ինչ անեմ, մոլորւած եմ ես:

Մոլորւած եմ ես օտար աշխարհում,
Հաւատան էլ օտար, օտար և լեզուն.
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
Հայոց աղջիկներ, դուք էք աննման:

Ձեր սէրն է միայն սրտումս պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի.
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

Գ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

ՉԵՓԻՒՌ

Դու փափկաթեւ մանկիկ չեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց սիփռուռ
Ինչ՛պէս թռչիս ինձ ընդ առաջ.
Ու խունկ և ղով ընծայելով,
Ջիս ողջունես հեզիկ չնչով:

Ո՛հ, կը սիրեմ զքեզ հողմիկ,
Երբ կը փութաս ինձի գալու.
Ի պար, ի թռիչ, ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակիս ինձ այցելու:

Ծաղիկ հոգիս քև զովացած,
Ծիլ ծիլ բացել ի լոյս կենաց:

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տուր հովին ու ծովծովրին,
Եւ անտառաց բարձրադիտակ՝
Ուր երամով սոխակք Թառին:

Թէ մտերիմն իւրեանց եկաւ,
Բիւր զմայլմանց յիշատակաւ:

Ո՛հ, կորուսած իմ հաճոյքներ,
Հոս վերըսաին գոնեմ զձեզ.
Ծառոց չքով էք ծածկուեր,
Ու փրփուրով առուակին հեզ.

Ահա կայտռէք ի յայս ծմակ,
Ի յայս թփուտ հովանոցակ:

Հոս դառն հոգիք մէկիկ մէկիկ,
Ճակատս իրաց հեռանային.
Եւ հոյլք ժամուց գեղապարիկ,
Սիրալիր Թեթեւ օրօրէին.

Եւ բնութիւն մայր որդեսէր,
Քնքուշ գրկաց մէջ մեզ գգւէր:

Հոս ձեւիէին երեկոյեան
Ի զով ստուեր պար մի կուսից.
Մաղեր հովուն բազմաբուրեան,
Սիրաք ընծայուած հեշտ վայելքից.

Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ,
Զիրար չոյեն սիրաստարփիկ:

Մտերմութիւն, սէր, կրակ ու բոց,
Ի՛նչ անուշ էք յայս տեսարան.
Ուր գալարիք ձեզ հանգստոց,
Ու անհուն դաշտեր զբօսարան.

Մտերմութի՛ւն, ինձ երանի
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի:

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց սիրուս,
Թռի՛ր, թռի՛ր ինձ ընդ առաջ.

Ու խունկ և գով ընծայելով,
Զիս ողջունէ հեզիկ չնչով:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԿԱՐՕՏ

—

Թողէ՛ք զիս, անէծք, ոճիրք մշտատև,
Վճիռք անողոք բախտին անարև.
Թողէ՛ք որ փշրեմ չղթայք իմ ոտից,
Ցոր գարք Աստուծոյ հեծեն վշտալից.

Զի զիս մայրական կարօտ տանջէ յար
Թողէ՛ք որ երթամ մեռնիմ յԱւարայր:

Թողէ՛ք զիս, օտար ափունք մի անգամ,
Թողէ՛ք որ սար ձոր անցնիմ ու գնամ.

Վալեմ թևաբաց դեռ աչերս ի լոյս,
Տեսնեմ ամպամած արևն իմ հոգւոյս։
Զի պիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ մոնեմ յԱւարայր։

Թողէ՛ք պիս, անգութ աստղեր ու լուսին,
Ծաղիկ ու պեփիւռ, արցունք պանդուխտին.
Թողէ՛ք որ ծածկիմ նոճեաց չուքի տակ,
Ուր վարդան հանդչէի ու վառաց վառակ։
Զի պիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ նաեիմ յԱւարայր։

Թողէ՛ք որ գրիչս առնեմ ու քնար,
Սրտիկս ու հոգիս լարեմ վշտահար.
Երգեմ, ո՛հ, երգեմ հառաչանք ու սէր,
Ցաշխարհն Աստծոյ, յերկիրն իմ աւեր։
Զի պիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ ու լամ յԱւարայր։

Թողէ՛ք մէն մաղերս չուրջ ածեմ կարօտ,
Տեսնեմ եղեմիս կենաց առաւօտ.
Տամ անդ սիրահար ընդիկս յետին
Զոր Հայուն բաժակ դրած է յերկին։
Բաւ պիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք, ալ թողէք մեռնիմ յԱւարայր։

Ս. Հ. ՇԻԼԼԻԿԵԱՆ

ՀԱՑ ԶԻՆԻՈՐ

—

Մասիսի ճակտին ամպրոպ պատռեցաւ,
Հայերուս արտէն վախ փարատեցաւ.
Նժոյգ է տակըս, ձեռիս այնալու,
Սուլթա՛ն, ունի՞ս ուժ ինձ դիմանալու։

Ըսարուկ եմ եկել կը դառնամ ազատ,
Ցեա խըլած քեզմէ հողն իմ հարազատ։

Անսուտ երդումով ուխտել եմ ազգիս —
Զոհել մարմինըս, զոհել և հոգիս.
Արհամարհելով սով և անդորրութիւն,
Տալ Հայաստանին սուրբ ազատութիւն։

Ըսարուկ եայլն։

Էլ ես ահ չունիմ քու վախկոտ զօրքէն,
Զըզուած եմ ես քու չարեաթ օրէնքէն.
Մշու դաշտերը, վան ու Արզրում
Կը լւանան տակի սև ու պիղծ արիւն։

Ըսարուկ եայլն։

Թըշնա՛ռ, քու յոյսն է չէրքէզն ու քիւրդը, —
Հա, մէկ քամին տամ նոցա բուրդը.
Ձեռքիս ունիմ ես Ղևոնդի լախտը,
Որ ջարդեմ-փշրեմ քու փըտած թախտը։

Սուլթա՛ն, սիրտ ունի՞ս, իջիր մարտի դաշտ,
Տե՛ս, քու առջևն է թշնամիդ անհաչտ։

ԳԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ

Ա. ՀԱՑԱՍՏԱՆ

Ողջոյն ընդ քեզ, Հայաստան,
Մեր դիւցազանց գերեզման.
Ողջո՜յն, հայոց թագուհի,
Պահակեալ փառաց հայրենի:

Երկինք խրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդք ծլին ոտքիդ տակ.
Իր մէկ նայուածքն երկնագեղ,
Քու արտասուացդ ըլլան դեղ:

Ո՛հ, ինչ անուշ նազեներ
Պիտի հնչեն սոխակներ,
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկեոնեան դաբնիկ:

Մանուկն յօրրոց կը խայտայ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ.
Երբոր նշոյլք կը ժպտին
Հայ աստեղաց նորածին:

Ո՛հ, հիւրասդ քաղ ալ հանգչի
Անմահութեան վեհ հոգի.
Մինչ զաթուն ի բարձանց
Պսակս սիրեն հայկազանց:

Փափուկ մատուռնք թող դրոշմեն
Հայ ատեբով ոսկեղէն,
Մեր սրտին մէջ՝ սէր և լոյս,
Մեր հոգւոյն մէջ՝ կեանք և յոյս:

Քու վիշտերուդ փոխանակ
Երկինք կանգնէ յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման,
Քեզի օրհնք չնորհեցան:

Ա. Ց. ԱՑՎԱՋԵԱՆ,

ՍԱԹԵՆԻԿ

Ոլոր մոլոր կուրն էր գալիս Կովկաս սարերէն,
Մի աննման ձայն էր տալիս էն միւս ափերէն.
Փախէ՛ք ասաղեր, արև ծագեց Կովկաս սարերէն,
Սաթենիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնակէն:

Հայոց քաջեր, վար դրէ՛ք զէնքեր չուտ ձեր ձեռքերէն
Սաթենիկն եմ կը յաղթուիք սիրոյս նետերէն.
Քեզ եմ ասում, քաջ Արտաշէս, դուրս եւ՛կ վրանէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ սև սև աչերէն:

Տաք տաք արիւն գոռ մի թափեր անմեղ սրտերէն,
Սաթենիկն եմ կը յաղթուիս իմ կարմիր թշերէն.
Մի պարծենար քու զօրքերի պէսպէս գունդերէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ սիրուն ունքերէն:

Մի խրոխտար քո յաղթական սէգ սէգ քայլերէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս փունջ փունջ մազերէն.
Բա՛ց չուտ չղթան, գերի բռնած եղբօրս ոտներէն,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ բլրուլ լեզուէն:

Քէն մի պահիր, վրէժ մի՛ լուծիր իմ Ալաններէն,
Բարձր է Կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն,
Ձայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քու խոր բանակէն,
Դուրս եւ՛կ մէյտան, թէ չես վախնում սիրոյս նետերէն:

Ս. ԳԻՒԼԶԱՏԵԱՆՑ

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ.
Նա քեզ հանեց իր կրծից,
Ինձ պարգևեց վերջին վարդ:

Մանկութեանս ոսկի ժամեր
Անցել են անդառնալի.
Կարած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն, վերջին վարդ:

Գարնան օրեր անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում.
Միշտ սպասում եմ քու տեսքին,
Դու ամառայ վերջին վարդ:

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս.
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք,
Մոքիս բերիր, վերջին վարդ:

Շատ չի տևել կը բացւի
Առաջիս սև դերեզման.
Ես աշխարհից միայն քեզ
Հետս կ'առնիմ, վերջին վարդ:

Ռ. Տ. Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԷՐԸ

Ջաղջը հայրենեաց ազատութեանը համար,
Եւ Քրիստոսի սուրբ հաւատոյն վեհափառ.
Այս երկու վեհ առթիւս ահա,
Թէ ինձ մեռնիլ արժան չըլլայ,
Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ
Երբ գերութիւն այսպէս տեսէ:

Ո՛վ սուսերդ իմ վաղակատար սայրասուր,
Եւ դո՛ւ, հրացան, որ կը ժայթքես բոց և հուր,
Վատ թշնամին խորտակեցէ՛ք,
Մեր բռնաւորն նետաճեցէ՛ք.
Կեանքն ինձ ևայլն:

Ով սուսերդ իմ պողպատեայ կատաղի,
Եւ դու, հրացան, վատ արիւնին ծարաւի,
Թող թշնամուն իրան փուշ,
Մեր բռնաւոր չունը սատկի.
Կեանքն ինձ ևայլն:

Հայրենիքի արիւնաներկ սեմոց տակ
Թշնամինուս փառնք չուտով սև դիակ.
Եւ նախահարց չունչ և կտակ
Հայրենիք՝ ըլլայ անոնց ժառանգ:
Կեանքն ինձ ևայլն:

Թող հայրենիք տխուր ճակատն վեր առնէ,
Եւ իր աչաց աղի արցունքը սրբէ.
Եւ իր որդւոց սիրոյ բարև
Տայ և ծագի պայծառ արև.
Կեանքն ինձ յայնժամ թող ծառայէ
Երբ հայրենիքն ազատ տեսնէ:

(Թրգմ.) Մ. Ց. ՏԱՄԱՏԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԸ

Օտար աստեղց տակ կը հեծէ պանդուխտը,
Երկինք օտար, երկիր օտար, ինք թշուառ.
Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, ինք թշուառ,
Սիրուն հայրենիք, անուշ հայրենիք,
Սիրտս և հոգիս քեզ կարօտի հայրենիք:

Հացն է ազի, ջուրըն անհամ, պալատ իրեն է դժոխք
Չի սիրելիք և բարեկամք չկան հոն.
Աւա՛ղ, ևայլն:

Ձմեռն էանց, գարուն ժպտի սիրադէմ,
Բայց պանդխտի հին վիշտերը միշտ հետևենն.
Աւա՛ղ, ևայլն:

Ծաղկունք փթթին, սոխակն կ'երգէ, ինք կ'ողբայ
Իր վշտալի՝ սև սև օրերն և ժամերն.
Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, և ժամերն,
Սիրուն հայրենիք, անուշ հայրենիք,
Սիրտս և հոգիս քեզ կարօտի հայրենիք:

ԿՈՒԻ ԿՈՉ

Ցառա՛յ, հայեր, հայրենիքի
Աղաւաւթեան ժամն է հասեր
Չէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
Դէմ արնոտ դրօշ է պարզեր:
Չէ՞ք լսեր դեռ Հայաստանի
Ժողովուրդի հառաչանքներ,

Ֆիւթաեր, թուրքեր հայ գիւղերի
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ:
Զէնքեր առնենք, հայեր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալենք յառա՛ջ, թող թուրք արիւն
Ծծեն հայոց գաշտեր:

Ինչ՞է կ'ուզեն այդ ցած ու վայրագ
Ֆիւթաեր, թուրքեր, մատնիչ հայեր.
Ու՞մ համար են այս անարգանք,
Ու՞մ համար այդ հին չղթաներ:
Մեզ համար են, հայեր, ա՛հ մեզ
Կ'արհամարհեն. դեռ համբերե՞նք,
Կ'ուզեն որ մեզ գերվի պէս
Իրար ծախեն. ինչ՞է կեցեր ենք:
Զէնքեր առնենք ևայլն:

Մոսկացէք, ով բռնաւորներ,
Եւ մատնիչներ Հայաստանի.
Մոսկացէք պի ժամն է հասեր
Որ վրէժ առնենք ձեր գործերի:
Ամէն հայ ձեզ դէմ պիտ կռւի
Մեռնողին՝ տեղ մեր հայրենիք
Նոր գաւակներ մեզպէս կը ծնի.
Եւ չենք հատնիր մինչև մեռնինք:
Զէնքեր առնենք ևայլն:

Կռւին մէջ մեր մեծ եղբայրները
Թէ մեռնին՝ մենք հոն կը մանենք.
Կ'երթանք գտնել անոնց հետքեր
Ուր քալաբար մեռնիլ կ'ուզենք,
Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կ'երթանք մեռնիլ անահ.
Այսպիսի գառն կեանք մեզ պէտք չեն,
Մենք ուխտած ենք վրէժ կամ մահ:
Զէնքեր առնենք ևայլն:

Ո՛վ դու սուրբ սէր հայրենիքի,
վեր վերցուր մեր թուլ բազուկներ.
Ազատութիւն մեր պաշտելի,
Զօրացուր քո հայ պաշտպաններ.
Թող յաղթութիւն լսէ քո ձայն
եւ վազէ գայ մեր դրօշին տակ.
Թող բռնութիւն մահմէտական
Տեսնէ քո փառք՝ մեր յաղթանակ:

Զէնքեր առնենք հայեր
Շուտով կազմենք գունդեր.
Քալենք յառաջ, թող թուրք արիւն
Ծծեն հայոց դաշտեր:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՀԱՑՈՒ ՀԱՒԱՏԱՄՔԸ

—

Կը հաւատամ որ աշխարհի վրայ
Հայից քաջքաջ հարգիկ ազգ չըկայ.
Նա թէկուզ տանջուի, արնքայ համաչայ,
Բայց հզօրին միշտ սարուկ պիտ՝ դառնայ:

Կը հաւատամ, որ խեղճ հայի համար
Կայ երկնք աստուած — մին, միւսից չար.
Հայը - աստուած, որ է տանջիկը գազան,
Որդին՝ քիւրդը, իսկ հոգին եւրօպան:

Կը հաւատամ, որ հայրը իր որդուն
Լաւ խրատեց ու խրկեց հայի տուն,

Որ եկաւ տանջեց, վօթեց չատ էրուն.
Զարչարեց, խաչեց, թաղեց խեղճերուն.
Եւ յետոյ յարեաւ գնաց Պարսկաստան,
Արեան դաշտ չինեց, նստեց յաջ անկեան:

Գալոց է նովին կատաղութիւնով
Եւ իր հօր աւած վայլուն զէնքերով.
Դատել (ջնջել) հայն ու Հայաստան,
Գազանութեամբ որոյ չիք վախճան:

Կը հաւատամ և հոգի - աստծուն,
Լուսաւորեալի և կատարեալին,
Որ կազմեց Բէրլինի դաշնագրութիւն
Եւ ազատութիւն խոստացաւ հային:

Որ խօսեցաւ մեծ կօնգրէսների մէջ,
Պարլամէնտներում արաւ հպարտ վէճ.
Որ քարոզեց իր առաքեալներին
Լոկ խոստմունքներով առնել սիրտ հային:

Կը հաւատամ, որ հային չատ ունի
Մեծ մեծ մարդիկներ, օտարին գերի.
Որոնք չինուր են այլոց պալատներ,
Բայց չեն կարկատում իրանց հօր տներ:

Կը հաւատամ, որ եթէ հայն իր
Գլխի տուղին ոտքը չըլիզէր,
Եւ ձեռքից չըտար հրացան ու սուր՝
Թուրքի լուծից վաղ ազատած կ'ըլէր:

Իսկ որք ասեն թէ գայ ժամանակ,
Որ թուրքը հային կըտայ ազատ կեանք,
Կամ գազան քիւրդը կը սիրէ նրան,
Կամ կ'ազատէ խեղճին եւրօպան.
Այնպիսիք թող լինին նզովեալ,
Կամ Հայաստանի մէջը կուսակալ:

Իսկ մենք որ կայր չենք, այլ ճանաչումք[1] ենք
Մէկ և միւսին, պիտ՝ խոստովանենք
Որ հային չըկայ հէչ ա ղ ա տ ու թ իւ ն
Քանի չըգիտէ վօթել նա էրուն:

Ս · ՍԱՓԱՐԵԱՆՑ

ՊԼՊՈՒԼՆ ԱԻԱՐԱՑՐԻ

—

Ո՛վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնեակ գիչերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ պլպուլիկ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջն հայոց երգէ հոգւոյս հետ:

Թագէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.
Ի խաչին թևէն թռայ ու հասայ,
Գաի քեզ ի դաչան քաջին վարդանայ:

Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՝ պլպուլ մեր աւարայրին,
Եղիչեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զվարդան ի վարդն տեսնու կարմրիկ:

Ձմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
Ցարտաղ գայ գարուն ի թուփ վարդենեաց.
Երգել ու կանչել յեղիչեին ձայն
Թէ պատասխանիկ մարդեօք տայ վարդան:

Հ · Ղ · ԱԼԻՇԱՆ



ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Գ. Մ. Ա. Ր — Ի. Թ. Պ. Ա.

(Ռափայէլ Պատկանեան)

Ծն. նոյ. 8, 1830 — Մեռ. օգ. 22, 1892

Նալբանդեանցի և Նազարեանցի հետ՝ Գամառ Քաթիպան անվեհեր մարտիկներու մէկն եղաւ այն ահեղ կռւին մէջ, որ վարեցին անոնք, 50-ական թուականներու սկիզբը, ...խաւարին դէմ: Ռուսահայերու վերածնութեան գործին առաջնորդներէն մէկն էր ինքը:

Գառասուն տարի գրչի մարդ, արտադրեց հսկայ գործ մը, հսկայ իր բարոյական ազդեցութեամբ, որուն վրայ կրթեւեցան քանի մը սերունդներ և պիտի կրթւին դեռ, քանի մանաւանդ բարեփոխած չէ հայու քաղաքական-ընկերական կացութիւնը:

Ամբողջ իր գրականութիւնը արդէն խաւարի դէմ այդ մաքառումի դրոշմը ունի: Անոզոք կռիւ այն բոլորին դէմ, որ մութ, սարկական, գլուխի յատկութիւններուն դէմ, որոնց չնորհիւ այլասերած էր հայնկարագիրը:

Գամառ-Քաթիպան ամէնէն մեծ երգիչն եղաւ նաև ազգային ազատագրութեան. ո՛չ մէկ բանաստեղծ անկէ առաջ և անկէ ետք կրցաւ այնքան յուզել հայու ցաւոտ սիրտը, այնքան խայթել, ոտքի կանգնեցնել անոր արժանապատուութիւնը:

Թուրքիայի հայը պաշտէց ան. այդ պաշտումին քիչ չնպաստեց Գամառ-Քաթիպայի ճկուն, անուշ լեզուն, որ շատ աւելի մօտիկ էր արևմտեան քան արևելեան բարբառներուն:

19 րդ. դարու հայութեան ամէնէն մեծ դէմքերէն մէկը պիտի մնայ Գամառ-Քաթիպան:

ԹԱԼԱՆԱՑ ԳԵՂԸ

—

Ծուխը ամպի պէս կ'ելլէր դէպի վեր,
Տընտղի նման բոցը կը քալէր.
Տուն, եկեղեցի, պարտէզ ու այգի
Անսիրտ անհոգի մառնած են կրակի:

Հայերն հօտի պէս սարսած կը վազեն,
Անգոզ դարձողէն օգնութիւն կ'ուզեն.
Օգնութի՞ւն: Խեղճեր: կասղած օսմանլին
Զար մահ կըսպառնայ զարհուրած հային:

Մայրը կականով կը փնդռէ աղջիկ,
Աղջկան գերի տարաւ չար տաճիկ.
Իր որդուն կ'ուզէ հայրը չտարած,
Որդուն կը տեսնէ խազուխի դրած:

Հայի հատաքած մալը աղքատին
Հէլալ փայ եղաւ անկաուսմ քուրդին.
Խեղճը յուսահատ կ'աչէ երկնքին,
Կըսպասէ նպաստ հրեշտակաց գ՚օրքին:

Խաբուսիկ յոյսեր...: Դեռ չատ ու չատ դար
Պիտի խաբէին, հայ, ինչպէս խաբեցար.
Թէ ինքզ չտնես քու գլխու ճարը,
Եր՚ը պիտի օգնէ քեզի օտարը....

Խեղճ մարդ, մի անգամ մեռնելէ վախցար,
Մինչև մահուան օրը հազար մահ տեսար.
Հազար մեռնելէ, հազար ցաւերով,
Ջաւկիդ փոսը ձեռքովդ փորելով....

Դու միշտ եղբօրդ անտերունջ թողիր,
Մտաիդ ծայրովը նորան չօգնեցիր.
Գլուխն առաւ խեղճը, գնաց հեռացաւ,
Հայաստան ձեռքէդ ամայի դարձաւ:

Դու կարծեցիր թէ ոսկին մեծ բան է,
Ամէն մի ցաւի, դարդի դարման է.
Ապա հէ՛ր ոսկիդ քեզի չի օգնեց,
Կնկանդ, զաւակիդ մահէ չի փրկեց:

Ա՛խ, հայեր, հայեր, թէ որ ձեր ոսկին
Կիսով չափ զոհէր յօգուտ հայ ազգին.
Առ միշտ կը դադրէր ձեր լաց ու կական,
Ու դրախտ երկրաւոր կ'ըլլար Հայաստան:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

—

Եկաւ ժամանակ, բարեկամ, բախտին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Իջաւ յԱյրարատ, հասաւ ի Տիգրիս,
Դարձաւ, դադրեցաւ, կեցաւ ի Մասիս:

Եւ ձայն տուաւ անկէ հայոց,
Ձայն մի Թորգոմայ որդւոց,
Որ մերկանան զգուրան ձմրան վարագոյր

Ժամ է արդ հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տանք սիրոյ համբոյր.
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան
Սէր և Միութեան:

Եւ հիշելափառ հայրենեաց խորան,
Բացաւ ախթագին իր քօղ ճգնութեան.
Հասին հոն մուսայք և յուսոյ հրեշտակք՝
Ախորժ երգեցին ցնծութեան նւագք.

Եւ սիրտ ուին անկէ հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց.
Որ մերկանան հեռ նախանձուն վարագոյր,
Ժամ է ևայլն։

Ելաւ Հայաստան նոր գարնան ի տես,
Դարձաւ ի հքեղ իր փառաց հանդէս.
Դարձի՛ր բախտակոծ քնարդ իմ հոգւոյն,
Դարձէք աւուրք կենաց, դարձէք յայգ յուսոյն.

Եւ լոյս ուէք անկէ հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց.
Որ մերկանան մութ գիշերուան վարագոյր.
Ժամ է արդ հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տանք սիրոյ համբոյր.
Համբոյր մեր ըլլայ կնիք մխութեան
Սէր և Միութեան։

Ս. Հ. ՓԵԼԼԻԿԵԱՆ.

ՀԱՅ ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ

Մեր հայրենիք թշուառ անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ.
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իր վրէժ, քէն ու սխ։

Մեր հայրենիք չղթաներով
Ա.յսքան տարի կապկապած,
Իր քաջ որդոց սուրը արիւնով
Պիտի լինի ազատած։

Ա.հա եղբայր քեզ մի գործ
Որ իմ ձեռքովս գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքովս լացի։

Նայիր նրան, երեք գոյնով
Նւիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանի Տաճկաստան։

Ինչքան կին-մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
կարէ օգնել իր եղբօրը,
Զանց չարիցի քո սիրուն։

Ա.հ՛ա իմ գործ, ահ՛ա գործ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք
Պատերազմի վառ հանդէս։

Ա.մենայն տեղ մահը մի է,
Մարդս միանգամ կը մեռնի.

Բայց երանի՛, որ իր ազգի
Ազատութեան կը զոհուի։

Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալերի.
Գնա՛, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգիս քեզ ընկերի։

Գնա մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է հայաստանցին։

— Աստց, տւեց օրհորդը
Իր եղբօրը մի դրօշ.
Մետաքսից էր, ոսկեայ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ։

Եղբայրն առաւ և ոգևորուեց
Իր սիրական քնքուշ քոյրը.
Առաւ զէնքը, սուրը, հրացան,
Հեծաւ իր ձին սևաթոյր։

Ճուխկ — կանչեց քաջ պատանին —
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակն հայկական։

Նա սուրբ է ինձ, երբ մկրտած
Արտասուքով ու կնքած.
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նւիրուած։

Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի։

Աստց, վազեց դէպի հանդէս
Տաճիկներուն յանդիման.
Իր արիւնովն գնել յաւէրժ,
Ազատութիւն հայկական։

Ոհ, իմ սիրտր կտրատւում է,
Տեսնելով այսպիսի սէր,
Դէպի թշւառ մի հայրենիք
Որ ոտնակոխ եղած էր։

Ոհ....արտասուք ինձ խեղդում է
Ալ չեմ կարող բան խօսել.
Զ'է, թշւառ չէ Հայաստան,
եթէ կանայք այսպէս են։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՏԵՍԻԼ ՀԱՑԱՍՏԱՆԻ

—

Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է ան.
Թէ անոր բեկբեկ թելերը վշտաւոր
Ինսի բարձրաձայն՝ իմ սրտիկս է ան։

Թէ հայ մուսային արտասուաչ նւագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է ան.
Թէ Հայաստանի սև բախտին հաշտագ
Լայ աղէկտուր՝ հեծեծանքս է ան։

Թէ իմս հայրենեաց կիսամեռիկ չունչ
Դեռ լըսի ախուր՝ իմ աղբերս է ան.
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշըշունջ,
Ոհ անկարեկիր իմ լալիքս է ան:

Եւ հայկայ փառաց յօժար աղբերգուն
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է ան.
Զորս հաղար տարեան պարծանաց գարուն
Սրճագանգ տուողն՝ աղաղակս է ան:

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր,
Ահա այս մաշած իմ կուրծքս է ան.
Սև սև թերթերուն մէջ սրտակոտոր
Սրատուօք դրուած՝ իմ աղիքս է ան:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր,
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է ան.
Թ'աչքէ անցնես չամբրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է ան:

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժս է ան.
Թէ ղէնք, թէ ղրահ, թէ տուր, թէ տուներ
Փշրած կտորած՝ ոսկորներս է ան:

Թէ արեամբ ներկեն ակունք եդեմին
Նշխար քաղերուն՝ իմ բիբերս է ան.
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է ան:

Թէ վճիտ գետերն, աղբիւրքն արծաթի
Լալիք առուակն՝ երակներս է ան.
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսան մռնչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է ան:

Թէ սառնամանիք ձմրան բքաբեր
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է ան.

Եւ քաղցրիկ գիւղուտ անուշակ հովեր
Ցրտագին փչեն՝ իմ շնչիկս է ան:

Թէ վտակ վտակ ցօղէ գյուղատակ
Զայս արտամաստակ՝ աչերս է ան.
Թէ սրտաճայնիկ երգէ գՀայաստան,
Կանչէ գՀայաստան՝ անկեղծ սէրս է ան:

Թէ մթին խորշերն ու ձորերն լռեն,
Սևերով ծածկին՝ մենաստանս է ան.
Թէ ողբ կը կարդան վայրերն եդեմին՝
Ճնշած լերդերուս արձագանգն է ան:

Եւ Հայաստանի հողերը ուխտիւ
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է ան.
Թէ կը համբուրեն կաթոգին խնդիւ՝
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է ան.

Եւ հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապաքսիւ՝ իմ ճակատս է ան.
Մասեաց սուրբ քարերն իր բարձն ու պառկ
Դրած սգաւոր՝ գլուխիկս է ան:

Եւ կիսակործան տաճարն հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղտապս է ան.
Ուր չիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նեազ առ նեազ՝ իմ յոյսը՝ է ան:

Ուր ախուր նստեր, մազերն են ծածկեր
Իր սեւուկ աչքեր՝ սիրականս է ան.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր
Ցուսով կոթներ՝ Հայաստանս է ան.
— Գերեզմանս է ան:

Ուր երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան
Ի մէջ իր փառաց՝ իմ բաղձանքս է ան.
Ցայնժամ թող մեռնիմ իր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս՝ միակ ուխտս է ան:

Ս. Հ. ՓԻԼԻԿԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԸ

Զարթի՛ր, զարթի՛ր, հերի՛ք ննջես,
Թշուառ, անտէր Հայաստան.
Քեզի նման գերի ազգեր
Սուր, գէնք առին՝ ազատուան:
Դեռ մինչև երբ պիտի քամէ
Քո արիւնը, այն ճիւաղ,
Շուն, բարբարոս, անյագ, տգրուկ,
Լիրը սուլթանը յօշաքաղ:

Ելի՛ր, ո՛վ մայր, նայ՛է չուրջըդ,
Անթիւ վայրագ գազաններ
Կը փառատեն անգթօրէն,
Զաւակներըդ խեղճ, անտէր.
Թէպէտ արժան քո քաջերուվդ
Եւրօպայի օգնութեան.
Բայց նա չանսար լացիդ, կոծիդ,
Ո՛հ, անգութ է Եւրօպան:

Դու մի՛ յուսար, թէ օտարներ
Ձեր վէրքերուդ դարման, դեղ
Պիտի գտնեն, որ կազդուրիս,
Առիւծ մ'ըլլաս դու ահեղ.
Հուր բարկութեամբ ջարդես, փչրես
Թախան սուլթանին անարդար:
—Փոխան դեղի թոյն կը ճիներն
Օտարները քեզ համար:

Հայ քահանայք տաճարի մէջ
Բազկատարած կ'աղօթեն.
Որ Եհովան ձեռք կարկառէ,
Ազատէ հայն այս կեանքէն:

«Ձեր հայ ազգին փրկութիւնը
Դուք մի՛ հայցէք ուրիշէն,
Սուր, գէնք առէ՛ք ու կռուեցէ՛ք.»
Ըսաւ Աստուած երկինքէն:

Ե՛լ, ուրեմն, հերի՛ք հեծես,
Զքնաղ չուչանդ Հայաստան,
Քեզի նման սորուկ ազգեր
Սուր ու գէնքով ազատուան:
Քեզի համար ոչ եհովան,
Եւ ոչ մարգիկ կը գթան.
Դուն պիտ կռւիս, արիւն թափես,
Որ ազատիս, Հայաստան:

Ն. ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԵՐԳԸ

Հայկն ու Լեւոնին մոռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոչին հնութեան.
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք
Կեցցէ՛ չատ օրեր մանուկ-Հայաստան:

Կեցցէ՛ չատ օրեր մանուկ - Հայաստան,
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իր հիմքը. ոչ տուն, ոչ կայան,
Զունի տակաւին բուն Հայաստանում:

Եղբարք, բանը դեռ անշոշափելի
Այժմուս մեր մաքի՝ ցնորք չկարծենք.
Բանը կը մարմնանայ ու տեսանելի
Կը լինի չուտ. միայն մենք վստահ լինինք:

Մեր յոյսը միայն մեր վրայ լինի,
Զեն պէտք մեզ նպաստ մեծատուներին.
Ողորմութեամբ Թող մուրացիկն ապրի,
Մուրացողն է միշտ սարսուռ օտարին:

Կեցցէ՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն, իրօք չէ այդպէս.
Մեր հայրենիք դեռ չէ չէառական
Քանի ունի քաջ որդիք մեզ պէս:

Բա՛ւ է, օտարին չատ ծառայեցինք,
Սարկի վիճակ չէ յաւերժական.
Ազատութեան դինն մենք քաջ սերտեցինք
Եւ չենք հաւատալ օտարի խոստման:

Օտարի չահը Թոյն է մահաբեր.
Աչք է կուրացնում. միտք է պղտորում
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի շղթայով ձեռք ոտք է կապում.

Կը փշրեմ շղթա կ'երթամ Հայաստան,
Կը պագնեմ նրա հողը անարատ.
Կ'ասեմ «Եկել եմ որդիդ չէառական,
Գրկիդ մէջ ինձ առ, մայր իմ հարազատ:

Ջուրիմ ես ոսկի, այլ ոսկու մատան,
Ջլտա ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր.
Զեռքումդա ունիմ բահ ու հրացան,
Սրտումդա ունիմ ազնիւ խորհուրդներ:

Քո հողն արգաւանդ, ես մշակ արի,
Մենք հաշտ կու ապրենք չատ ու չատ տարի.
Ուրջուներդիդ քեզ ոչինչ չհս չկայ,
Թող տուր որ բոնի հալածեմ նոցա:

Դու որդիք ունիս չորս միլիոն ու կէս,
Թէ յանկարծ գաղթեն նոցա տեղ ունե՞ս.
Մտինքիդ կաթը խնայէ օտարին,
Գալու որդիդ քաղցած, ծարաւ են:

Հարաւ, հիւսիսէն փոշի վերացաւ....
Ձայն, տրոփ, խօսք, չուշուկ գիլ գիլ լսեցաւ.
Մասսայ ճակատէն մէգը հեռացաւ,
Մանուկ-Հայաստան ոտքի կանգնեցաւ....

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Ցեղ դառնաչունչ ձմերայնուոյն,
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ գառնայ գարուն:

Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճուռղեն նորեկ ծիծառունք.
Ի քեզ ես գարձ առնեմ յայնժամ,
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

Ոչ չեղէտեան ինձ գաշտավայր
Եւ կամ զարթ մարգագետին,

Ոչ քան գքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկին:

Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Ցոյովդ յար տապիմ անձկով
Ի խանճարուրդ իմոց կենաց՝
Ո՛վ Հայաստան, առնում քեզ դարձ:

Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկոյի տիոցս իմ գեղ դալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց, թեթեւ ի գարշապար:

Ուր հէգ մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր.
Զնինջ ի ծոցդ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

—

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր
Երկինքը լի աստղերով.
Եւ լուսինը մեղմ փայլում էր,
Կաթնանման իր լուսով:

Նա նայում էր լռիկ մնջիկ
Իբրև մի կոյս, դէպի վան.
Նըրա աչքին երևում էր
Բիւր ցաւալի տեսարան:

Նա տեսնում էր անթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են,
Աւերում են անտէր վան:

Եւ կարծես թէ վեր երկնքից
Խօսում էր այդ լուռ վկան.
«Վրայ հասի՛ր, հայ ազգասէր,
Ձեռքից կ'երթայ Հայաստան»

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ

Ա Ղ Ջ Ի Կ

—

Ախչիկ նազերով, քալաչ ծամերով,
Ծամերդ իւստըկեմ կիւվազ բաղերով.
Ախչիկ քոյ գըլէօխ արծըթէ թաս էր,
Տըղայ քոյ գըլէօխ սըրմալի ֆաս էր:
Կանչեմ եար ար՛ե, սարեր լացուցեմ,
Կանչեմ ջան ար՛ե, քեարեր լացուցեմ.
Շատ կարիպ ղուրպաթ ճամխէն գարձուցեմ:

Էս օր ինչ՞ օր է. — Ուրբաթ է պատ է.
Ախչիկ քոյ գըլէօխս արծըթէ թաս է,
Տղայ քոյ գըլէօխս սուրմալի ֆաս է.
Խորած վարդապետ կ'ասի չխաս է:
Կանչեմ եար ար'ե, եայլն

Թէ ժուռ, թէ խասուն ես եմ քոյ քազոզ.
Թէ թանգ, թէ էժան, ես եմ քոյ գընող.
Որ գիս ես իմ խօր խօրօտ խարանացուն,
Որ ես էլ քոյ մօր սրտի փեռացուն:
Կանչեմ եար ար'ե, եայլն:

Ախչիկ գիս քէլի, ես կանեմ ոտիկ,
Էրկուսս գիրկը մէջ բարլախ օտին.
Մեր էրկսի սիրտ թէ որ մէկ էլնի,
Ըսկուն կ'իմանանք մէջ նիշուն օսի:

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԿՈՈՒՆԿ

—

Կռո'ւնկ, ուսաի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիդ չուտով կու հասնիս,
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Թողեր եմ եկեր իմ մկեերս ու այգիս,
Քանի որ ես կանեմ կու քաղսի հոգիս.

Կռո'ւնկ, պահ մի կաց'իր, ձայնիկդ իշոգի՛,
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան գըլրի տօլապ.
Կռո'ւնկ, պաղատամ իջնուս կամ թէ ի հալապ,
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Սրտերնիս կամեցաւ ելանք գնացինք,
Այս սուտ աստուրիս գարդերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք.
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Աստուրիս բաներն կամաց կամաց է,
Մինէ Աստուած լսէ, գըռնակն բաց է.
Ղարիպի սիրտն է սուգ, աչերն ի լաց է,
Կռո'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Աստուած քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրամ,
Ղարիպի սիրտն է խոց, ճիկերն է վէրամ.
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ,
Կռո'ւնկ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,
Զարկած է գիս չամփուրն, բռնած կրակին.
Այրի՛ըս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Պաղատատու կուգաս, կ'երթաս ի սկհրատ,
Թղթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ,
Թող վկայ լինի քու վրատ,
Տարեալ հասուսցես զայն իմ սիրելեաց:

Գրեր եմ մէջ թղթիս թէ հոս մնացի
Օրիկ մը օրանց գաչերս չբացի,
Սիրելիք ձեզնէ կարօտ մնացի,
Կռունկ մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Աչուն է մօտեցել, գնալու ես թէ՛տպիր.
Երամ ես ժողվել հազար ու բիւր,
Ինձ պատասխան չուիր ելար գնացիր.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն դո՛ւ, հեռացիր

ԱՂՔԱՏ ԿԻՆ

—

Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
Ձիւնը պատեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իր տուն,
Պատսպարիլ ցրտից։
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ պատառ,
Ձուռնի չապիկ իր հագին.
Անհամարձակ նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութի՛ւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտում ոտնաբոբիկ
Կանգնած էր ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,

Երբ նա պատուով և փառքով
Մանէր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով.
Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն,» ասյլն։

Մինչ թատրոնում յայտնւում էր,
Մինչ խաղում էր հանդիսում,
Դըղրդում էր թատրոնը,
Նա դարնիք չատ էր հնձում.
Ժողովուրդը հաւաքւում էր
Մօտ թատրոնի պատշգամբին,
Չէր կշտանում նայել նրա
Քնքուշ չքնաղ երեսին.
Այժմ նրան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին—
«Ողորմութիւն» ասյլն։

Ամենայն օր նրա դռնում
Կանգնած էին չատ կառքեր.
Միչտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նւագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինի նրա բարեկամ.
Ամենայն ժամ նրա բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկւած ամէն բանից,
Ձուռնի անգամ հացի դին—
«Ողորմութիւն» ասյլն։

Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լւանում էր, մազը սանրում
Կրիայի սանրով.
Նա հագնում էր բեհեզ, կերպաս,

Դիպակ թաւիլ թանկագին.
Նա չգիտէր ինչ է ասել
Սրծաթի կարօտութիւն.
Այժմ անլսայ, մազերն արձակ,
Զուռնի հագուստ թէև հին—
«Ողորմութիւն» կայլն:

Նրա չքեղ ննջարանում
Բնակւում էր Աստղիկը,
Նրա որդին փայփայում էր
Նրան ամբողջ գիշերը....
Ախտաբորբոք երիտասարդք
Իրենց անձը երջանիկ
Կը հաշւէին, թէ լինէին
Նրա ձեռքում խաղալիկ....
Այժմ փողոցում քնում է նա
Ծոնաւ պատերի տակին—
«Ողորմութիւն» կայլն:

Ժամի դռնում նա կանգնած է
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նրա նախկին բարեկամքը
Չեն ասում նրան, «խղճուկ,
Եկ դու մեր մօտ, մենք կ'ամօքենք
Քո վիճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ
Ախտ հարուածի սաստկութիւն:»
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վէտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Մ. ՆԱԼԲԱԴՆԵԱՆՑ

ՏՐՏՈՒՆՋԻ

—

Է՛, մնաք բարով, Աստւած և արև՝
Որ կը պլպլաք իմ հոգւոյս վերև....
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ինչ են որ, եթէ ոչ անբիծ
Եւ թշւառ ոգւոց անէծք ողբագին,
Որք թլուին այրել ճակատն երկինքին.
Այլ այն Աստծուն չանթերուն արմատ՝
Ցաւելուն գինքերն ու գարդերն հըրատ....
Այլ, ո՛հ, ինչ կ'րսեմ.... չանթահարէ գիս
Աստւած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս,
Որ ժպրհի ձգտիլ, սուգիլ խորն երկնի,
Ելնել աստղերուն սանդուխքն անալի....
Ողջոյն քեզ, Աստւած, դողդոջ էակին,
Շողին, փթիթին, ալւոյն ու վանկին.
Դու որ ճակտիս վարդն, ու բոցն աչերուս
Խլեցիր թրթռումն չրթանց, թռիչն հոգւոյս.
Ամպ տւիր աչացս, թևք տւիր սրտիս,
Ըսիր մահւան դուռն ինձ պիտ' ժըպտիս.
Այնուհետ ինձ կեանք մը պահած ես եաքը.
կեանք մը անհուն չողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորնչի պիտ' իմ հուսկ չունչ,
Հոս մառախուղի մէջ համր անշշունչ,
Այժմէն թող որ չանթի մ'ըլլամ գալկահար,
Պըլլւիմ անուանդ, մռընչեմ անդադար.
Թող անէծք մ'ըլլամ ու կողբդ խըրիմ,
Թող յորջորջեմ քեզ «Աստւած ոխերիմ:»
Ո՛հ, կը դողդոջեմ, ահգոյնեմ ահգոյն.
Փրփրի ներսըս դժոխքի մ' հանգոյն...

Հառաչ մեմ հեծող նոճիներու մէջ ահ,
Թափելու մօտ չոր աչնան մէկ աերև:
Ո՛հ, կայծ աւէք ինձ, կայծ աւէք ապրիմ...
Ինչ՞ է. երազէ վերջ գրկել ցաւրա չիր՛իմ.
Այս ճակատագիր ինչ՞ ահ է Աստուած...
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած..
Ո՛հ, աւէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրել կ՛ուզեմ դեռ, ապրիլ ու ապրիլ:
Երկինքի աստղե՛ր, հոգւոյս մէջ բնկէք.
Կայծ աւէք, կեանք ձեր սիրահարին հէք:
Գարուն ոչ մէկ վարդ ճակատս պսկահար,
Ոչ երկնից չոզերն ժպիտ մ'ինձ չեն տար.
Գիշերն միշտ գագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ, խուզարկէ վհեր.
Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար է որ նա գրաւ այդ լուսին:
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան,
Նախ կեանքը, վերջը լացող մ'իր վրան:
Իզուր գրեցին աստղերն ինձի «Սէր»,
Իզուր ուսուց պուլպուլն ինձ «Սիրել»
Իզուր սիւթեր «Սէր» ինձ ներշնչեցին,
Եւ գիս նորատի ցաւցուց ջինջ ալին.
Իզուր թաւուտքներ լռեցին իմ չուրջ.
Գազանապահ աերևք չատին երբեք չունչ
Որ չխռովեն երազքըս վսեմ.
Թոյլ աւին որ միշտ ըզնէ երազեմ,
Եւ իզուր ծաղկանք, փթիթներ գարնան,
Միշտ խնկարկեցին խոհմանցըս խորան..
Ո՛հ, նոքա ամէնքը գիս ծաղրեր են...
Աստծոյ ծաղրն է աշխարհքն ալ արդէն:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՒ ԱՄՊ

—

Ա՛մպ... դէպի ու՞ր այդքան ըշտապ,
Ինչ՞ կը վազես բուռն ի տագնապ...
Արդեօք առեր տանո՞ւս պատգամ
Երկրիս մէկ կողմը տարաժամ:

Ա՛մպ... քո երես տխուր է, սև,
Աստ՛, վրէ՞ժ մ'ունիս ներքև.
Թէ՝ տրամուխիւն մը վշտահար,
Ձերմակ դէմքիդ ածէ խաւար:

Արդեօք երկնից բնիկդ ի դեհ,
Հով մը հասաւ վարո՞ց նըժդեհ,
Եւ դու՝ ցաւավ քո հայրենեաց,
Ինձպէս դնաս աչո՞ք ի լաց:

Ինձպէս՝ որ լոկ և ի յերեր
Զցաւս միայն ունիմ ընկեր.
Եւ հայրենեաց իմ կարօտով՝
Հալիմ, մաշիմ ընդ հող ու ծով:

Ա՛մպ... թէ լցուած դու սիրտ ունիս՝
Ցօղ և անձրև հեղուս՝ հանդչիս.
Թէ գոռ լցուած ցաւմանդ է չափ՝
Ցորտ և չանթ թափես սարսափ:

Իմ ալ լցուած վշտօքս է սիրտս,
Ծանրացեալ ճակատս է գառնաքիրտ.
Բայց ու՞մ աչքիս գեաներ գիտեմ,
Պանդուխտիս ցաւ թափեմ ես ու՞մ:

Ա՛մպ, ա՛մպ··· քան պիս շատ երջանիկ
Տեղ մը չունիս քեզի բնիկ·
Հիւսիս և կամ հարաւ վազես՝
Երկինք բոլոր քեզ ասպարէզ։

Իսկ ես՝ որչափ առնում մի քայլ
Թափեմ արցունք, պի քայլ մըն այլ
Ի հայրենեաց իմ հեռանամ···
Քայլ մ՛ալ ի մահ յառաջ գնամ,

Ե· ԵՊ· ՆԱՐ ՊԼՅ

ՍԻՒՆԱՄԱՐՏ

—

Զիք գնդակ, վառօթ, փամփուշտ հատաւ,
Հրացանդ ալ գուցէ կարգէ դուրս ելաւ·
Բայց բնաւ մի վհատիր, չըլլայ երկնչիս·
Հաւատաքո Թող Լինի՝ չի պիտի ընկճիս·
Լեր դու ունկնդիր պետիդ հրամանին,
Սլինք ի կա՛մ, զգո՛յշ, փողն հնչէ ուժգին։
Օ՛ն, ուրեմն, յառաջ, գո՛չէ բարձրաձայն
կեցցո՛ւէ հայ զինուորն, կեցցո՛ւէ Հայաստան·
Թող Թնդայ դաշտն, դողայ թշնամին,
Ահ ու սարսափ տայ անոնց բանակին։

Տեսնե՞ս սա գմուռճ, վախիտ սինլքոր,
Որ քեզմէ փախչի արագ, գլխիկոր·

Տուր հարուած մ՛ուժգին սլուոր կռնկին
Գայ հոգին բերան, տապալի գետին։

Այժմ ընդոստ դէպ յառաջ քայլմ՛ կամ երկու,
Լեր ճարպիկ, հանէ ճիչ մը ահարկու·
Օ՛ն, յաջմէ վանէ, ապա յանկարծ մխէ խոր,՝
Ուր լինի հոգ չէ՝ քիթ, բերան կամ փոր։

Դարձ ընդոստ դէպ ձախ, զգոյշ, պատրաստ կաց,
Կատղած գազան մի քեզ հասնի սլընթաց·
Հար՛ մէկ մի սրտին, մէկ մ՛ալ ուղեղին,
Սրեամբք վրիժու խոց հողք հեղեղին։

Այժմ վանէ յոտից և մխէ փութով,
Դարձ յետս երեսդ, տուր հարուած մ՛ալ կոթով·
Դրոշմէ լաւ ընկնի նա յետս հեւալով,
(Մազ մնաց գլուխտ պիտի կորէր սրով)։

Այժմ առ քայլս յառաջադէմ ըչտապաւ,
Զի դիմաւորես վայրագ քիւրտն ձիարշաւ·
Գլխից վանէ, ապա մխէ ուղիղ կամ կոր,
Մարդու կողին, ձիու փորին խոր խոր։

Բայց պիա՞րդ կանգ առնուս, յապաղիս ապշած,
Ցաղթուածեան ոգին գլուխ՞դ է զարկած·
Չե՞ս լսեր եղբարցդ օգնութեան ձայնին·
Ջրդերի մի խումբ հասած է վրանին։

Դարձ յետս յանկարծ, օ՛ն անդր, չտապաւ,
Ցաջմէ ձախմէ վանէ, հար՛ ու մխէ՛ լաւ·
Թող գլորին գետին և աստ անդ ցրուին,
Եւ հող քար ու ժայռ արիւնով ներկուին·
Մինչև չի մնայ հատ մի քիւրդ ու մուրդ,
Լինին ամէնն ալ լաւ մի ջարդ ու բուրդ։

Գոչէ դու յայնժամ կրկին բարձրաձայն,
կեցցե՛ հայ գինուորն, կեցցե՛ Հայաստան։

Պիտ՝ անդրադարձէ ձայն իբր պատասխան,
Գիտէ՞ք ուսկի — ի մայր Հայաստան —
«կեցցե՛ս, հայ գինուոր, սարերը յաղթանակ,
պարտքդ կատարեցիր, վայելէ քեզ պսակ։
Տոչորեալ շրթանցս համբոյրները հրակէզ,
պիտ՝ բուժեն վէրքերդ կրկին կեանք տան քեզ։
Ե՛կ գրկեմ անգամ մ՝ վարեմ քեզ սրտիս,
Եւ կոչեմ իմ քոյր արժանի որդիս։»

Գ. ԳԱՊԱՐԵԱՆ

ԿԱՐՆՈՑ ՇԱՐԺՈՒՄԸ

—

Ձայնը հնչեց էրզրումի հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան հայի սրտեր ղէնքի չափնէն։

Հայ գիւղացին դարուց խվեր սուր, գէնք չառած,
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղն առաւ։

Քնքուշ կեանքը ծանր է թուում հայ օրիորդին,
Ձէնքը ձեռին յորդորում է հայոց քաջերին։

Հայ տիկինը տախտակ է տրուանուն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ, առնալ։

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։

Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ՝ տեղի տուաւ միութեան ձայնին։

Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,
Չէր երազիլ հային տեսնել նա այդ վիճակին։

Եւրօպային լուրը հասաւ չարժման հայ գեղչկին,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասիրին։

Ցնծա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը դարու սուգ ու թախիծ քեզնից վերացան։

Ուսումն ու լոյս-ազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ազգի պաշտպան անվեհեր։

Ուրախացաւ մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հին դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

—

Քուն եղիր, պալաս, աչքերդ խուփ արա՛,
Նախշուն աչքերուդ քուն թող գայ վրայ։
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ Տիգրանիկի քունը կը տանի։

Ոսկի խաչ վիզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապեր է ծարէն, տէրպապան.
Օր օր ևայլն։

Մավի հիւլէներ կախել իմ եռ ալ,
Նազար չիս առնուլ, քուն եղիր, մի՛ լալ.
Օր օր ևայլն։

Աս քանի՞ մօրդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրօրոցիդ քովը.
Օր օր ևայլն։

Օրօրոցդ օրրիմ, օրով բօյ քաշիս,
Մըզկտան ծանով սիրտս չի մաշիս.
Օր օր ևայլն։

Դուն ալ քուն եղիր ինծի ալ քուն տուր
Սուրբ աստուածամայր, Տիգրանիս քուն տուր.
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի
Իմ Տիգրանիկի քունը կը տանի։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԾՈՐԴՈՐԱԿ

—

Հայրենեաց սիրով վառւած վեհ սրտեր,
Ինչ՞ կը յապաղիք եկնել ի հանդէս.
Ինչ՞ կը յապաղիք.— սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ որ աղգասէր ըլլալ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց այսքան բիւր աղէտ
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ։

Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու հոգին հեռու մղենք, հեռու,
Սիրտ սրտի կապւած, թև թևի տւած.
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացւած,
Օ՛ն, վազենք յառաջ ի սուրբ խաչն վստահ,
Օն երթանք յառաջ և անձնանւէր
Հայրենեաց ուխտին ըլլանք ուխտանւէր։

Հա՛յ, մի՛ վհատիր, սիրտ առ և սիրտ տուր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացւին, վատերը զատւին,
Ճշմարիտ հայեր թող յառաջ անցնին.
Խաչ, սէրն են նշան ճշմարիտ հայուն,
Խաչ, սէրն են պարծանք ճշմարիտ հայուն։

Սիրոյ ղբօշներ
Թող արդ պարզւին,
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչըւին.
Հայն մէկ սիրտ եղաւ
Սիրով մխացաւ։

Սուտ են որ ասեն,
«Հայք գիրար կ'ատեն։»

Սուրբ Արարատեան մայր աթոռին գիրկը
եկէ՛ք հայկազունք, եկէ՛ք միանանք.
եւ սիրեենք մեր վշտացած մօր սիրտը
Օրհնելով տէրը որ մեզ պարգեւեց՝

Մեր ազգին կապն ու հոգին
Ազգային սահմանադրութիւն,
—Ցաւերժացի արդիւնաւէտ։

Ս. Պ. Պ.Փ ՍՓԱՋԵԱՆՑ

ՊԱՆԴՈՏԻ ԵՐԳԸ

—

Հեռու եմ քեզմէ օտար երկրի մէջ,
Եղած եմ պանդուխտ, սիրուն հայրենիք.
Ի լեռ և ի դաշտ կ'ընեմ եղ և էջ,
Քեզ չեմ տեսներ ես սիրուն հայրենիք։

Ճարտարագիր չեմ Մխիթարի մը պէս,
Որ դրախտի մը նմանցնեմ քեզ
Ոչ ալ Եիւնկի պէս հնարամիտ եմ,
Որ գովաբանեմ սիրուն իմ երկիր։

Տելեմաքի պէս քաշեմ արկածներ,
Միշտ պատահին ինձ ձախորդ դիպուածներ.
Քեզ մոռնալո՞ւ եմ, երբեք չեմ կարծեր,
Ծնած եմ քու ծոցդ, սիրուն հայրենիք։

Կ'երեւակայեմ, մաքիս մէջ ես դուն,
Ոչ թէ ցորեկներն, այլ գիշերն իբրուն.
Երբ մտաբերեմ կամ ըլլամ իքուն
Երազներս ես դուն, սիրուն հայրենիք։

Լեռներդ ծաղիկով, դաշտերդ չուչանով,
Լեցուն ես միշտ դուն անուշ հոտերով.
Սարերն ու ձորերն կանանչ խոտերով,
Տեսնէի ուէյ մալ, սիրուն հայրենիք։

Երբ միտքս կուգայ իմ մանկութիւնս,
Ճեմելով քու մէջ վայելած սէրըս,
Ցայնժամ արտասուօք լնուն աչերըս,
Ուժաթափ կ'ըլլամ, սիրուն հայրենիք։

Երբ կուգայ գարուն, կը բացին վարդեր,
Ամբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան քու օրիորդներ,
Խնդալով բերկրիմ, սիրուն հայրենիք։

Որպէս պատգամներ Մովսէսին Սինա՝
Ի քեզ յայտնեցաւ տառն Մեսրոբայ.
Ի պարծանս տան Սրամայ, Հայկայ.
Պարծանք ես հայոց, սիրուն հայրենիք։

Ա Ր Բ Ա Ծ Ը

—

Ուղիղ գինեատունից ես տուն եմ գնում,
Փողոց, ա՛յ փողոց, էդ ինչ եմ տեսնում.
Այ գնաս թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ,
Փողոց տեսնում եմ, դու էլ ես հարբել:

Լուսին չան, ուխտը ինչ՞լի է ծռած,
Մէկ աչքդ կապւել, միւսը կէս բաց.
Դ՞ու էլ ես կոնծել, այ դու անամօթ.
Ամաչիր ինձնից, վաղուցեան ծանօթ:

Բա՝ էստեղ էստեղ, — լապտերներն էլ
Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել.
Մէկ պարզ են վառւում, մէկ սաստիկ խաւար,
Կամ թէ պատից պատ կպչում անդադար:

Աղբէր, էս գիշեր աւէնքն են հարբել,
Ինչ՞ բան է մենակ մենակ ծոմ պահել.
Չէ էդ կը լինի խստակ գըժուխիւն.
Ուրեմն նորից դառնամ գինետուն:

Գ. ԴՈՂՈԽԵԱՆ

Ի ՎՐԷԺ

—

Իզէն, իվրէժ գոռան, հայեր,
Արիւնաներկ Սասնոյ սարեր.
Իզ՛էն, իվր՛էժ, տան արձագանգ
Մչոյ լերինք, Տարնոյ սահանք:
Աւիւծ Զէյթուն մինչ մոլեգին
Հոգեհառաչ մռընչէ ուժգին—
«Իզէն մինչ ցե՞րբ ծիանք գերի
«Արիւնարբու, վատ թուրքերի:»

Իզ՛էն, հայեր, վան և Բասէն
Աղի արցունք, արիւն հոսեն.
Եփ՛ատ, Տիգրիս, երասխ և կուր,
Իվրէժ ծնջեն աղէկտուր.
Կնճռէ Մասիս ճակատն իր պերճ,
Կարին, Կովկաս ձայնեն անվերջ—
«Իզ՛էն, ալ բա՛ւ ողբ, վայնասուն.
«Հոգեվարքի մէջ է Սասուն:»

Իզ՛էն, խո՛ւր. հինգ երկար դար
Բողոքեցինք երկնից արդար,
Մերժեց Աստուած աղօթքն հայուն,
Եւրօպ խուլ է մեր ողբերուն.
Մոռցաւ սուլթան պարտք և օրէնք.
Քարեր խօսին թէ լռենք մենք:
Կեանք և կամ մահ, որն ալ ուզենք,
Պէտք է առնուլ գինու դէմ գէնք:

Յ. Մ. Մ.

ԽՐԱՏ

—

Երբոր ազգին գահը վերցաւ,
Երբոր ազգին թագ փշրեցաւ.
Ցայնժամ մոլի վատ կղերներ
Բարձրացուցին իրենց թագեր:

Ըսին հայոց լոկ հարկենիք
Է կղերին պաշտած երկինք.
Լաւ է կրօնի չհաւատալ,
Քան թէ անոր դերի բլլալ:

Հին բռնակալ թագիդ փոխան,
Հայ մարդ, ընարէ դու քո իշխան.
Թանգ գարդն, պէրան-քն դէշ կղերին,
Առ', տուր' կրթէ հայի որդին:

Ազգ մ'որ չո նի ազատութիւն,
Ան չունի կեանք, չունչ և արիւն.
Ջունի կրօն, յոյս հոգեկան,
Ինքան նիւթ է ոանկոխան:

Երդմամբ վճռէ կամ մահ կամ կեանք,
Փշրէ կոպրէ լուծ և կապանք.
Լաւ է մարդուն բնաւ չապրի
Քան թէ ապրի այլոց գերի:

Փամփուշտ, գնդակ, ռումբ, ուժանակ,
Առաջ լեցուր քո լայն ոտվրակ.

Պատերազմի դաշտին մէջ դուն
Ընարէ մեռնիլ, քան թէ քո տուն:

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգայ իրաւունքներ
Որոշած են քաջաց սուրեր:

Որու սուրը կարուկ լինի,
Որու գնդակն հեռու նետի,
Իրաւունքը անոր կըլլայ.
Աչխարհն այսպէս կը հաւատայ,

ՏԱՐՕՆՑԻ

ԴԷ՛Հ, ՄԱՆԻՐ, ՄԱՆԻՐ

—

Ջէթ եմ ածել ակուանջներդ,
Նոր չիներիմ սըվլիկ.
Դէ՛հ, չուտ չարժիր Լայն Թևերդ,
Ոատեր չինէ սըրվահիկ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ բիւլաներ.
Մանիր թելերը հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Տիգրանիկս գուլպա չունի,
Դաշան է գնում ոտաբաց.
Գաբրիէլը չուխա չունի,
Միշտ անում է կոծ ու լաց:
Մանիր, հայլն:

Զբաղ չունինք, չաթու չունինք,
Ոչ սամարէն, ոչ պարան.
Սյոպէս աղքատ գեռ եղած չենք,
կըարնել է ամէն բան:
Մանիր հայլն:

Երբ կարմիր օրս սևացաւ,
Թէև մնաց պարագ մի քիչ,
Պարտատէրոջ սիրան էլ սևցաւ,
Եկաւ տարաւ ամէն ինչ:
Մանիր հայլն:

Նոր հարս էի երբ գործեցի
Քանի կարպետ, խալիչա,
Բայց գրանցից չուտա զրկուեցայ,
Այժմ չունիմ մի քաչայ:

Մանիր, մանիր իմ ճախարակ,
Մանիր սպիտակ քուլաներ.
Մանիր թելերը հատ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր:

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ

Գ Ի Ն Ի

—

Անհահ անուշ, դու գինի,
Շատ սիրելի ես քաջի,
Զի գոյնդ արեան նմանի
Պատերազմաց իդաչի:

Բոսորափայլ քո փրփուր
Որ մեզ իկուս փչէ հուր,
Թէ հաչատութիւն գայ արդար
Փոխի լցօղ զովարար:

Դափնիք քեզմով կ'առնուն ուժ,
Կարմիր կրակոտ, դու գինի.
Քեզմով զարթ և աչխուժ
Կ'ըլլայ հեգիկ ձիթենի:

Քեզմով վառի բոցագոյն
Օրիորդի համեստ գոյն.
Կեցցէն, մեր քաջ պատանիք,
Եւ նագելի գեղեցիկք:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՑ ԱՊՐԻՆՔ

—

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք.
Եղբարք, հայ ապրինք

Հայ ապրինք. մեր հայրն է ան դիւցազուն,
Որ ազատութիւն սորվեցուց մարդուն.
Ու մեզ վեհ անուն մը աւաւ բաժինք.
Եղբարք, հայ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրայ
Աստուած է քալեր, օրհնելով զԱդամ.
Մեր լեզուն սուղծեր ու խօսեր նախ ինք.
Եղբարք, հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն նոյն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կրօնի նախկին սեղանն է Մասիք.
Եղբարք, հայ ապրինք:

Հայու պերճ անուն՝ ոչ միայն յերկիր,
Այլ և եթերց մէջ չողայ լուսաւիր.
Քայ Հայկին աստեղ անմահ են երկինք.
Եղբարք, հայ ապրինք:

Հայ ապրինք: Ո՞ր ազգ կայ հայու նման
Որ ունենայ հին պարծանքներ այսքան.
Ո՞ր ազգ հայուն պէս չքեղ հայրենիք.
Եղբարք, հայ ապրինք:

Ըսէ՛ք, որ ազգին չորս առաքեալները
Երկնից թագաւորն է դեսպան խրկեր.
Որ թագաւորին հետ թղթակցեր ինք.
Եղբարք, հայ ապրինք:

Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.
Եղբարք, հայ ապրինք:

Քրիստոսի ունինք անգրանիկ օրհնէք,
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք.
Հայը գարմացուց զերկիր և զերկինք.
Եղբարք, հայ ապրինք

Մեր ազգն հետևող ճիշդ Քիստոսի,
Որ խաչն այսքան դար առած յուսի.
Ոչ, չ'խոնարհիր, չ'ըլլար դասալիք.
Եղբարք, հայ ապրինք:

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալից,
Այո, հայուն կեանք, կեանք է ցաւալից.
Քայց խաչն յաղթութեան ունի վեհ կնիք.
Եղբարք, հայ ապրինք:

Մեր քաղցր հայրենիք, մեր թագ, գաւազան,
Ամպերն են ծածկեր արևի նման.
Ցուսացէ՛ք արև կուտայ մեզ երկինք.
Եղբարք, հայ ապրինք:

Ոչ, ճակատագիր մեր չէ միշտ սխուր,
Զքշտաութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մ'ունինք...
Եղբարք, հայ ապրինք:

Հայ ապրինք՝ որ մեր որդիք ալ, եղբարք,
կարենան պարծիլ. որ ազգ ունին հարք.
Ջըլլանք հայ անուան, չըլլանք նախաւինք.
Եղբարք. հայ ապրինք:

Խ. ԵՊ. ՆԱՐ-ՊԷԳ

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—

Ո՛վ քաջազունք, ձեզ հրաւէր,
Փութալ առնուլ զմերկ սուսեր,
Եւ հաստատել մեր հայրենեաց
Գահ սրբազան միշտ անմոռաց:

Ազատութիւն մեր հայրենեաց,
Ազատութիւն մեր խեղճ եղբարց,
Ազատութիւն ձեզ վառ սրտեր,
Ազատութի՛ւն, դեռ չ՚էք լսեր:

Երկինք, Աստուած տան հրաման,
Ա՛հ, հրաման ազատութեան.
Շուտ սթափինք, զինուր գրնինք,
Եւ անվեհեր պատերազմինք:

Լեռներ, ձորեր, Մասիս անգամ
Ազատութեան կուտան պատգամ.
Հապա երթանք ի Հայաստան,
Ջաջ նախահարց հանգստարան:

Բաւէ այլևս ցած գերութիւն
Օ՛ն, ո՛վ քաջեր իշխութիւն
Երկինք, Աստուած մեզ են պաշտպան,
Ազատ, ազատ մեր Հայաստան:

Կ. Դ. ՏԱԿԷՍԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՉ

—

Ժամ է հայեր, արիք ձեր բախտ ողջունել,
Լուսոյ դասուն վերածնութեան դրօշուն տակ.
Հայրենիք ձեզ հրաւէր կարգայ գալ խմբիլ
Ուր ապագան ձեր գրած կայ փառունակ:

Բաց են ասպարէզք ազատ քայլերու,
Եւ երկինք լըցող գգաստ ուխտերու.
Մի՛ ապա, ճարակ մատնէք կոյր մրցմանց,
Ջիրան, արտասուք և տենչ ձեր Հայ դիւցազանց:

Ցառ՛աչ, յառ՛աչ,
Մեծ է ձեր կոչումն,
Քաչի ծնունդ քաչեր.
Մասեաց սարերէն
Ալեւոր դարեր
Լուռ ձեզ կը դիտեն,
Քայլերու չարժումն,
Ցառ՛աչ, յառ՛աչ:

Մայր ձեր սիրուն, մայր դարերու Հայաստան,
Ձեր է կարօտ, ձեր ժիր ու ագատ ջանքերու.
Անոր Լուսոյն խամրած դարատատ մխրճան
Ելէք պճնել, հայեր ժամ է քրտնելու:

Ձեր ճակտին ցօղուվ ջինջ պիտի ցոլան,
Սիւն, կոթող փոշոտ՝ Լուսոյ հայութեան.
Բաւ է ձեր գոհեր, բաւ, ալ մի այլէ՛ք,
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք:

Ցառ՛աչ, յառ՛աչ,
Մեծ է ձեր կոչումն,
Քաչի ծնունդ քաչեր.
Մասեաց սարերէն
Ալեւոր դարեր
Լուռ ձեզ կը դիտեն,
Քայլերու չարժումն,
Ցառ՛աչ, յառ՛աչ:

ՍԻՐԱՀԱՐԻ ԵՐԳԸ

Ա՛ծու մ՛եմ ցանկի, սատա նարգիլ ի,
Իմ եարոջ մեռնեմ՝ ապիլ մապիլ ի.
Ա՛ծու մ՛եմ ցանկի, սատա պիպար ի,
Իմ եարոջ մեռնեմ՝ թազա նուպար ի:

Ա՛ծու մ՛եմ ցանկի, սոխերն ատա ի,
Իմ եարոջ մեռնեմ՝ պօյը չինարի.
Ա՛ծու մ՛եմ ցանկի, սատա սխտոր ի,
Իմ եարոջ մեռնեմ՝ սրտիկ պղտոր ի:

Էլեր ես իգին, խնձոր կը քեաղես,
Էնոր չորս բուլոր կանաֆիլ չարես.
Աբե՛, եար, աբե՛, խոռով մի՛ ծնա,
Սուտ-փուճ աստուր ձիկ, քե չըմնա:

Ցորեն եմ ցանե, խետ գի՛ թնի ական,
Ճողերն ի թալե խետ արեգական.
Քեաղելու էլա, ծիկ կըսամաթ չէլաւ:
Իմ եարոջ սրտիկ վէր ծիկ խուն էլաւ:

Ես նռան գինի, դիւ անուշ քեասա,
Դիւ լից, դիւ խմի, քէոյ դարատ ծիկ ասա՛.
Աբե՛, դօսա, աբե՛, խոռով մի ծնա,
Աստուրիս մալ ծիկ, քե չըմնա:

ՀԱՑԻ ԱՐԻՒՆ

—

Փառք Աստուծոյ, հայի արիւն ալ վօթեցաւ,
Եւրօպայի արեան պասքը յագեցաւ։
Զուզէր գիտնալ, որ աշխարհի մէջ հայ կայ,
Հայի մէջ ալ մարդկային սիրտ, հոգի կայ։
Երբ հոտոտեց հայի արեան գոլորշին,
Միտքը ձգեց թ-քած-մրած հայ ազգին։
Փառք Աստուծոյ, հայ արիւն ալ վօթեցաւ,
Եւրօպայի արեան պասքը յագեցաւ։

Արի՛ւն վօթել....վաղուց մոռցել են մարդիկ
Քաոսիեվի արեան հեղման արհաւիրք....
Արիւն վօթել այն չէ, ինչ որ դուք գիտէք....
Բազմաչարչար մեռածներուն հարցուցէք։
Հարցուցէք դուք որդ եկորուս հայ կնկան—
Ի՞նչ ասել է տեսնել հեղումը արեան....
Փառք Աստուծոյ ևայլն։

Տեսե՞լ ես դուն հօրըդ վզին պինդ չըլան
Ու քաշաքաշ տարած մինչև կախաղան։
Տեսե՞լ ես դուն գերկը տղան քուն մօրը,
Անգութ տաճկի սուրը երկուսի փորը։
Դուն տեսե՞լ ես կոյս քրոջդ նոր փթթած,
Տըռփոտ տաճկի կուսութենէն իր զրկած։
Փառք ևայլն։

Դուն տեսե՞լ այն ալեւոր երէցին,
Ձեռքը բաժակ — նչան արեան Քրիստոսին....

Տաճիկն եկաւ ձեռքը ցղաց սուր դաշոյն,
Բաժակի մէջ սըրսկեցաւ թարմ արիւն...
Այս պատմածս չէ գրքերէ հնութեան,
Այս ոճիրը չատ նոր տեսաւ Հայաստան։
Փառք ևայլն։

Բայց դուն հայ-մարդ մինչև երբ պիտ համբերես.
Ազգաց, ազանց առջև մնալով սևերես.
Մի՞թէ ցայն օր պիտի մնաս անզգայ,
Որ ասեն քեզ, «Ալ աշխարհքըս հայ չկայ»...
Էջմիածի՛ն, դէհ, հան քուն ցուցակէն
Վեց հազար հայ — այժմ սև հողի տակ են...
Վերջ իվերջոյ՝ հայ արիւն ալ վօթեցաւ.
Եւրօպ, արդեօք արեան պասքըդ յագեց՞աւ։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԳՈՂԹԱՆ ՄԱՆԿՏԻԻ

—

Գողթան մանկտիք ահա ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ.
Օն փութացէք, խումբ կազմեցէք,
Պատկ անթառամ մնայ ձեզ։

Գիտէ՞ք ոյք են ձեր նախնիք,
Բանաստեղծիլ էք որդիք.
Որք քնարով, ոսկի Լարով,
Հայրենիքին փառք բերին:

Դուք ամենից էք գրկած,
Փառքեր ունիք, բայց կորած.
Հարք և եղբարք մերկ և քաղցած,
Հայրենիքը աւերած:

ԱՂԱՍԻՆ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

—

Այն որ ծանօթ է պատմութեան ազգին,
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին.
Նոքա գնացին՝ Տէր եա մեզ կրկին
Սէգ կարօն, Մուսէն և քաջն աղասին:
Ապրին պաշտպանք մեր ազգին,
կարօն, Մուսէն, Աղասին.
կեցցեն դիւցազք մեր ազգին
Սէգ կարօն, Մուսէն և քաջն Աղասին:

Մինչ պիտի պարծի Բանաքեռ աւան,
Որ ծնաւ ձեզ պէս կորիւն աննման.

Դուք Արարատայ ամուր ախոյեան,
Փառք և ցնծութիւն ասքանազեան տան:
Ապրին հայլն:

Մասիս, Արագած, Նպատ ու Ցիրաւն,
Սիրով տեղի տան ձեր սուրբ մխութեան.
Դուք նոցա գլխին կեցէք հայաստան,
Ուր տեղ վտանգ կայ հասէք օգնութեան:
Ապրին հայլն:

Մինչ մեր սև բախտէն սատանն այն գազան,
Լլկէր խեղճ հայոց վշտօք զանազան.
Դուք անոր պարձաք սարսափ յաւիտեան
Զորս նորին վաննալ տարաք ցիր ու ցան:
Ապրին հայլն:

Զի մոռնար Անին այն ձեր յաղթութիւն,
Որ քրդաց, պարսկաց արարիք նկուն.
Այնու հայ գերեաց հասաք օգնութիւն,
Խումբ խումբ օգնեցիք դառնալ իրենց տուն:
Ապրին պաշտպանք մեր ազգին,
կարօն, Մուսէն, Աղասին.
կեցցեն դիւցազք մեր ազգին,
Սէգ կարօն, Մուսէն և քաջն Աղասին:

Ղ. Վ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿԻՆ

—

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Դարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր արևնիս դուն մայր էիր գթառատ՝
Արդ հեռանաս մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռքով մեր վէրքերը չաս անգամ,
Լանայիր, դեղ դնէիր ամէն ժամ.
Քո մազերից պղօրէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար է ագապ:

Արդ հայոց գօրքն իրեն մօրից որբանայ,
Վրաց ազգը քու լանամօք պերճանայ.
Հայաստանը գրկէն իր սուրբ չուչանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, սիրուհի,
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս, մաքրուհի,
Գնաս բարեաւ, միշտ լոյս հաւատն քեզ ընկեր,
Աջն ու խաչը քեզ պահապան գօր, գիշեր:

Ազգդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ վրաց,
Հայ անունըդ միշտ պահէ անմոռաց.
Լոյս հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան՝
Լոյս հաւատդ քեզ միշտ պահէ անսասան:

Ց. ԿԱՐԻՆԵԱՆ

ՎՏԱՐԱՆԴԻՆ

—

Թէպէտ վատր քաղքէ քաղաք կամ թափառ,
Բախտն ու մարդիկ ղիս հալածեն անգթաբար.
Այլ արդէն իսկ ազատութեան երբ վեհ ձայն
Թըռաւ բերնէս, յանձն առի վիշտ զայս համայն:
Ազատութեան ես անձնէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

Թէպէտ հեռի իմ սիրելեաց դրկերէն
Հեռի անոնց գողտրիկ ձայնէն, երդերէն,
Տխուր քնարս նօճիներէն վար կախած,
Լռիկ կ'ողբամ ազգիս բախտն մտայած:
Ազատութեան ևայլն:

Թէպէտ յաշացս դառն յորդեն արտասուք
Ցայտանել սրտիս կարօտն ու սուգ և պատուք,
Այդ արտասուօք սրտիս վէրքերն լւանան՝
Վէրքեր, որոնք ազգիս ցաւերն հոն բանան:
Ազատութեան ևայլն:

Վտարանդ'ի, թէպէտ դառն են այս օրեր,
Օր մ'ալ տեսնես, նպատակիդ ես հասեր.
Ազատութեան յաղթանակը քու ձեռքիդ,
Վարդն ու չուչան պսակ պճնել դան ճակտիդ:
Ազատութեան երբ անձնէր,
Վիշտ, ցաւ սիրով ես յանձն առեր:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

—

Սիրահեգիկ սիրուն աղջիկ
Քնիր անուշիկ քնով.
Որ զօրանաս, սրախս ծաղիկ,
Քնքուշ տեսքով կարօտով:

Քեզ սիրում է քո մայրիկը,
Մաքուր կաթինս քեզ տալով.
Եւ օրհնում է քու հայրիկը,
Քեզ փարելով, գգուելով:

Ինձ մի տանջեր, իմ անուշիկ,
Թող ինայ սրտիկս խաղաղ.
Ննջիր հանգիստ հոգուս հատիկ,
Թող ես չասեմ ա՛խ ու վ՛ախ:

Աչքն Ցխուսի քեզ պահապան,
Գիշեր, ցորեկ, օրն իբուն.
Որ զարգանաս, իմ աննման,
Եւ ըլլաս մայր սրբասուն:

ԱՐՏԱԻԱԶԴ ԻՎԻՀՆ ՄԱՍԵՑԱ

—

Գարուն էր կենացս գեռ,
Երկինք ինձ նայէր հաչտ.
Ինձի համար ձոր, լեռ
Կը ծաղկէր և գալար գաշտ:

Թագն էր գարդն իմ վարսիս,
Քայլս մէջ էի պերճ.
Շուտ գիս գրկեց Մասիս,
Փառքիս վազ հասաւ վերջ:

Հեծայ իմ սեաւն վեհ,
Անցայ չուրջ մարգերէ,
Որսալ ի Գինայ գեհ
Ցիւռ և պարարտ երէ:

Ողջոյն, լերինք ու ձոր,
Ողջոյն աւերն ծառեր.
Անշոնշ նիւթերն բոլոր
Լեզու էին առեր:

Բաբ'է, յանկարծ կասեցայ
Ոտքն իմ աչխոյժ սևոյս.
Կալան գիս քաջք Մասեցայ,
Տարան ի վիհն անլոյս:

Փախաւ, թռաւ արևս,
Ամբաց գիս Սաթենիկ.

Առ իմ վերջին բարեւս,
Ազնիւ իմ հայրենիք։

Ինչ՞ու բոլոր մարդիկ
Ինծի դէմ են ելեր,
Ինչ՞ու այսպէս սաստիկ
Գոռան մրճերն, սալեր։

Անզերծ եմ իմ կապէս,
Իգուր ազգս կը խորհի
Կրնայ հէգ մը ինծի պէս
Վախճան տալ աշխարհի։

Անէծք կը կապեն գլխս,
Շնիկս գուբ կը մաշես
Ակռադ, գանուր վզիս
Կապեց հայրս Արտաշէս։

Խիստ խիստ են հօր մ՚ անէծք,
Դառն են և ահագին.
Անով կ՚ըլլան ո՛ւրեծք,
Ոչինչ փառք ձեր թագին։

Ն. ՉՕՀՐԱՊԵԱՆ

ՊԱՐԵՐԳ

—

Հայկազունք, պար բռնենք,
Թև իթև օն ելնենք.
Ցնծութեան ձայներով,
Եւ զւարթ երգերով։

Չի ահա ինոր բախտ,
Զայն կուտայ երկինք արդ,
Իսուրբ կոչումն ուխտենք հաստատ,
Անձնուէր գոլ պատրաստ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԼՈՒՍՆԱԿԻՆ

—

Անո՞ց գաս, իմ Լուսնակ, հեզիկ ու հանդարտ
Համատարած Լուսովդ իլեռ, ձոր և արտ,
Եւ ինահապատս, որ մօտ մըլար
Գիշերաժամիկ ժուռ գար յիւ արայր։

Ուր քալ և աննըման իմ հարք հայկազունք,
Ընկան զէտ հսկայ, կանգնեցան զ՝արթունք,
Մինթէ գա՞ս սիրեալ ոսկերաց սրբոց
Զիւնափայլ ամպէդ, ոսկեթել ծածկոց։


Թ՞է ճերմակ ճակտիս Թէպէտև պայծառ
Քալացս արենէն կապես կարմիր վառ.
Թ՞է լռիկ ինչիկ ապշիս տակաւին,
Թէ ինչպէս իննկաւ Վարդանն ահագին։

Մահու սև սուերն իսիրտ թշնամեաց,
Չհոգին ձգելով յերկինս առ Աստուած.
Դու այլ, ո՛վ Տղմուտ, արտում ու արիւնոտ,
Որ լալով ոլորիս իմ էջ համբերուդ։

Եւ հովիկդ որ գաս իմ ակուայ քարէն,
Կամ իմ երը Մասեաց սրբազան սարէն.
Դու ալ ինձ նման դողդոջ ու երեր,
Թոյլ թևօք անցնիս սարեր ու ձորեր։

Անտառէ անտառ, տերևէ տերև,
Կոծկոծելով գաս իմ աչառիս վերև.
Զայս մաշած չնչիս վերջին հառաչանք
Զգել իհայոց սրտից արձագանգ։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ



Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

Հ. Ղ Ե Ւ Ո Ն Դ Ա Լ Ի Շ Ա Ն

(Ծն. 1820 յուլ. 20 ին — մեռ. 1901 նոյ. 22 ին)

Ղևոնդ Ալիշանի անձնական կեանքէն շատ քիչ բան գիտենք. ծնած է 1820 յուլիս 18-ին Պօլիս, ու մենք գինք կը ճանչնանք Մխիթարեան վանքին մէջ իր արտադրած գործերովը:

Ղևոնդ Ալիշան «Հայաստան Աշխարհի Սոխակ» պատուանունը կրելու արժանի ասպարէզ մը ունեցաւ: Երգեց, ահա իր ամէնէն մեծ գործը, և անոր երգերը գունագեղ և այլազան, ազդեցին և միշտ կ'ազդեն մեր սրտերու վրայ, ինչպէս կ'ազդեն տխուր և սգաւոր սրտերուն վրայ սոխակին դիւերային դեղգեղները:

Իր բոլոր գործերու մէջ, ըլլայ պատմական, տեղեկագրական թէ բանաստեղծական, միշտ երգող մը եղաւ անոր երգող՝ միշտ սոխակի պէս՝ թուփերու մէջ ծածկուած, զի նոյն իսկ ՉԷ ՏԵՍԱԾ այն աշխարհը, որը երգեց. — Հ. Ալիշան Հայաստանը բնաւ այցելած չէ, իր տեղեկագրութենէն մեծ մասը իր եղբօրը և ուրիշ մտերիմներու կը պարտի, որոնք նախնական անտաշ նիւթերը իր գոգը լեցուցին, և ինքը հարթեց, կոկեց, բանաստեղծացուց, և երգեց: Հայաստանի ամէն մէկ լեռը, ամէն մէկ լիճը, ժայռը, հովիտն ու ձորը, չուիկն ու ակնաղբիւրը, մարգն ու արօտ, աւերակն ու չէն, մարդն ու անասունն, բոյսն ու հանքը՝ իր երգին նիւթերը կազմեցին:

Ի «գլուխ գործոց»ները, ինքնուրոյն գրուածներն ու ուսումնասիրութիւնները են. «Այրարատ», «Սիսուան» «Ծուխիկք Հայրենեաց Հայոց», «Սիսական», «Շիրակ», «Տեղեկագիր Հայոց Մեծաց», «Նուագք», «Հայբուսակ» «Բնախօսութիւն Հայաստանի», «Ընդ եղևնեաւ», «Հայոց երգք Ռամկականք», «Ներսէս Շնորհալի և պարագայ իւր», «Նշմարք Հայկականք», «Հայապատում», «Աբուսահլ», «Հին Հաւատք Հայոց»:

Իր մեծ յիշատակած գործերն են. «Աչխարհագրութիւն քաղաքական», «Աղօթք Աբեղայի», «Ասիզք Անահիքայ», Բիւրքէր «ի Հռուդոլփ Հաբեդունի», Պայրընի, «Իտալիա», «Ինար ամերիկեան», «Անուանդք Սրտի և մտաց», Շիլլէր՝ «Երգ ի զանգակն», Ճառք գաղղ. իտալ., Հոգևոր մատեանք, Պօսիւէի՝ «Ընթրիք Յիսուսի», «Կամենից և Հայվենեաց»:

Առանց մէջ պէտք չէ փնտռել այժմեան իմաստով հասկցած քննական ոգի, գիտական մանրազննին ճշդութիւն և այլն, այլ միշտ երգ, միշտ ներբող, միշտ մրմունջ, միշտ աղօթք, հայ անցեալի մեծ դէմքերուն, մեծ աւերակներուն վրայ: Այսուամենայնիւ, իր մատենագրական և տեղեկագրական ուսումնասիրութիւնները միշտ եղած են և պիտի ըլլան բանասէրներու և հայարաններու համար անբաւական աղբիւր:

ՀԱՑՈՐԴԻ

—

Ապառաժուտ լեռան մը կող,
Ցեցեալ իքար գերեզմանի.
Աչք մերթ յերկինս և մերթ իհող,
Խարտիչագեղ կար պատանի:
Ո՛վ դու որդիդ լերանց, հովտաց,
Ինչ՞ու այդպէս սիրտդ է ցաւած:

Կ'ուզե՞ս մեծ փոթորկեալ ծով
Մատուցանէ քեզ մխիթար,
Կոհակաչարժ իր լարերով
Երգեալ իշունչ մրրկավար:
Ո՛վ դու որդիդ ևայլն:

Կ'ուզե՞ս որ քեզ ահեղաչուք
Խնդայ կամարն աստեղց անթիւ,
Եւ բնութիւնն պայծառ գարդիւք
Փոպի ծաղկամբ և ջեփիւռիւ:
Ով դու որդիդ ևայլն:

Կամ փափկագոյն այլ սփոփանք
Միթէ կ'ուզե՞ս մօր քաղցւենի,
Եւ սիրուհւոյ անուշ դգւանք
Որ քու կսկիծդդ փարատի:
Դեռ ինչ՞ կ'ուզես, ոհ մի՛ ծածկեր.
—Կ'ուզե՛մ.....

Մ. ՊԼՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏՆԵՐ

—

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Զունի ուսում՝ խելք ալ չունի.
Խելօքները այդ լաւ գիտենք,
Բայց, ախ, միայն մենք կը խօսենք:

Մեր խեղճ ազգը հալածած է,
Երկրէ երկիր սարագրած է.
Բախտաւորները այդ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք:

Հայ մշակը երկիր չունի,
Երկիր չունի՝ հարկ չատ ունի.
Հարուստները մենք այդ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք:

Հայի տղան գրքեր չունի.
Վարժարանը վարպետ չունի.
Գիտուններըս այդ լաւ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք:

Հայ տէրտէրը կարդալ չգիտէ,
Հայ սիրացուն չատ տգէտ է.
Եպիսկոպոսը այդ ճիշդ գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք:

Հայ գեղջուկի աղջիկն ու կին,
Անվարձ սեղեխ են թուրք, պարսկին.

Ամիրաներս մի՞թէ չըգիտենք,—
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք:

Աչքըս դարձնում արևմուտքին,
Արև ծագէ սլաւօն ազգին.
Հայի արևն ահա վեց դար,
Համատարած պատէ խաւար:

Հայի գանգ՛ատ, անվերջ գանգ՛ատ,
Տրտունջ ու լաց, սուգ անընդհատ....
Եր՞բ ապա սատ, եր՞բ սրոյ չաչիւն,
Փողի ձայներ, մարտի գոչիւն....

Թուրը ձեռքէս թուրքը առաւ,
Տւայտանքէ խելքս թռաւ.
Անգո՛ւթ ոզնէց, մի՞թէ չես տալ
Ալէտալի բախտըս սըգալ:

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՂԱՐԻՊԻ ԵՒՐՈՋ ԵՐԳԸ

—

Ծըծվերս եւմրուղ էր, զարիպ ճամբեցի,
Ծամերս ճերմկաւ, ճամբան աչքեցի.
Էս օր թողճիւն գէր, վէր ձեան կարկուտ գէր,
Իմ եար թողտուն գէր, ծիկ անուշ քուն գէր:
Սրե՛, եար սրե՛, մալուլ մի՛ ճիա,
Ղուրպաթ ես ինկե, սրե՛, մի՛ ճիա:

Սաամբէօլ քեաղաք վեր սև ծովերաց,
Վաթան կուրիսե վէր ղարիպներաց.
Ղարիպիս մեռնեմ, ուր ճամխաներաց,
Որ չէրթէր ձեր խաև սարերաց:
Սրե՛, ջան արե՛, հեռու մի ձնա,
Սուտ-փուճ ասուոր ծիկ, քե չձնա:

Քեամբախ Պէյօղլի, բլէր Իսքիւտար,
Որ չ'անէր իմ եար վէր ծիկ դարբէդար.
Քեամբախ Պուլանըղ, ինչ անուշ տեղ էր,
Մէջ քեո էրկու ծոց քընելու տեղ էր:
Սրե՛, ջան արե՛, սարեր լացուցեմ,
Քե էլ ղարիպի ճամխէն դարձուցեմ:

Էլա պանձր էօտէն, լինկեա անուշ քիւն,
Կոարաւ սրտիս սուն՝ էլա էրէրուն.
Խիեալով կացի՝ ղարիպիս սիրուն,
Գիչեր ցերեկով ձնացի արթուն:
Սրե՛, ջան արե՛, հեռու մի ձնայ,
Ասուորիս մալ ծիկ, քե չձնա:

Ինկեայ թաղէ թաղ, ախչէ մ' ճարեցի,
Տալի թապաղէ մ' թղթիկ գնեցի.
Շողշողուն մասքերս կալամ արեցի,
Իմ սրտի դարդերն ինե գըրեցի...
Վանայ չուխ պօլիս մէկ օրոխկեցի.
Շատ ղարիպ կուրպաթ ոտով դարձուցի:
Կանչեմ, ջան արե՛, սարեր լացուցեմ.
Խոցերս ի խասե, վ'ախ պիտի մեռնեմ:

ԳՈՒՇԵՐ

—

Երեկոյեան՝ երբոր մի հով,
կը գուրգուրայ ծաղկանց վզով.
Հորիզոնէն 'ւ երբոր լուսին,
կանթեղ վառէ ճամբորդ կուսին.

Ես ալ կ'երթամ իմ թաւին տակ,
Հոն դիտելու ջուրն ու վտակ:
Ինչ՞ հաճոյքներ կան հոն. գիտե՞ս,
Տարագրի մը ինծի պէս:

Որ երբեմն նայի յերկին,
Ու ակնարկն դառնայ կրկին
Ետ, ու ջրին մէջ սուզի....
Սնոր սիրտը որքա՛ն յուզի....

Ինչ՞ վեհ իղձեր անրջային,
Անոր հոգւոյն մէջ կը շրջին....
Ինչ՞ խոկմունքներ հոն, բարձր ու լուրջ,
Կը բոլորին իր ճակտին չուրջ:

—Հոն գայ հանգիլ այն ճամբորդ կոյս,
Թաւերուն գիրկ մինչև իլոյս.
Եւ հովն ան գայ ու գուրգուրայ,
Ծաղիկներու, ծառոց վրայ:

Բայց չ'է այդ կոյս չուշանագեղ
Որ գիս քարշէ, տանի այդ տեղ.

Ու այն հովերն հաճոյք չեն տար,
Անոնք ամէն ինճ են օտար։

Ո՛հ, իմ հայոց չքնաղագիւտ
Աշխարհ, ու ջուրն երկնակապոյտ,
Դո՛ւ, մանաւանդ, դո՛ւ ծով վանիկ,
Ձեր յուշքն է որ պիս հոն տանիկ։

Ընդ միշտ աչքիս՝ ջրոց վրայ,
Ձեր պատկերն է որ կ'երերայ։
Ու այս օտար ափերէն, յիս
Զարթնուն յուշքեր հայրենիքիս։

Աքսորեալի պէս միայնակ,
Ինկած օտար ծառերու տակ։
Հոս վշտալի ու յուսախաբ,
Հոգիս թռի մինչև ձեր ափ։

Ջուր մը, թաւուաք... ու փսփսոց...
Ու յուշքերը խնճղան իմ ծոց։
«Ախ» մը, «Ուխ» մը սիրտիս ներքէն —
Հոգիս ձեր քով թռի նորէն։

Քանի՛, քանի՛ անգամ քու քով
Պառկած եմ ես, ո՛վ վանիկ ծով,
Ափերուդ մէջ կանաչագեղ,
Ուր սոխակը կ'երգէր գեղգեղ։

Ու սև աչուի մի դեղջուկ կոյս
Կ'օրօրէր պիս մինչև իլոյս։
Ու գըլուխս փայփայելով,
Հանգչեցնէր իր գիրկը զով։

Ահա, կը խայտա՞ն դեռ այն ալիք,
Դեռ կան՞աչ են այն ուռենիք,
Դեռ այն ճնճղուկն կը ճըլուրլա՞յ,
Այն աղջիկը դեռ հոն... կուլա՞յ...

Դեռ այն հովերն կը գուրգուրա՞ն
Հայոց ծաղկանց, ծառոց վըրան։
Ի՞ աստղեր, լուսին հոն լոյս կուտա՞ն,
Ահա, դեռ կ'ապրի իմ Հայաստան —

Լուր մը, լուր մը ինծի թող տան։
Չի իմ պաշտած ան է միայն։

Տ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ԻՆՉՈՒ ԵՍ ԼԱԼԻՍ

—

Ինչու ես լալիս երբև մուրացկան,
Թափելով արցունք մաշուտ ես քո կեանք։
Մխիթ արցունքով սարկի չղթան
Կարիս դու կո՞րել, ասա՛, Հայաստան։

Սրտաչարժ լացիդ սոսկալի ձայնից
Դղրդաց աշխարհ, սարերը լսին։

Բայց քեզ ինչ՞ օգուտ, ասա՛ իմ անգին,
Նոցա տրցունքով վէրքերդ բուժուեց՞ին։

Գիտեմ դու կամիս աղի արցունքով
Շարժել գութն՝ անգութ այն ելբօպայի.
Ծնկաչոք գրկած նրա ոտները
Պատմում ես թշուառ վիճակն հայի։

Ա՜ւաղ չէ լսում խեղճիդ պաղատանք
Մարդասէր անուն կրող ելբօպան.
Թմրած, դալկացած նա մի անկիւնում,
Քաղցր քունի մէջ երազ է տեսնում։

Ամբողջ դարեր այդ խեղճ թշուառ կեանքում,
Բռնած ցուպը, դառած մուրացկան,
Ամէն մի մարդու դու ճեռք ես պարզում.
Ինչ՞ ես ստանում, ինչ՞, ո՛վ Հայաստան։

Կծու նախատինք և արհամարհանք,
Կամ կեղծ խոստումներ, քաղցր խօսքի հետ.
Այս չ՞է քո բերած, ասա, աշխատանք,
Այդ էլ սիրելիս կորած է անհետ։

Մեռցուր այդ հոգին, յիշիր դու վարդան,
Ցոյց տուր օտարին հայի քաջութիւն,
Պատերազմի դաշտ բռնած հրացան,
Վազիր դու գոչել «Հայք ազատութիւն։»

«Կեցցե՛ն հայ քաջեր, կեցցե՛ մխութիւն»
Այսպէս ասելով քաջն ելբօպան
Կըտայ հայեր և մեզ ազատութիւն.
Ահա սուրբ միջոց և մեզ փրկութիւն։

Ց Ի Շ Ե Ն Ք

—

Հայկն ու Տիգրանին յիշենք միշտ եղբարք,
Թափ տանք նրանցից հնութեան փոշին.
Նրանց յիշելով արդեօք մի նոր կեանք
Առնու Հայաստան, նոցա խեղճ այրին։

Կեցցե՛ք յաւիտեան, այրին Հայաստան,
Նա որ իր որդոց դեռ սրտի խորքում
Զունի հաստատուն մի ոտքի կայան.
Ու որդիքն պանդուխտ, իրենց բուն երկրում։

Եղբարք, բանը չէ անշուշափելի,
Միայն թէ կամաւ չկարծենք ցնորք.
Վաղուց մարմնացեալ ու տեսանելի,
Դարձեր է հայոց լուծը անողոք։

Մեր յոյսը սակայն մեր վրայ լինի,
Այսինքն աղգի մեր ընդհանրութեան.
Աղքատ ու հարուստ տւած թև թևի,
Այսպէս թէ միայն կայ ճար փրկութեան։

Կեցցե՛ Հայաստան, որ երազական
Եղել է այսօր, իրօք և խօսքով.
Ոչինչ աւելի հնախօսական
Քան թէ անխորհուրդ անուն դառնալով։

Ազատութեան լուսե չրթունքի վրայ,
Մ ի քանի մարդոց տեսնում ենք, այո,

Ովքե՞ր են դոքա, ո՞չ երդւեալ ծառայ,
Որ օտար լուծին ճնայ միշտ հլու։

«Կը փշրէ ղլթան, ...կ'երթայ Հայաստան»
Հա՛, հա՛, հա՛, այդ էր պակաս ինացել,
Որ նախանձախոյզ դառնայ հայութեան,
Կատաբելապէս. բայց յետոյ ինչ՞է էլ։

«Կասէ, եկել եմ, մայր իմ հարազատ,
Գիրկդ բաց որդուդ քո չտառապան.
Համբուրում եմ քո փոշին անարատ.....»
Ցետոյ մի ամբողջ գայլի չարպան։

Հարաւ հիւսիսից փոչի վերացաւ,
Շառաչիւն գէնքի.....մթնեցաւ օրը,
Ղաւաղ, սարբապի գլուխն երևցաւ,
Մեր աղգասէրը մտաւ ծակուռը։

«Հ՛ը, Հայաստանը — թող տեղը ինայ»
Ասում է ղեղչ մեր ազգասէրը.
«Բահ ու հրացան», ինչ՞է եղան նոքա,
Թո՞ղ քշում էիր դու ուրչուները...

Եւ այդ ամէնը անում եմ բերնով,
Կեցցէ՛ սուրբ Մեսրոբ որ մեզ գիր տւեց.
Հողեր եմ վարում հեռուից՝ խօսքով,
Հրացան իմ պէսը կուծքիս երբ սեղմեց։

Էլ Հայկ ու Տիգրանին յիշենք մենք, եղբարք,
Նորոգենք նոցա փառքը սուրբ անուան.
Գուցէ այս կերպով մի ատոյգ նոր կեանք
Առնու խեղճ այրի Մայրն-Հայաստան։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՑԱՍՏԱՆ

Առ ընկալ ի գիրկդ, մայրդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուած աստ և անդ,
Տես, ի՞նչպէս սիրով՝ և քու կաթոտով
Վառւած բորբոքած՝ քու տեսուդ ցանկան։

ՑՈՐԴՈՐԱԿ

Սրի, կա՛ց ուրեմն, ով մայրդ Հայաստան
Նոր ոգի ղեկցիր փառօք անվախճան։

Օն ղրահաւորինք, ո՛վ որդիք Հայկեան
Մեր մօր արցունքեր ջնջել յաւիտեան,
Զօրանանք սիրով և սուրբ միութեամբ,
Ընդել ախոյեան ընդդէմ թշնամեաց։

Հապա գործելու ժամանակ հասաւ
Հայրենասէրին կայ փառք անշրաւ։

Տ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ

Ահա հրեշաւոր ոսկեփեսուր թռուցեալ բարձուստ երկնաճեմ
Հայոց բազդին հեծեալ ի կառս բարձր գոչէ զ՝արթադէմ.

Հզօր պատգամ
ի վերուստ գամ.
Միութիւն Հայք,
եւ նոր ձեզ կեանք:

Տրտիւն ուժգին և լանջք և սիրտք,
Ծաղայ արիւն ի թինդ, ի թինդ,
Մեղր կաթէ սուրբ սէրն ի խինդ,
յԱռաքելոյն ի Հայու սիրտ:
Սիրաբորբոք համբոյր բղխին,
Արտասու աթոր աչկունք ցօղին:

Արիք Հայկազունք,
ի սէր փութաջոցուք,
Եռանդունք մատիք
ի համբոյր հեգիկ:
Տուք համբոյր մի ևս
Բացէք զձեր թևս.
Տուք համբոյր մի ևս
Սիրոյ է պարգևս:

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք,
Անմահութեան սիրուն սերունդք,
կեցցէ յաւերժ Հայկայ ոգին,
Մեզ են վկայ երկիր երկին:

Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն ոչ ի չանթից ահարկու,
Այլ յակնարկի և եթ սիրոյ վերադասեալ կենսատու.

Երկին յերկիր,
կար ի հակճիռ.
Ընդ Հայ ազգիս
Բիւր հրաշալիս:

Բացին անգունդք սեաւ, անյատակ,
Ծածկել զբազդին հին յիշատակ.
Տիեզերաց բացցին մատեանք
Անդէն գրոշմել Հայոց պարծանք:
կեցցէ՛ Հայոց սէր պանծալի
Բերող փառաց նախանձելի:

Արիք Հայկազունք,
ի սէր փութաջոցուք.
Եռանդուն մատիք
ի համբոյր հեգիկ:
Տո՛ւք համբոյր մի ևս
Սիրոյ է պարգևս:

կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք,
Անմահութեան սիրուն սերունդք.
կեցցէ յաւերժ Հայկայ ոգին,
Մեզ են վկայ երկիր երկին:

Գ. ԱՊՏՈՒԼԱՀ

ԱՐՄԻՆՈՒՀԻ

Աւերակաց երկրի մը մէջ ուր գահերու բեկորներ
եկեղեցեաց և պալատանց չքեղ չինքեր ու թագեր
Տապաստ յերկիր կարծես կ'ողբան իրենց նախկին փառք լռիկ,
կը տեսնեմ մարդ մելամաղձոտ տիրադէմ կոյս մի փափկիկ:

Բայց ի՛նչ այս ձայն հառաչանաց որ կ'արձակէ իր սրտէն
Այս ի՛նչ հեղեղ է արտասուաց որ հոսելով աչերէն
կ'ըլլնէ թրջել կարմիր այտերն ծածկուած հերօք քաղաքուխա:
Ինչպէս այգուն ցօղ՝ տերևով ծածկուած վարդին դողդոջ
գլուխ:

Ինչո՞ւ այսչափ յորդ են արցունք որք կը թափին յիր
աչաց
Մինչ բըլոց վրան, ա՛հ, ի՛նչ սոսկում, արեան հեռքերն են
թողած.
Հրեշտակք երկնից որ կը տեսնէք այդ արցունքներ, գըթացէք,
Ի լէ՛ք երկիր, բաժակի մ'մէջ ժողվէք զանոնք, վերտարէք...:

Բայց ո՛չ, թողէ՛ք, այդ արցունքներ մարգարիտ են
մեզ համար,
Ինչպէս և այդ աւերակաց գառն գետոց քաղցրաբար.
Թողէք, կուսին արցունքներն այդ աւերակաց մէջ թափին
Որ իր մէն մի կաթիլներէն սպիտակ շուշանք հոն ծլին:

Իր քալած տեղն իբրև գարնան զեփիւռ թողլով քաղցրիկ բոյր,
կուգայ ահա դողդոջ չրթամբք աւերակաց տալ համբոյր.

Ծունըր դրած և հերարձակ, արտասուաթոր մազքն յերկին,
Թեւերն պարզած, գետինն փըռուած, ողբ կը կարդայ ցաւագին:

Ո՛հ, թողլռէ համայն բնութիւն, լսենք կուսին հառաչանք,
Ինչո՞ւ արդեօք այսպէս կ'ողբայ, ի՞նչ են իր ցաւք, ականջ տանք.
Ո՞ր սիրտ կրնայ չըքաւիլ երբ լսէ ձայնն դողդոջուն,
Որով կարծես թէ յուսահատ պատմէ ցաւերն իր անհուն:

«Աստուա՛ծ, գոչէր. մինչ ե՞րբ այսպէս խռպան թողուս այս երկիր,
Մինչ ե՞րբ այսպէս անթիւ ցաւովք լցւի սրտիկս վշտակիր,
Ո՞ր մէկն ողբամ. աւերակնե՞րս թէ եղբարց կռիւ պիգալի
Որք միշտ իրար կը հարւածեն. այս ի՛նչ օրեր ցաւալի:

«Այս ինչ խեղճ է վիճակն ազգիս որ բազմաթիւ աղէտներ,
Դրսէն օձեր, ներսէն օձեր չորս կողմէն պինք պաշարեր,
Մատնիչ որդիկք, ո՛հ, իրենց մայր-Հայրենեաց դէմ են գինւեր,
Կաշառաբեկ վատթար գրողք՝ Ազգ, խիղճ ծախել են ելեր:

«Ո՛վ անգութներ, Աստուած, կրօնք մեթէ սո՞ւտ են ձեզ համար.
Ոսկին է ձեր Աստուած, գիտեմ, անոր գոհէք ամէն բան.
Բայց բնա՞ւ ըզձեզ չէը տանջեր ձեր սրտին խորէն ձայն
մ'անգամ»:

* * *

Մ Ա Ր Շ

Արի՛ք, բնկերք, քաջակորով
Ի պատերազմ դիմենք փութով,
Մեր սկզբունքն է պաշտպանել
Ազատութիւն՝ զրկանք վանել։

Անդուլ դատաստան,
Արդար ապատան
Մեր արիւն աչա
Կայ վան թշուառին։

Կեցցէ՛ Լեւոն, օծյի Լեւոն,
Թագ կապեցի տանս Հայոց։
Ջէյթունն լեցի մայրաքաղաք
Եւ կիլիկիա ազատ երկիր։

Ե Ր Գ

Ահա, եղբարք, ինչպէս պատմեմ
Հայաստանի խեղճ վիճակ,
Դըրան դարման տանելու
Ելէք Հայրենիք երթանք։

Ծնել ենք օտար տեղեր,
Ծծել օտար ղեփիւռներ,
Օտարի փառքն ալ իրեն
Օտարի կեանքն ալ իրեն։

Շէխ Ապտիւլեան ուրբերը
Վեց հազար Հայ մէկ ջարդեց,
Հայկազունք բոլոր ջնջեց՝
Ելէք Հայրենիք երթանք։

Ցանած հունձք հայ քրտինքով
Ֆիւրտա հնձէ դաժան սրտով,
Ֆիւրտա միշտ հանգիստ հայի յոյսով՝
Ելէք Հայրենիք երթանք։

Առիւծ հսկէ իր որջը,
Նոյնպէս ագռաւ իր բոյնը։
Արդ պաշտպանել մեր տունը՝
Ելէք Հայրենիք երթանք։

Մանք բարեաւ, պաշտպան տեարք,
Սուսերամերկ ձի հեծնանք։
Ազատութեան դրօշ պարզենք
Ելէ՛ք, Հայրենիք երթանք։

ՄՇեցի Հայի կտակ

Ասուած կը սիրէք ինձի մօտ եկէք,
Համբերաք, եղբարք, որ ձայնըս լսէք։
Ես Հայաստանի, Տուրուբերանի
Տարօն քաղաքէն փախի հոս եկի։

Չի այն երկրի բարբարոս քիւրտեր,
Յոռի վարչուվեան մոլեկրօն թիւրքեր,
Ա՛յնչափ նեղեցին սրտիս՝ ծանրացաւ՝
Բնիկ Հայրենիքս ինձ դժոխք դարձաւ։

Թողի ծեր ծնողքս, զթած հայր ու մայր,
Թողի ընտանիքս, խոփ, արօր, գութան.
Թողի անչուք տունս, որու մէջ ծնայ,
Արտերս, այգիներս յորմէ ես սընայ։

Քաղցր է ինձ համար հայրենեաց տունը,
Մանկութեան վայրեր, անմեղ ընկերներ.
Հոս պանդուխտ եմ ես պանդոկիս բակին,
Հիւանդ, չնչասպառ ի մէջ անկողնին։

Երդում ինձ արէք, մոքերնիդ պահէք,
Իմ վերջին կտակս հետերնիդ տարէք,
Երթայք իմ հօր տուն, ժողվէք ընտանիքս,
Պատմէք ինչ տեսաք, թէ ինչ լսեցիք։

Իմ ծերուկի հօրս ասէք քու որդին
Տեսաւ չատ անգամ քեզ մէջ երազին,
Հնազանդութեան պատիւն քեզ ըրաւ
Բոլոր կենաց մէջ մինչեւ որ մեռաւ։

Խանդակաթ մօրըս դէմքըն ինձի
Երբ աչքս դոցեմ դէմս կը կանգնի.
Ասէք իմ ծծած կաթ թող հալալ անի
Սիրտ տայ ծեր հօրըս՝ չըլլայ արտասուի։

Ասէ՛ք իմ սրտի հատոր ամուսնոյն
Թող այրի մնայ մէջ հայ կիներուն,
Ես ան սիրած եմ, սէրն տուրբ պահէ
Ուխտս ու խոստմունքս բնաւ չը դրժէ։

Իմ սիրուն որդիքս պահէ մեծցընէ,
Առաքինութեան դասեր տայ կրթէ,
Մեծ որդուս ասէք հայրդ քեզ յաւուկ
Սրատ կուտայ յայտնի և ոչ թէ ծածուկ։

Ինքգինքդ նուիրես Հայրենեաց համար
Ապրիս ու գործես սրտովըդ յօժար.
Ատես ատելին, ազգիդ թշնամին,
Ըլլաս հպատակ անոնց չար կամքին։

Իմ վրէժ լուծես թշնամիներէն
Պղծագործ, անգութ մարաց սերընդէն.
Չի անոնք թշնամի են բոլոր հայերին
Ժանտախտ ու մահ են գիւղացիներին։

Ասէք, իմ վաստակս արդէն ճամբած եմ
Զուներիմ ուրիչ բան որ իրենց ճամբեմ.
Քովս ունիմ հազար դահեկան՝
Սա կտակ կընեմ հայոց փրկութեան։

Ես հաստատ գիտեմ հայի փրկութիւն
Մօտ է և կըլլայ մօտիկ օրերուն.
կարօտով սպասի, այն օր չը տեսայ
Քրտանցս արդասիքն Թող նուէրս ըլլայ։

Ա՛յն օր ազգութեան ծախքերին համար
կը Թողում կտակս սրտովս յօժար։
Ա՛լ մնաք բարով, քովըս կեցողներ,
Ա՛լ մնա՛ք բարով, մանկութեան վայրեր։

Ա՛լ մնա՛ք բարով, դուք մուշեցիներ
Ա՛լ մնաք բարով, դուք բոլոր հայեր։
Աստուած, Հայրենիքը հոգիս տուն տար,
Որ պահ մը հանգչի մարմինս տակը։

Ա. Վ.

ԵՐԳ

—

Աւարայրի մէջ խելար և մոլար
Ցոգնած որդիս (յիմ գիրկ) լինինչ իմալիաւ
Ոսկեվար բախտս այստեղ էր դադար
Ժուռ գամ և փնտռեմ ո՛հ, ալ չունիմ կար։

Վարդա՛ն, վարդա՛ն, ինձ սիրոյ տուր ձայն,
Ինձ որ ի քո սէր հրջիմ լալական.
Աւա՛ղ չը լսեմ ձայնդ, հապա ուր գնա՞մ.
Դա՛չա, դա՛չա, աստ ինձ, ո՞ր գտնեմ ես զայն։

Տ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ԳԵՂՋՈՒԿ

——

Առտուն կանուխ թէ երնենք
Ջաղցր վաստակը գաշտին,
Զուարթ կըլլանք ու կ'երգենք
Գեղջուկ երգերը մերին։

Անցաւ գիշեր մութ սեաւ.
Ժպտին գաշտերը մերին,
Պայծառ արև ծագեցաւ
Կանաչ լերանց վրայէն։

Ելլենք աշխոյժ իմեր երկ
Հրաւէր կարդան թռչնոց երգ,
Աշխատութիւնը գաշտին
Սիրուն գանձ է ազգասին։

Թող ճոխն անդին նիրհէ խոր,
Հեշտութեանց մէջ նորանոր.
Անոր կեանքին չեմ ցանկար
Թ'և սոխ ուտեմ ամէն օր։

Մշակին կեանք ոսկի է,
Խաղաղ, անփոյթ ու անդորր,
Գեղջկուհւոն երգ գայլայլ է
Սոխակի մը տարփաւոր։

Թող ճոխն առտուն ըսթափի,
Իր խոհն ունի ու վիշտեր,
Բայց այս կեանք կը նմանի
Վերի կեանքին ցանկալի։

Առտուն կանուխ թէ ելլենք
Ջաղցր վաստակը գաշտին,
Զուարթ կըլլանք ու կ'երգենք
Գեղջուկ երգերը մերին։

ԵՐԳ ԲԱԺԱԿԻ

Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէրժ վիւթեան.
Զի վայելուչ որդիք Հայկեան
Մէկառեղ հրճւին և ցնծան,

կեցցէ՛ սէր և միութիւն,
կրնանք մի սիրտ, մի արիւն:

Վերցուր աչքէդ յերկնից կամար
Փայլի հեռուն աստղ մի պայծառ,
Եւ դու, ո՛ Հայ, զարթիր, սիրտ առ,
Հայոց բախտն ալ էհ խաւար:

կեցցէ՛ սէր և միութիւն, ևլն.

Բաւ է այսչափ բաժանուիմ,
Ըլլանք ուրախ ու խնդուիմ,
Նախանձ, վրէժ ձեզ թողունք
Անդունդէք և վհուկ անհատնուիմ:

կերցէ՛ սէր և միութիւն, ևլն.

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՛ալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ, Հայաստան,
Տե՛ս, որդիք քո միանան:

կեցցէ՛ սէր և միութիւն, ևլն.

Ի՛նչ և ընենք, ի՛նչ և առնենք,
Ո՞ չը գիտայ մէկ մեզնք հայ ենք,
Ո՞վ չի գիտեր թէ եղբայր ենք,
Միրիք ծիծաղ դիմօք երգենք:

կեցցէ՛ սէր և միութիւն, ևլն.

Ո՞ր բռնաւոր, ո՞ր օրէնքներ,
կը պատուիրեն թէ մի՛ սիրեր
Ազգիդ օգուտ ու բարիքներ.
Սիրոյ գահն է յերկինս ի վեր:

կեցցէ՛ սէր և միութիւն,
կրենք մի սիրտ, մի արիւն:

ԿԱՐՕՏ ԱՌ ՎԱՐԱԳ

Առ քեզ, ով բոյն չքնաղդ վարագ,
Սլանամ, թռչիմ ըզձիւ անդուն,
Բաւ որ այսքան բնդ օտար աստղօք
Ցիչատակաւդ մայիմ հոգով:

Ոչ գեղն վառիտը, ոչ պերճն եւրօպ
Զօրեն հանեն զքեզ սրտէս,
Թողէք գրկեմ իմ բոյն վարագ
Զվայրն յոր ես հանի ճեաեր:

Մխթէ սիրոյն կա՞յ մի ի՛նչ,
Եւ կամ ունի չափ ովկեան.
Անհուն է սէրն, անչափ իր սահմ
Որ գհայրենւոյն վառի անձկով։

Մխթէ քիչ է՞ այս իմ կարօտ,
Իմ տառնամեայ պանդխտութիւն.
Թողէք գրկել գիմ բոյն վարագ
Զվայրն յոր ես սնուցի ճեաեր։

Ագատ եմ ես այսուհետեւ,
Ո՛վ իմ վարագ, իմ Հայրենիք.
Ագատ ի քեզ, ողբալ գքեզ
Զքոյդ աւեր, ցաւերն ու վէր։

Այլ թէ պարտիս, կանգնիս ի վեր,
Շուտով գնան վէրքերդ տեղեր.
Վազեմ գրկել գիմ բոյն վարագ
Զվայրն յոր ես թռուցի ճեաեր.

Ա. ԽՐԻՄԵԱՆ

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա՛լ թող դադրին արցունք հայուն աչերէն,
Փոչոտ քնարն վար առնուի ա՛լ որմէն
Եւ սիրարծարծ նուագս իր լարք թող հնչեն՝
Զի հայք այսօր սէր մխուիթիւն կը գոչեն։
Այս սիրոյ նշան
Մեր ընկերութեան
Մաղթենք բարձր ի ճայն
Կեցցէ՛ յաւիտեան։

Հայեր, երթանք լեռ, ձոր զարթի պարելով,
Հայաստանի մեր սիրելի հէգ մօր քով.
Զմեզ բաժնող խաւարն վանենք և յառաջ
Երթանք սփռել ծաղկունս ոսքին ընդ առաջ։

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Մեր ընկերութեան
Կեցցէ՛ ձայն կուտան։

Մեր հայրենեաց արիւնապանդ սուրբ գաշտեր,
Ե՛րբ կը բուսանին արդեօք փշոց տեղ վարդեր.
Ե՛րբ կը կանգնին աւերակներն և հայեր
Ձանչնան իրենց պարտք իրաւունք, այս ուխտ մեր։

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Սէր և մխուիթիւն
Կեցցէ՛ ձայն կուտան։

Ահա պարտուց և իրաւանց սուրբ գրօշակ
Կը ծածանի մեր խեղճ ազգին յոյն ու փառք.
Սահման, օրէնք գրուագած կան իր վրան
Որոնք կրնան կեանք տալ հայոց ազգութեան։

Ազգի կենսատուն
Սէր և մխուիթիւն
Գոչէ քաղաքն վան
Կեցցէ՛ յաւիտեան։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԳԱԳԻԿԻ ՄԱՀԸ

Բացան դրունք գարնանային
Հնչեց գեվիւռ ղովարար
Ցիշատակօքն իմ հայրենի
Ես ծփայի յերիվար։

Երբ ճեմ առեալ անցանէի
Առ ամրացաւն կիզևտարա,
Ջ'ինչ տեսանեմ — գիրակ կախեալ
Զպարսպացն ի բացեայ։

Աչք իմ անչարժ ի նա յառին,
Եւ իմ սրտիքս գալարին.
Շուշանագեղ էր պատանին,
Դիմօք անեղծ տակաւին։

Զեւ էր հանեալ գլուխ վերջին,
Ինքն ընդ անձին ոգորէր,
Եւ կարեվէր նա խոցոտեալ
Կական բարձեալ հառաչէր։

Մերձեալ անդրէն, ձայնիմ՝ առ նա,
Տուր ինձ ասեմ, պատասխան
Դու ո՞ իցես տարաբաստիկ
Հետ քո բեր ինձ երեւան։

Գագիկն եմ ես ձայն ետ անդրէն.
Ի՞նչ հառաչեաց ի սրտէն,
Գագիկն եմ ես տարաբախտիկ՝
Բազբատուննեաց ի գարմէն։

Ահա անունք ինձ այս բաժակ
Լի դառնութեամբ արբուցին
Ցիմ ցանկալի իմ հայրենեաց
Չիս տարագիր արարին։

ԳԵՐԻ ՀԱՅՑԻ ԱՂՕԹՔ

Գոհ ենք քեզնից, ով բարերար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն,
Արդար արևդ այդ լուսավառ
Թո՛ղ հետ բերէ մեզ փրկութիւն։

Ո՛հ, ուրախ օրեր չնորհէ, Տէ՛ր,
Մեր խղճալի հայրենիքին,
Անոր սիրուն սարեր, դաշտեր,
Օրհնում են քեզ եռանդագին։

Մի՛ տար Աստուած, որ կործանի,
Սրբակրօն հայոց աշխարհ,
Թող քաղցր անուն Հայաստանի
Մնայ կենդան միշտ մեզ համար։

Բա՛ց մեզ քո դուռն ողորմութեան,
Ցեսու, Մովսէս մեզ ուղարկիր,
Որ այս դժնեայ եգիպտոսից՝
Աւետեաց տանին մեզ երկիր։

Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարոզեցաւ Աւետարան,
Փայլեց դրօշ ծիրանեծին
Կանգնեցաւ խաչ քրիստոսական:

Ուր նախրական նահատակները,
Դէմ վիշապին գինուորեցան,
Պատերազմի կանաչ դաշտեր
Նրա արեամբ ներկուեցան:

Ուր մեր հայրեր երանելի
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ՝
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ննջեցին ծաղկապսակ:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ

Երբ որ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարցայ,
Թէ ի՞նչ վիճակ ես ուզում,
Ասի «ուսանողութիւն»,

Աստուած ուզեց զարդարել
Ինձ դիպայ չորեր կարել,
Ասի էն դու կանանց տուր:
Ինձ մի նշանապղեա տուր:

Կապտաճաղիկ գետակ տուր,
Մէջքս կապէ հատու տուր,
Մառանումըս լաւ գինին՝
Թող միշտ անպակաս լինի:

Իմ սիրելի նազելին
Մնայ միշտ հաւատարիմ,
Փղշտացի ախոյեան,
Տե՛ս իմ տունն է իմ պաշտպան:

Ո՛վ չի լինիլ ուսանող,
Լաւ է որ միշտ ճիար հող
Ջանց Աստուծոյ լոյս արև
Ունայն տեղը վայելէր:

Ո՛վ չի կոնծել երգելով
Ընկերաց հետ պարելով.
Նա չը գիտէ ցնծութիւն,
Եղո՛ւկ սրտին, վա՛յ հոգուն:

Ով չի երգել ընկերաց,
Պաշտպան լինիլ հայրենեաց,
Վերջի արիւնը թափել՝
Հայրենիքը ազատել:

Էնպէսն մեղնից հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ,
Թո՛ղ անասնոց կարգն անցնի,
Թո՛ղ նա մեր մէջ չը մտնի:

(Թրգմ. Գերմ.)

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԱՒ ՄԱՑՐՆ ՀԱՑԱՍՏԱՆ

Երկիր քաջապանց, քանի՛ սուգ աչեր
Ցօղեցին լալեօք քու քաղցրիկ հողեր·
Քանի՛ լուռ հառաչք սրտից խորերէն,
Անճկաւ քեզ Թուան օտարաց երկրէն։

Դառն է, ո՛հ, զաւկաց մօր գրկէն կորզել,
Եւ դառնագոյն մօր անզաւակ ծնրել·
Այլ այն ձեռք որ քեզ տապալեց գահէդ՝
Կարող է գթով կանգնել անկումէդ։

Ջամբեցիր լռիկ խոպառ դառն բաժակ,
Լրաւ երկնից կէտ, ցասման վրիժակ,
Տե՛ս, սիրուն որդիքդ ձեռք ձեռքի տուած,
Գնան յառաջաքայլ, ուժգնօք օրինաց։

Համբոյր սուրը ի չուրթն, սէր վառ ի սրտի
Դիմեն սփոփել քեզ ոչ յուսով անուտի·
Թէ այն ձեռքն որ քեզ տապալեց գահէդ՝
Կարող է գթով կանգնել անկումէդ։

Թ. ՆԱԶԱՂԵԱՆ

Զ Ի Ն Ի Ո Ր

Երկրի մը մէջ երբ ամէն ինչ
Զանազանաց կը պատկանի,
Որ երկրացին սովորած է
Հեռահեաղ սոյն ընտիր խօսքը·
«Իւրաքանչիւր վասն ամենի,
Իսկ ամենայն վասն Հայրենի՝

Զինուո՛ր, զինուո՛ր»։

Եւ հիմակուան ժամանակը
Որ միակերպ ապրելու է,
Սիրտ մը քաջազն ո՞վ կ՚ունենայ
Որոյ վրայ պէտք է յուսայ։
Որ կ՚ընդհարի թշնամիին
Եւ որ երբեք չի լքանիր՝

Զինուո՛ր, զինուո՛ր։

Գիշերապահ ո՞վ կը լինի
Երբ ամէն ոք քնացած է,
Ամբողջ քաղաք երբոր քուն են
Մեռեալ դարձեր, ո՞վ կը հսկէ·
Ո՛վ կր տոկայ և կը մարտնչի,
Երկրի համար ո՛վ կը մեռնի՝

Զինուո՛ր, զինուո՛ր։

Ո՛վ պաշտելի, անեզր արեւստ,
Ո՛վ դու սուրբ գործ և անարատ·

Քալել առանց աղաղակի,
Մեռնել առանց մի արցունքի.
Ո՛վ է այն անձ, որ կ'աչխատի
Ցաղատութիւն մեր հայրենի՝

Չինու՛ր, ջինու՛ր։

Եւ ո՞ւմ մթին ու ահաւոր
Գերեզմանաց քարի վրայ,
Իփոխարէն սուրբ աղօթից
Եւ սուրբերու մխիթարութեանց՝
Իր պանծալի անուն դրոշմի
Ի փառս պատիւ իր սերընդի.

Չինու՛ր ջինու՛ր։

ՄԱԳՆՈՍ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

Ե Ր Գ

—

Ելէ՛ք եղբարք, բոլորուելու
Գահին քովեր հօրն հայուն.
Առէք ծաղկունք փունջ կապելու
Որ զարդարեն իր անուն։

Ան հայր է մխիթ ճշմարիտ,
Որ կը հսկէ անվըտիտ.
Ան նոր Մովսէս անձնւէր,
Որ կը տքնի անձնւէր.
Անդէն հանել անվհատ,
Հայն տառապէն յուսահատ։

Որբին, հէգին և հայրենեաց,
Ան կ'ափոփէ տխուր լալիւն,
Եւ ազգային սուրբ իրաւանց
Մատաղ կուտայ կեանքն ողջոյն։

Օ՛ն անդր, փութանք ի հանդէս
Տօնել զմեզ նոր Մովսէս,
Որ իր որդին ի ըսփիւռս՝
Կանգնէ տաճար լուսասփիւռ.
Հոն քաւելու դարևոր
Ազգին վէտեր բիւրաւոր։

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՐՄԷՆՈՒՀՒՆ

Երբ կը լսեմ Հայաստանիս անուն, թնդայ սիրտս ուժգին,
Երբ կը յիշեմ իր տառապանքն, արցունքով աչքս թրջին.
Անոր նման լքւած թշւառ կա՞յ հայրենիք մ'ալ արդեօք,
Որուն ձայնին լսող չըկայ, կուլայ կողբայ դառն ցաւովք։

Ելէ՛ք, վարպա՛ն, Տիգրա՛ն, Արա՛մ, տեսէք ձեր մայրն միանգամ,
Թո՛ղ իր ողբերն արթնցնեն ձեզ ձեր չիրմանց մէջ անգամ.
Տեսէ՛ք, ի՛նչպէս վտարանդի կը թափառի տուն Հայկայ
Ի՝ ամէն կողմէն կը հալածւի, կը հարւածւի անխնայ։

Ա՛հ, Հայաստան, դու սիրուն մայր, մինչ ե՛րբ այսպէս քու որդիք
Քեզմէ հեռու պիտ' հառաչեն. իսկ դո՛ւք, մինչ ե՛րբ թափառիք։

Մինչ ե՛րբ և ես մայրակարօտ արմէնուհիս քու սուրբ գիրկ
Չիգամ պիտի որ արցունքովս թրջեմ ձեռքերդ քու փափկիկ։

Թէ կրնայի թռչիլ երթալ գլխիկս դնել իմ մօր ծոց,
Ուրախութեան արցունքով հոն հանդչեցընել սրտիս բոց.
Գէթ մէկ անգամ փայփայանքով գգուիլ անկէ, տալ համբոյր
Ա՛լ թո՛ղ գիս գոհ ընէր այնտեղ թշնամուն սուր սայրասուր։

Եկէ՛ք, եղբա՛րք և սիրուն քո՛րք, ձեռք ձեռքի տանք ու գործենք.
Մեր թշնամին ազիսութիւնն է, ուրիշ տեղ չը փնտռենք,
Այդ թշնամին մեզի թշուառ ըրաւ, բաժնեց մեր մօրէն,
Պէտք է որ ան սիրով, ուսմամբ յաղթենք վանենք մեր մէջէն։

Ա՛հ, հա՛յ եղբարք, հայկազն քոյրեր, մինչ ե՛րբ այսպէս անտարբեր,
Թողունք որ ըզան որոմ ցանել աշխատանքի մեր արտեր.
Է՛հ, ա՛յն աւեն պիտ՝ արթնանք երբ ամէն բան թշնամին
Քանդէ, ցրէ, տայ հովին որ յիշատակաց չը մնայ մին։

Արմէնուհի՛, ալ յուսահատ ձգքէ սիրտդ որ դուրս թռչի,
Եղեռնած ախտը հառաչանքիդ ձայն, ամէն կողմեր թող հնչի,
Երթայ հասնի մինչ Հայաստան, լըսէ քու մայրդ և գըթայ,
Թերևս քեզի մխիթարէ, պի օտարէն յոյս չըկայ։

Ա՛հ, այս ցաւով վախնամ թէ ես պիտի մոռնամ գերեզման.
Սրճագանք մ՛ալ աւտղ չի կայ երբ կը պոռամ Հայաստա՛ն.
Ա՛հ, ամէն կողմ լռութիւն է, կարծես մահն է թագաւորեր,
Մեռելոց ու աւերակաց մէջ ալ ես բու եմ դարձեր։

Ա՛հ, Հայաստան, սիրտս ու հոգիս քեզ նւիրեմ ընդունէ,
Թէ կարելի թողես ինձ մոռնիմ ու Հայաստանս ոտք ելլէ,
Անոր սիրուն բանան ալ դիւրիմ, պալատ է ան ինձ համար.
Ոտքերս ձեռքերս չղթայ զարնեն, երջանկութիւն է ան ալ։

Թէ մինչև իսկ աքսորիմ, իս թափառական ընէ բախտ,
Հայաստանիս սիրուն համար, ամէն տեղ ինձ կ՛ըլլայ դրախտ,
Նպատակիս հասնիմ միայն, թո՛ղ իս հանեն կախաղան,
Կախաղանէն ալ խեղդուող ձայնս պիտի կանչէ Հայաստան։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Եկել է գարուն սոխակը սիրուն,
Վարդի թուփ գտել կ՛երգէ Հայրենիք,
Ծիծեռնակ, բագէն, թռչունք համօրէն.
Քաչուռ են միշտ ա՛ն, օտարաց երկրէն։

Կռունկ մեր պանդուխտ, իր բարձր եթերքով,
Փութաց ձայն տալ մեզ հայրենի սիրով.
Արծիւն Հայրիկ, հայրենակարօտ՝
Հեռանում է արդ դէպի Մուշ, Տարօն։

Վասպուրականի երիտասարդները
Եւ օրիորդները հագան ուռ լաթեր.
Լաց ու արտմուքեամբ մոռցան Ծաղկազարդ
Ինչպէս որ սոխակ իր սիրելի վարդ.

— Հայրիկ, ո՛հ Հայրի՛կ, ո՞ւր այսպէս արագ
— Գնամ հրաժեշտ տալ՝ և վերջին կտակ·
Նորաչէն, Արարք, Ցայնկոյսձորոյ վանք,
Ուր կան ժողովուած տպայ, մարդ, կանայք:

Իսկ երկուշաբթին որ օրն էր աւագ
Ի սուրբ Ցակոբէն տուն դառնալ արագ·
Վերջին տեսութիւն, վերջին վառ կարօտ՝
Զը կրցաւ երբեք տալ ոչ մէկին մօտ:

Մի լինչ արցունք աչերէն վազեց,
Զը կարաց ժուժել, տեղէն վեր կայնեց·
Լոկ մի բան ասաց, խօսք մի հայրական,
Ա՛խ, կարծես Հայրիկ մեռած է կուլան:

Լալական խումբեր, ո՛հ, առին տարան
Հայրենի քաղաք, Առաջնորդարան·
Փակեալ կրպակներ կարծես սուգ առած՝
Աւա՛ղ կարկային Արծւին Հայրենեաց:

Թռա՛ւ, սլացա՛ւ մեր երկրէն ի բաց:

Զէ՛, այլ չէ տեսնուր սիրուն Հայրենիք՝
Հայրենի փառքէն կարօտ մեր Հայրիկ:

Կ· Ց·. ՊԼՈՒԶԵԱՆ

ՄԱՀ ԱԳՐԻՊՊԱՅԻ

Ես Հայրենեաց նահատակ,
Սիրով անոր սիրահար,
Բոլոր կենաց իմ օրեր՝
Ընծայեցի ի նոյն սէր:

Գեղջուկ մանկիկ հայկազեան
Զև քո տեսեալ ի ճակատ,
Փայլեալ ուսման սուրբ պսակ՝
Մահու արբի զբաժակ:

Գիչեր էր, մութ չարաչուք,
Հով գարնայնոյ մեղմաչունչ,
Եւ ի դաշտին Արճակեան՝
Խոր լռութեամբ չրջապատ:

Դիւապատակեր մի ճիւաղ
Արիւնըռուչտ լինճ եհաս
Ընդ մթութեան գիչերոյն՝
Սեաւ էր անոր չար նախանճ:

Բրօք հարած ի թիկանց
Զերթ ամպրոպաց չեչտ կայծակ
Զիս գահավէժ արկ գետին
Ի մահահոտ ի ճորակն:

—Ընկե՛ր, եղբա՛յր, ալի՞նչ խնդրես,
Զ՞ինչ իմ է քեզ մեղուցեալ·
Արծա՞թ, հանդե՞րձ, երիվա՞ր,
Տամ քեզ ահա, ե՛րթ ի բաց:

Ես եմ գերի սիրահար,
Դեռ ես ունիմ բաղձանք չատ:

— Ձի՞նչ կակաղես, դու թշւառ,
Ես քո արեան ծարաւի.
Խելացընոր դու այլ իմ,
Ո՛հ, պիղծ հոգուս չար գերի:

Այս բան ասաց չարութեան,
Հեղձամղձուկ քարքաչեաց.
Գազանաբար խեղդամահ
Մինչ ի ձորակն գլիս ձգեաց:

Ընդ աղեղան և գլուխս
Պայթել պայթեաց լայնաբար.
Ափ մի առեալ յարենէս՝
Սրբ և կորաւ չար կայէն:

Սբէլ մնաց ապաժուժ
Զայն ձորակին մահահոտ,
Գարնան ծաղիկք, դալարիք
Ցաչուրդ առին իմ արեամբ:

Երկի՛նք, երկի՛նք կապուտակ,
Եւ կամ ասաղիկ հայրենեաց
Վարթևեաց չուտափոյթ,
Հոս ի երկիրն Տարօնոյ:

Գուժ տո՛ւր սիրոյ սիրայնոյ
Եւ ողբ երջակ Հայրդ—Արծուոյ.
Թէ Ադրիպաս տարփալիր
Քո սէր արարիր անաղօտ:

Այսօրինակ խեղճ մահուամբ
Ետ հրաժեշտ Հայրենեաց.
Հայրի՛կ... գոչեց վերջին չունչ
Ել մեկնեցաւ հոգին սուրբ:

Ղ. Վ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ

ՀԱՍՕԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եղներ,
Ցառա՛չ տարէ՛ք արօրը:

Վարը վարենք, ակօս փորենք,
Ինո՛ր ակօսներ հողի մէջ,
Սերմ ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալի մէջ:

Կը գայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրա՛խ կ'անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի և կուշտ է մեր փորը:

Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եղներ,
Շուտով վարենք արտերը.
Թո՛ղ չասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Հասօի եղները:—

ՐՇՏՈՒՆԻ.

ՁԱՑՆ ԲԱՐԲԱՌՈՑ ՑԱՆԱՊԱՏԻ

Ասուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք,
Օրէ օր թիւրքը կ'ելլէ մեր առջէն,
Տեղըս մարդ չի մնաց գաւառ ծըծի տղէն:

«Հայը գէնք չունի» կ'ասէ օսմանլին,
Անառը թողել է նա մեր հայրենին...
Ասուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Մինթէ ազգային պարծանքը չարժէ՞ր—
Ամէն հայ մէմէկ ոսկի ընծայէր,
Երկուսը մէկ թուր, երեքը՝ հրացան, —
Որ մոլի տաճկին անէինք ցիր ցան...

Լոկ այն, որ կուտաք խումի ու թղթի,
Հայ՛ք, ձեզ կը հասցնէր ազգային բախտի,
Ասուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս դրեց մէկ կոնդակ,
Ո՞ր եպիսկոպոս ցրուեց հրաւիրակ,
Ո՞ր գիտնականը ձայնը բարձրացուց,
Ո՞ր գօրականը թուր ու գէնք վերցուց:

Ո՛վ հայ ազգասէր՝ ո՞ւր ես, ո՞ր ծակն ես,
Ազգային ղեկցմունք՝ մինթէ դեռ խակ ես.
Ասուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՛լա, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը,
Անփոփոխ կը մնայ մեր դառ վիճակը.
Սլավօնի ձեռքէն թափթըփած չղթան
Քեզ պինդ կը կապէ, խեղճի՛կ Հայաստան..

Բայց լա՛ւ յիշեցէք, սառնասիրտ հայեր,
Որ փրկութիւնը ձեզմէ չատ մօտ էր...
Եւ ես միշտ կ'ասեմ «մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք»:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ

—

Առաւօտեան քաղցր և անուշ հովերն,
Մերձեալ հընչեն մեղմով թփոյդ քովերն,
Պըդ ծածանին աչոյս լցեալ ծովերն.

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննման,
Գեղդ նման արեգական վառվառման:

Տեսեալ ծաղկունս՝ զամէնն ինձ փուշ վարկանեմ,
Թևօք բախեալ՝ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ.
Ըզցաւ սրտիս՝ ահա՛ քեզ յուշ արկանեմ.

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ևլն.

Քանի ողբամ՝ նոր ի նորոյ խոցոտիմ,
Ըզվայլուն գեղդ 'ի միտ բերեալ բոցոտիմ,
Ցորդ արտասուօք, ցայգ ու ցերեկ թացոտիմ,

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ևլն.

Սրբայարանն Բիւզանդիոյ մեծ չինէի,
Տեղ ու բնակ յարմարեալ քեզ յարկ լինէի,
Նաւակատեօք, յիշատակ քո յա՛ր տօնի,

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ալն.

Սրարից քեզ հովանի մի կերպասեայ,
Սրծաթակար և ոսկեհուռ մարդարտեայ,
Ակնահիւսեալ չուրջանակի երփներփեայ,

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ալն.

Պէտք ամենայն՝ հոգեկանք և մարմնականք,
Եղեալ են վաան քո իրրու լալականք,
Բանաստեղծք և դպիրք երդոց երդարանք,

Բացի՛ր, բացի՛ր իմ կարմիր վարդ. ալն.

Լեզուս քնար, սիրտս չընաը, քեզ երգեն,
Թևք իմ մատուռք՝ որք միշտ պլանջս հարկանեն,
Թռչունքըն ամէն՝ քեզ բազմականք սպասեն,

Բացի՛ր, բացիր իմ կարմիր վարդ. ալն.

Ջուր ոռոգման՝ քեզ արտասուքս ընծայեմ,
Ամպ հովանի՝ պճեպ ի վերուստ տարածեմ,
Ի սէր սիրոյն՝ բուռն սիրով վառած եմ.

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ալն.

Ցորդ արտասուօք թևաօք բարձեալ սնուցիկ,
Ի գիրկս իլանջըս հանգուցեալ պահեցիկ.
Շաղով ցօղով՝ յար ոռոգեալ ալ արբուցիկ.

Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ. ալն.

Առաւօտն բանալ փութայ վաղվաղէ,
Օդն ըգցօղիկ՝ իվերայ քո չաղչաղէ.
Խոնջեցայ յոյժ թըռչոտելով թաղ թաղէ

Բացի՛ր, բացի՛ր իմ կարմիր վարդ. ալն.

Բարձրաձայնեալ զօր աւետեան վայվայեմ.
Մագլովք ղերեսս պատառոտեալ քայքայեմ,
Անձարացեալ ըզտերևսդ փայփայեմ:

Բացի՛ր, բացի՛ր իմ կարմիր վարդ. ալն.

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱՓԱՆՑԻ

ԽԱՆՈՒՄ ԵԻՍ ՋԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալագեազ տեսայ,
Խանում, Եւա Ջան.

Աբարանը աչքերիս դուման ա դառել.
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով. քեօչ ու բարխանով,
Սարեր ման գալով:

Ոչխարն էսաին կ'արծայ, էնդին գառները,
Խանում, Եւա Ջան.

կանչըցել ա ծաղիկները, ծառերը։

Դուն կեցիր բարով ալն։

Սրի երթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսայ, թազացաւ իմ դարդերը։

Դուն կեցիր բարով ալն։

Ձեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,
Ձուխա, չալվար լալով տունը բերեցին.
Օրեր՝ գարնան օրեր դուք ո՞ւր էք կորեր։

Ես Ալէքն եմ չամուեցի մէկ ջիւան,
Տուքսաղ եղայ ըստուց չուրի երեւան։

Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով, քէօչ ու բարխանով.
Սարեր ման գալով։

ՆՈՐ ՏԱՐԻ (1879)

Երնէ՛կ թէ այս նոր տարին
Վերջ տար հայի ցաւերուն,
Ջարը կորչէր ու բարին
Բուն դընէր մեր սրտերուն։

Երնէ՛կ թէ այս նոր տարին
Ազատ ընէր Հայաստան,

Եւ չուրջ Մասիս մեր սարին
Փայլէին արդ—անդաստան։

Երնէ՛կ թէ այս նոր տարին
Ոտքի կանգնէր Հայաստան,
Եւ կիսաքանդ մեր կարին
Լինէր քաղաք մեր ոստան։

Երնէ՛կ թէ այս նոր տարին
Հայ սըրտի մէջ ուժ հոսէր,
Ապաւինած իր սրտին,
Հայը քիւրդէն չի սարսէր։

Երնէ՛կ թէ այս նոր տարին
Հայ ազգ իմի գումարուէր,
Իդէալս կարնոյ հայ ամրին
Հայի դրօշակ ծածանէր։

Հայեր, երբեք չերկմըտինք,
Կը կատարուի այդ ամէն.
Եթէ խապառ մենք հանենք
Փոքրոգութիւն մեր սրտէն։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Իմ գլխու ֆութին կիտամ. (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ գլխու չամբար կիտամ (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Եար ունի, եար ունի
Եարս ի եօթին ախպէր ունի,
Եար ունի, եար ունի,
Եօթ լէ գացած բանելու.
Եար ունի, եար ունի,
Նախրագնէն ուռի ծառ.
Եար ունի, եար ունի,
Ինձոր թալեմ արի տար.
Եար ունի, եար ունի,
Ինձորի կէս խածած էր.
Եար ունի, եար ունի
Ձորս բոլորն արծըթած էր,
Եար ունի, եար ունի,
Աղբէրս ուզեց չը տւի.
Եար ունի, եար ունի,
Անուշ եարի խրկած էր:

Իմ խաքի չապիկ կիտամ, (կրկնել)
Դէ խանա ծամթելն ի ծովէն.

—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ դօչի սրանոց կիտամ, (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ թևի թևնոց կիտամ, (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ վզի վզնոց կիտամ, (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ երեսի ճրթիկ կիտամ, (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ սերտուփ ծամեր կիտամ, (կրկնել)
Դէ՛ խանա ծամթելն ի ծովէն.
—Լողւորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ մէյտան ճակատ կիտամ, (կրկնել)
Իմ կամար ունքեր կիտամ,
Իմ փինջան աչքեր կիտամ,
Իմ մեղրիկ բերան կիտամ,
Իմ բոլոր յերես կիտամ,
Իմ չարմաղ ձեռքեր կիտամ,

Իմ սիվտակ դօշքե կիտամ,
Իմ բոյն ու բուս լէ կիտամ։

Իմ ծամի ծանարուքենէն (կրկնել)
Ծամթելս կարե ընկե իծով.
Իմ ծամթելն խան տուր իշխս,
Քու չըհէլ արևն յաբով։

Իմ չուխտակ աչիչ վրայ (կրկնել)
Ծամթելէդ հանիմ իտամ քըզի,
Ե՞ր կիտայ էն օրն Աստուած
Օր երանիկ խան մգի։

ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆ ԻՐ ԸՆԿԵՐԻՆ

Թո՛ղ, աղբէր, Թողս, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի
Թո՛ղ իմ աչք կլկլացող պղտոր պղտոր աղպիւր էլնի.
Թէ ախէն էլ արցունք ունիս, արե, ծիկ հետ ու լա՛ց արա,
Մեր արցունք Թողս ամպ կարի, հայոց դաշտեր անձրև էլնի։

Թողեր ենք ծեթիկիկ ծեապերս խեղճ ու կրակ վեր պաղ Թօրվան,
Ախպէր, ինոնց արիւն, ինոնց օրեր մենք ենք տեր,
Թողեր ենք մեր կողակիցք վզիկ ծռած կէլու պէրան,
Կողակիցք որ չուտ մահուան հետն ապրելու ուխտ ենք արեր։

Թո՛ղ, ախպէր, Թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Թողս իմ աչք կլկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի.
Ռեվերը ենք չատ սար ու ձոր, արուն գետերն էլ անցեր ենք,
Էս մարդ է Թէ հրեչտակ, քար է Թէ հաւք զարմացեր ենք։

Ախ, մեր սըղէ՛ք կանչելով ճամպահ զըմէն լացուցեր ենք,
Ղարիպ ենք էս երկրի մէջ, ուր որ անպատ հետապետեր ենք.
Թո՛ղ, ախպէր Թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Թողս իմ աչք կլկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի։

Մեզ ինչի՞ համար գինի, երբ մեր աղէք սև հաց չունեն,
Մեզ ի՞նչ պէտք օտարին գարդ, երբ մեր ինկեր պէօպիկ էլնի.
Է՞ր երթանք տեսնել էն փառք որ մեր ճակտի քրտինքն էլնի,
Օտարին տուն մեզ ի՞նչ չահ, երբ մեր տուն փուտ գերան չունի։

Թո՛ղ, ախպէր, Թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Թողս իմ աչք կլկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի.
Էն կանտար ենք խոնարհեր որ զըմէն մարդ մեզ պեռ կը դնի,
Էս մարդ է Թէ անտուն՝ խակի հարց փորձ արող չկայ։

Մէկ քրտինք մէկ փարայի կուտանք՝ չատ տեղ առնող չկայ,
Փոսի մէջ ինկած ղարիպ մեր ձեռք բռնող հանող չկայ.
Թո՛ղ, ախպէր, Թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառւած էլնի,
Թողս իմ աչք կլկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի,

Էս երկնուց հաւքերը տե՛ս, ի՞նչպէս կ'երթան ճլվլալով,
Որ ծեապն ի տեղ Թեւին, որ կուտ կը տանի իր ծեապերուն.

Մենք մարդ ենք, հայու ազայ, կեանք անցուցինք ահ ու
դարով
կեանք չունինք, մահէ կը վախնանք, մեր գերեզման կը
լցի փչով:

Թո՛ղ, ախպէր, թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառած
էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի.
Թէ ամպեր կարկուտ թափեն, տուն մը չունինք պահկելու,
Թէ հովեր իրար զարնեն, տեղ մը չունինք սթաբելու:

Թէ երկինք ճէր էլ էլնի, խելք չունինք վատակելու,
Օ՛հ, էս ինչ հօրօտ օր է կ՛ատենք, փարէք կուտանք գինու.
Թո՛ղ ախպէր, թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառած էլնի
Թող իմ աչք կկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի:

Զորս դիհէն ծովերն առեր մենք չոր կղզի մը ձնացեր ենք,
Ես կ՛ասեմ կեամի չինենք, ախ դինով ես աւազ թաւալ.
Որ մէկն էլ՝ թէ ես չինեմ, կու կեայ, կտարի յիմարաբար,
Օր է օր ծով կը պարծրանայ, չատեր խեղդեց, եամ՛ն
մէկ ճար:

Թո՛ղ, ախպէր, թո՛ղ, որ իմ սիրտ կրակ ու բոց վառած
էլնի,
Թող իմ աչք կկլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի.
Աբէ, ճան ախպէր, աբէ, սիրտդ մ՛անիր քեաբի նման,
Թէ կը սիրես քեօ Քրիստոս, քեօ պապերու սուրբ գերեզման:

Ու ըլմէն ղարիպ կուրպաթ հայու ազէք հաւատարական,
եկէք տանք մեր քրտինքներ, մեր ցաւ ու տարտ կալմի
պէրան.
Հեռապենք, վա՛յ մեզ ասենք, մեր սիրտք փխրին, աչք
կկլան,
Մեր արցունք ամպ Թող դառնան, հայոց դաշտին վերէն
խադան:

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՃԱՆԵԱՆ

ԵՐԳ ՌՈՒԲԷՆԻ

Ի պառն հողմոց արտասահման հայրենական մեր երկրէն,
Ուսար դաշտեր՝ սև լեռներու պանդուխտ եղանք տարաղէմ.
Զի կար Մովսէս՝ ոչ գօրավար և սիւն լուսոյ ուղեցոյց.
Մեզ գօրավար և սիւն լուսոյ արքայական արմատէն՝
Ընձիւղ վտառոյ՝ յոյս ծագեցաւ քաջն ու արին մեզ Ռուբէն:

Հայկայ տղոց աղեղանց լարք թուլցեր էին և թևեր,
Վահան, տուսեր, նիզակ և տէգ անկեալ կային ժանգոտեր,
Հայուն անուն վատթարացեալ, էրմէն ոչ ոք կ՛անուանէր,
Մինչ մեր անչուք անկեալ վտառց արքայական արմատէն՝
Ընձիւղ վտառց, լոյս ծագեցաւ քաջ և արին մեզ Ռուբէն:

Մեր այգիներն փուշ բուսուցին, դարձաւ քացախ մեր
գինին,
Ուրախութիւն հալածեցաւ, և տուգ տիրեց սրտերնին.
Հարսի երգին, փեսի ձայնին փոխան բուեր ողբացին.
Մինչ կործանեալ աւերակաց արքունական արմատէն՝
Ընձիւղ դալար, յոյս ծագեցաւ քաջն և արին մեզ Ռուբէն:

Մեր այգիներն ոսկի ողկոյզ անուշ գինի կը հօսին,
Մեր աղջիկներն քաղցր ձայնիւ և քնարիւ գեղգեղեն.
Մեր կըտրիճներ ազատութեան զէն և տուսեր ըլկահեն.
Զի կործանեալ մեր գահոյից արքայական արմատէն՝
Ընձիւղ դալար, յոյս ծագեցաւ քաջակորովի մեզ Ռուբէն:

ԹՈՐՈՍ ԼԷՈՆԻ

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՑ։

Լռեց — Ամպերը եկան ծածկեցին,
Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին.
Մնացի մենակ հոգիս վրդոված,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած։

Եւ այնուհետև ամէն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքըն նայելիս,
Ցիչում եմ Թշուառ վիճակը ազգիս։

Ա՛խ, ցօղա՛, վայրէ տխրադէմ լուսին,
Գուցէ քու վայրից վայր տաս և հային։

Պատմէ չաւերուն Վարդանի մահը,
Կամ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վէհ սիրով սիրում էր Վարդան,
Մայրենի հողը—աշխարհն Հայաստան։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԲՈՂՈՔ ԱՌ ԵՒՐՈՊԱ

Ձեռքերս կապած, ոտքերս չըղթայ,
Կ'ասէ Եւրոպան «Հէ՞ր չէլաք ոտքի,
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չի կայ,
Տարէ՛ք, կըրեցէ՛ք դուք կեանք ըստրկի»։

Վեց հարիւր տարի մեր երակներէն
Կա՛թ կա՛թ ծորեցաւ մեր վերջին արիւն,
Եւրոպան կ'ասէ. «Շուռ գանք հայերէն,
Հայի մէջ չի կայ ուժ ու քաջութիւն։»

Ամբողջ Հայաստան ասեղ չէր ճնացել,
Հայք «կ'ասեն, ի՞նչու թո՛ւր չի վերուցին»։
Միթէ վառօդի հոգս պէտք էր անել,
Թէ՞ պէտք էր բրդել չոր հաց քաղցածին։

Ե՛րթայ՝ մոռացա՞ր երբ Զրադաչտը
Ձեռքը թուր կուզար չիտակ քու ծոցը։
Բայց հայի ահեղ Աւարայր—պաշտը
Շիջուց մոլեռանդ այն կրօնի բոցը։

Ե՛րթայ՝ մոռացա՞ր այն կուռ հարւածը,
Որ պատրաստել էր իսլամ քու որդոց,
Հայը չուզեց քու արտօսր ու լացը,
Ջաղաքաց հրդեհ, խողխողանք մարդոց։

Երկերիւր տարի՝ արիւն թափելով,
Դէմ տուեց ահեղ, ուժգին այն գրոհին
Մինչև որ ուժէն ընկաւ թշնամին....

Եւրոպ՝ մոռացա՞ր, երբ քու քաջերը
Անապատի մէջ ճնացին քաղցած,
Ի՞նչ պիտ օգնէին նոցա գէնքերը,
Թէ որ հայք նոցա չը տային կուշտ հաց։

Ապե՛րախտ Եւրոպ՝ յիշէ՛ հայերուն,
Դու չատ մի՛ խաբուիլ սուրի շաչիւնէ,
Արիւն վօթելը չէ առաքինութիւն,
Եւ ո՛չ նա ազատ ոգու նշան է։

Մենք խաղաղութիւն փրկչէն սորվեցանք
Նեղիչին ներել—Աւետարանէն.
Մի՞թէ մենք այսօր պատուհասեցանք,
Մի՞թէ խաբեցանք մեր բարեբարէն:

Ինչերո՞ւս պէտք առաքինի վարք,
Է՞ջ չեղանք հայքըս սրիկայ, մարդասպան,
Անչուշտ կը դասէր մեզի աղէի կարգ
Արիւնածարաւ գոված եւրօպան:

ԿԱՄԱՌ—ԿԱԹԻՊԱ

ԳԻՆԵՄՈՂՆԵՐ

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
Միշտ ագատ, ուրախ համուտ ենք գինի:

Տրա լա, լա, լա ևլն:

Ամէն սար ու ձոր, ամէն տափ, մէրի,
Մեր պաշարներն են սոխ բոլոր տարի:

Տրա լա, լա, լա ևլն.

Մեր աթոռանքը մեզ լաւ է պահում,
Մեր ամէն հոգսը նա ինքն է քաշում:

Տրա լա, լա, լա ևլն.

Թէ գործ պատահի, ու լաւ կատարենք,
Միշտ մեր վայը մենք հալալ ստանում ենք:

Տրա լա, լա, լա ևլն.

Ամէն երկրում ջոկ անուն ունենք,
Ամէն տեղ սիրող մենք ճիշդ ճարում ենք:

Տրա լա, լա, լա ևլն.

Ուրեմն խմենք լիք թասով գինի,
Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չունի:

Տրա, լա, լա, լա ևլն.

ԿԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Մեր նախնիքը ազգի համար
Իրենց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ աներկիւղ
Սուրը առած վազեցին:

Անոնց առաջնորդ ազգի սէրն էր,
Անոնց խրախուսը մեր հաւատն էր,
Ասով անոնք քալ անուններ
Իրաւամբ ժառանգեցին:

Նախնեաց փառքին ժառանգաւոր
Ժառանգ է մեզ քաջ վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան։

ՎԱՐԴԱՆԻ ԵՒ ԻՐ ՀՕՐԱՑ ԵՐԳԸ

Ո՛վ հայկազունք, ո՛վ դիւցազունք
Ահա ձեզ նոր հանդիսարան
Բացէք աչքերդ հերիք ննջէք,
Տարիք, դարեր են անցական,

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր կեանքը զոհ բոլորանուէր
Մատաղ անել Հայոց պզտին
Նըբա լեզուին ու կրօնին։

Առէք սուրեր, նետ ու աղեղ
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց,
Ձեր հաւատը և ձեր պզտիը,
Պաշտպանեցէք յօտար պզտից։

Հայ զինուրի կեանքը դառն է,
Երբոր պարապ տանն է նստած.
Ձեզ ասպարէզ անմահ փառաց
Կռուի դաշտն է նշանակած։

Հայ զօրականք, ձեր նեաեըը
Կապարճից մէջ հերիք ճնան,

Ձեր երկիրը պարսից երկրից
Ընդէր լինին այսպէս կոխան։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր սուրբ երկնից հալածական
Առնել անկրօն պարսից պզտը,
Փրկչի խաչն է մեզ օգնական։

Հայոց հովիւք ձեր ոչխարները
Էր սար ու ձոր թափառական
Գազանաց ճանկ ընկած ոպբան։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Աւետարան, խաչն իմեռին
Առաջնորդել հայոց զօրքին,
Իժամ սրբոյ պատերազմին։

ԵՐԳ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ

(Թարգմանութիւն)

Ո՛վ դու, նըժդեհ ծիծառն անմեղ,
Իվարանաց տարեալ բունիկ,
Զի՞ տրամադիր յընդհատ գեղգեղ
Նըւագս հնչես՝ ոզորմ հաւիկ։

Թէ տարանջատ քոյդ վարուժան
Ըզքեզ միայն ատէն ելիք։

Ցանմըխիթար սուգ ինձ նման,
Ողբա, ողբա, ողորմ հաւիկ։

Այլ երանի՛ քեզ բիւր հազար,
Զի թռիչս հարեալ ընդ սար ընդ ձոր.
Ազատ յայերս յածիս կոծիս
կրկնեալ ըզքո զերդ տարփաւոր։

Ցանկա՛ծ և ես... այլ զիս եղուկ
Դառն արտասուքս են իմ բաժին,
Հեծեմ տըխուր ի յարկս անձուկ
Ցիչեալ բզփառս իմ պառաջին։

Ոչ ինձ արփւոյն ծագէ նըշոյլ
Ցաղջամըղձին այս օթևան,
Եւ ոչ հոգւոյիկ հեչաին ի սոյլ
Հասուցանէ զիմս առ քեզ ձայն։

Ցառաջ խաղայ և այս աշուն,
Եւ դու կագմես յերկայն ուղին.
Շէնք և աւանք և ծովք անհուն
Ջաղցր լեռնէդ ողջունեացին։

Իսկ ես այգուն այգուն ի կոծ
Ջաչս իմ բացեալ արտասուալից,
Եղերական զոյն երգոց
Ցայնժամ մըտօքս ի լուր կացից։

Ա՛ինչ տարափով եխխատ մըրրիկ
Թօթափեացի ձիւն փըքալից,
Ես կարծեցից թէ քո ձայնիկ
Ինձ և յայնժամ է ողբակից։

Ո՛վ դու նըժդեհ ծիծառն ազատ,
Ըզքեզ առնեմ ես երդմընի,
Գընա ողջամբ յերկիր ի գատ,
Ողջամբ դարձցիս ի գարնայնի։

Ախ մի գըտցես դու անդառնօր,
Ի նմա հանգիր գայն իրիկուն,
Տուր ինձ գյեաին ձայնիդ համբոյր
Եւ երթ ողջամբ, հաւիկ սիրուն։

ԳՐՕՍՍԻ

ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕԹԸ

Տէ՛ր, ողորմեա՛ հայոց ազգին,
Տուր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ՛ դու անգութ ոճակին,
Տէ՛ր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Շնորհե՛ա մեզ մէկ խաչ զօրավար,
Ժողվել հային մի ագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէ՛ր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Թո՛ղ պապրի մեր գերութիւնը,
Ցառնէ հայի ազգութիւնը,
Վերջանայ մեր հեգութիւնը,
Տէ՛ր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Ծիլեա՛ զմեզ, տէ՛ր, այս անգամը,
Ունայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց լանք անդամը,
Տէ՛ր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Տէ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ, հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը ճնայ Լուրը ընկնիլ,
Տէ՛ր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Ապա՝ թըշնառ եղբայր հայեր,
Ձեռքերնիս առնենք մէկ մէկ սուրեր
Դրօշակ բանանք, փըչենք փողեր,
Տէրըն խըղճայ իվերայ մեր։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Ս Ա Ս Ո Ւ Ն

Իսլամական գոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի։

Քրիստոնէից Տիրապետ Աստուած,
Ձեզ ցնծալ չէ նորութիւն.
Մեր նախնեաց սուրվել ենք
Ձեր մեզ Թողին յիշատակ։

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քիւրդերով,
Տալորիկի անցքն է փակուեր Թիւրքերով։

Զքեզ տեսնեմ, քաջ Մուրատ,
Սուրդ չարժիր անվհատ.
Մեր հեռաւոր եղբայրներ
Ձեն կենար մինչ տ անտարբեր
Շուտով կըգան օգնութեան։

Թնդանօթի դէմ դրեր ենք քաջ սրտով,
Սովի դիմադրելենք կաթով, բանջարով։

Իսէր Աստծու դժուար է
Հպատակիլ իսլամին.
Լաւ է մեռնիլ առանց հաց,
Քան յանձնուիլ վատ Թուրքին
Անգութ և անաստուածին։

Հայ աղջիկներ, առէք վառօդ ու կապար,
Լցէք դատարկ փամփուշտները չարաչար։

Իսկ դուք, կանայք անվհատ,
Առէք սուր և հրացան,
Խրախուսեցէք հայ քաջեր,
Ազատենք մեր Հայրենիք
Ձեր կանացի արիւնով։

ԵՐԳ ՄԱՀԻՍԱՆ

Ահա մօտեցան մահուան ժամերս,
Սէր չեմ իմանար բոլոր ցաւերս.
Կը զաւխիմ քենէ, սիրուն ծաղիկս,
Բայց զաղրսամ չունին իմ խեղճ աչերս:


Ինչպէս 'ի զաւխիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:

Համբերէ քիչ մը, ո՛վ մահ ծոսկալի,
Զե՞ս մի մեղքնար սիրան իմ ցաւալի.
Համբերէ քիչ մը որ սէրս առնեմ,
Եւ այնուհետև հանդիստ քուն քնեմ:

Ինչպէս 'ի զաւխիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:

Երբ կը մտածեմ մէկ երկու ժամէն,
Հողեր ու որդեր գիս պիտի ծածկեն.
Ամէն կողմերս ծակեն ծակծկեն.
Իմ մատղաշ մարմինս մատաղ 'ի անեն:

Ինչպէս 'ի զաւխիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:



ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Հայ դրականութեան ամէնէն համակրելի և ազնիւ դէմքերէն մէկն է Միքայէլ Նալբանդեանց, ինքը թէև միշտ հեռու ապրեցաւ հայաբնակ կեդրոններէն, բայց յեղափոխական և հայրենասիրական զօրեղ գրուածներով այնպիսի հետք մը թողած է հայ սրտերու մէջ, որ ամէն անգամ երբ «Ազատ Աստուած» երգը կը լսենք, չենք կարչար և վաղամեռիկ երգչին, որուն ամբողջ կեանքը կը ռիւ մը եղաւ բռնութեան և ոգիաւորութեան դէմ։

Միքայէլ Ղազար Նալբանդեանց ծնած է Նոր—Նախիջեւան 1830 թուականին։ Իր նախնական կրթութիւնը ըստացած է Տէր-Գարրիէլ պատկանեանէն, որու քով աշակերտեցաւ տղայ հասակին մէջ։ Ապա Փէթրոպուրկ երթալով հոն կայսերական համալսարանին մէջ քաղաքային անտեսութեան հետևեցաւ և փայլուն կերպով իր ընթացքը աւարտեց։ Հմուտ էր եւրոպական քանի մը դիպաւոր լեզուներու, մանաւորապէս ֆրանսերէնի, անգլիերէնի և գերմաներէնի, որոնց համար յետոյ ուսուցիչ նշանակուեցաւ Մոսկուայի Լազարեան վարժարանին մէջ։

1858 թուականին երբ Սանկտ-Պետերբուրգ Նազարեանց սկսաւ «Հիւսիսափայլ»ը հրատարակել, Նալբանդեանց անոր ամէնէն աշխատակիցն եղաւ. «Կոմս Էմմանուէլ», «Փառնապէլեաւոր ռոմս Ցոլակեան» կեղծ անուններով չատ յօդուածներ ու ուսանաւորներ գրեց։

Մեծ չանքեր թափեց անգլիական պանքայէն դուրս հանելու Հնդկաստանի մէջ անժառանգ մեռնող մեծահարուստ հայերու թողած գրաւներուն դէթ մաս մը, և այդ նպատակով էջմիածնի կաթողիկոսի յանձնարարութեամբ ճամբորդութիւններ կատարեց Հնդկաստան և Անգլիա — բայց չյաջողեցաւ։

Եւրոպայի մէջ ճամբորդութիւններ կատարած ժամանակ պատեհութիւն ունեցաւ չխուսելու այն առենան յայտնի և նշանաւոր յեղափոխականներու հետ, որոնց ազ-

դեցուԹեան տակ գրեց «երկրագործուԹիւն» անուն գիրքը՝ «Սիմէոն Մանիկեան» կեղծ անունով։ Այդ գրքին մէջ նա-
բանդեանց կծու լեզուով մը կը ճաղկէ 60ղկան Թուականնե-
րու եւրօպական բոլոր կառավարուԹիւններու բռնապետա-
կան ռէժիմը. հասարակ դասակարգի, մասնաւորապէս երկ-
րագործ դասակարգի զրկանքները և ԹշուառուԹիւնը երե-
ւան բերելով և պաշտպանելով անոնց իրաւունքները։

Նալբանդեանց, որ իր յանդուգն և ազատ գաղափար-
ներով արդէն կասկածելի եղած էր ռուս կառավարուԹեան,
եւրօպայէն դարձին իսկոյն ձերբակալուելով փէԹրօ փավ-
լովսքի բանտը դրուեցաւ, ուր Ժամանակ մըն ալ հոն Ժնալէ ետք,
բանտով աքսորուեցաւ։ Ժամանակ մըն ալ հոն Ժնալէ ետք,
զօրաւոր միջամտուԹիւններու չնորհիւ հազիւ կարողացաւ
ազատիլ ու Նոր—Նախիջևան վերադառնալ։ Զկրցաւ եր-
կար ապրիլ. բանտի և աքսորանքի մէջ կրած չարչարանք-
ներէն ու զրկանքներէն ստացած էր անբուժելի հիւանդու-
Թիւնը՝ Թոքախտը, որ զինքը բոլորովին ուժասպառ ը-
րած էր։ Եւ 1866ին 36 տարեկան հասակին մէջ դադրեցաւ
այլևս ապրելէ այն համակրելի երիտասարդը, որ ուխտած
էր «մինչև անարդ մահու սիւնը» «ԱզատուԹիւն» պօռալ։

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատ Ազատած այն օրից՝
Երբ հաճեցաւ չունչ փըչել.
Իմ հողանիւԹ չինւածքին,
ԱզատուԹիւն պարգևել։

Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,

Եւ իմ անգօր Թևերով,
ԱզատուԹիւնս գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրորոցում կապկապած.
Լալիս էի անդադար,
Մօրս քունը իանգարած։

Խնդրում էի նորանից՝
Բադուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
ԱզատուԹիւնը սիրել։

Թոթով լեզուիս մինչ կապերն՝
Արձակուեցան բացուեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան։

Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
ԱզատուԹիւն դուրս Թռաւ,
Իմ մանկական բերանից։

«ԱզատուԹիւն, ինձ կրկնեց՝
Ճակատագիրը վերեւից.
«ԱզատուԹեան դու գինւոր,
Կամքն ա դրւիլ այս օրից»։

«Ո՛հ, փչուտ է ճանապարհդ՝
Քեզ չսատ փորձանք կ՝սպասէ.
ԱզատուԹիւն սիրողին,
Այս աշխարհը խնստ նեղ է»։

— Ազատութի՛ւն, — դոչեցի —
Թո՛ղ որոտայ իմ դլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դընէ թշնամին։

Ես մինչ իմահ կախաղան՝
Մինչև անարդ մահու սիւն,
Պիտի դոռամ պիտ՝ կրկնեմ,
Անդադար՝ ազատութի՛ւն։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՋՈՒՂԱՑԵՑՈՑ ՍՈՒԳԸ

Ախո՛ւ քեզ, հայոց խեղճուկ ժողովուրդ,
Ցիր ու ցան եղաք անմեղ անխորհուրդ,
Գերի դնաման աք դէպի Խորասան,
Ջաղցած ու ծարաւ, տըկար, թշւառական։

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոաք դուրս չը դըրաք,
Խիմի ձեր հօր մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշի տըւաք։

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Ջաղցրիկ ջրերն, ձեր չէն դեղերն,
Ո՞ւմն աք թաղման, դուք որ գնաման աք,
Էսպէ՞ս կու լինի որ մոռանում աք։

Վախում ամ էնպէս մաքերնուդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մաքերնուդ չընկնի.
Պարի ձեր որդոց, թոռանց պատմեցէ՛ք
Էսպէս խայրենիք քանդած թողուցիք։

Մասիսի անունըն, նոյայ տապանը,
Արարատ դաշտի, սուրբ էջմիածնի,
Մեր խոր վիրապի, սուրբ գեղարդ, Մուղնի,
Ջմոռնաք մինչի օրն դատաստանի։

Աչքս կուրանար, չըլինքս կոտրէր,
Եթէ Հայաստան, քեզ էսպէս չը տեսնէր,
Թէ մեռած էի, ինձ երանի՛ էր,
Քան թէ կենդանի աչքս բաց տեսներ։

Մ. ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՑԵՑԻ

ՄՕՏԱՑԻ ԱՋԳԱՍԷՐԸ

Ես ախ լեզուով չա՛ս բան ըրի,
Որ Հայաստան լաւանայ.
Թէև կուտ մը ես չը տըւի՝
Բայց «մե՛նծ» անուն չահեցայ։

Երթալ կըռւիլ քարոզեցի,
Կուրծք տալ հանդէպ թշնամուն,
Ոգևորւած ես դիմեցի...
Կամացուկ մը դէպի տուն։

Ու երդեցի՝ «Ազգիս համար
Թող գլիս հանեն կախաղան»;
Բայց տակ տեսքէն լեզվատատառ,
Քար կը կարիմ կր մնամ։

Ըսի՝ «Արիւն պէտք է հոսի,
Պէտք է մեռնիլ առնաբար»,
Բայց թէ քիթս որ արիւնի...
Աչխարհ աչքիս չ'երևնար։

Կ'երթամ երկիր ջարդ տալ թիւրքին,
Խոշո՞ր տուր մը ինձ տուէք.
Բայց պէտք է որ թիւրք ու քիւրտին...
Ոտքը ձեռքը պինդ կապէք։

Կոտորածի լուրեր հասան,
Ալ համբերել չկրցայ,
Ըսի հայեր մեր նշանաբան՝
«Դէպ Հայաստան» թող ըլլայ։

Ու վոխանակ նաւու «պիլէթ»
Ես թռչնի գնեցի,
Սխալմունք մ'էր հազա՛ր նալէթ
Քալիֆօռնիա... կըծկեցի։

Ա. ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԱՂԲԻՒՐ ՋԱՆ

Բոլորը աչխարհում
Լսեց քո անուն.
Սռիւծ քաջարի,
Աղբիւր Ջան,
Հայոց աչխարհի։

Հայութեան անուն
Խիստ բարձրացուցիր.
Քնած սրտեր,
Աղբիւր Ջան,
Դու բորբոքեցիր։

Մեզի օրինակ
Թողուցիր գացիր.
Երիտասարդաց,
Աղբիւր Ջան,
Դուռները բաց արիր։

Քաղցր հայրենիքդ
Բնաւ չմոռչիր.
Մինչև վերջին չունչ,
Աղբիւր Ջան,
Պատերազմեցիր։

Սուրը գործ սիրեցիր,
Խումբեր կազմեցիր.
Անգութ թիւրք և քիւրտ,
Աղբիւր Ջան,
Մարտաւիեցուցիր։

Բաղէշ վիլայէթ
Ոտքի կանգնեցրիր.
Խեղճ ժողովրդին,

Աղբիւր Ջան,
Հոգի յոյս աւիր:

Գիշեր և ցորեկ
Ախլաթ լալիս է.
Անդադար կը կոչէ,

Աղբիւր Ջան,
Սերոբ և Սօսէ:

Այժմ ննջում ես
Սև հողի տակին.
Մեզի թողնելով,

Աղբիւր Ջան,
Օգնել հայ ազգին:

Սիրով աղբիւրի
Գործին հետևինք.
Վրէժ կը պոչէ,

Աղբիւր Ջան,
Հայե՛ր, վրէժ առնենք:

ԵՐԳ

Հայը բանտէն չի վախնար,
Հայը մահէն չի վախնար.
Միշտ կ'ուզէ պատերազմիլ
Հայկական հողին համար:

Գացէք ըսէք վատ թիւրքին,
Թող հեռանայ մեր հողէն.
Հայը վարժուած ունի,
Պատերազմը մօտեցաւ:

Հինգհարիւր տարուան մեռեալն
Այսօր ոտքի կանգնեցաւ.
Գացէք ըսէք վատ թիւրքին,
Դատաստանը վերջացաւ:

Հերի՛ք այսչափ տառապանք,
Հերի՛ք այսչափ գերութիւն.
Փչրենք մեր շղթաները,
Շուտով երթանք Հայաստան:

Արարատ երկրին վրայ
Հայու քաջ խումբ պատրաստենք.
Ձէնք՝ սուր ձեռքերնիս առած
Կուինք վասն հայրենեաց:

Արիք, հայկազն քաջեր,
Առէք ձեր հետ ձեր սուրեր.
Շուտով վազեցէք կարին,
Որ յաղթենք վատ թիւրք ցեղին:

Արիւնաճաքաւ հայեր,
Ջընջեցէք կարնոյ գօրքեր.
Հայուն վերջին ժամն է,
Պէտք չէ թիւրքին խնայել:

Ո՛հ, հայն ալ ազատած է,
Ձանգի առիւծ կտրած է.
Պէտք է որ ջնջենք թիւրքեր,
Վերականգնենք մեր հայեր:

ԶԷՅԹՈՒՆՑԻՔ

Զէյթունցի ենք մենք քաջազունք,
Տաճիկներէն վրէժ առնենք.
Մեր մայրերէն սուրբ կաթի տեղ,
Կաթիլ կաթիլ արիւն քամենք:

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
Թող չտեսնէ սարկուքիւն.
Ձանի ունի ձեզպէս որդիք,
Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն:

Ձանի թմրինք, բաւ է, եղբարք,
Շրջենք աչերս աչ ու ահեակ.
Շատ սարուկներ եղան ազատ
Մ'իայն մենք ենք հյու հպատակ:

Արիւնաճաքաւ զէյթունցիներ,
Ձէնքեր ունինք դիմենք յառաջ.

Հերիք մինչ այժմ գլուխ ծռած,
Բռնաւորին գերի ըլլանք:

Ամբողջ հինգ դար գերի ենք մենք,
Մենք մեր ձգթայք պատրաստեր ենք
Ինչու այժմ մենք չստիպենք,
Մեր գերօդին կրելու ան:

Զէյթունցի ենք, մեր սիրտերանք
Է պատերազմ և՛ արշաւանք.
Գնդակ, վառօդ, սուր, հրացան,
Խաղալիքն է մեզ յաւիտեան:

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
Թող չտեսնէ սարկուքիւն.
Ձանի ունի ձեզպէս որդիք,
Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն:

ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելլենք,
Աւօր, գուժան մռռնանք, հրացան առնենք.
Խեղդած մեր բողոքը յայտնենք գէնքերով
Եւ մեր արդար գաղը վօթենք արիւնով:

Մեր կեանք՝ մեր մահ թող լինի ազատ,
Ճնշուած հայի որդիք հարազատ:

Քան թէ ամէն վայրկեան կենդանի մեռնիլ,
Ազատութեան վճռենք աներկիւղ գոհիլ.
Փախուկ մահճում հանգիստ կեանքը վայել է
Ով որ հայրենիքում ապատ ապրում է:

Մեր կեանք՝ մեր մահ ևլն:

ԸսարկուԹեան չըզԹան խուլ չառաչում է.
Ազատութեան ճնշած ձայնը կոչում է.
Ազատ լեռներ Թող լինի ապաստան
Եւ ընդարձակ ձորեր ազատ գերեզման:

Մեր կեանք՝ մեր մահ ևլն.

Առաջ գնանք, անվախ զարնենք Համիտին,
Փրկենք հայ գիւղացին հաններք վախուկէն.
Իմաց տանք սուլԹանին անխիղճ բռնաւոր,
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր:

Մեր՝ կեանք մեր մահ ևլն.

Ցրւած խմբեր, Հաճըն, ԶէյԹուն, Սըւէտիա,
Շտապեն միանալ և կազմել գունդ հայկեան.
Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,
կեանքը մահով կապած կանգնել նրա տակ:

Մեր կեանք՝ մեր մահ Թող լինի ապատ,
Ճնշած հայի որդիք հարազատ:

ՍՂԱՍՈՒ ԵՐԳԸ

Սար ու ձոր ընկած մէկ չոր Թփի տակի,
Գետին նայելով ծնացել եմ նստած.
Ձեռքս ծոցումըս գլուխս մէկ լեռ քարի
Տւած լալիս եմ օրս խաւարած:

Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, ա՛յ իմ քաղցր Մասիս.
Աղի արցունքով երկած խորոված,
Երեսիդ նայիմ, ծնամ քարացած:

Ծնող ազգականք հեռու լինձանից,
Լուսնին նայելով ձեր սէր յիշելով.
Եա՛րաբ, ե՞րբ կ՚ըլի որ ես ձեզանից,
Իմ կարօտս առնեմ, ձեզ Ջան ասելով:

Եա՛րաբ, ձեր ճառվիլ մէկ օր էլ կ՚րնկնիմ,
Եա՛րաբ, ձեր երես մէկ օր էլ տեսնիմ.
Եա՛րաբ, ձեր երես մէկ օր էլ տեսնիմ,
Եա՛րաբ, ծունկ ծունկի տւած ձեզ կ՚ասիմ,
«Ա՛յ իմ խեղճ ծնողք, ձեր Ջանին մեռնիմ:»

Աչքս ծով դարձաւ ճամբին նայելով,
Մէկ ղուշ որ դէմիս պատուտ ա գալիս.
Թէ ե՞րբ մէկ խաբար կը հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով, ասում եմ, լալիս:

Եա՛րաբ, գետնի վրայ դեռ սուգ էք անում,
Ձեր կորած որդուն կարօտ մնալով.
Թէ հողի տակ մտած տինջանում,
Ինձ Թողէք տանջվիմ, ա՛խ, ո՛խ քաշելով:

Եա՛րաբ, ձեր ամակն ինձ հալալ արի՛ք,
Ե՛արաբ, սուրբ բերնով ձեր՝ ինձ օրհնեցի՛ք·
Ծերուն՛ի՛ իմ հայր, տարաբա՛խտ իմ մայր,
Էլ իմ հաւարիս ե՞րբ կը հասնի աչխարհ։

Էն սուրբ անարատ կաթին ես ղուրբան,
Ձեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզուին·
Մէկ բուռն հողի էլ ե՞րբ կ՛ըլիմ արժան,
Որ գամ ձեր հողումն քնիմ ձեր մէջին։

Էն ինչ օր էր, որ ձեր քաղցր ծոցին,
Գլուխս ձեր դօշին, աչքս խուբ կամ բաց·
Ձեր սուրբ ձեռի վրայ, երեսս բարձին՝
Կամ խաղում էի կամ մնում քնած։

Էն ի՞նչ օր էր, որ մէկ ծառի տակի,
Ձօճում ձեռներս ձեր ճառին քցած·
Ձեր սուրբ երեսին ես համբոյր տայի,
Նանիկ ասելով թողէիք քնած։

Ո՞ւր են չուաքը, էն կանաչ ջրի ափը,
Էն խոտն ու ծաղիկն, էն դաշտն ու տափը·
Որ ձեր առաջին անմեղ խաղայի,
Ու ձեր բարի սիրտն խաղով բանայի։

Լալիս՝ դուք լայիք· ինձ հետ ցաւելով,
Ծիծաղս տեսնելով, կամ ձէնս լսելով·
Կանչէիք· «Արի՛, մօտս՝ Աղասի ջան,
Երեսիդ մեռնեմ, քո ջանի՛ն ղուրբան։»

Ա՛խ էս խօսքեր ինձ կրակ են դառել,
Լերդս ու թոքս հիմիկ էրում, խորովում·
Ի՞նչ կ՛ըլէր, էս էն վախտն էի մեռել,
Ձեր չուաքի տակին, ա՛խ, քնել հոգումը։

Մէկ բուռն հողի էլ կարօտ եմ մնացել,
Ֆարափից թէ՛ ցած, կամ ջուրը ընկնեմ·
Ձեր սուրբ երես դեռ որ չեմ տեսել,
Ի՞նչպէս ես հանդարտ էս հողը մտնեմ։

Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, աննման Նազլու,
Սիրտս խորովի, անունդ յիշելով·
Նազլո՛ւ իմ, Նազլո՛ւ, հրաչալի Նազլո՛ւ,
Աղասին քեզ տայ իր վերջին բարով։

Սարերի դօշին, ձորերի մէջին,
Վա՛յ գլխին տալով քո խեղճ Աղասին·
Երեսիդ զրկած· քո սիրովն մաշած,
Տատրակի նման փշի վրայ նստած։

Լիզեմ հող, գետին, այրիմ ոզկտամ,
Կամիմ օր առաջ, ա՛խ, որ հոգիս տամ·
Երբ մահն մօտանայ սառը թևերովն,
Հոգիս պահանջէ որ տանի հուտով։

Էս դառն աչխարհիցն մի ինձ ազատի,
Ոսկերքս գազանաց կերակուր անի·
Կամ երբ գետի ափն նստած չուարած՝
Աչքերս նւազին թմրած, սասանած։

Գլորիմ կատաղի գետի փրփրի մօտն,
Հոգոց քաչելով, պարզեմ ես իմ ոտն·
Կամիմ գերեզմանս, որ էս ջուրն ըլի,
Էս սառը պատանն ինձ հողը տանի···։

Կամ մէկ քարափի բաչից նայելով,
Աչքս մեր տան ծուխն յանկարծ տեսնելով,
Քո անուշ երեսն ինձ փակ մնալով,
Նազլո՛ւ, իմ Նազլո՛ւ, անուշ իմ Նազլու։

Թեքիմ ու հանդարտ գայ ինձ քուն մահու,
Երևի աչքիս, թէ անդունդ խոր,
Մօտ է ինձ գրկել առնել իր լէն ձոր....

Նազլո՛ւ, իմ Նազլու, մէկ չունէս ա մնացել,
Ոսկերքս քրքրուել, աչքս խաւարել.
Թող մէկ չունէս առնեմ, յետոյ հող մտնեմ,
Դժոխքն էլ առնին, ես հանգիստ կ՚ըլիմ։

Քեզ եմ մնում, քե՛զ, քո չանչին մեռնիմ,
Հող ու գերեզման ես վրէս ունիմ.
Քանց իմ սառն մարմին էլ ի՞նչ գերեզման,
Ինձ պէտք չկայ, երեսիդ ղուրբան։

Սրի՛, ասածդ արա՛, ինձ թաղի՛ր,
Բե՛ր իմ երեխէքս ու վրաս կանգնի՛ր...
Մէկ նրանց տեսնեմ աչքս խփելիս,
Մէկ նրանց ասեմ, լեզուս լսելիս.
Մնա՛ք բարով, որդի՛ք, ապիլ սիրական։

Էլ չէք տեսնել ինձ, ա՛խ, դուք յաւիտեան,
Ձեր ամբախա հօրը հոգին յիշեցէք.
Մնաք բարով, իմ քաղցր սիրուն երեխէք,
Ձեր հօր տեղակ, ձեր խեղճ մօրն յիշեցէք,
Ու իմ ողորմին, ժամն կատարեցէք։

Խ. ԱԲՈՎԵԱՆ

ՍԻՐԱՀԱՐՆԵՐ ԼՈՒՄՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

Լուսնակ գիշեր
Բոլորովին քուն չունիմ.
Ինձ տեսնողը
կարծում է թէ տուն չունիմ,

Ննջարանս
Սենեկիդ պատի տակն է.
կեանք խնդութիւն
Պարզ գիշերայ լուսնակն է։

Մի՛ լար, մի՛ լար,
Մեռնիմ կամար ուենքերուդ.
Արտասուքը
Վնաս կըտայ աչքերուդ։

Սրի՛ դնանք
Խորհուրդ աներնք մխասին.
Ամուսնանանք
Ալ չսպասենք մեծ պասին։

Գ Ա Ր Ե Գ Ի Ն

Ես քեզ տեսի բանտում խաչած
Աղաչեցի առ Տէր Աստուած,
Որ տեսանեմ քեզ ազատած.
Անկեղծ կարիճ մ'ես միշտ սիրած

Պօյըդ բարձր սէլվի չինար,
Աչերդ կապոյտ սիրտդ պրինգար.
Դու ծնուած ես ազդիդ համար,
Անկեղծ կարիճ մ'ես միշտ սիրած:

Սիրտդ նման է հրեշտակի,
Ջէնքերդ քեզի կը յարմարի.
Նպատակիդ հասնիս պիտի՝
Դու այդ մասին լեր անկասկած:

Թիւրք տանջում է քեզ բանտի մէջ,
Նեա է ձըգտում մեր սրտի մէջ.
Փոյթ չէ՛ բնաւ, մօտ է իր վերջ,
Նա կործանւում է անկասկած:

Գիշերները սխտոր նստած,
Մենք քեզ յիշում ենք խիստ տրտմած.
Աղօթում ենք որ քեզ տեսնենք,
Հրացան ուսիդ նժոյդ նստած:

Դէմքդ տեսնող քեզ սիրում է,
Քեզի սիրող փրկըւում է.

Քեզ հետևող երկնքում է.
Անկեղծ կարիճ ես միշտ սիրած:

Ուրախ սրտով քեզ տանջում է,
Այդ անիրաւ լկոի ազգը.
Մեր սիրտ՝ չիգեար արիւնում է.
Հայի վրէժն է խիստ ուռած:

Ահա բացւել է արշալոյս,
Գիչէն ծագում է չերմ արև.
Իրագործւում է քո սուրբ յոյս՝
Հայ ազգ լինում է ազատած:

Խիստ սխուր են մեր օրերը,
կենդամարախ մէջ է հայ ազգ.
Ծախենք մեր թանգ չորեր եղբարք,
Տանք գէնք գնենք, լինենք գինւոր:

ԱՐԲԵՑՈՂԻ ԿՏԱԿԸ

Եղբարք, ուժից ընկած պատագրով, էլ աւելի չեմ կարող խմել,
կարելի է ոչ մրեռնեմ չուտով, կ'ուզեմ կատակ ձեզ յայտնել.
Այն գինետան ինձ թաղեցէք, ուր շատ անգամ ես հարբել եմ,
Գերեզմանս այնպէս փորեցէք, որ տակառի տակը պառկեմ:

Ոտներս պատի կողմ ուղղած, բերանս լինի չուչի տակ,
Երկու ձեռքով ունենամ բռնած, ահագին՝ գինով լի բաժակ.
Թաղման հանդէս մի կատարէք, պատարագի ղանգակնե-
րով,
Դիակիս վրայ գինի թափեցէք, բաժակները չխշխկացնելով:

Գերեզմանիս վրայ քար չը դնէք, տակառն արձան է լինճ
համար,
Վրան միայն չորս բառ գրեցէք, «արբեցողի է սա տապան».
Գերեզմանիս այցելութեան գալով, չուտ չուտ, ինչպէս լաւ
ընկերներ,
Իմ խեղճ հոգուս ողորմիս տալով, կոնծեցէք լիք լիք բա-
ժակներ:

Բայց եթէ կտակս դուք մոռանաք խոռով կենայ ձեզ մեծ
բագոս,
Ծարաւնաք կաթիլ մի գինուն, կուլ տայ ձեզ դժոխքի
վտոս.
Բայց դեռ քանի հոգիս բերանումս է, տէք եղբարք, լինճ
մի չիչ գինի,
Ամօթ է որ մահու հրեշտակը գայ լինճ արբած չը գտնի:

(Թարգմ.)

Գ. ԲԱՐԹՈՒՂԱՐԵԱՆ

ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նագելի, բա՛ց այդ պայծառ աչերը,
Թերթերուընքէդ քունը թօթուէ, գիրկը հանգչէիր քու մօրը.
Հաւ քեզ որքան բարի հրեշտակք հէքեաթ ասին երազում,
Ա՛յժմ արի քեզ այն պատմեմ, ինչ պիտ՝ տեսնես աշխար-
հում:

Զարթի՛ր որդե՛ակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նաչխուն,
Ուր որ մայրդ իր բախտ, փառքը
Կեանքն ու արևն է տեսնում:

Դու կը մեծնաս, բոյ կը քաշես—չինար բօյիդ ես ղուրպան,
Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ վար-
դան.
Իմ մատներով մի ոսկեթել, մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիկըդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրել:

Զարթի՛ր որդեա՛կ, քանի՞ քնես ևլն.

Մեր բակումը ձի է կայնած, քեզ է սպում անհամբեր,
Զարթի՛ր, որդեա՛կ, քանի՞ քնես առ քու թուրը մահաբեր.
Քու հայ աշդը հեծեծում է, ձեռքը ոտքը չղթայած,
Քու եղբարքը գերութեան մէջ...քաջ, մեր այն դո՞ւ ես քնած:

Զարթի՛ր, որդեա՛կ, քանի՞ քնես ևլն.

Զէ՛, իմ որդին չուտ կը զարթի, ձին կը հեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կը սրբէ, կը դաշրեցունէ լաց ու կոծ.
Հայ եղբայրներ քիչ էլ կացէք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կապեց և իր ձիոյգ ձին նստաւ:

ՔԱՄԱՐ—ՔԱԹԻՊԱ

ԿԱՐՕՏ ՀԱՑ ՊԱՆԴԽՏԻ

Ընկալ դու զիս, Հայաստան,
Զիս քու որդիդ տարաբախտ.
Հերի՛ք եղաւ որ հրկիզիմ
Օտար երկրում եմ թշուառ:

Շատ տարիներ ծնունդդ, զաւակ,
Եկան անցան ու գնացին.
Պանդխտին չի՛ք ուրախ օրեր,
Ոչ տօնական հանդէսներ:

Հացն իմ օտար, ջուրն իմ օտար,
Արևն օտար, օդն օտար.
Զիս հայրենիք ծնաւ անոյց,
Օտար հողում չե՛մ ապրում:

Հայաստա՛ն, իմ Հայաստա՛ն,
Հէգ գաւկիդ տայր արձագանգ.
Շունչն իմ հատաւ, դու ցե՞րբ լսես.
Ես քո ձայնին եմ սիրահար:

Զայն տուր ինձ և լուր իմ այս
Սրտիս խորին հառաչանք.
Տա՛ր, հո՛ն յինէն դու իմ սուգ,
Սրբէ աչացս դառն արցունք:

Ա՛հ, ե՞րբ իցէ զքեզ տեսից,
Զքե՛զ սիրեցիս խանդակաթ.
Ես հայրենիք հասայ, վա՛շ,
Ասեմ՝ մեռնիմ ես քո գիրկ:

Թաղէ՛ դու զիս այն սուրբ հողդ,
Ուր իմ նախնիք ննջեցին.
Շատ է քո հողդ ինձ տապան,
Քան օտարին մարմարիոն:

Թո՛ղ գայ գարուն և բուսնի
Շիրմիս վրայ մանուշակ.
Ես չե՛մ ուզեր օտար հողդ
Որ ընձիւղէ փուշ տատասկ:

Հանգչին ոսկերքս այն բլրոյն տակ,
Ուր գահ և թագ գլորեցան.
Թէ վեր բերես, Տէ՛ր իմ Յիսուս,
Հան զիս յայնժամ ի նոր լոյս:

ԵՐԳ ՄՈՆԹՈՆԻ

Ընկե՛րք, յաղթութեան ժամն է արդ հասեր,
Մեզ կ՝սպասեն փառք, առնունք քայլեր.
Աբեան ծարաւի մեր հատու սուսեր
կենաց թշնամուն թող կտրին թելեր:

Ո՛հ, մեր ախոյեան թողինք ի տագնապ,
Զըլլանք ահարեկ, մենք, ի գէն ըլտապ.
Փութանք արշաւել, այր՝ մի՛ վեհերոտ,
Մի՛, օն անդր իբաց սիրտք վատ և երկչոտ:

Իզէ՛ն, իզէ՛ն, օն անդր իբաց
Սիրտք վատ և երկչոտ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալևոր հերքը սևնային,
Ուժս ինձ յետ դար կարիճ դառնայի.
Նժոյգ ձի նստած, պղխերս ոտքած,
Ձեռքս թուր առած, ես դաշտ կ'երթայի:

Ես դաշտ կ'երթայի, դաշտն Աւարայրին,
Ողողած, ցողած հայոց արիւնով.
Սպէք իմ սիրական, դու աղջ Թորգոմեան,
Քու կորցրած թաղը քեզ յետ կըտայի:

Կ'ասէի հայոց օրիորդներին,
Ծախեցէք հագի ձեր թանգ չորերը.
Թողէ՛ք պատմուճանք, գարդ մարգարիտներ.
Ժանդոտած ու բութ են մեր թրերը:

Տէք բեհեղեայ մեզ ձեր չապիկը,
Որ մենք վաթաթենք մեր մարմնոյ վէրքը.
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից,
Եպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Մնաուկներս լի ոսկով, արծաթով.
Շատերի նման ես չէի լինիլ,
Երբեք աղջասէր, ունայն խօսքերով:

Շամփանիա գինու, փառք ու պատուի տեղ,
Կ'առնէի առատ գնդակ ու վառօդ.
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ՝
Հայատեաց աղջաց՝ անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման.
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Ջեղճուկ հայ ազգիս լինել օգնական:

Եւրօպ, Ասիա արեան գետակներ,
Կը վազցընէի հեղեղի նման.
Մինչև որ թագ, գահ ու ազատ կրօն՝
Ինձնից չըստանար թշուառ Հայաստան:

Թայց եթե մի օր, մի ժամ, մի րոպէ,
Ստուած լինէի մեր հողագնդին.
Ի՛նչ սուր սլաքներ պիտի չաղ տայի,
Մեր արիւնարբու թշնամեաց գնդին:

Նենգ թիւրք, քիւրդ մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարաւոր ոսոխ դու յոյն կրօնամոլ,
Գիտացէ՛ք որ իմ երկայրի սըրից,
Անվնաս չէ՛ր պրծնիլ ոչ մի ձեր որդին:

ԿԱՄԱՌ—ԿԱԹԻՊԱ

Ա.Ռ ՀԱՅՐԻԿՆ ԽՐԻՄԵԱՆ

Թող բարձրացընեն ճռինչ աղաղակ,
Թուխակ, կաչաղակ.
Միակ վայելուչ, միակ սրտառուչ,
Երգիչն է սոխակ:

Թող վայեն բուեր, ագռաւներ անթիւ,
Հազար հաւ ու ճիւ,

Ամէնից մեծը, ամէնից բարձրը,
Է աղատն արծիւ։

Թող տան ում կ'ուզեն մանեակ մատանիք,
Նշաններ, դափնիք։
Միակ արժանին, միակ սիրելին,
Կը մնայ Հայրիկ։

Հայրի՛կ, օ՛հ, Հայրի՛կ, քո քաղցր անուան,
Լինիմ ես ղուրբան։
Սիրեմ այն հողը որ ծնաւ քեզ նման,
Հրեշտակ պահապան։

Ո՛վ տէ՛ր, պահպանիր դու մեր Հայրիկին,
Քո հաւատարմին։
Անպակաս արա մեր գլխըներից,
Նրա հովանին։

Գ. ԱՂԱՅԵԱՆ

ՀԱՍՏԱՏ ՑՈՑՍԸ

Թող փչէ քամին պաղ պաղ հրեսխ,
Վերէն ամպերէն ասոսիկ ձիւն թող գայ։
Որքան որ կ'ուզէ թող փչէ հիւսիս՝
Ցուսով եմ վաղ ուշ գարունը պիտ' գայ։

Թուղպը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ թող տիրէ երկիր։

Տարերք աշխարհի խառնուին իրար,
Ցուսով եմ վաղ ուշ արև պիտ' ծագէ։

Թող գայ հալածանք, թող գայ փորձութիւն
Նաւար թող դառնայ անաղօտ լոյսը։
Սարսափելի չէ հային տառապանք,
Միայն չը հատնէր խեղճուկի յոյսը։

(Թող փչէ հիւսիս, թող չերգէ սոխակ,
Թող միշտ այդ քամին քանդէ մեր տնակ։
Որքան որ կ'ուզէ թող մեզ տառջնէ,
Գիտեմ որ տաղր վերջը խիստ մօտ է։)

(Թխերք թող փակէ մեզ խոնաւ բանտերում,
Ծանր շղթաներով թող մեզ կաշկանդէ։
Մահ թող առնէ մեզ իր ճիրաններում,
Մեր յոյսն է հաստատ և խիղճը արդար։)

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՀԱՅԱՍՏԱՆ

Իքեզ անկայ Հայաստա՛ն,
Իքեզ մնամ Հայաստա՛ն։
Ապրիմ, մեռնիմ քեզ համար,
Անձս ու հոգիս տամ յօժար։

Աչքս բացի չըբացի, քեզի Հայաստան ես տեսի,
Դեռ իմ երես ծաղր չեկած, ես ողբացի քու վերայ։

Լաց ու ցաւեր, վիշտ սաստիկ, իս պատեցին չորս դիէն,
Եւ Հայաստան դողեցի՝ աւերակաց առի ձէն։

Մայրս ծնաւ իս իցաւ,
Աչս յաւերակսդ լացաւ։
Բերկրանք և մի ոչ տեսի,
Երբ Հայաստան քեզի տեսի։

Ա՛խ, Հայաստա՛ն, Հայաստա՛ն, անուանդ մեռնիմ Հայաստան,
Երբեմն բերկրանք, ցնծութիւն, այժմիկ անկեալ ես ղընեան։
Սրտի սիրով կարօտիմ, մատաղ լինիմ քու հոգուդ,
Որ իս ծնար անուցիր և հանիր քաղցրիկ ծոցուդ։

Այլ ես քեզի միշտ լացի,
Եւ յաւիտեան պիտի լամ։
Հոգիս հոգուդ փոխարէն
Տամ, նաղելի Հայաստան։

Իմ հայրենի Հայաստան, ինձ ոչ երբեք դու զարթ,
Երեւեցար միշտ անփառք՝ գեանդին իջած հաւատր հարթ։
Ի՞նչ աչք տեսաւ չարաուեց, քու հինաւուրց աւերակ,
Ի՛նչ սիրտ չըսըգաց քո չէն անչէն ապարանք։

Աչքս թարթեմ, արցունք թափեմ,
Աղի ջրով հողդ թացեմ,
Մինչև մեռնիմ տապան մանամ
Ոսկերատեօքս ողբամ ու լամ։

Իքեզ անկայ ես յարգանդէ մօր իմոյ,
Սէր քո սաստիկ իս տագնապէս, ի ցաւ քո
Ծաւր երկիր եմ տեսած, իյաւերակս քո ծնայ,
Նեբրական արիւնոտ հողուդ վրայ զարգացայ։

Տուն Աստուծոյ Հայաստան,
Ա՛խ, քո անուն հոգիս եհան։
Հայոց պարծանք, քաջաց մայր,
Ա՛յժմիկ ունայն և զրկեալ։

Երդնում ի Հայկ, ի Մասիս, թէ դու փութով նորոգիս,
Շարժէ ուրեմն և չարժիր, արի վեր կաց զօրացիր։
Սիրեմ քեզի, հայ անուն, աղանց քաջաց պանծալի,
Դու Աստուծոյ սիրելի, ազգի մարդկան ցանկալի։

Եհաս ահա դար խաղաղ,
Աւերակներդ կանգնեն վաղ։
Որդիքդ լինին լուսաւոր,
Եւ քեզի ընեն փառաւոր։

ԱՐՄԱՎԱՆՑԻՆԵՐՈՒ ԳՈՎԱՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԸ

— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի երես դովեցէ՛ք,
Ա՛յ երես, չարմաղ երես,
Դու մեզ չթողնես սևերես։

«Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լուայ։
Ա՛յ երես, արև երես,
Քո չափաղով մեր սիրտ կ՛երես։

— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէ՛ք.
Ո՛հ աչեր, սիրուն աչեր,
Արեւի պէս փայլուն աչեր։

«Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ.
Ո՛հ աչեր, վառ վառ աչեր,
Մանուշակի թաո թաո աչեր։

— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի կռներ գովեցէ՛ք.
Ո՛հ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կը չարժէք մեծ մեծ լեռներ։

«Արմիկի կռներն է գերան,
Կը պատռէ վագրի բերան.
Ո՛հ կռներ, գեղոտ կռներ,
Դուք կը բանաք մեր փակ դռներ։

— Աղջկերք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի հասակ գովեցէ՛ք.
Ո՛հ հասակ, բարձր հասակ,
Ո՞վ չէ տար քեզ թագ ու պսակ։

«Արմիկի հասակն է ոսկի,
Շուքը մեզմանից չէ պակասի.
Ո՛հ հասակ, չինար հասակ,
Ո՞վ չիտար քեզ թագ ու պսակ։

Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան.
Վագրի բերան — ահա՛ այսքան —
Ժանիքներըը մէկ մէկ գերան.
Ալըի Արմիկ, ապրի՛ չատ օր....
Իր թշնամին ընկնի գլոր...

Մ Ա Յ Ր Ի Կ Ս

Ո՞վ կերակրեց իս՝ տալով ծիծ անուշ,
Ո՞վ առաւ իր գիրկն, որ ննջեմ մուշմուշ,
Իմ վարդ երեսին ծաղիկները թաւիեց.

Մայրիկս։

Երբ իմ աչքերէս փախաւ քունն գնաց,
Ո՛վ ինձ անուշիկ օրօրներ ասաց,
Եւ թեւերուն մէջ օրրեց, որ չլամ.

Մայրիկս։

Ո՞վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն,
Երբ մէջ որբանիս ննջէի սիրուն,
Եւ սիրոյ քաղցրիկ արցունքներ թափեց.

Մայրիկս։

Երբ կծու ցաւով կուլայի ես ժիշտ,
Ո՞վ իմ աչք սրբեց, թեթեւցուց իմ վիշտ,
Ա՛հ ու դող ըզգաց, որ ես չմեռնիմ.

Մայրիկս։

Ո՞վ վազեց օգնել, երբ ես ինկայ վար,
Եւ պատմեց ինձ վէպ, որ լինի ինձ ճար,
Պագաւ ցաւած տեղն, որ տանի դարման.

Մայրիկս։

Ո՞վ աղօթք ուսուց իմ բերնիս քնքուշ,
Որ պաշտեմ Աստուած, լինիմ միշտ զգուշ,
Եւ խելքով, չնորհքով իմ կեանք անցընեմ.

Մայրիկս։

Եւ կրնա՞մ երբեք մոռնալ քեզ, հոգիս,
Դու որ սիրեցիր և հոգացիր իս,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դրիր.

Մայրիկս։

Ո՛հ, այդպիսի բան մտքէս չի անցնիր,
Եւ դու, ո՛ Աստուած, իմ արև պահի՛ր,
Ցուսամ վարձատրել քո անբաւ հոգեր,

Մայրիկս։

Իսկ երբ դառնաս դու տակաւ, պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ,
Եւ պիտի սփոփեմ բոլոր քո ցաւեր,

Մայրիկս։

Եւ երբ որ տեսնեմ՝ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հսկեմ մօտ քու անարի,
Եւ սրտիս խորէն պիտ՝ արցունք թափեմ,

Մայրիկս։

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՆԴՈՒՏԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու հայրենիք, քեզ յիշելով կ՝արտասուեմ.
Ձրկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Չի՛ք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին.
Բնակարանս՝ ախուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց։

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր ղաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ քովս Ցխտուս, փրկէ իս,
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ իս։

ՎԱՆԻ ՄԷՋ

Ցամաք յարդէն վերայ պառկած,
Թշուառ Մրտօն կը քնէ,
Երկու օր է՝ չէ՛ կերեր հաց,
Ի՞նչ ճար անէ, ուստի՞ գտնէ։

Վե՛ր կաց, Մրտօ, էլ մի՛ քնէ,
Փիւրդն էլ կը գայ, քեզ կը թալնէ։

Քո աղքատիկ, մերկ յարկին տակ
Թէպէտ սուղ է մխայն քո բաժին,
Սակայն ունես դեռ մի հրեշտակ, —
Քո Լաճ սիրուն, քո ամուսին:

Վե՛ր կաց, Մրաւ, էլ մի՛ քնիր,
Քիւրդը կը գայ, նրան կը տանի:

Արդէն մեռան սոված, քաղցած
Երկու քնքոյշ քո զաւակներ,
Նրանց դիակունք, դեռ չեն թաղուած,
Խեղճ մայրերնին մօտն է պահեր:

Վե՛ր կաց, Մրաւ, էլ մի՛ քնիր,
Քիւրդը կը գայ, մեզ կ՚անպատուէ:

Այն րոպէին, քիչ հեռուից,
Ձիաների ոտնաձայնը
Վեր թռուց խեղճ մայրն իր տեղից,
Որ զարթեցնէ քնած մարդը:

Վե՛ր կաց, Մրաւ, էլ մի՛ քնիր,
Քիւրդը եկաւ, որ քեզ թալնի:

Վե՛ր կաց, արև, հոգիս, իմ ջան,
Պաշտպանի՛ր լինիմ, տե՛ս մօտեցան,
Թշնամին գալու մեր տան ճամբան,
Վե՛ր կաց գոնէ քո հըրացան:

Զարթի՛ր, Մրաւ, էլ մի՛ քնիր,
Ահա՛ քիւրդը մեզ մահ բերի:

Լսի՛ր, գիւղի շներն հաչեն,
Ծարխուլ դոներն կը կոտրտանեն,

Լսի՛ր, ինչպէս մահ կը գոչեն.
Սև օրն հասաւ, լոյս է արդէն:

Վե՛ր կաց, Մրաւ, զարթի՛ր, ժամ է,
Էլ ինձ այսուհետ դու չես գտնէ:

Նա պինդ բռնեց մարդու ձեռքից,
Ուժով թոթուեց, որ վեր կենայ,
Սակայն սառած՝ ցնցուեց ահից, —
Արդէն սովից մեռած էր նա:

Վե՛ր կաց, Մրաւ, էլ մի՛ քնիր,
Քիւրդն ահա՛ մեզ թալանի:

Քիւրդն էլ հասաւ, ու ներս մտաւ,
Երեք անչունչ դիականց հետ
Կխտամեռ գոզար մի կին գտաւ,
Շալակն առած, եղաւ անհետ:

Թէ խեղճ Մրաւն խոր քնոյ մէջ է,
Արդեօք կինն ո՞վ կը պաշտպանէ:

Պ. Չ. ԱԴԱՄԵԱՆ

ՀՈՎԻՒ ԱՆԿՈՂԻՆԸ

«Սարի լանջն է մահճակալ,
— Ուխա՛յ, ուխա՛յ, ի՛նչ փափուկ է.
«Ջեչոտ քարը՝ գլխակալ,
— Ուխա՛յ, ուխա՛յ, ի՛նչ կակուղ է.

«Մի հին կապերտ ուսերին,
— Ուխա՛յ, ուխա՛յ, ի՛նչ նախշուն է
«Այս է հովուի անկողին.
— Ուխա՛յ, ուխա՛յ, ի՛նչ սիրուն է:

***

«Երբ անձրև է կաթկաթում,
— կաթկաթում.
«Եւ կարպետը թըխկթըխկում,
— թըխկթըխկում.
«Հովիւն անուշ քնի մէջ,
— կապերտո՛ւմ.
«Ջաղցր երազ է տեսնում:
— Եւ խնդում, ծիծաղում,
Ուխա՛յ, ուխա՛յ, սիրուն հովիւ,
Քունդ անո՛ւշ:

ՍՐԻՆԳ. ՀՈՎՈՒԱԿԱՆ

Ա Ն Ն Ը Մ Ա Ն

Կապուտ երկնքում
Աստղեր են փայլում.

Այլ և լուսնակը:

Ամէնից սիրուն
Ամէնից փայլուն

Է արեգակը:

Կանաչ դաշտերում
Եւ այգիներում

Ծաղիկներ կան շատ:

Բայց և ոչ մինը
Վարդի նման է,

Նա է բնութեան զարդ:

Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,

Ամէն տեղ շատ կան:

Բայց իմ ընտրածը
Սրտիս սիրածը,

Հրեշտակի է նման,

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ՇԱՒԱՐՇԱՆԻ ՇՈՒՇԱՆԸ

Կուսանք հայոց, նոր հուշան
Տեսէք ի դաշտ Շաւարշան.
Պայծառ պատկեր կուսանաց,
Հայոց պսակ պարծանաց:
Ճակատն ի քօղ խորհրդիկ,
Իհաղ տւած խոպոպիկ.

Տատրակ տոտամբ մանրաքայլ,
Ման գայ իդաչա ցօղափայլ։
Մեղր կաթէ չրթներուն,
Փայլ կըտան աչքն սիրուն.
Կուսանք հայոց, նոր չուչան
Տեսէք ի դաչա Շաւարչան։

Հիւսիսայլն մեր ասպղիկ,
Հայաստանեայց գեղեցիկ.
Արևնըման հայելի՝
Արքայ դստրիկ նազելի,
Սիրասընուն Սանդուխտ,
Որում արև ելքն ու մուտ.
Փափաքելն սրտմաշուկ,
Հարան է ելեր չնորհաշուք։

Կուսանք հայոց, նոր չուչան
Տեսէք ի դաչա Շաւարչան։

Քանց գարուսեակ պսպղուն,
Իմէջ մանարիկ ամպերուն.
Քանց վարդալոյս արևակ,
Ի խնճորի աերևակ։
Քանց երասխայ նուռնուփար.
Գլխիկն ծոց չար ու չար.
Քանց ամէնն ալ գեղեցիկ,
Նազի Սանդուխտն բամբչիկ։

Կուսանք հայոց, նոր չուչան
Տեսէք ի դաչա Շաւարչան։

Բարձրահասակ ճակատներ,
Հողու հաւասար են եկեր.
Ոսկի գոհար հատ ցանած,
Զորն են լերին հասուցած,

Եւ մարգրտէ բարկ աւազ,
Ուր որ պնդնի հեզանազ,
Հայոց օրիորդն Սանդուխտ՝
Տատանց հեաքին գան ի յետ։

Կուսանք հայոց, նոր չուչան
Տեսէ՛ք ի դաչա Շաւարչան։

Բայց Սանդխտոյ այժանի,
Զրկայ մի տեղ արքունի.
Ցայն որ աչացըն կամար,
Ցած կայ երկիրս ու խոնարհ.
Երկինքն ասէ՝ «իմ գահի՝
Սանդուխտ պիտէր թագուհի».
Ծովն՝ «իմ ծփանցս ծիրան՝
Սանդուխտ պիտէր տայր հրաման։

Կուսանք հայոց, նոր չուչան
Տեսէ՛ք ի դաչա Շաւարչան։

Սանդուխտ ելաւ գարպասէն,
Ասպետ հայոց տունն ամէն.
Սանտարուկ հայրն ալ որ լսեց՝
Ոսկի թախտէն վար վազեց.
«Սանդուխտ իմ սիրուն դստրիկ,
«Ուրանա՞ս դու քո հայրիկ.
«Ուրանա՞ս դու զԱնահիտ,
«Պաշտես զԱստուածն հրէից։
«Աչացս լոյս ոսկեթել,
«Դեռ աչքս արցունք չէր կաթել.
«Քեզ համար, դուստր աննըման,
«Գեաներ աչերս խվար գան....
«Սանդուխտ, ուզէ՛, ի՛նչ կ՛ուզես,
«Սրամտպէս քեզ տամ ես.
«Թէ Հայաստանն է պզտիկ՝

«Զէնքս ու զօրքերս են հերիք.
«Լսէ՛ ինձ, դուստր իմաստուն,
«Լոյս իմ աչացս արեւուն,
«Օտար հաւատք մի՛ պաշտեր,
«Քու հօր գլխուն ահ մ՚ուզեր...
«Սանդուխտ, դասրիկ իմ սիրուն
«Ողորմէ հօրդ աչերուն»:

Կոյսն կեցաւ լուռ յուշիկ,
Հապա հառաչեց անուշիկ:

«Հայր, քան զքեզ սիրելի,
«Զըկայ ոքիկ մ՚ինձ յերկրի.
«Պաշտէ գԱստուած քո քեռուն,
«Հապա չերթամ ես հեռուն:
«Բայց թէ առես դու Ցխուս,
«Որ կեանք չեբաւ մեր հոգուս.
«Ցխուս իմ, հայր իմ վեհապետ,
«Ա՛յս իմ վերջին խօսքն ըլլայ»:

Դողաց, սարսեց Հայաստան,
Սանդուխտ վազեց ի զնտան.
Զայն Սանդխտին չարժէր սիրտ,
Հայք թողուին զԱնահիտ.
Քնար զրմին ճնայր մունջ,
Լսէր սաղմոս հոգեչունչ:

Կուսանք հայոց, նոր չուշան
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան:

Ահա ելեր կոյսն հայոց
Փրկչին երթայ հարսն ի ծոց.
Կանգնէր պայծառ ի դիմաց,
Հայոց հպարտ բիւր զօրաց.

Գետին թնդայր ի հիմանց,
Երկինք չարժէր ի նախանձ:

Կուսանք հայոց, նոր չուշան
Տեսէ՛ք իդաշտ Շաւարշան:

Ամէնք կանչեն «թագուհի՛,
Ողորմէ մեր աշխարհի,
Քո թագաւոր հօրդ արեւուն,
Քո աննըման լուսերուն.
Սանդուխտ, ամէնքս քեզ գերի,
Ողորմէ հայ աշխարհի»:

Կուսանք հայոց, նոր չուշան
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան:

Երիտասարդ մը յանկարծ,
Կայծակնաթափ սուր չողաց...
Ուսկից արդեօք էր եկեր,
Դահիճ թէ տաք սիրոյ տէր.
Երկինք, թէ հայրն էր խրկած,
Ոչ ոք գիտէ գայս դիպուած:

Սուրն չողաց մէկ մի փայլ,
Սանդուխտ ծաղեց երեք այլ,
Կարմիր կաթէր ի կրծքէն,
Վարդեր բուսան չորս դիէն.
Աչքն կոկոն մանիշակ,
Բայց լինչ նայուածք անուշակ,
Աւիւնից չուշանք կիսափակ,
Մէջ չրթներուն լ՛ինչ կրակ:

Կուսանք հայոց, նոր չուշան
Տեսէ՛ք ի դաշտ Շաւարշան:

Ելէ՛ք, կուսանք ժողվեցէք,
Վարդն ու չուչան զուգեցէք.
Դրէք դալար գայն մարմին,
Թաղէի հետ ի չիրմին.
Սանդո՛ւխտ հայոց, կոյս քնքուշ,
Հանդչէ՛ ի հողս այս անուշ։

Կուսանք հայոց, քեզ չուչան
Բերին լիպաչա Շաւարշան։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻ

Կրամբամբուլին էն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է.
Որու համը չի տեսնելը,
Ուսանողին ամօթ է։

Բայց հանապազ իմ սիրելի,
Մենք կոնծումե՛նք կրամբամբուլի։

Հայրս անպատճառ լինձ գրում է,
«Որդի ջան, շուտ ասարտէ.
Ժամանակը արագ անցնում է,
Տե՛ս, գըըեըդ լաւ սերտէ։»

Բայց նրա պարոն որդին,
Կոնծումէ կրամբամբուլի։

Թէ դարտն ու հոգս լինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջիկը լինձ խաբում է,
Ու էլ հաւատարիմ չէ.

Կ'ասեմ, «աղջիկ իմ նազելի,
Քու տեղ կը սիրեմ կրամբամբուլի»։

Թէ լերդս ու թոքս մաշեել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմել ու քէֆ անելը,
Բժիշկն լինձ արգիլում է.

Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլլի,
Ես կը կոնծեմ կրամբամբուլի։

Երբ մայրս լինձ մի հարս ճարեել է,
Ասում է որ պսակւիմ.
Եւ պարտքն ու կարզ սոխալել է,
Որ ես ճաշու քէֆ սարքեմ.

Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կ'առնեմ առատ կրամբամբուլի։

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահս էլ առաջիս տեսնեմ.
Օղին կոնծեմ բաժակիս մէջ,
Հոգեհանիս էլ կ'ասեմ.

«Վերջին անգամ, իմ պատեելի,
Ե՛կ, տուաքացնենք կրամբամբուլի».
Կրամբամբուլի, կրամբամբուլի։

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

(Թարգմ.)

ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃՆԵՐ

Հազիւ լրացաւ քսանը մէկ տարիս,
Աղեամազ բլսաւ երես ու ծնօտիս.
Թըչերէս կարմիր վարդեր կը կաթի,
Ջիղերս ամուր, տես երկաթի:

Տուէք ինձ սաթեր, սաթեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ.
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ, ասէք, ի՞նչ անեմ:

Առջևս դըրէք մարդ հարիւր, հազար,
Չարչեմ ոըորեմ ղերդ բազկ ու գազար.
Ինչ այլք չարժաւ մէջ, այն ես օր կ'անեմ...
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ:

Իմպէս բիւրերով լի է Հայաստան,
Նըրա սուրբ հողին լիւմ ես զուրբան.
Մարմինը ուժեղ, ՚ւ առոյգ է հային,
Այլ, ափսո՛ս, թմրած է նրա հոգին:

Թէ մի օր զարթի նրա վեհ հոգին,
Այն պարզ կը ցուցնէ օսմանլի ազգին,
Ով է երկուսէն սարուկ և կամ տէր...
Ա՛հա, երբ պիտ' թնդաք, խեղճ հայի սրտեր:

ԿԱՄՍԱՌ—ԿԱԹԻՊԱ

ՈՐՍՈՐԴՒ

Հապա քաջազունք, հայոց զաւակունք,
Առէք աղեղունք ի մահ երագունք:
Անտառք սպասեն, կենդանիք սարսին,
Շեչտակի նետեր, թափեցէք քաջեր

Ցերէս անվեհեր:

Վազե՛նք ուր վտանգ, այս մեր զբօսանք,
Որսոց արչաւանք՝ մարտից են կրթանք.
Երթանք գունդ ի գունդ, յաղեղ և մկունդ
Ցուռսով սրտաթունդ յաղեղ և մկունդ.
Շամփրենք զկենդանիս, իբր զթշնամիս՝

Ի մեր հայրենիս:

Զի օր մ'ալ նոյնպէս մարտին ի հանդէս,
Զարնենք մահազգեաց զոսոխս Հայրենեաց.
Եւ յաղթանակաւ, լցեալ աւարաւ,
Դառնանք քաջարշաւ լցեալ աւարաւ
Եւ ի մեր դաշինք, ծափ տան սիրելիք,

Պանծան Հայրենիք:

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐՊԷՑ

ՎԱՀԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ խօսենք, եղբարք, հիմի է՞լ,
երբ ընտանեկան երկպառակութեամբ,
Ուրիշ բան չունենք, բայց իրար դաւել,
եւ սարսափելի ապգուրացութեամբ
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք։

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից հազարով մնաց,
Մինչ մնացել էր պարսից լոկ մատեան,
Գունդը՝ մեր Վաթսուն հազարի դիմաց,
երբ մեր վատութեամբ ո՛ղջ կորուսել ենք,

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ օտարից չատ,
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում.
Մոխրատոով լցրինք Դըւին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.
երբ այս ամէնը մենք կատարել ենք,

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ հրապարակում,
Պարսիկը առակ արել է հային.
«Եթէ ասորու նման աչխատիս,
Զկայ մի վատ ազգ, բայց քան ասորին,
Էլ վատ է, հայը». մենք այս տանո՛ւմ ենք։

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախում է անարգ հացկատակներին.
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին,
Ու մեզ կարծում են հող իրենց ոտքին.
Ու մենք՝ մեզ կոխող ոտքը լիզո՛ւմ ենք։

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թևերը կտրած,
Անարգ պարսիկը այս ու այն թեմի,
կարգում է տեսուչ ըստ իւր չար կամաց.
Ու մենք դեռ «կեցցէ՛ արքն» գոռում ենք։

Հիմի է՞լ խօսենք։

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
երբ ողջունում ենք մենք այդ չքերին.
Որ դրան չուն են. և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդ պիսիներին գարձեալ պատում ենք։

Հիմի է՞լ խօսենք։

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամօթու սուրբ ջուր, որ բերան բանանք,
Ո՛չ, թէ չե՛նք ուզում հոգից հող կորչել՝
Թչնամու արիւնով մեր թերին ջուր տանք,
Աղգ, եկեղեցի, փրկե՛նք, ազատենք,

Ասպա թէ խօսենք։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Ի Մ Ե Ր Գ Ը

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մինակ բըսած ծաղկի նման դաշտումը:

Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ գարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնըւում է վիչտ այսօր:

Ասպարէզիս նեղ է ճամբան ու վիշտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մա՛րդ չունի,
«Գա, ասում, են իր կեանքումը դա՛րա չունի»:

— Ես գարա ունիմ, գարաս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես. —
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի՞ րոպէ բախտը ժպտաց ինձ պայծառ:

Հա՛, ասացի, գարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բախտի չար թիւը.
Ցանկարծ փչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցայ վարդ մանիշակ մայիսին:

Ա՛յսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը.
Ա՛խ, մօտեցիր, օրհասական, օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ գերեզման:

Թող սառ լինի իմ նոր տան յատակը,
Ծանր քարէ վրէս ծածկած վերմակը.
Բայց, ա՛խ, երբոր կ՛անցնի ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի:

Հետքը անգամ չէի ձգելու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ կը կորչէին.
Բայց կ՛ուզէի թողնել այս աեղ մի արձան,
Որ գարէ գար ձիար ամուր անկործան:

Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.
Միթէ այնքան անգո՞ւթ կը լինի Լետա գետ,
Որ անունըս անգամ կ՛անէ նա անհետ:

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Ա.Ռ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրի՛կ, Հայրի՛կ, քո հայրենիք,
Վաստուրական մեր աշխարհ:
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ցաւերդ դառան բիւր հազար.

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի մի թուփ որոնեց.
Իսպառ փչից մացառ գտաւ,
Լալով հառաչ ձայն հանեց:

Հայրիկն ասաց՝ «իմ հայրենեաց
Փուչն անուշ է քան զվարդ.
Ես այն վշոց մէջը դարձեալ,
Կը որոնեմ սիրուն վարդ։»

Վասպուրական, է՞ր կը ճանչես,
Քու բարերարդ աննման.
Ի՛նչ հատուցում այդ, ղոր առնես.
Արդար կՀռե՛ ամէն բան։

Արխաիախս արդար անուան,
Մ'ի նախանձիր կուրացար.
Դրաչմ աղւխսուն մի՛ ընդունիր,
Քո ճակատուդ ի կամար։

Այդ լուսանքներդ դոր կը ժայթքես,
Անոնց վրան՝ ներոյլ սիրտ
Քեզ կը մաղթէ բարօրութիւն,
Անձնանուէր քո Հայրիկ։

— Բայց և գիտցի՛ր, որչա՛փ լինին,
Սևակինչ ազռաւներ.
Ի՛նչ, կարելի՞ արծիւն իր բարձր
Դիրքէն յերկիր վար բերել։

Հ. ՃԱՆԻԿԵԱՆ



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ամէն ժողովուրդ ալ իր ժամանակի մեծ մարդն ունեցած է, որու հանրային ազնիւ գործունէութիւնը իր վրայ կը կեդրօնացնէ ամէնուն ուշադրութիւնը. անոր կը համակրին, կը սիրեն, կը յարգեն, անով կ'ոգեւորին, անոր կեանքէն մանրավէպեր կը պատմեն, կ'երգեն, անոր համար առանձին բանաստեղծութիւն մը կը ստեղծեն, — բայց մինչ եւ յաւէտ, ամէն մէկ հալածանք աւելի կը վսեմացնէ ան, ղոհ կ'ըլլայ, և վերջ ի վերջոյ բոլոր գլուխները անոր առջեւ կը խոնարհին, անոր մէջ մի ինչ որ գերմարդկային ուժ տեսնելով։

19րդ դարու վերջին կէսին մէջ և ո՛չ մէկ հայ կարող եղած է հայ ժողովուրդի պաշտամունքին մէջ այնքան մեծ տեղ բռնել որչափ Խրիմեան Հայրիկ։ Ինքը, հասարակ կտաւատի մը զաւակ, իր բնական ձիրքերով ժողովուրդին ու հայրենիքին ծառայելու համար ունեցած իր անկեղծ եռանդին չնորհիւ «Հայոց Հայրիկ» մականունին արժանացաւ, և հետզհետէ ուսուցչական, վարդապետական, եպիսկոպոսական և պատրիարքական աստիճաններէ անցնելով կաթուղիկոսական գահը բազմեցաւ։

Խրիմեան Մկրտիչ ծնած է վանի մէջ 1820ին, այնպիսի տաեն մը երբ գաւառները այնչափ ազէտ, խեղճ ու մոռցուած էին. բայց Խրիմեան իր բարի հօրեղբօրմէն կարողացաւ բարի և ուսումնասէր ըլլալը սորվիլ։ Թէև ինքը արուեստաւոր էր, բունքի հասած, ամուսնացած և աղջկայ մըն ալ հայր էր, բայց ուսումնասիրելու տենչը այնչափ բուռն էր իր մէջ, որ կ'սկսի ճամբորդութիւններ ընել պարսկա-Հայաստան, ռուսա-Հայաստան, և անկէ Պօլիս, ուր կը հրատարակէ իր բանաստեղծական մէկ գրուածքը, «Հրաւիրակ Ա.յրարատեան»։ Ա.յս հրատարակութեամբ վանեցի պանդուխտ երիտասարդը օրէան մարդը կը դառնայ. անոր մտաւոր կարողութիւն-

ներըը և ղեպացուհիները կը գնահատուին և Խաս-գիւղի նորահաստատ աղջկանց վարժարանին ուսուցիչ կը նշանակուի։ Ժամանակէ մը ետք կը թողնէ ուսուցչական պաշտօնը և կ'սկսի նորէն ճամբորդութեան՝ կիլիկիա, Երուսաղէմ, և կը գրէ «Հրաւիրակ երկրին Աւետեաց»ը։ 1853ին իր հայրենիք Վան կը վերադառնայ ուր իր կինը ու զաւակը մեռած կը գտնէ։ Խրիմեանը նորանոր խանդավառութեամբ ոգևորուած՝ չ'ուզեր այլևս ամուսնութեամբ կրկին կաշկանդուիլ, այլ կ'որոշէ կուսակրօն ըլլալ և Աղթամարի մէջ վարդապետ կը ձեռնադրուի։

Իր այս նոր ասպարէզին մէջ Խրիմեանը երեսուն կուգայ նոր ծրագրերով։ Վանական փոքրած մթնոլորտին մէջ ծուլացած վարդապետներուն կը յիշեցնէ իրենց պարտքերը հանդէպ ժողովուրդին և կը հրաւիրէ անոնք «կրթութիւն և լոյս» քարոզել։ կը պահանջէ վանքերու մէջ դպրոցներ հաստատել, իգական սեռի կրթութեան կարևորութիւնը կը բացատրէ։ Բայց այս ամէն նոր գաղափարները ո՞վ կարող էր հասկնալ այն ժամանակները. մինչ ամբարշտութիւն չ'էր այս տեսակ նիւթերու մասին եկեղեցիի բեմէն խօսիլ։ Նորընծայ վարդապետին դէմ դժուարութիւններ և թշնամութիւններ կ'սկսին երևան գալ և ան կը պարտաւորուի Պոլիս երթալ։ Պոլսի մէջ Խրիմեան վարդապետը «Հայաստան» կը քարոզէ, հայը իր հայրենիքի, իր տունի մէջ կրթելու պէտքը ցոյց կուտայ։ «Եթէ կ'ուզէք ծառը զօրացնել, արմատին պէտք է ուժ տալ» կ'ըսէր, «գաւառները պէտք է կրթել, ազի հայ ազգին արմատը հոն է»։

Խրիմեանը յաջողեցաւ ոտեղծել Պոլսի մէջ իրեն գաղափարակիցներու շրջանակ մը և անոնց օժանդակութեամբ փորձեց ընել ան, ինչ որ Մխիթար Աբբան էյաջողեցաւ. իսկ Լիսա վարդապետը առնելով իր հետ քանի մը ընդունակ աշակերտները, տպագրական դործիքներով, վան կը վերադառնայ իբրև վարագայ վանքի վանահայր, և հոն վանքին մէջ կը հաստատուի, «ժառանգաւորաց» վարժարանը կը բանայ, և «Արծուի Վասպուրական» ամսագիրը կ'սկսի հրատարակել։ Թէ այդ ժառանգաւորաց վարժարանը ի՞նչ

արդիւնք տուաւ, պատմութեան կը վերաբերի ատ, բայց ա-
ւելորդ չ'ըլլար յիշել որ, Գարեգին եպ. Սրուանձտեանց,
Ղևոնդ վրդ. Փիրղալէմեան, Արսէն վրդ. Թօխմախեան, «Շա-
հէնն ի Սիպիր»ի հեղինակ Սեդրակ Տէր-Սարգիսեանց ևն.
այդ ժառանգաւորներէն էին։

Հայրիկը չուտով կը պարտաւորուի թէ նիւթական անձ-
կութեան և թէ իր դէմ եղած թշնամութեան համար Պո-
լիս երթալ. ուրկէ կը խրկուի Մուշ ս. կարապետի վանքը,
հաստատել այն տեղ այն ատէն, ինչ որ ըրաւ վաթագի
մէջ։ Այն տեղն ալ կը բացուի վարժարան մը և կանոնաւոր
կերպով կ'սկսի հրատարակել «Արծուիկն Տարօնոյ» հանդէսը։ Այս տեղէն է որ Խրիմեան կ'սկսի իր մեծ գործը՝ գաւառներու հարստահարութեան խնդիրը յուզել Պոլսի մէջ, և բողոքել ուղղակի Բ. Դուռը՝ գաւառներու վատթար կառավարութեան դէմ, և ատոր համար ալ մինչև Պոլիս կ'երթայ եպիսկոպոս կը ձեռնադրուի Մատթէոս կաթուղիկոսէն, և 1869ին Պոլիս պատրիարքական գահը կը հրաւիրուի։

Ժողովուրդը «ովսաննա»ներով ընդունեց նորընծիր պատրիարքը, բայց Հայրիկը կառավարութեան կողմէն իրեն դէմ հանուած դժուարութիւններուն պատճառով կը պարտաւորուի 1873ին հրաժարիլ։ Անկէ ետք ինքզինքը գրականութեան կը նուիրէ. կը գրէ հետզհետէ «Մարգարիտ Արքայութեան երկնից», «Դրախտի ընտանիք», «Ցիսուսի վերջին շաբաթներ», «Հայ գոյժ», «Վան գոյժ», «Ժամանակ և խորհուրդք իւր» ևայլն։ Վերջին ռուս—թրքական պատերազմէն ետք հայ ազգին կողմէն եւրոպա երթալով Նար—Պէյի հետ պետութիւններուն կը դիմէ «հայկական բարենորոգումներու համար և որպէս պատրիարք Պէռլինի վեհաժողովին կ'երթայ և հազիւ 61րդ անգործադրելի յօդուածը կը յաջողի ձեռք բերել։ Պոլիս վերադարձին, ներսէս պատրիարքի խորհրդով 1879ին վան վերադարձաւ և բացատրեց Հայաստանի հայերուն թէ գերի ազգեր ազերսելով, խընդրագիրը տալով ազատութիւն չեն ստանար, այլ «մի միայն ինքնու զօրութեամբ»։ Եւ այն ժամանակէն սկսաւ հայկա-

կան խնդրի լուծումին համար միջոցներու փոփոխութիւնը։

Հայրիկի ներկայութիւնը Հայաստանի մէջ անոանելի էր թիւրք կառավարութեան. ուստի և պօլիս տարեցաւ 1885ին։ 1890ին Գում—Գաբուի և կարինի ցույցերէն եաք սուլթանի հրամանով երեսաղէմ խրկուեցաւ ուխտի. բայց Հայրիկի համար ուրիշ վիճակ մը որոշուած կար. 1892ին 72 տարեկան Խրիմեանը 72 քէհով «ամենայն Հայոց» կաթուղիկոս ընտրուեցաւ։

ՈՂԲԱՑՈՂ ՁԻՆԻՈՐԻ ՑԻՇԱՏԱԿ

Ինձ համար չէ գերեզման,
Եւ խաչաքարին այն յիշատակ.
Ա՛հ, մեռանիմ ես ի մահու դաշտ,
Կորչի անունս անյիշատակ։

Ինձ համար չէ չքեղ դագաղ,
Դիակարդին ունայն պատրանք.
Ո՛չ բարեկամք յուղարկաւորք,
Ոչ ընտանիք իմ սգաւոր։

Այլ ինձ համար կայ մի խոր վիհ,
Զոր ես ձեռքովս փորեցի.
Հազար հազար մեռեալներուն,
Մի գերեզման է հողաբլուր։

Հանէ՛ք անձնէս իմ համազգեստ,
Առէ՛ք նշանս և իմ զէնքերս.
Թողէ՛ք բաժին ինձ միայն,
Իմ արիւնոտ չապիկ պատան։

Ձիւնուրի դին չունի պատիւ,
Յոտից քարշեալ ձգեն ի վիհ.
Որպէս խրցունք ի կալոցին,
Դիզեալ կուտեն ի բարդոցին։

Մահու դաշտէն ուղևորեալ,
Հասինք ահա մեր հանգիստ.
Հանգչեցէ՛ք արդ քուն անխռով,
Արեան դաշտի խոնջեալ զինուորք։

Այլ մինչ հնչէ Գաբրիէլի փող,
Շարժի յայնժամ մեր հողաբլուր.
Եւ մենք յառնեմք ի կեանս նոր,
Որպէս արծւի նորափետուր։

Գայ Քրիստոս, Տէր զաւաւոր,
Գահերն ամէն կոչին առեան.
Արդար Աստուած չառնէ անտես
Արեան դաշտի մեծ զաւաստան։

Ողջամբ մնասջի՛ք դուք, ողջ զինուորք,
Կատակ թողում ձեզ յետ մահուս,
Ես սուր առի սրով անկայ,
Ցուշ առնեմ ձեզ Քրիստոսի բան։

Աստուած սահեցջ զմարդ հողագործ,
Դաշտի մշակ աշխատաւոր.
Անէ՛ծք ձեռին այն չարաբաստ,
Որ զմարդն արար արիւնագործ։

Ասեն մարդիկ աշխարհաբան,
Գայ ժամանակ մեզ ոսկեդար.
Գահերն ամէն գան ի համբոյր,
Ուխտեն դնել սուրն ի պատեան։

Առիւծ գառնայ հեզ անմռունչ,
Գայլ ընդ գառին չրջին յարօտ.
Արեան դաշտեր ծաղկին չուշան,
Խաղաղութիւն տիրէ աշխարհ։

Այդ երազ է, չեմ հաւատար,
Ես միա բերեմ Քրիստոսի բան.
Ցարիցեն ազգ ազգի վրայ,
Աշխարհ գառնայ մի ծով արեան։

Ցխտուս փրկիչ խաղաղարար,
Եկար տեսար դու մեր աշխարհ.
Մարդիկ խեղ են և խօլամիտ,
Դեռ ևս չուսան աւետարանդ։

Ո՛վ մարմնացեալ սիրոյ հրեշտակ,
Դու կոչեցիր զմարդիկ եղբայր.
Տո՛ւր մեզ զքոյդ խաղաղութիւն,
Զոր չկարէ տալ մեզ աշխարհ։

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԻԿ

Ա. ՔՍՈՐԻ ՄԷՋ

Տխրալի օր մ'էր, թէև գարնային,
Սև էր ամպամած ճակատը երկնի,
Վերևէն կաթած չանթեր ցոլային,
Ահով ու դողով սրտեր լեցնէին։

Յուսահատուր՝ մերթ երկրին կը նայեմ,
Մերթ ալ ամպալի երկինքը դիտեմ. —
Իմ չուրջը անխօս պատեր են միայն,
Զեն ինձ կարեկիր վայրեր սրբազան։

Օտար են ինծի խուցեր, տաճարներ,
Օ՛հ, չեն ձայնակիցը իմ մաշած սրտին, —
Գուցէ, դուք, ամպեր, սևաթոյր ամպե՛ր,
Մեղքընայիք աքսորուած որբին։

Կեցի՛ք, ո՛վ ամպեր, կեցի՛ք ձեզ ըսեմ,
Սիրտս ձեր սրտին մէջ թափել կ'ուզեմ.
Շատ ցաւեր ունիմ, վշտեր անհամար,
Որ կեանքս մատաղ կը մաշեն խպտուռ։

Կեցի՛ք, վայրկեան մը, կեցի՛ք, ձեզ ըսեմ,
Իմ սրտի ցաւերն ձեզի ես պատմեմ։

Դառնաչունչ ձմրան այն սաստիկ ցուրտին
Իս հայրենիքէն հեռու քշեցին...
Զիւներ ճեղքելով, ճամբայ բանալով,
Անցայ չատ լեռներ, լալով, ողբալով։

Անպատմելի են իմ բոլոր տանջանք,
Մինչև որ հասայ սրբազան այս վանք...
Ըսէ՛ք, ո՛վ մարդեր, ըսէ՛ք ինձ տեսնեմ,
Կը կարեկցի՞ք ինձ, ինչ որ կը խօսեմ:

Կորուսեր եմ ես հայրենիք սիրուն,
Կարօտցեր սրտանց իմ ընկերներուն.
Որ գուցէ նոյնպէս քշուած են արդէն,
Կամ մեռած անգութ դահիճի ձեռքէն:

Ա՜խ, իմ հայրենիք, պղծուած, աւերուած,
Վանք ու տաճարներ հիմնատեր քանդուած.
Ձկայ ընտանիք, չկայ գերդաստան,
Որ չէ գիշատեր տաճիկը գաղան:

Մայրեր սգաւոր սևեր են հագեր,
Մոխրակոյտերու վրայ են նստեր,
Կուլան ու կ'ողբան Աստուած կը կանչեն,
Իրենց սիրելիք գտնել կը խնդրեն:

Նայէ՛ք, ո՛վ մարդեր, նայէ՛ք վերևէն,
Կը տեսնէ՞ք իմ մայր գուք անոնց մէջէն.
Հոն ես մայր ունիմ, մայր մը վշտահար,
Անթիւ ցաւերէն եղած գալկահար:

Ան ալ սևազգեստ, սրտիկ սգաւոր,
Տեսած է զոհեր, զոհեր ահաւոր —
Թալանուած տուն-տեղ. ամայի այգիք,
Կորուսած երկու սիրասուն որդիք...

Կ'ողբայ օրն իբուն, կանչէ սիրելիք,
Աչքունք թափելով, գերթ ծովի ալիք.
Հանգիստ ու դադար ան չունի երբեք,
Կ'անցընէ օրեր, դառըն սրտակիրք....

Ըսէ՛ք, ո՛վ մարդեր, ըսէ՛ք, ձեզ մատաղ,
Մեր տան վրայէն չէ՞ք անցեր լալով,
Եւ չէ՞ք տեսեր իմ մայրիկը, աւա՛ղ,
Ջուկի կակիծէն փչրուած հոգւով...

Դեռ աւարտ չառած կեանքիս պատմութիւն,
Նորէն լսեցի ահեղ գըղըրդիւն,
Ամպերը հուժկու իրար ձեղքեցին,
Հարցիս պատասխան, աւա՛ղ, չտուին...

ԺԵՆԻԱ

ԲԱՂՑԱԾ ԳԱՑԼԵՐ

Ծմակներում քաղցած գէլէր
Կը թափառեն ոռնալով,
Բաղցած գէլէր — քիւրդ ու թիւրքեր,
Զոհ կը փնտռեն ոռնալով:

Քալէ հովիւնե՛ր, արթուն կեցէք,
Ձեր հօտերը կը ջնջեն.
Ձեր աչքը ձեր հօտին պահէք,
Քալէ հովիւնե՛ր, կարիճներ:

Էս գազաններն ո՞վ են սրանք
Մեզնէն եկեր ի՞նչ կ'ուզեն.
Թուր ցոյց կուտան, սուր ցոյց կուտան,
Ու լրբաբար կը խօսեն:

Մեր պատիւն ու պատուէիրն
կ'ուզեն խլել մեզանից.
Ահա լսէք ի՞նչ են հաչում
Լիրբ սուլթանի բերանից։

Մեր գեղեցիկ, քաջ տղերքը,
Մեր նապեղի, կոյս քոյրերն —
Լիրբին ծառայ պիտի լինին,
Ին Լիրբ չանը հարճեներ։

Բայց մեր հողի պատուէիրան
Կաղնին չուզեց խոնարհել.
Ու նրանք էլ կատաղած եկան,
կ'ուզեն կաղնին խորտակել.

Դո՛ւրս այստեղից, դուրս թշնամիք,
Էլ մենք ձեզնից ահ չունենք.
Մեռնելու չէ մեր հայրենիք,
Սրիւն թափել մենք պիտենք,

Դո՛ւք, Լրբե՛րդ, զինուած զէնքով,
Իսկ մեր ձեռքին գերանդին,
Բայց կը չարդենք մենք ամէնքիդ,
Չէք դիմանայ մեր ուժին։

Ժէռ—լեռ քարեր կը պատռտենք
Մեր անառիկ լեռներէն.
Ու ձեր գլխին մենք կը թափենք,
Զեզի մէկ-մէկ կը փշրենք

Դո՛ւրս մեր երկրից, դո՛ւրս, լակոտնե՛ր,
Էլ մենք ձեզնից ահ չունենք,
Մեռնելու չէ մեր հայրենիք,
Սրիւն թափել մենք պիտենք...

ՀԱՑ—ԳՈՒՄԱՆ

ՍԵՐՈՒԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ոսկէ գագաթը բանձրիկ Նէմրուէթայ
Վա՛ռ—վա՛ռ կը չոզայ մէջ վանայ ծովուն.
Ազիզ անունդ, քաջ Սերոբ—փաչա,
Ամառասով վէլուն մէջ մեր սրտերուն.
Թո՛ղ արարքներուդ արժանի գովքն էլ՝
Խզճուկ գուսանիս անզարդ երգերում
Ջինջ աղբիւրի պէս գլայ, գլգլայ...

Նէմրուէթայ սարը հազար ակն ունի՝
Հազարն էլ Մըշու գաշտն իվար կ'երթայ.
Մինակ Սերոբի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կ'երթայ—
Ազատ օրերի, գալար օրերի
Ծարաւ ժողովրդի սրտի մէջ կ'երթայ...

Նէմրուէթայ սարը քառասուն ժէռ ունի,
Քառասունի գլխուն մարմար քարափ կայ.—
Ին քարփի վրայ արծիւն է նստեր —
Ժէռերի արքան իր գահի վրայ —
Ու կատուցի մէջ մի սիրտ է բռներ,
Եւ գիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ
Սարերի արքան ամպերի վրայ...

«Էյ, ականջ արէ՛ք, հովե՛ր ու հաւքե՛ր,
Կարիճ Սերոբի սիրտն է կըտցիս մէջ, —
Սիրտը, որ ձեզնէն բանձրանց կը թռնէր։
Էյ, ականջ արէ՛ք, սարեր ու ձորե՛ր,

Սերոբ-վաչայի սիրան է կըսպիս մէջ,
Սիրտը, որ ձեղնէն մեծ էր ու խորն էր։
Սերոբ-Աղբիւրը ազատ Նէմրուէթ իջ
Աղբիւրի նման վազեց լեռն ի վար
Ու հեղեղ դառաւ, ահ ու մահ սփռեց,
Ջարկեց ու ջարդեց հայու դիւչինին՝
Քաւրդին ու Թուրքին հարա՛ւր ու հապա՛ր։
Ա՛խ, քուրդն ու Թուրքը վախկոտ են, նամարդ
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ։
Եօթ տարի բոլոր եաևէդ ընկան,
Շուաքդ տեսան, եօթը ծակ մտան։
Վերջն հազար դաւով, հազար խաղերով
Ընկար, քա՛ջ Սերոբ... Ու երբ դուն ընկար,
Ես եկայ, հասայ, սիրտդ հանեցի,
Որ դէհ դիւչինին վայ-բաժին չըլնի։

«Իգիթ սիրտը քալ Սերոբի
Արևի պէս
Նէմրուէթ սարուտ լոյս կուտայ։
Ու քարերուտ, սև հողերուտ
Թէկուզ Թաղեմ՝ չի մարի, —
Տուրբ վաթանի, ազգի սիրուն
Զուր յաւիտեան չի մարի։
Կարիճ սիրտը քալ Սերոբի
Արևի պէս
Նէմրուէթ սարուտ բոց կուտայ։
Սարի սառուց, ձիւներուն մէջ
Թէկուզ Թաղեմ՝ չի սառի, —
Ժողովրդի ազատ օրուայ,
Պատուի սիրուն՝ չի սառի,
Զուր յաւիտեան չի սառի»...

Նէմրուէթայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթայ։

Մէնակ Աղբիւրի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կ'երթայ —
Ազատ օրերի, դատարկ օրերի
Ծարաւ վաթանի սրտի մէջ կ'երթայ...

ՀԱՅԳ—ԳՈՒՍԱՆ

ՊԱՐԵՐԳ

Անձրևն եկաւ չաղալէն,
Ուռի տերև դողալէն. վայ լէ՛, լէ՛, լէ՛.
Հրէս էկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակէն խաղալէն. վայ լէ՛, լէ՛, լէ՛։

Ալ քուռակը հեծել եմ,
Աբարչին մօտեցել եմ. վայ լէ՛, լէ՛, լէ՛.
Արա՛զ, ինծի ճամբայ տուր,
Իմ եարին կարօտցել եմ. վայ լէ՛, լէ՛, լէ՛։

Երկնից անցաւ ղազը,
Ուստան չալեց իր սազը, վայ լէ՛, լէ՛, լէ՛.
Շան տղայ, հերիք խօսաս,
Ձեմ կարայ քաչի նազը, վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛։

Ուռիս տակին երկու ղօչ,
Մինը փինջած, մինը ոչ. վայ լէ՛, լէ՛, լէ.
Աստուած դիւանիպ մեռնիմ,
Մինին կըտաս, մինին ոչ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛։

Ծամերը ունիմ ծիրանի,
Քամին թերթեր կը տանի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Տանին դնեն դիւանի,
Ում զսմաթը կը տանի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Ելնեմ կտուրը նաչխեմ,
Թաւով ձուները խաչեմ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Տեսնեմ եարս գալիս է,
Զոքեմ չաքմէքը քաշեմ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Սև գիտես կարմիր գիտես,
Մեր բաղի քարեր գիտես. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Հարիւր մանէթ մուչտուլուզ,
Իմ եարի տեղը գիտես. վա՛յ լէ՛, լէ՛ լէ՛:

Բարակ ծառը բարձր ա,
Սիրած եարը քաղցր ա. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Գնա հօր հարցրա,
Թէ որ չտայ վախցրա. վա՛յ լէ՛, լէ՛ լէ՛:

Ինձոր ունիմ կրծած ա,
Զորս բոլոր արծթած ա. վա՛յ լէ՛, լէ, լէ՛.
Եղբայրս ուզեց չուխի,
Աղիկ եարի խրկած ա. վա՛յ լէ՛, լէ՛ լէ՛

Կաքաւը սարի վերայ,
Կտուցը քարի վրայ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Մի այլուղ վարդ եմ քաղել,
Իմ սիրած եարի վրայ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Եղբօրս անուն Աղասի,
Ջէրը լիքը աբասի. վա՛յ լէ՛, լէ, լէ՛.
Գլխին գարկէք թոզ քօռնայ,
Ձեռքէն խլէք աբասին. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Եղբայրս հրէն սարումն է,
Շվին գօտկածոցումն է. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Եղբայր ջան չվիդ ածա,
Շվի ձէնն էլ անուշ ա. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Ագբէբս ծառի տակին,
Սաղմոսը կռան տակին. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Սաղմոսն անտէր էր արել,
Լեզուն բլբուլ էր դառել. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Հաւը թռաւ թառն ելաւ,
Դուշմանի սրտով ելաւ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Ջէլէք, քէլէք յետի դէմ,
Ալ խնձոր մ'գօտի դէմ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Զայտան բերէք չայ անենք,
Մեր դիւժինին վայ անենք. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Մեր դիւժինը սաղ ըլնի,
Հայոց թաղաւոր ըլնի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Ես կայնել եմ կարմիջին,
Ոսկէ գնդեր ակնջին. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Խարար տարէք զոքանչին,
Աղջիկ թող տայ կարճին. վա՛յ լէ՛, լէ՛ լէ՛:

Պուճուր աղջի մի բանի,
Բարով քու մէրդ մեռնի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Ջեմ ղիմիչուսմ անիծել,
Ոտներիդ քարին բռնի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Ջաղցի առուն լողացայ,
Գիւլի այլուղ գողացայ. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Եօթը տարի հիւանդացայ,
Եարս տեսայ լաւացայ. վա՛յ լէ՛ լէ՛ լէ՛:

Աղջի անուն դ ասա,
Գլխիդ այլուղ խասա. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛.
Ալ տղայ սիպտակ աղջիկ,
Բռներ էք իրար եախա. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

Ջրի մէջը ղօչ պիտի,
Իմ եօրտէքը սազ պիտի. վա՛յ լէ՛ լէ՛ լէ՛.
Ինչ եմ անում թոլըննկի,
Իմ եարս չահի տաղ պտի. վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛:

ԵՐԳ ՈՒՍԱՆՈՂԱՑ

Բաւական է մեզ մտայ զբաղմունքն,
Մենք ևս ունինք մեր համոզմունքն.
Ձայուցն առաջ մեխած սովորել,
Իսկ այնուհետև բաժակին նայիլ.

Խմե՛նք, եղբարք, գինի:

Կեցցես դու չաստուած գինարբեցութեան,
Կեցցէ և քո գիւտ այժմ և յաւիտեան.
Ծոգնած մարմինս դու զօրացնում ես,
Երբ պարապմունքից դադարում եմ ես.

Խմե՛նք, եղբարք, գինի:

Արդէն նստոտած գինու տաճարում,
Ուխտաւորները խմիչք են զոհ բերում.
Կարմիր արիւնը նէվրական թասին,
Հաճելի է չատ մեր մեր բաքոսին:

Խմե՛նք, եղբարք, գինի:

Հարկաւոր է չուտ ուխտատուն չտապել,
Տասերկու ժամ ճիշդ կաթիլ չեմ ըմպել.
Ծոմապահութեանս վարձը թող լի՛նի,
Մի չիչ երասխայ վարդագոյն գինի.

Խմե՛նք, եղբարք, գինի:

Ահա՛ թասերով պանգահարում են,
Գինի պաչտելու մեզ հրաւիրում են.
Ո՛վ պատարագին փոքր ինչ ուշանայ,
Մի լիք չիչ գինի պատիժ կ՚ստանայ:

Խմե՛նք, եղբարք, գինի:

Ուրեմն մի միայն ես եմ մնացել,
Որ աղօթատուն դեռ չեմ գնացել.
Երթամ համբուրեմ չուտով տակառին,
Սուրբ և անարատ բաքոսի պատկերին.

Խմե՛նք, եղբարք, գինի:

Մ. Փ.

ՔԱՋ ԱՐԱՒՕՑԻ ԵՐԳ

Գրազ տանի քուրդ Աբօյին,
Ըսպաններ է ջոջ Ափօյին.
Իլլաճ մացիր Արաբօյին,
Զարթի՛ր, լաւօ, մըռնիմ քըզի՛:

Զուր ե՛ր մնամ էլու դռներ,
Երթամ գտնեմ գիմ խեղճ գառներ.
Սուքեմ գիմ բաղչայիճառներ,
Զարթի՛ր, լաւօ, մըռնիմ քըզի՛:

Դէն երիկէ գալըղ ո՞րն է,
Քաջ Աբաբօ բախտաւորն է.
կարմիր էրիցանց գինւորն է,
Զարթի՛ր, լաւօ, մըռնիմ քըզի՛:

Խեղճ մչեցին մնաց լալով,
Հեռու երկիրներ ման գալով.
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթի՛ր, լաւօ, մըռնիմ քեզի՛:

Ոտքի կայնէք, կարիճ Խերան,
Զօրքով գնա՛ առաջ ուրան,
Սալաթ մէյրու բաժին ղուրբան,
Զարթի՛ր, լաւօ, մըռնիմ քըզի՛:

Սէֆիլ—չիւար, մացած հայեր,
Եղած անտէր—բնաւեր հաւքեր.
Տէ՛ր, դու փրկէ, պահէ արթուն,
Զարթի՛ր, լաւօ, օգնէ՛ հայուն:

ՉՄՈՌՆԱՍ ԻՍ

Երբ ալ չըկայ ինձ խաղաղ օր,
Ու դարձեր եմ գերդ սըգաւոր.
Թերևս մինչև վերջը կեանքիս,
Ես կ'աղաչեմ, չըմոռնաս իս:

Մեզ վիճակւած է դաժան կեանք,
Անհուն յաւեր ու տառապանք.
Ինձ հարազատ եթէ մընաս՝
Ուխտով կ'ասեմ, իս չըմոռնաս:

Տարիները կուգան կ'անցնին,
Սէր չի մարեր մէջ իմ սրտին,
Գեղ ալ ահա, ազնիւ հոգիս,
Պարտք կը դնեմ, չըմոռնաս իս:

Հեռու, հեռու, օտար երկիր,
Երբ չունենամ ինձ կարեկիր.
Դու միայն ինձ լոյս մը կուտաս՝
Եթէ երբեք իս չըմոռնաս:

Անկեղծ սէրն է մեր սրտի կապ,
Մեզ չի բաժներ ոչ մի տագնապ.
Գիտեմ, ինծի կը կարօտիս,
Բայց յաւիտեան չըմոռնաս իս:

Ու երբ գառնան օրեր ժպտուն,
Գան աւետել, մեզ խնդութիւն...
Եւ կորսւի մեր գառն օրհաս՝
Ուխտի՛ր եղբայր, իս չը մոռնաս:

Մեր սուրբ ուխտին երկինք վըկայ,
Բախտ կը բերէ մեզ ապագայ.
Փունջ մը ծաղիկ նըշան ուխտիս,
Կ'ասեմ դարձեալ չըմոռնաս իս։

Ու պատանին սիրաղեղուն,
Տաւ փունջ մը իր սիրելուն.
Երկնագոյն էր գերդ մանիշակ,
Անկեղծութեան իբր օրինակ։

Տ. ՏԷՐՕՑԵԱՆ

ՔԵԶ ՉԵՄ ՄՈՌՆԱՐ

Քեզ չե՛մ մոռնար, սիրուն վարդ,
Քու փոխարէն մի աստղիկ.
Ինձ մըտերիմ անուշիկ,
Երկինքէն փոխ կ'առնեմ արդ։

Մինչև դառնայ նոր գարուն,
Դառնաս դու ալ սիրարձակ.
Ինձ զգալու համարձակ,
Անկեղծ ծաղիկդ իմ սիրուն։

Թո՛ղ չար նախանձ կայծակները,
Շաղ տայ ճակտին մեր վրա՜ծ,
Միակ պատսար մեր գիմաց,
Է մեր սրտի անկեղծ սէր։

Միայն իմ կամքն է որ իս կը մըղէ,
Առաջ, միշտ առաջ հոգ չէ թէ փուշ է
Կամքիս հետ ես ալ կը կրկնեմ առաջ...
Թող ամբողջ կեանքըս դառնայ սոսկ հառաչ։

Ահա, իմ... քեզ համար եմ ես,
Քեզ նուիրած իմ սրտիկս սիրակէզ.
Թո՛ղ պինդ մնան իմ գէմ խաւարամիտներ,
Քեզնով... ես եմ անվեհեր...։

Տ. ՏԷՐՕՑԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏ ՎԱՆԵՑՈՒ ՎԱՌ ԻՂՁԵՐԸ

Ինկեայ թաղէ թաղ աղէտ մ'ճարեցի,
Տըվի թապաղէ մ'թըղթիկ առեցի.
Աչքիս արցունք թանաք արեցի,
Շողշողուն մատիտս՝ կալամ արեցի։

Սրտիս դարտեր՝ տաւթար արեցի,
Ստամպօլ քաղաք էօրէօխկեցի.
Կարիպի նստեր վէր օտար փուղցին,
Կարիպն ահա կ'անի իր խոր խէրանին.

Կանչեմ, չան արե՛, սարեր լացուցեմ,
Շատ կարիպ, կուրքաթ ճամբէն դարձուցեմ։

Ծովուն խաւէք մը կէր՝ անունն էր Աբօր,
Վշիկն էր էրկէն, սրտիկն սեաւ որ·
կապեմ պէչարէն, երթամ խեռ լինոր,
Ին իմ դարտ դիտէր, ես էլ կէօ լինոր:

Պէօտան եմ դրեր՝ վէր էնա դարին,
Ձէլաւ մէկ չամամ էօրէօխկեմ եարին·
Ասուած չէն պահեր էս տարւան տարին,
Շամամ թոռոմաւ, իմ եար խռովաւ:

Արե՛, եար արե՛, խռով մի՛ մնայ,
Ասաըւորիս մալ, ծի, քե չի մնայ:

Պաղչէ մ'եմ անկեր վարդ խաղար թավուր,
Մէջ հըմէն վարդին՝ իմ վարդն էր քեաֆուր,
Շահ—պըլպիւլն իջաւ վեր իմ վարդին խուր,
Լեզուս քե գինի, սիրտս քե խռւրուղու:

Աչքերդ ի թուխ թուխ ընքուէրդ փարիշան,
Իմ մատի մատնիկ կուտամ քե նիշան·
Որ չես աւատար, կէօհան տուրը նշան,
Թարթըփներդ ի կըռընկու ճիվան:

Արե՛, եար արե՛, խռով մի՛ կենայ,
Ասաըւորիս մալ, ծի, քե չի մնայ:

Երկնքնի ամպեր, կուգայ մարմար ճիւն,
կը խալի, կաթի վեր մալուլ մարգուն·
Մէկ ե՞ս եմ մալուլ, թէ աչխարհս պիթուն,
Խօրն ի ամպեր կուգայ անձրև ու ճիւն:

Ա՛հ, ե՞րբ կ'էլնի որ, իմ եար գայ մեր տուն,
Էս օր ի՞նչ օրի—ուրբաթ ու պախս ի·

Ճուխտըմ եար ունիմ տէլ նորախարս ի,
Խորած վարդ ապետ կ'ասի չխասի:

կանչեմ, եար արե՛, խռով մի՛ մնայ,
Ասաըւորիս մալ, ծի, քե չի մնայ:

ԵՐԳ

Լռէ թռչնիկ սիրահար, բնութեան համայն կաց ունկնդիր,
Քան ամէն արարածոց վեհ զգայուն մարդ կը խօսի·
Եւ առաւել քան թէ մարդ, հէգ բանաստեղծ մէկը կը խօսի,
Հայրենեաց ճիշդ ափերից բաժնուելու մօտ կը խօսի:

Սիրականին արտասուօք սիրտն ի տոչոր անձ մը կը խօսի,
Դեռահասիկ մանուկները անտէր ձգուղ հայր մը կը խօսի·
Ա՛հ, որի ե՞ս նման եմ, ինձպէս թշուառ խակի չկայ,
Զգայուն՝ բայց ցամքած մի հայրենեաց որդի ծնայ:

Գերի եղայ ես սիրոյ, սիրոյ հեշտիկ գիրկ խնդրեցի,
Եւ գտայ և արցունքս և հառաչանքս հոն թափեցի·
Մինչ անոր փափուկ ձեռքեր կաթիլք աչաց իմ ժողվէին,
Եւ որդիքս վարդակարմիր հայր քաղցր անուն թոթովէին:

Նոր յուսոյ անուշ իւղով դէմքս զւարթ քան զառաջին,
Թէ քանի տարի մի ևս որդիքս ի քնար իմ զմայլին·

Ալ ահա գայ և մօտի ինձ բաժանման անգութ գահիճ,
Եւ յուսոյս թերբաց ծաղիկ ի փուչ դառնայ ինձ խոցոտիչ:

Արդ ասա, թռչնիկ սիրուն, քեզ պէս թշուառ իսկի չկայ,
Եւ բնութիւն կրկնեա գթով, թերևս երկնից ինձ լոյս մի
գայ.
Ո՞վ է այս օձախռիւ սև գորգոնայ դժոխային,
Որ գալով գայ մերձենայ ինձ սպառնայ անուր բանտին:

Ա՛հ, թռչնիկ մի եմ անպարտ, աղատութեան սիրոյ գերի,
Թէ ծաղկանց ծոց թաւալիմ, անգութ սողնոց եմ թշնամի.
Իմ երգերս անուշ լսելի դէմ արևուն ոսկեփայլիկ,
Ոյր ի գալ սոսկայ սուեր, բնութիւն լինի հազար լեգեվիկ:

Թէ ոստոց թռչիմ վրայ, չեմ գողանար անոր հասիկ,
Իմ դաշտար չէ այլոց տան, աւերակներն են իմ բունիկ.
Մերթ ընդ մերթ ծաղիկ տանեմ, ցանեմ անչուք այն տե-
ղերուն,
Երբեմն էլ ցօղիկ ժողվեմ, ցրեմ ցամքած ոսկորներուն:

Իմ ճագերս դեռ կայտառուն են, դեռ ճլվլան չունին
թեւիկ,
Ա՛հ, եթէ ես հեռանամ, գուրգուրալով ով տայ կաիկ.
Թող անոնց երգեմ սիրով, մինչև թռչին ինձպէս ազատ,
Այլ անուր դազանաց սար, որ չէն արին չոր անապատ:

Ա՛հա անսիրտ, անժեղ թռչնիկ մ'չէ կապանաց այդ ար-
ժանի,
Օն սոխակ, և դու բնութիւն, կրկնէ գայս բան աղերսալի.
Եւ ով է այս որ մօտի վիրաւորած եղնի պէս,
Մաղեր թափած ուսերուն մի հերապանծ խոյի պէս:

Մանուկ սիրուն ի թևին, վարդաշուշան փունջի պէս,
Իր աչերէն կը ցօղեն շաղաթաթախ տունկի պէս.

Քայլիկ մ'առնու և գաղբի ուղեկորոյս մարդու պէս,
Կարմրին այտեր ու գեղնին թոքացաւ կուսի պէս:

Երկուք մէկէն արտասուեն զուգընթաց առուակի պէս,
Երկուք մէկէն խոնարհած մանուշակաց թուփի պէս.
Երկուք մէկէն սիրելի կաքաւ ու տատրակի պէս.
Մայրն ու որդին սիրական ինձ կից հոգւոյ պէս:
Մանուկն ասէ ալ մի լար, և ան հայի ցաւագին,
Ո՛հ խօսելու անկարող յօրհաս մերձ հիւանդի պէս:

Տ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ՏԱՂ ԶԱՏԿԻ

Մարտըն կուգար ծաղկըներով,
Երկնից հաւերըն կարգալով.
Հրեշտակապետ փառըս տալով,
Յորժամ հայոց Զատիկն գայր:

Բարկ արեգակըն ծագեցաւ,
Սաստիկ ձըներն հալեցաւ.
Գառն ու մաքին ընծայեցաւ,
Յորժամ հայոց Զատիկըն գայր:

Ամպ ու երկինքը խիստ գոռաց,
Ողորմութեան ցօղն ցօղաց.
Ծով ու գետերըն խիստ ծըփաց,
Յորժամ հայոց Զատիկըն գայր:

Աղբերակունքն յորդորին,
Ծառ ու ճըղերըն ղարդարին.
Խոտ անասունքըն ճաշակեն,
Ցորժամ հայոց Զատիկըն գայր։

Մարդապէս դատէ մեղուն,
Ժողվէ ծաղիկն ի լեռներուն.
Ո՛չ վախենայ ի մեռնելուն,
Ցորժամ հայոց Զատիկըն գայր։

Բուլբուլն, ղումրին առաւօտուն,
Եկեր դարձեր վարդին մօտուն.
Գանգատ կ՚ընէր նա ի հողմոյն,
Ցորժամ հայոց Զատիկըն գայր։

ԵՐԳ

Ռուսական պետութիւն, հայեր, ըսաւ աչխարհի,
Բաւ է քրիստոնեայք, ո՛հ հայեր, մնաք խեղճ գերի.
Ռուսական բանակն, հայեր, մտաւ Հայաստան,
Օսմանեան ղօրքեր ո՛հ, դէմ դէմի եկաւ։

Հրացան թնդանօթներ, հայեր, գոռալ սկան,
Ամիսս այն ազգակից խեղճ հայեր ի զուր զոհ գնացին.
Հայկազն Մելիքով, հայեր, գեներալ ռուսաց,
Ղարսը հրջապատեց ո՛հ, հայեր, վրան ռումբ տեղաց։

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐՈՒ ԳԱՆԳԱՏԸ

Սասուն վագեց արեան գետեր,
Զէնքեր չունինք առանք փէտէր.
Մըր տարտը դուք հէչ հըք քաշեր,
Այե՛ր, խայե՛ր, խայե՛ր, խայե՛ր։

Անգութ տաճիկ խըտ քրդերուն,
Աւերեցին մըր տեղ ու տուն.
Մըր չիւաններ տարան գերի,
Թորկին մըր տըներն անվերի։

Խարս ու աղջիկ բռնին թուանք,
Տընով տեղով մընք քանդուանք.
Մեռաւ մամ, պապ, ճժեր մեռան,
Սովէն թև թիկունքներս կ՚եռան։

Սասուն ձեռնէ գնաց, կ՚ասէ՛ք,
Զուր տեղ մարդու մի՛ բամբասէք.
Զոր խաց տէք ու քանի մ՚ղէնք,
Էլ ուրիշ բան ճըգնէ չուզենք։

Քըզի մեռնինք սուրբ Տիրամէր,
Դու մի՛ թորկի մըզիկ անտէր։
Ծըղճուկ խըղլաբ, կանչէ ու լաց,
Բալքի քու ճէն լսէ Աստուած։

ՄՇԵՑՈՒ ՀԵԿԵԿԱՆԸՐ

Վիշերնիս ճըկած՝ սրտով խոնարհենք,
Տիրասէր հպատակ լինենք ու ծառայ.
Անոր անունը աղօթքով յիշենք,
Խըղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ:

Քրտինք—վաստակի մեր տասանորդը,
Տանք անոր ղօրքին, որ ան կ'ըտանայ.
Ըլլանք սուլթանի մ'ըտերիմ ճօրտը,
Խըղճուկ հայ ազգիս գուցէ մեղքանայ:

Թող ան մեր որդոց անմեղ արիւնով,
Հաճոյքի համար սուրը լըւանայ.
Սրտերնուս կսկիծն զսպենք խընամով,
Խըղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ:

Թո՛ղ պարկեշտասուն մեր աղջիկներով,
Սուլթանի տըռփոտ պասքը յագենայ.
Մեր ոսկին սէրայ տանինք փէշերով,
Խըղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ:

Ցուցնունք որ հայը չէ տաճկին ոսոխ,
Այլ բարեացակամ սերտ ընկեր է նա.
Անոր գովողն է ո՛չ չարախօսող,
Խըղճուկ հայ աղգիս գուցէ մեղքանայ:

Լուռ կաց, խե՛ղճ հայ մարդ, սընոտի յոյսեր,
Քեզ չատ խաբեցին, էլ մի՛ հաւատար.
Կ'անցնին ու կ'երթան չատ ու չատ դարեր,
Հայ աղգիս վըրայ թուրքը չի խըղճար:

Ինչո՞ւ կը մոռնաս փրկչի ասածը,
«Ինուռը չի բախած՝ ոչ ոք չի բանալ.
«Ո՞վ ըստացել է իր չի հայցածը,»
Հայ աղգի վերայ թուրքը չի խըղճալ:

Ազատ լալ կ'ուզես, գիտեմ փափաքըդ,
Բայց դու մի՛ յուսալ հասնիլ այդ օրին.
Ո՞ւր է, դու գիտե՞ս, լախտդ ու փառքըդ
Ու ազատ կեանքդ: — Ի ծայր քո սուրին:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՕՐՕՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քընէ՛, քընէ՛, իմ հայրենիք,
Իմ կաթոգին Հայաստան.
Ես քեզ օ՛ր օ՛ր կ'ասեմ մեղմիկ,
Որ չըզարթիս անգուման:

Քանի՞ դարեր այդ խոր քունը,
Քեզ կաչկանդել, կապել է.
Քընի սերմունք, ասես, մորփէն,
Լոկ քու վըրայ թափել է:

Եւ ի՞նչ զարմանք, ազգ ու ազինք,
Միշտ լաւակամ քեզ համար.
Քունըդ վըդովել չուզելով՝
Օրօրում են անդադար:

Քեզ··· Թուր ձեռը բռնած,
Մարդ չի Թողնում քեզի մօտ.
Թէ մօա եկան՝ դարձեալ չէ՛ փոյթ,
Ունի չատ ռումբ, չատ վառօդ.

Որ աչքերդ չի խոտղին,
վառ չողերը արեգին.
Անթափանցիկ ու մեծ ասպար,
Ունի բռնած իր ձեռքին:

Կամ Թէ՝ անուշ քընիդ խափան,
Զլինեն նաև քու որդիք.
Ըսպառազէն պահապաններ,
Անոնց վրայ կան հերիք:

Թէ ճիչ բառնաս՝ այն ժամանակ,
. . . . . .
Այդ պատճառաւ հենց քու որդիք
Ե՛ւ երկչոտ են, և՛ զգաստ:

Արդ՝ դու ննջէ՛ ծանր քընով,
Ու մի՛ պարթիլ չատ դարեր.
Պարտքն աշխարհի դու տւել ես,
Կատարել ես չատ բաներ:

Ունիս քալքեր (Թէև մեռած),
Ունիս գրքեր անհամար.
Սխրալի գործք քու զաւակաց,
Կ՛անցնին, կ՛երթան դարէ դար:

Աստւածախօս քու լեզուն է,
Ծոցդ Ըբրախտ երկրաւոր.
Նոցա սերունդք են քու որդիք,
Դէ՛հ, Հայաստան իմ, օ՛ր, օ՛ր:

Երբեմն դու խիստ լաւ կ՛անես,
(Այս քեզ խրատ իմ բարի.
Հաւատացի՛ր, սրտով բաղձամ,
Որ այդ ճշդիւ կատարի):

Թէ սեփական զաւակներիդ,
Տաս խրատներ մայրական.
Որ կործանաց իրանց գահը,
Վերականգնել չի ջանան:

Շուտ չուտ խրկէ քարոզիչներ.
Սևագըլուխ, մրքաւոր.
Որ յորդորեն ապրիլ նոցա,
Թէև սորուկ, բայց անդորր:

Խաղաղասէր կեանք քարոզեն,
Մեծ մեծ յոյսեր երկնային.
Ազնիւ զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէտ բընաւին:

Չի հասկանան վախճան կենաց,
Կոյր են եկել՝ կոյր երթան.
Կրօնքն էլ ինչպէս հարք կը մեկնեն,
Անոնք այնպէս հասկանան:

Մաքուր կրօնն է, ասեն պասը,
Ժամուց տալը յարգոյ հարց.
Կուշտ ուտելը, ճոխ ապրելը,
Այս է վախճան մեր կենաց:

Դիւրահաւան մեր հայերը,
Բարի խրատը լըսելով՝
Զեն վրդովիլ, ու քեզ կուտան,
Լաւ կըշտանալ խոր քընով:

Դէ՛հ, իմ պառաւ մայր Հայաստան,
Ջընէ՛ անուշ ու անդորը.
Ա՛յսպէս յաւէժ քեզ կը կարդան,
Աղջ ու ազինք օ՛ր, օ՛ր, օ՛ր։

ԹԱՄԱՌ—ԹԱԹԻՊԱ

Ն Ո Ր Գ Ա Ր Ո Ւ Ն

Քեզ ըսպասող չըմընաց,
Ո՞ւր ես գալի, այ գարուն.
Գովքըդ ասող չըմընաց,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն։

Սև—մուխ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դարան արին.
Մեզ վայ բերես էս տարին,
Ուր ես գալի, ա՛յ գարուն։

Բիւլբիւլըդ գայ՝ թող ձէն տայ,
Էլ ո՞վ պիտի քեզ խնդայ.
Էլ ո՞ր սիրտը կը թնդայ,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն։

Բիւլբիւլն էկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՞վ ա որ դարտ չունի,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Դու ես բերիր հաւքերին,
Ո՞նց տէր ըլնին բըներին.
Սա՛ղ տեղ չկայ մեր երկրին,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն։

Աչուղի բերանը փակ,
Սաղ—քեամանչէն փակի տակ.
Սիրան ա էրւում անկրակ,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Քեզ ըսպասող չըմընաց,
Ջուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովքըդ ասող չըմընաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Ց. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ա Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Ո՛վ հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ,
Ուրախ զարթի ապահոված առանց ցաւ.
Երբ կ՝ատանաս քաղաքական մեծ համբաւ,
Որ դու հադնիս արքայական նոր հալաւ.
Ջը մեռնէի մէկ տեսնէի անդրաւ,
Քո թշնամուն կայքը լինէր քեզ գրաւ։

Մէկ տեսնէի կարին նստած հայ իշխան,
Հայ տառերով գրէր հայոց հրաման.

Տիգրանակերտ, Մուշ, Պայազիտ դէպի վան,
Ուղարկէին հայոց զօրքեր պահապան.
Քիւրդ և տաճիկ գլուխ ծռած հայուհեան,
Ճանաչէին թէ՛ սա ազգ մ՚իրաւ։

Փառք այն աւուրը, ո՛հ հազար փառք այն ժամին,
Երբ հայոց տալ ղՀայաստան կը կամին.
Թո՛ղ նկատեն յայնժամ Հայկայ Արամին,
Տեսնեն ինչպէս չուտ կը յաղթեն թշնամին.
Ապերախտ չեն քաջ թոռները Արամին,
Միշտ կը պահեն իրենց ցեղքն անպարտաւ։

Պիտի տեսնե՞մ, արդեօք մի հայ դատաւոր,
Տաճկահայաստանը նստած փառաւոր.
Պիտի վերնայ լուսինը կիսաբոլոր,
Անոր տեղը խաչը փայլի ահաւոր.
Այն տեղ իշխէ քրիստոնեայ թագաւոր,
Ժպտի մէկ օր Հայաստանի բախտ բոլոր։

Ա՛հա, ե՞րբ կուգայ այն օրը մեղի համար,
Ազատութեան հոգի քաշեմ անդադար.
Այս աշխարհս մի բան չկայ անհնար։
Աշխատելով մարդ կը գտնէ նոր հանճար.
Եթէ Աստուած մէկուն լինի բարերար,
Այնպէս ազգը չի վնասիր ոչ բնաւ։

ԱՇԸՔ—ՃԻՎԱՆ

ՕՏԱՐՈՒՀԻ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Օտարուհին ինձ ասաց «Հէ՞ր ես լալիս, արցունքը
Հեղեղի պէս ի՞նչու են են ոռոգում քու աչկունքը.
Քու տրտմութեան ճար ունիմ, կը վարատեմ քու
դարտը,
Թըչիս վըրայ չե՞ս տեսնում փայլած չուչանն ու վարդը»։

— Զուր մի՛ ջանար, սիրական, իմ դարտը չես փա-
րատիլ,
Հոգիս հոգսից, ցաւերից պիս փրկել չես ազատիլ.
Թո՛ղ իմ աչքիս հեղեղայ արցունքի աղբիւրը,
Արցունքն էլ լըւանում սրտի խոր խոր ցաւերը։

Օտարուհին ինձ ասաց «տես, հասել է գարունը,
Դաշտերի մէջ բացել են հազարերանգ ծաղկունքը.
Իջնենք դաշտը, օդ քաշենք, ծաղկունք քաղէ, փունջ
վընջէ,
Հայրենիքիդ կարօտն ա՛ռ որ թախիծ քեզ չի տանջէ»։

— Հայրենիքիս կարօտը ձեր դաշտերից չեմ առնիլ,
Սառ հիւսիսում երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ.
Ուր բիւր պատիկ ցոլուն են արեգակի շողերը,
կենսատու է անձրևը, մեղրածին են ցօղերը։

Օտարուհին ինձ ասաց «մոռացիր քու հայրենիք,
Քու հայրենին այն տեղ է, ուր սիրում են քեզ մար-
դիկ.
Տե՛ս, արևին, ան պայծառ չէ՞ շողշողում հիւսիսում,
Հայաստանը կորել է, լե՛ղճ, դու ցընորք ես ուզում»։

— Սուտ են, սուտ քո ըրթոյցքը, Հայաստանը չէ կորած,
Նա այն տեղ է, ուր Եփրատ ու Տիգրիս են գըրկուած.
Ուր երասխը մըրմունչով յուզած ջուրն է գըլորում,
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում:

Ուր փայլում է արեգը իր կուսական շողերում,
Ուր ջըրում է երկինքը երկիրն գով ցօղերով.
Ուր որ էի կայ բորբաս, էի կայ չիմուն ու խորչակ,
Օդը չունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ...

Հայաստանը կայ... աւա՛ղ, խոպանացած ամայի,
Եւ կը ծաղկի, երբ նորից ծըծէ քըրտինքը հայի...
Անոր սիրտը յամառ է, չի կերակրում օտարին,
Օտարն խաբած ասում է «չիջաւ աստղը հայերին»:

Բայց ի՞նչ, դու չես հասկնալ իմ սրտամաշ դառ-
նութիւնը,
Մի՛ ջանար, ինձ չեն սփոփիլ թըշնիդ փայլուն վար-
դերը.»
Իմ սրտմտութեան ցաւակից խանդաղատանք գրկելով,
Օտարուհին ինձ տւաւ գաւաթը լի գինիով:

Երկնակապոյտ աչերը անթարթ աչերիս յառած,
Լաց ու ժըպիտ երեսին՝ նա մեղմ ձէնով ինձ ասաց.
«Խըմէ՛ գինի, պատանի, ի յիշատակ այն երկրին,
«Որ սրտամաշ կարօտով կոչում ես քու հայրենին:

«Պարզէ՛ աղնիւ ճակատդ, գըւարթացի՛ր, ոգի առ,
«Ցուսակտուր այդ դէմքով խըղճալի մի՛ ձևանար.
«Ջիւնաթաղ ու կեսամեռ դաշտերը գարնայ չէ՞նըչից,
«Ջե՞ն ըսթափում և յառնում մահահանգոյն խոր
քրնից:

«Երբ ծագում է արևը՝ մըռայլ չի՞ հալածում.
«Մեռած բնութիւնն դէպ նոր կեանքը նա չի՞ վե-
րածում.
«Դէ՛հ, պատանի, քա՛յլ եղիր, խմէ՛ գինի, երգ երգէ՛,
«Տէրն է որբոց օգնական, նա քու աղքն էլ կը փրկէ»:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՛խ, վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան.
Ահեղ կռւի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ա՛խ, բաւ է, հայեր, միշտ այսպէս գերի,
Թողնել հայրենիք դիմել օտարին.
Օտար սիրում է մեզ իբրև հուրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի:

Ա՛խ, բաւ է, հայեր, ձեր անմիութիւն,
Պատիւ չէ բերեր մեր հայ ազգութեան.
Պէտք է հուժ գոնել միութեան դարման,
Որով ազատենք մեր մայր Հայաստան:

Պէտք է միանալ ամբողջ Հայաստան,
Թող տեսնայ Եւրօպ ու Ամերիկան.

Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական,
Քանի այսպէս է Թուրքի դատաստան։

Վան փոքրիկ քաղաք իր դաւառներով,
Լեցուեցաւ դիակ հարիւր հազարով.
Ներկուեցան դաշտեր հայու արիւնով,
Ձայն ուին երկինք անպերն աստղերով։

Տեսէք Թուրք ազգը ինչքան անամօթ,
Քաշեց մեզ վրայ զօրք ու թնդանօթ.
Բայց երբ չողչողայ հայկազեան սուրը,
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր։

Ելէ՛ք, ընկերներ, առնենք հրացան,
Անգութ Թուրքերը նոր կատաղեցան.
Մեր հայ եղբայրներ չրջապատուեցան,
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձան։

Իմ վերջին համբոյր կուտամ ձեզ, հայեր,
Զըլլայ Թէ մոռնաք դուք իմ պատուէրները.
Եւ Հայաստանի անմեղ մանուկներ,
Շուտով լուծեցէք հայու վրէժները։

Ս. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՊԱՐԵՐԳ

Մայրս մանէ մանածս,
Գնա քաղէ յանածս.
Պապս հարանիք է բռներ,
Զեմ ճանչնար նչանածս։

Ամպը լեցուեր ձիւն կուգայ,
Իրիկուն կ'ըլլայ տուն չի գայ.
Այսպէս չոր քար բարձին վրայ,
Առանց եարի քունն չի կայ։

Այս ինչ բարձրկեկ լեռ է,
Ջուրը հիւանդին դեղ է.
Սիրածը սիրածին չեն տար,
Այս ի՛նչ անաւեր տեղ է։

Թռչունի նման ըլլայի,
Թռչէի քովդ գայի.
Բարձիդ վրայ կանգնէի,
Սոխակի պէս խօսէի։

Սէրը ինչ է, սիրուիլն ինչ է,
Կըարիճ քու սէվտան ինչ է.
Ծառը բարձր, պտուղը քաղցր է,
Ձեռք չի հասնիր, ֆայտան ի՞նչ է։

ՀԱՐՍՆԻՔԻ ԵՐԳ

Մենք, ա՛յ աղուոր աղջիկ, եկեր ենք ձերը,
Քեզ հազար նազերով 'ախ առնենք մերը։
Շարէն չապիքով, ազիզ լաթերով,
Խաթով լաթ ենք բերեր, կռնակդ անցուր,
Քեզ առնել ենք եկեր, մայրիկդ լացուր,
Ոաքդ խառէմլի է դուն մեզ խնդացուր։

Աղջիկ, քեզի բերեր եմ Ֆիլաիչի առնար։
Սրմաթել մազերդ հիւսուած է մանար,
Սէվլի պոյիդ վրայ սէվայի ծանար։
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինձի,
Եախուխ՝ պիւմբիւխ՝ անգին քար եղիր ինձի։

Աղջիկ մըն ալ կու առնին ալով ու լալով,
Ծամերն ալ են հիւսեր սրմայի թելով,
Գլուխն ալ են ծածկեր լահօռի չալով։
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինձի,
Եախուխ՝ պիւմբիւխ՝ անգին քար եղիր ինձի։

Հարսնուկ, քու հագածդ ալ է,
Ելիր խալուն վրայ քալէ։
Ֆայէ ու մանարաիկ քալէ,
Ալուկ փէչերդ վեր ծալէ։

Բաղնից դուռը գարկին սաղը,
Ներսըտաքըդ հիւսեն մազըդ,
Տալըտաքըդ քաչեն նազըդ։
Նազ ըրէ, նազդ վերցընեմ,
Ալայ թօղ չաքար կերցընեմ։

ՏԻԿԻՆ Ս. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ



ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ—ՊԷԳ

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ—ՊԷԳ

Հայ եկեղեցականներու պատմութեան մէջ ամէնագըլ-
խաւոր տեղերէն մէկը պիտի բռնէ միշտ Խորէն եպ. Նար
պէյը, որ իր բարձր կրթութեամբ և զարգացմամբ, որպէս
պերճախօս քարոզիչ, որպէս զգայուն բանաստեղծ, նոյն իսկ
չատ մը օտարազգի յայտնի հրեականերու մէջ մեծ համ-
բաւ վայելած է: Թէև կենդանութեան ժամանակ իր քանի
մը փոքրիկ թերութիւններուն համար ամէնախիստ քննա-
դատութեան ենթարկուած է, բայց իր ցաւալի մահէն ետք,
որ արդիւնք էր թիւրք կառավարութեան հալածանքին,
երը կիրքերը, թշնամութիւն և տեղու թիւնները դադ-
րեցան անոր հողակոյտին չուրջը, այն ժամանակ Նար—
պէյի բոլոր արժանիքները գնահատեցան, և այսօր Նար—
պէյի անունը սերտ կերպով կապուած է հայու վերածնու-
թեան գործին համար աշխատող նահատակներու շարքին:

Խորէն Նար—պէյ, որ առաջ Գալֆայեան կը կոչուէր, ծը-
նած է Պոլիս, Սամաթիա թաղը: Շատ փոքր հասակին
մէջ, 1847ին, իր հայրը խրկեց պինքը վենետիկ, Մխիթար-
եաններու քով կրթուելու համար: Խորէնը այն տեղ չատ
չուտով իր ընդունակութիւնները ցոյց տուաւ, որոնցմէ
հրապուրուած՝ Մխիթարեանները յաջողեցան պինքը համոզել
որ վարդապետ ձեռնադրուի:

Բայց նորընծայ Խորէն վարդապետ Գալֆայեան, որ
գործելու մեծ եռանդ և թերևս աւելի բարձր ձգտումներ
ունէր, վանական այդ շրջանակը, թերևս կաթոլիկ
եկեղեցականութիւնը իր առաջդիմութեան նպաստաւոր
չհամարելով, Պոլիս վերադարձաւ և հայ—լուսաւորչական
եկեղեցիին գիրկը մտաւ:

1856ին երբ պօլսեցի ազգաներ իրենց զաւակները կրթելու համար Փարիզի մէջ Հայկազեան վարժարանը հաստատեցին, անոր տնօրէններէն մէկն ալ Խորէն վարդապետը կարգուեցաւ։ Երիտասարդ կրօնաւորը չշատացաւ ատով և սկսաւ հրատարակել «Մասեաց Աղաւնի» հանդէսը իր եղբօր Ամբրոսիոս Գալֆայեանի հետ։

Հայկազեան վարժարանը երկար կեանք չունեցաւ։ Անոր գոցելէն ետք պետարապիոյ առաջնորդ Այվազովսքի գաբրիէլ վարդապետ Նարպէյը հրաւիրեց Թէոդոսիոի «Խալիպեան» վարժարանին համար, որպէս տնօրէն։

Խորէն վարդապետ հոն չարունակեց հրատարակել իր «Մասեաց Աղաւնին»։ Եւ արդէն այս թուականներուն սկսաւ իր գրական բեղմնաւոր շրջանը. գրեց շատ մը բանաստեղծութիւններ, թատերգութիւններ, որոնք գեղեցիկ և սահուն ոճի հետ, ունին աղնիւ գաղափար և դգացում։ Փարիզ եղած ատեն Նար—Պէյը բարեկամութիւններ հաստատած էր շատ մը ֆրանսացի նշանաւոր գրողներու մանաւորապէս Լամարթինի հետ, որու «Դաշնակք Լամարթինի» թարգմանեց մեծ յաջողութեամբ։

1864ին պարտաւորուելով հրաժարիլ Խալիպեան վարժարանի տնօրէնութենէն, Պօլիս վերադարձաւ և Փերայի եկեղեցին մէջ քարոզիչ նշանակուեցաւ, ուր մեծ համբաւ հանեց որպէս հռետոր։ 1867ին Գէորգ կաթողիկոսին հետ էջմիածին գնաց, եպիսկոպոսացաւ, ու Պօլիս վերադառնալով Պէշիկթաշի քարոզիչ նշանակուեցաւ, պաշտօն մը որը գրեթէ մինչև իր մահը վարեց։

Խորէն եպիսկոպոս Գալֆայեան իր գերդաստանի պատմութիւնը քրքրելով փորձեց հաստատել թէ իրենք սերած են կիպրոսի երբեմնի իշխան Լուսինեաններէն և ատոր համար ալ փոխանակ Գալֆայեանի Նար—Պէյ և Լուսինեան կ'ստորագրէր. այս խնդիրը ժամանակին բաւական աղմուկ հանեց։

Նար—Պէյ ազգային գործերու մէջ Պօլսի կրօնական ժողովի ատենապետութեան պաշտօնը վարած է. թէև իր արժանիքները գնահատելով շատ անգամ դիները գաւառներէն առաջնորդ ընտրած են, ինչպէս Իզմիր, Տիգրանակերտ և ալն. բայց միշտ մերժած է, չուզելով Պօլսէն հեռանալ։

1878ին Թուրքիոյ հայերու կողմէն հայկական խնդրին համար պատուիրակ ընտրուեցաւ և փէթրսպուրկ երթալէն ետք Պէռլին գնաց՝ Խրիմեանի հետ վեհաժողովին ներկայանալու համար։

Այդ թուականէն ետք, Նար—Պէյը իր բոլոր կարողութիւնները գործածեց միմիայն քարոզչութեան մէջ. թէև շատ մը ձեռագրեր ունեցած է, բայց փէրայի հրդեհին ատեն բոլորն ալ այրած են։

Բնական է, որ Նայ—Պէյի ցեղային անունը, զարգացումը, անոր հայրենասիրական շատ մը գրուածները արդէն բաւական էին ան կասկածելի ընելու թիւրք կառավարութեան աչքին։ 1890ին, Աչըքեան պատրիարքին օրով հայկական գործերը Պօլսի մէջ երբ սկսան սուր կերպարանք մը առնել, Գուամ—Գաբուի ցույցը տեղի ունեցաւ, Նար—Պէյ ուրիշներու հետ ինքն ալ ամբաստանուեցաւ, որովհետև քանի մը կասկածելի մարդոց հետ յարաբերած էր և եւրօպա գտնուղ իր բարեկամներու և մանաւանդ հակա-թիւրք լրագրերու թղթակցութիւններ գրած էր։ Սուլթանը պատրիարքարանէն պահանջեց կարգազուրկ ընել ան, որպէս զի իբրև հասարակ քաղաքացի մը պատժի։ Բայց պօրաւոր մի-ջամտութիւններ փրկեցին Նար—Պէյը այդ խայտառակութենէն. քահանայագործութենէ զրկուեցաւ և պաշտօնական եղաւ միայն։ Նար—Պէյի ղէպուն որոշին շատ ծանր եկաւ այս ամէնը և անոր մահը փութացուց։ Լքուած ամէն կողմէն, բանտարկեալի մը պէս իր աղքատիկ խուցին մէջ վախճած, զուրկ նիւթական ամէն միջոցներէ, մեռաւ դըժբախտ եպիսկոպոսը 1893ին։

Իր մահուընէն քանի մը օր առաջ Նար—Պէյ գրած է շատ գեղեցիկ ոտանաւոր մը, «Հիւանդին մրմունջը առ Թռչնիկ» որ հայելին է իր հոգեկան ամբողջ էութեանը — այնչափ ղէպուն, այնչափ տխուր և այնչափ յուսահատ.....։

ՀԱՑ ՄԵՌՆԻՆ

Ոչ, եղբարք, ո՛չ, օտարէն չըկա՛յ յոյս·
Մի՛ աչըընիդ մի՛ դարձնէք յայս յայն կոյս·
Օտարն ըզձեզ թէև սիրէ հիւրաբար՝

Օտարն՝ ա՛հ, միշտ է օտա՛ր։

Օտարն ձեր վիշտ կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւնով·
Ով որ հայ չէ՝ հայուն ցաւեր ան չը՛զդար,

Ի՛նչ կը խաբուիք անդադա՛ր։

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերըդ ցուցընէք անդուխին,
Սրգահաւա՞նըս կը յուսաք, օգնութիւն,

Ձեր կը ծաղրե՛ն մերկութիւն։

Գիտեմ ձեր բեռը ծա՛նր է ծա՛նր, ո՛վ հայեր,
Բայց կը կարծէ՞ք դայն վերցընեն օտարներ·
Թողէ՛ք զօտար, ուէ՛ք եղբայր եղբօր թեւ։

Եւ գօրացէ՛ք անդեղեւ։

Բախտը դարձեր է ձեզի դէմ թշնամի,
Մի՛ վհատիք, ցուցուցէք սիրտ հայեցի·
Չէ կարող բախտ յաղթել ազգին այն քաջի

Որ բախտին դէմ մարտնչի։

Ձեր հայրերուն՝ ո՛չ չղթայք, ո՛չ սուսերներ
Ըզկարացին ընկճել ո՛չ միտք, ո՛չ սրտեր·
Ինչու ձեր սիրտ այսօր դողայ տըկար, հէք,

Ի՞նչ, այն քաջաց որդիք չէ՞ք։

Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննըմանի՝
Որ հայրենեաց ճենճերեցան ի սեղան···
Չէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց՝ որոց կեանք

Են մարդկութե՛ան իսկ պարծանք։

Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ՛ազգային,
Որու վըրայ մեծ ազգեր իսկ նախանձին,
Ի՞նչու այսօր մոռցած զԱնցեալ ձեր փառաց,

Երանի՛ տաք օտարաց։

Օ՛ն, ով կըզգայ ի սիրտ եռանդ և ոգի՝
Թողո՛ւ զօտար և իր նախնեաց հետևի·
Մեր կեանքը հո՛ն է ուր կրօնից մեր սեղան,

Այ՛ն է հայոց վառարան։

Ե՛ղբարք, հայուն կեանքը երբեք չի՛ մարիր,
Երկինք լեցուն են այն բոցով կենսածիր·
Որչափ տիրէ մըշտայաղթ խաչ Քրիստոսի·

Հայն ալ անոր հետ կ՛ապրի։

Ի՞նչ կը վախնաք···Գլուխնուդ վըրայ չէ՞ք տեսներ
Քառաթևին դիւրաստարուռ վեհ ըստուեր·
Զայն սուրբ փայտին բուն չաղեցին ձեր հարքը

Իրենց վըսե՛մ արեամբը։

Դուք ալ Աշխին խաբսխեցէք ձեր լոյսը,
Եւ հաւատացէ՛ք պիտի ծագի՛ ձեր լոյսը,
Ան ազգութեանդ եղաւ պարիսպ ամրափակ,

Ան ձեր ըլլայ գէնք դրօշակ...

Ո՛չ, հընար չէ՛ որ կորսընի այն ազգը՝
Որ հաւատարիմ մնայ Աշխին մինչ ոտքը.
Անոր կեանքը պիտի անէ ա՛յնչափ դար,

Որչափ կրօնից կեանք՝ յաշխարհ:

Այն վեհ կրօնից և Ազգութեան անունով,
Հայ եղբա՛րք ձեռք ձեռքի տըէ՛ք հուր սիրով.
Աստղութիւն, քէն՝ մերժըւի՛ր օ՛ն ի բա՛ց,

Անիծեցէ՛ք զազգաւեաց...

Ամէնուդ սիրա՝ ըզգա՛յ նոյն սէրն հայրենեաց,
Ամէնուդ միաք թըռչի յօգուտ համազգեաց.
Ու ձեր յեաին եղբօր արցունք ու ցաւ՝ միշտ

Ըզգացէ՛ք ձեր իբրև վիշտ:

Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ բնաւ,
Օտարին ջուր՝ ոչ, չի՛ մարեր մեր ծարաւ.
Մեզի կենաց տըւողն և մեր պահապան՝

Է Աստղանն հայկական:

Այն աստղանն՝ այն հայութեան կընքաստուն,
Ո՛հ չուրանա՛նք, ե՛ղբարք, յու սուվք զաղփաղփուն.
Եւ թէ մեր չունէ պիտի մարի վերջապէս.

Թո՛ղ մարի յայն ստուրբ կրկէս:

Թո՛ղ ամէնքս ալ ընդունի նոյն գերեզման,
Վասն զի՛ նոյնն էր ամէնուս ալ օրըրան...
Հայ ծնանք մենք, հայ ապրինք, հայ և մեռնինք:

Օ՛ն, հայ մանենք և յերկի՛նք:

ԽՈՐԻՆ ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՑ

Ա Ղ Ե Ր Ս

Արի՛, Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հա՛ս յօգնութիւն ծառայից քոց,
Լեր օգնական ազգիս հայոց:

Միջնորդութեամբ սրբոյ խաչին,
Եւ անարատ ստուրբ ծնողին.
Ցիչեա՛ զհեղումն արեան փրկչին,
Ե՛լ ի խնդիր վոգու հոգին:

Զի գիտացաք մեք հաւաստեաւ,
Որչափ մեզաց մերոց լըցաւ.
Ուստի և ակրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեաւ:

Արդ անկանիմք առաջի քոյ,
Գոչեմք մեզայ տեառնդ մերոյ.
Անցո՛ ի մէնջ զցասումն քոյ,
Վասն անսպառ գթութեան քո:

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ա Ր Ա Մ ե Ր Գ

Մեր քաջ հայոց զօրութեան,
Վեր կացէք ասաց Արամ.
Առաջեաւ բացէք նշան,
Գնանք՝ հայ լեզուն տարածենք:

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Նիւքար գտարուկն ասորին,
Բարբար կոչէ առաջին.
Գլուխն աշտարակ մ'ելեցէ՛ք,
Որ յերկնից սորվի հայերէն:

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ցորդան տո՛ւք, օ՛ն, գօրք յորդան,
Դէպի կողմն արևմտեան.
Պայապիս Քաղեայ տիտան,
Դիք դէմ տապաստ ի դամբան:

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ցորդան տո՛ւք, օ՛ն, զօրք յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան.
Ինքուշախօս ամբոխին,
Տալ զլեզու հայկական:

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ով չըգիտէ հայերէն,
Ոչ ճանաչէ նա զոր էն.
Որ բանիւ հայոց արար,
ԵՒյս մեծ աշխարհ մեզ համար:

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ի ծովէ մինչև ի ծով,
Թո՛ղ խօսին հայ բառերով.
Ներհակողին նիզակով,
Ցուցէք, ո՛հ, ասաց Արամ:

Ո՞հ, Արամ, Արամ, Արամ:

Շ Ղ Թ Ա Ց

Ազատութեան քաջ զինուորը պատանին,
Մութ բանտի մէջ մենակ նստած է հիմա.
Եւ չարժելով անիծում է չղթային,
Որ ճնշում է ձեռն ու ոտը անխնայ.
«Քաջ պատանի, ասաց չղթան, ո՛հ, չարժիր,
Շարժիր, փչրիր ինձ, միայն մի անիծիր.

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է,
կայծակի պէս բռնաւորին կը զարկէ»:

«Գիտեմ, դու ինձ հիմա էլ չես ճանաչում,
Ես իբրև սուր փայլում էի քո ձեռքին.

Ազատութեան պատերազմի դաշտերում,
Հաւատարիմ ծառայելով սուրբ գործին.
Աւա՛ղ, հիմա այս ի՞նչ տեղ ենք մենք, ա՛խ ու՞ր,
Անբա՛խտ տղայ, և ես նոյնպէս անբախտ սուր։

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է ալն.

«Աւա՛ղ, ինձնից, փայլուն սրից կռեցին
Կոպիտ չղթայ և մի գործիք բռնութեան,
Ազատութեան պաշտպանին իմ աջակցին,
Ինքըս ահա չղթայում եմ յաւիտեան.
Այս ժանգը, որ չուրջ պատում է ինձ հիմա,
Իմ ամօթի և բարկութեան գոյնն է նա։

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է ալն.

(Թարգմ.)

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՑԻՆ ՍԻՐԵՐԳ

Տանիքն ելայ, ի՞նչ ընեմ,
Դարվար նայիմ ի՞նչ ընեմ.
Ես փիփուլիկ հարս մի եմ,
Մօրւօք էրիկը ի՞նչ ընեմ։

Թութ, պատաեղ, կարմիր կտաւ,
Լուսընկան մարը մտաւ.
Էլին տղան իմ լինչս է,
Ջըլպըխցաւ ծոցս մտաւ։

Ծառին վրայ նուշ կ'ըլլայ,
Պագ մը տան նէ ի՞նչ կ'ըլլայ.
Պիտի տան նէ այսօր տուր,
Վաղւան ճիայ, ուշ կըլլայ։

Տանիքն ելլալս կ'ուզայ,
Դարվար նայելս կուգայ.
Էլին տղան իմ ի՞նչս է,
Գրկել պառկելս կուգայ։

ՀԱՑ ԵՒ ՀԱՑՈՒԹԻՒՆ

Ո՞վ է հայը. մի՞թէ նա է, որ խօսում է հայ լեզուով,
Եւ կամ որի մականունը յանգում է «եան» մասնիկով.
Որ ուտում է ամենայն օր ճաշին աղցան ու փիլաւ,
Կամ պարծանօք միշտ հագնում է հայի գըդակ ու հալաւ։

Ո՞վ է հայը. մի՞թէ նա է, որ գինում է հայի ժամ,
Ու տարուայ հազարդեւում է խիստ սակաւից չորս անգամ.
Որ կեանքումը պատ չի կերել, ծոմ էլ պահում է նոյնպէս,
Ցօրանջելիս խաչ է հանում բայց բերանն ու երես։

Ո՞վ է հայը. մի՞թէ նա է, որ տեսնելիս տէրտէրին,
«Օրհնեա՛ Տէր» պատրաստ ունի ամէն րոպէ իր բերնին.
Որի համար մեծ ամօթ է, նաև մեղք է մահացու,
Թէ Զատիկի թաթախմանը չուտէ թերխաչ կարմիր ձու։

Ջէ, սիրելիս, ազգութիւնը չէ արտաքին արարմունք,
Հայ ծնելդ անգամ չի տալ քեզ հայութեան իրաւունք.
«Ով» և կամ «եան» մականունդ վերջի վանկի մասնիկը,
կարմիր ճուով կամ թէ անճու կատարում ես Ջատիկը:

Քալա—փաչա կամ թէ բօրշ է ամէն օրւայ կերածդ,
Սէրտուկ, պայլաօ կամ թէ չուխայ է վրայի հագածդ,
Ողջը մին է, ծէսով չես տալ ազգիդ միաս կամ օգուտ,
Տեղը միայ ազգութիւնը, այդ նաև վարձ չէ հոգուդ:

Թէ դու հայ ես, հայութիւնդ պիտ՝ չարգես անպատճառ,
Հայատառը պիտի լինի յուսոյ աստղ քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց քու հայի օգուտները միշտ վեր դասէ ամէնէն:

Աւետաւ, ուսում, չըքեղաւետաւ տարածէ՛ հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացո՛ւր նրա մէջէն կրօնի վէճ.
Քեզ ի՞նչ չահ է, թէ դու կ՚ասես հոգին բղխել է հօրից,
կամ թէ որդին հոգւով սրբով անսերմ ծընունդն է մօրից...:

Թո՛ղ, սիրելի, այդ խնդիրքը, աչքդ դարձո՛ւր դէպ հարաւ
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կարած դրա պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը միացել է անվճիռ,
Թոյլ խելքո՞վդ աշխատում ես քակել անքակ այդ կնճիռ:

Սիրէ՛ ազգդ ոչ լուկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քո անձը,
Նրա օգտին թէ պէտք լինի, զոհէ բոլոր քո դանձը.
Մի՛ խնայիլ կեանքդ անգամ, արիւնդ բե՛ր նրան զոհ,
Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզի զոհ:

Իստակ սէրը չէ պահանջում ամենեւին տրիտուր,
Թէ ուածը ես առնի՛ դրան կ՚ասեն առուտուր.
Բայց վա՛յ նրանց որք անզգայ են իր ազգի վիճակին,
Հազար անէծք նրանց վրայ, երնէ՞կ չան պէս սատակին:

Թէ դու հայ ես՝ գիտե՞ս արդեօք ո՞վէր ազգիդ նախահայր,
Ո՞ր տեղ, ո՞ր կողմ նա ընտրելէր ազգին համար հայ աշխարհ
Քանի՞ տարի անկախ մնաց հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ ան ընկաւ իր առաջնայ փառքերից:

Ո՞ւր ցրւեցաւ քու խեղճ հայը, ունի՞ այժմ օգնական,
կա՞յ մի հնար, միջոց կամ յոյս նրա կրկին նորոգման.
Թէ կայ հնա՛ր՝ դու պատրա՞ստ ես անձդ ազգիդ զոհ անել,
Նիւթ կըտրտանք, սատիկ տանջանք, սով ու ծարաւ միշտ տանել:

Դու պատրա՞ստ ես թողնել կայքդ, ծնողք, եղբարք, սիրական,
Սիրելդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահառիթ հրացան.
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ Թշնամիի սուրի դէմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադէմ:

Այդ ժամանակ քեզ հայ կ՚ասեմ . . . . . .
. . . . . .
Բայց Թէ փորդ տօլմաներից, կամ փըլաւից տըռաքի,
Հաւատացի՛ր՝ ուտելովդ օգուտ բերիլ չես ազգի:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. ԹԱԳԱՒՈՐ ՏԱՃԿԱՑ

Իբրեւ 36 Դաւաճան էֆէնտիներուն

Շնորհակալութի՛ւն, վեհափառ սուլթան,
Որ դու քար ու քանդ արիր Հայաստան.
Օրը հազարավ հայեր մորթեցիր,
Հայոց չէն գեղեր ամայացուցիր:

Փա՛ռք և պարծանք քեզ, վեհափառ Համիտ,
Որ հնազանդելով պաշտած Ղուրանիդ.
Մեր Աւետարան դու կոխկրտեցիր,
Ու զազիր ապրով խաչ նկարեցիր:

Գոհութի՛ւն և փառք, մեծդ փառիչահ,
Որ հայ ջնջելուդ գաղր դու քեզ չահ.
Հէն չէրքէզները ու գող քիւրտերը,
Դարձան սրտակից քու ընկերները:

Մռայլ բանտերէն հազար հայ բերան,
Կ'օրհնեն անունդ, վեհափառ սուլթան.
Որ Տօնացուցուդ տեղ չի մոռցուիր,
Բիւր նահատակաց անուամբ լցուցիր:

Բնաւ չի մոռնալ քեզ, վեհդ սուլթան,
Քեզ երջանկացած աւեր Հայաստան.
Քու մեծ անունն ու սխրագործութիւն,
Յաւերժ կը յիշէ Հայոց պատմութիւն:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՀԵՐԻՒ ԱԼ ՀԱՅԵՐ

Հերիք ալ, հայեր, այսչափ լռութիւն,
Դաւաճաններու մեր այս դերութիւն,
Մեզ ի՞նչ վայել է այսչափ լռութիւն.

Ազգասեաց սրտեր, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, ի՞նչ խնդաք վրկեալ ազգի պէս,
Իչխան և ընչեղ՝ գիտուն մարդու պէս,
Մեզ ի՞նչ վայել է ապրիլ հայու պէս.

Դպրոց սուղներ, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, խորհեցէք ի՞նչ վիճակ ունիք,
Կրօնք, ազգութիւն հայու սիրտ չունիք,
Մեզ ի՞նչ վայելէ ծախսել հայու պէս.

Եղբայր սուղներ, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, ի՞նչ կ'ապրիք ազգայ մարդու պէս,
Ո՞ւր են թագն ու սուրն ամէն ազգի պէս,
Նայեցէ՛ք չորս դին, կա՞յ ազգ ձեզի պէս.

Ամէնուն գերի՛, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, խորհեցէք ի՞նչ վիճակ ունինք,
Ո՛չ կեանք, ո՛չ պատիւ, ոչ ալ մ'հոգ ունինք,
Ամէնուն ձեռքը մենք ենք խաղալիք,

Զապրած ալմեռնինք, հերի՛ք, ալ հերիք:

ՈՂՔ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Հայաստանի աւերակներ է՛ր ամայի մնացիք,
Ձոխ և հարուստ բնակիչներ ինչո՞ւ եղաք մուրացիկ,
Շքեղութիւն քո յիշելով կուլամ... բաւ է մի հանդչիք։

Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, մի հանդչիք։

Ա՛ւ Հայաստան, վա՛յ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ,
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ հեռուն։

Հայաստանի կարիճ եղբարք է՛ր անտարբեր կը նընջէք,
Ելէ՛ք աեսէ՛ք հայու վիճակ, քանի՛ ազգաց գերի են.
Ձեր քաջութեան սէրն յիշելով աչքէս արցունք կը ցայտեն,

Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, կը ցայտեն։

Ա՛ւ Հայաստան, վա՛յ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ.
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ հեռուն։

Հայաստանի այգիք, պարտէզք, վարդենիները թառամեցաք,
Անուշահոտ բուրմունք սիրուն ինչո՞ւ մեզմէ զլացաք.
Եղեմական պաղունք, ծաղկունք քո յիշելով կ'ողբամ ո՛հ,

Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, կ'ողբամ ո՛հ։

Ա՛ւ Հայաստան, վա՛յ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ,
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ հեռուն։

Հայաստանի չքնաղ վայրեր հայ արեամբ են ներկըւեր,
Վրէժ առնուլ կ'աղաղակեն մեր նախահարց չիւխմեր,
Օ՛ն, հայ սերունդք, դիմեմք իզէն որ չկոչէ մեք անտարբեր,

Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ, անտարբեր։

Ա՛ւ Հայաստան, վա՛յ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ.
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն.

Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ հեռուն։

ԽՐԱԽՈՑՍ ՄԻՈՒԹԵԱՆ

Դեռ նոր հայրենիք, դեռ նոր ազգութիւն,
Դարուս չնորհիւ պարտ և իրաւունք.
Սահմանն և կլիւռ թոթովել գիտցանք,
Ո՛վ Հայաստանի պանդուխտ զաւակունքս։

Կրնա՞նք արդ գոհել, կրնանք ամէն բան,
Անձնական կրից մատնել անխնայ.
Եւ օտարին չահն ազգին ընտրող,
Ո՞վ կրնայ խնդրել, ո՞ր այն եղեռն հայ։

Զգոյշ, ո՛վ հայեր, զգոյշ կեանք միշտ,
Քանզի ազգապաշ սլանան նետեր.
Մեր խոցւած սրտերն կրկին խոցելու,
Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ:

Միութիւնն ըլլայ զրահ անվտանգ,
Եւ անհամաձայն թէ գտնւինք մեր մէջ.
Այլոց միջամուտ ներենք ոչ երբեք,
Ազատ ու հաւասար, ամէնքս ալ եղբայր:

Հեռատես, զգոյշ և գործօն անդուլ,
Ազգային կամաց հպատակ անխօս.
Այսպէս կրթւի հայ մանկութիւնը,
Այսպէս պատրաստւի պատանեկութիւնն:

Ու երիտասարդութիւնն ըլլայ աննըկուն,
Անտէր ախոյեան Ազգին իրաւանց.
Ու թող ծերութիւնն հսկէ լրջամիտ,
Հայոց բախտն ու Սրեւ յուսով ողջունել:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԹԷ ՏԱՅԻՆ ԻՆԾԻ

Թէ տային ինձի
Թագ և ազամանդ գաւազան,
Ձեզ զայն ձօնէի՝
Թագուհեաց գըլխո՛յ Հայաստան:

Թէ տային ինձի
Ծիրանի շողշող պատմուճան,
Ձո յուս ձըգէի՝
Ո՛վ իմ մայր, թշւառ Հայաստան:

Թէ տային ինձի
Հաւր, բոց իմ աւուրց պարմանեան,
Ձեզ պարգեւէի՝
Զաւիւն իմ և խանդ, Հայաստան:

Թէ տային ինձի
Դարուց հոյլ ի հոյլ ըղձյան.
Սիրով քեզ տայի՝
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան:

Թէ տային ինձի
Սիրտ և սէր կուսի չուշան,
Ես քեզ ընտրէի՝
Սրտիս միակ սէր, Հայաստան:

Թէ տային ինձի
Պսակ իմ ճակատ մարգարեան,
Զաչքիդ ընտրէի՝
Աստեաւաց մի ընթ, Հայաստան:

Թէ տային ինծի
Գոռ ազատութիւն անսահման,
Ես վերընայէի՝
Ձո վեհ գերութիւն, Հայաստան։

Թէ տային ինծի
Հայրենիք՝ չքեղ եւ լօպան,
Ես քեզ խնդրէի՝
Բոլոր ցաւերով, Հայաստան։

Թէ տային ինծի
Սրախս իմ ընարել օթեւան,
Ձաւեր-բոդ տակի
Ինձ արքայութիւն, Հայաստան։

Թէ տային ինծի
Հրեշտակի քնար բոցեղեան,
Ես քեզ կ'երգէի
Բոլոր իմ հընչով, Հայաստան։

Խ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ—ՊԷՅ

Է Գ Ո Ւ Ց

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շուրթներդ վարդանման,
Երջանկութիւն խոստանուժ են յաւիտեան։

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս.
Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտքս,
Զօրութիւնս հատաւ ինձնիցս, սիրական։

Էգուց, էգուց լըսում եմ քու բերանից,
Յոյսըս հատաւ, հատաւ էսքան խաբուելիցս.
Քունս փախաւ, փախաւ խաղաղ ինձանից,
Դե՞ւ ես գուշ չար, թէ հրեշտակ ե՞ս աննման։

Էլ մի՛ խաբիլ ու մի՛ խաբիլ, անձկալիս,
Էգուցները միշտ նման չեն յետ գալիս.
Վա՛յ թէ էգուց ալի արցունք թափելիս,
Դու ինձ ճանաչես դէպի մըթին գերեզման։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Ա Ր Թ Ա Ն Ե Ա Ն

Մխութեան թերութիւնը,
Հանեցին մեզ լեռները.
Վատ թխւրքին դէմ կռւելու,
Հայրենիքը փրկելու։

Առաւօտ արշալոյսին,
Զորս կողմերնիս պատեցին.
Ամբողջ չորս օր չորս գիշեր,
Զորս հարիւր թշնամիները։

Թուով հինգ ընկեր էինք,
Ֆարայրներու մէջ էինք.
Երբեք չէինք յանձնուեր,
Աւա՛ղ, անթիւ էինք։

Մարթինիա տուր, մայրիկս,
Սուրա տուր, եղբայրիկս.
Թէ որ ազգիս չի ղոհւիմ,
Հապա ինչո՞ւ ծնած եմ։

Խորէն, սուրդ քաչեցիր,
Վրէժ առնել փորձեցիր.
Երբոր գնդակի եկիր,
Հայաստանդ յիշեցիր։

Հայրենիքս է Արմուտան,
Մականունս է Արխանեան.
Խմբապետ եմ հայ խումբի,
Դարձեալ խումբեր պիտ' կազմեմ։

ԽՐԱԽՈՑՍ ԱՌ ՀԱՑԱՍՏԱՆ

Հայ չէ՞ք ալ, մի՛ թուլանաք, առէք ձեր վահան,
Շողշողուն ճչմարիտ սուր, մի դնէք պատեան.

Ձեզի նման քաջ հայեր ղոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին։

Ձկա՞յ ալ ճչմարիտ հայ ձեզ ըլլայ ընկեր,
Երկչոտ և թուլասիրտ հայք թող չըլլան ընկեր.

Ձեզի նման քաջ հայեր ղոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին.

Չէ՞ք ճանչնար այն գառնուկը — անկէ սորվեցէք,
Թափեցէք ձեր արիւնը, սիրէք սիրեցէք.

Ձեզի նման քաջ հայեր ղոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին։

ՅՈՐԴՈՐԻԿ

Ո՛հ, հայ ենք, հայ եղբայրներ, սիրտ սրտի կապենք,
Ձեռք ձեռքի տանք, առաջ երթանք, չուտ երկինք հասնինք։

ՀԱՑԻ ԴԱՆԴԱՏ

Մեզի մոռցաւ հայոց ազգը,
Չի լսեր մեր պաղատանքը.
Տեսնել չ'ուզեր մեր տանջանքը.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ա՛ստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար. Դուն վեր — հատ հեռի ես,
Այժմ ալ խոչոր գործերի ես.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ցոյնը մեզի ասլը կ'ատէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ցրանկի բանը, կ'ատեն, վատ է·
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրան պէտք է լոկ մեր փարան·
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Մեր աեղը քալ կարիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ատակ ալ կուգայ,
Մենակ՝ ճամբայ ցոյց նող չըկայ·
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Հայի դաշտե՛ր, արեա՛ն դաշտեր,
Շատ կուլ տըւիք հայի քալքեր,
Թէ որ ձեզմէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր։

ԹԱՄԱՌ—ԹԱԹԻՊԱ

Մ Ա Ր Շ

Մնասցես բարեա՛ւ, սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց·
Թէ չեմ քալեաց ես ընկեր,
Զըկայ բաժին ինձ փառաց։

Մ'ի լար, հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ոհ մի' լար·
Թ'անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մեք գիրեար։

Եղբայրապաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի·
Ի սուրբ հողոյ հայկազանց,
Բառնամ զլուծ օտարի։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութե՛ան օրեր, երազի նման,
Անցաք գնացիք, այլ չէք գառնալու·
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։

Զեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իր ծանր հաեացքով աչխարհն վրայ·
Ամէն բան ընկաւ մըտածութեան տակ,
Բոպէ չը մնաց ազատ կամ ունայն։

Գիտակցութիւնը յաջորդեց սըրան,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս·
Ապագան տըւեց ինձ իր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս։

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վըշտաձար.
Ինչպէս իմ սիրան էր, իմ ղգայմունքը,
Ուրախացուցիչ չըգտայ մի լար:

Ես այն ժամանակ միայն ղգացի,
Որ այդ յաւերժից ազատուելու չեմ.
Որչափ իմ ապագ կը մնայ սարուկ,
Օտարների ձեռք, անխօս, ախտագէմ:

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս չուտ,
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծումէի ինձ աշխարհի իշխան:

Գերութեան չղթան ինձ դգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը.
Ձեզանից յետոյ ծանրացան անմոնք,
Ո՛հ, անիծումեմ ես այս օրերը:

Լո՛ւռ կաց դու քնար, այլ մի հնչեր ինձ.
Ախորժն, յետ ա՛ռ դարձեալ դու նըրան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջըկան:

Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի անգարդ խօսքերով.
Ես պիտի դոչեմ, պիտի բողոքեմ,
Նաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում այլ ի՞նչ սև քնար,
Սուր է հարկաւոր կըսրինձի ձեռքին.
Արիւն ու կրա՛կ թշնամու վրայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:

Թո՛ղ պատգամախօսը՝ հնացած Դելփի,
Իր եռոտանու վրայ փըրփըրի.
Թո՛ղ վերջին դարու գազափարներով,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի:

Թո՛ղ նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունինք բերանում:

Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,
Խնայի՛ր թըշտառ մեր անտէր ազգին.
Մի՛ տար զոհ գնալ թշնամիների,
Ան այլ չէ՛ լսում Դելփեան հարցուկին:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԵՐԳ

Եկէք մխաբանինք լուր մը լսելու,
Աքանչելի բարբառներդ ո՞ր մնաց.

Աւա՛ղ, աւա՛ղ, ուր մնաց:

Ժամանակաւ սրեր, գէնքեր մաքրեցինք,
Ելէ՛ք, ելէ՛ք դաշտին վրայ գինուեցէք.

Աւա՛ղ, աւա՛ղ, գինուեցէք:

Բանտին ամուր չէնքը հիմէն քանդեցէք,
Ա՛վա Հայաստան, առիւծներդ ո՞ւր մնաց։

Աւա՛ղ, աւա՛ղ, ուր մնաց։

Լոյսը գէպի պատուհանը բարձրացաւ,
Դաշտին մէջի գառնուկները ո՞ւր մնաց։

Աւա՛ղ, աւա՛ղ, ուր մնաց։

Գնա՛, եղբայր, գնա՛ ինձնից հայրենիք,
Իմ ցաւերս չատ են չատ են, ես մենիկ։

Աւա՛ղ, աւա՛ղ, ես մենիկ։

Անդ հայրենիք ունիմ ես չատ գանձ և ինչք,
Գանձ իմ, եղբարք, և մըտերիմք թանկագին։

Աւա՛ղ, աւա՛ղ, թանկագին։

Տաճկաց զօրապետներ չան պէս մրմռան,
Ա՛վա Հայաստան, կարիճներդ ո՞ւր մնաց։

Աւա՛ղ, աւա՛ղ, ո՞ւր մնաց։

Գիշեր ցօրեկ տաչօրում եմ բանտին մէջ,
Ա՛վա Հայաստան, մարդիկներդ ո՞ւր մնաց։

Աւա՛ղ, աւա՛ղ, ո՞ւր մնաց։

Փայլակում էք մարգարիտի հանքին մէջ,
Թող հայ մեռնինք եղբայրներով բանտին մէջ։

Աւա՛ղ, աւա՛ղ, բանտին մէջ։

ԴՈՒՐԳԵՆԻ ԱՆՄԱՀ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Գըլգըլալով ջուր է իջնում
Մչուռ մչուռ սարերէն։
Ծիծեռնները ծի՛ւ—ծի՛ւ կուն
Գարնան գալը երգելէն։

Գարուն չկայ հայի համար,
Ծաղիկ, ծիծեռ մեզ պէտք չեն։
Գերեզմանս հողին հաւսար,
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրէն...

Գնա՛, ծիծեռ... Թո՛ղ ինձ մենակ՝
Վէրքը սրտիս՝ հողի տա՛կ...

Բայց երբ տեսնես Թշնամու դէմ,
Հայ ժողովուրդ սարի պէս
Ջէնքը ձեռին հպարտ կանգնած,
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պէս։ —

Ա՛վա, այն օրը արի՛, ծըւա՛,
Գարնան գալը նո՛ր կանչէ։ —
Հայո՛ց գարնան, որ բի՛ւր արև
Սիրտս խորէն ղօղանջէ...

ՀԱՅՑ—ԳՈՒՍԱՆ

ՀԱՑԴՈՒԿԻ ԵՐԳԵՐ


Հազա՛ր բարով, հպարտ սարե՛ր,
Թև եմ առեր, ձեզ կուգամ.
Ձկրծուներուն ձէննն եմ լսեր —
Սրծիւններուն դէմ կուգամ...

Իմ հայրենի՛ք, կապուտ սարե՛ր,
Թչնամու չարք ձեր բոլո՛ր.
Դա՛չա, անապա՛տ, արնոտ գետե՛ր,
Սրագը խոր ու ոլո՛ր...

Հազար ձէնով, հազար սրտով
Սրծիւններուն հետ կուգամ.
Հոգի՛դ մեռնեմ հազար սրտով,
Իմ հայրենի՛ք, մէրիկ ջա՛ն...

Բարով ձեզի, դար ու դուբա՛ն,
Բանձրիկ սարեր ու քարե՛ր.
Հազա՛ր բարով, հով ու դումա՛ն,
Ծովակ, ծմակ ու ձորե՛ր...

ՀԱՑ—ԳՈՒՍԱՆ



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Հայ գրագէտներու մէջ որպէս բանաստեղծ գէխաւոր տեղ մը կը բռնէ վաղամեռիկ Պետրոս Դուրեան, որ իր սքանչացուցիչ և խորունկ զգացումով լի բանաստեղծութեամբ իրաւամբ «Իւսկիւտարի Սոխակ» անունին արժանացած է։ Շատ քիչ ապրած է ինքը, հազիւ 21 տարեկան, բայց իր բանաստեղծութիւնները իր մահկանացուն եռաք զինքը վերակենդանացուցին։

Պետրոս Դուրեան, ազգատոհմիկ մը որդի, ծնած է 1852 մայիս 20ին, Իւսկիւտար։ 6 տարեկան հասակին մէջ կը խրկի Իւսկիւտարի ճեմարանն ուսանելու, որ թէև մինչև այն ատեն խալիֆայական դրութեամբ ղեկավարած, բայց հետզհետէ բարւոքելով, Դուրեանի հոն եղած ժամանակ իր ամէնափայլուն շրջանին հասած էր։

Պետրոսը շատ կանուխ հասակէն բանաստեղծելու և խօսելու իր կարողութիւնները ցոյց տուաւ։ Իր հարուստ դասընկերները՝ ազատներու զաւակ, ճեմարանի ճաշասրահին մէջ իրենց առջեւ կերակուրներ վայելած ատեն, Պետրոս՝ որ պարտաւորուած էր իր ազգատութեան պատճառով ճաշէն ղուրկ մնալ, յանպատրաստից շատ անգամ ատենաստեղծութիւններ կ'ընէր։ Ուրբաթ օրերն ալ ճեմարանին հոսող աղաներու ներկայութեանը կը խօսէր, որոնք դաբարձու սակայն անոր ոգեւորուած խօսքերը լսած ժամանակ, երբեք չէին խորհեր թէ մարմնաւոր սնունդի ալ պէտք ունէր տակաղանդաւոր պատանին։

Պատանի Դուրեան, երգերու և թատրոնի սիրահար մը, դեռ իր դպրոցական շրջանին մէջ յարաբերութեան կը մտնէ դերասանական խմբերու և մասնաւորապէս Ց. Վարդովեանի հետ, և անոնց համար ֆրանսերէնէ թատերական թարգմանութիւններ կ'ընէ։ Քիչ եռաք կ'սկսի ինքնուրոյն

ողբերգութիւններ ալ գրել, որոնց մէկ մասը հազիւ իր մահուընէն ետք հրատարակուեցան: Շատ անգամ ինքն ալ կը մասնակցէր ներկայացումներու և առիթ համար չատ ալ ծեծ կերած է իր հօրմէն, որ հակառակ էր այդ տեսակ նորութիւններու:

1867ին Դուբեան իր ճեմարանական ընթացքը կ'աւարտէ և կը փորձէ առևտրական ասպարէզին մէջ գործել: Բայց չուտով իր անընդունակութիւնը ցոյց կուտայ այդ գործին մէջ — սեղանաւորի մը քով գրագիր եղած ժամանակ, աւելի շատ բանաստեղծութիւններ գրելու կ'զբաղէր, քան թէ իր պաշտի հաշիւներով, որուն համար կը պարտաւորուի թողուլ գործը: Իր հայրը և մայրը շատ կ'ըսպիսին զինքը ուրիշ հայ էֆէնտի մը քով պաշտօն ստանձնել, բայց ինքը արտաւելով, իր անընդունակութիւնը մատնանիշ ընելով կ'ըսէ. «Ես ինչ կարող եմ ընել այդ էֆէնտիին քով. անոր գործին մէջ բանաստեղծութիւն չ'անցնիր»: Ու կը բացատրէ անոնց թէ ինքը գրելէ զատ ոչինչ չէ կարող ընել, թէև կը փորձէ ուսուցիչ ընլալ, բայց ատ ալ չի յաջողիր և կը թողու չուտով մը:

Նիւթական միջոցներու պակասութիւնը, մահոգութիւնը, և մտաւորական չարաչար աշխատութիւնը պատճառ եղած էին ահռելի հիւանդութեան, թոքախտին, բռնելու Դուբեանի թոքերուն մէջ: Բանի հիւանդութիւնը կը զարգանայ, այնչափ աւելի գրելու եռանդը կը բորբոքէր թշուառ բանաստեղծին հոգիին մէջ և այնչափ աւելի տխուր և անհուն զգացումով ոտանաւորներ կը գրէր: կըզգայ որ չատ չպիտի ապրի, և զէթ նիւթապէս չատ չնեղուելու համար դիմումներ կ'ընէ քանի մը բարձր անձնաւորութիւններու իր բանաստեղծութիւնները հրատարակելու համար, բայց չի յաջողիր. պատանի բանաստեղծին համար ոչ ոք կ'ուզէ պոհաբերութիւն ընել: Թատրօնական խումբին համար թատերգութիւններ կը գրէ. անոնց ներկայացումներուն ժպղովուրդը կը ծափահարէ ան, թատրոնական խումբը մեծ գումարներ կը շահի, բայց անդին Պետրոս որ հսկայաքայլ դէպի գերեզման կը մօտենար, ինքզինքը խնամելու ամէնատարրական միջոցներէ անգամ

զուրկ կը մնայ և այդ վայրկեաններէ մէկուն մէջն է որ կը գրէ:

«Ա՜յս ճակատագիրն ի՞նչ սև է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծած...

Տօքթէօռ Բեռթիսեան չատ ուշ կը ճանչնայ Դուբեան և կը ջանայ ուրիշ երկու բժիշկներու հետ անոր կեանքը երկարցնել, բայց չի յաջողիր, և Պետրոս Դուբեան կը մեռնի 1872 յունուար 20 ին: Բարեկամներ և ժողովուրդը չատ հանդիսաւոր կերպով կը թաղեն ան. գերեզմանին վրայ ալ համեստ չիրիմ մը դրին. բայց ոչ ոք յիշեց ան, երբ տխուր՝ իր ազգաստիկ խուցին մէջ փակուած, կը գրէր. «Ալ մար մտնելու մօտ եղող ճառագայթ մ'եմ, մարում մ'եմ, քայքայում մ'եմ..... Մարդուն նշանաբանը երգն է. ես ալ կը սիրեմ երիտասարդ ըլլալ երգել, և ծեր ըլլալ աղօթել....:»

Ի Մ Ց Ա Ւ Ր

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Ցամաք գտնե՛լ աղբերքն յամայր,
Ցամքի՛լ ծաղիկ հասակի մէջ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Ջերմ համբոյրով մը դեռ չայրած
Սա ցուրտ ճակատը դալկահար՝
Հանդչեցնե՛լ հողէ բարձին,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ փունջ մը
Ժպտէ՝ գեղէ՝ հուրէ չաղեալ՝
Գրկե՛լ սա ցուրտ հողակոյտը,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ լինձ համար։

Քաղցր երազող մ՛յուի մրափ մը
Զանդորրած գլուխս մրրկահար՝
Ննջել հողէ վերմակին տակ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ լինձ համար։

Հագնի՛լ հիւղին մուր — անունը,
Ծըծե՛լ նորա մըրուր — օդն յար,
Մինչ ցաւի՛լը վիանգամայն,
Ո՛հ, չէ այնչափ ցաւ լինձ համար։

Հէգ մարդկութեան մէկ ոսոխը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշուառ,
Զոգնած անոր մեռնի՛լ աննչան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛ւ լինձ համար։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԱԽԵՏԻՔ ՄԱԼՕՑԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն արծիւն էր թռա՛ւ, գնա՛ց
Մեր վրայով, մեր միջով.
Ա՛խ, էն մեր սիրտ, մեր աղիքն էր՝
Գնաց սարով, սար—դարով։

Էնոր դարդը, ա՛խ, մեր դարդն էր՝
— Ու մեր սրտից էն գնաց.
Էնոր դարդը խեղճի դարդն էր,
— Խեղճի սրտից էն գնաց։

Ու գնացի՛ր, ո՞ւր գնացիր,
Լրենակ, մենակ գնացիր...

Հեռո՛ւ տեղեր, արնոտ տեղե՛ր,
Ոխը սրտիդ, հոգի ջա՛ն.
Ընկար մենակ ու անընկեր
Դուման դաշտեր, ևւ օ ջա՛ն։

Ընկերներդ, ա՛խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գնացին,
Քու սուրբ սրտի ոխը մոռցան,
Գերեզմանդ կորուցին...։

ՀԱՑ—ԳՈՒՄԱՆ

Ս Ի Ր Ե Ր Գ

Վարդի ջրով, եար, մազերդ,
Շաղէ նազերով նազերով.
Ճղէ եօթանասուն պէօլիւկ,
Հիւսէ նազերով նազերով։

Եարս քընէն ե՞րբ է զարթեր,
Ծով ծով աչերդ մի թարթեր.

Արի՛ պարտէզ կարմիր վարդեր,
Ջաղէ նազերով նազերով։

Ինձքս առաւ երեսիդ գոյնը,
Հատցուցիր աչերուս քունը։
Եար, սիրովդ սրախս տուինը
Տաղէ նազերով նազերով։

Թիւրապ տատին ափրտէրն է ծով,
Ջու սչէտատ եղաւ ինծի հով։
Ման կուգամ կ՚ընկնիմ քովէ քով,
Վառէ նազերով նազերով,

ՀԱՅՐԻԿԻՆ

Այն սըգալի սև սև նոճեաց եաւէն
Արշալոյսին չողք մեզի «Լոյս» կ՚աւետեն,
Ծուսեց խաւարն, փողփողէ լոյս արեւուն
Հայոց կարմիր մարգաց սառուստ սարերուն։
Փըլատակաց մըթին խորքէն կուգայ ձայն
Հայե՛ր, հայե՛ր, դեռ Հայաստան չէ՛ կործան...

Ձայն սըւողը չէ՛ ըսուեր,
Հուր նետընէղք չե՛ն աստղեր,
Եղբայրութեան է հուր ձայն,
Հայը սիրող հա՛յն է այն։

Նա գիշերւան հետ ազգ խոկաց ու լացաւ,
Եւ արեւուն սըլաքաց հետ կրակ դարձաւ,
Հողմոց թեւով մինչ սըլացաւ հայկարան,
Տիգրիսի հետ թրջեց աւերք ախթական։

Հայաստանի՝ եղբայրութեան սիրահար,
«Հայ» գոչելով չուրթերն եղան դալկահար։

Աւարայիի նա վարդին
Սոխակն եղաւ տրամագին,
«Վարդա՛ն» գոչեց նա, անդէն
Վատա՛կն ելաւ դամբանէն։

Նա իրաւո՛ւնք՝ ազատութի՛ւն գոչեց յար,
Փոչոտ ու խոնջ ոտքերն նետեց, ուր հայ կար։
Ուր որ հայ կար, ջերմ համբուրեց նա այն հողն,
Ուր որ հայն չնչեց՝ հառաչ և հուր ղրկեց հոն,
Բոցաթըռիչ հայէ առ հայ նա թըռաւ,
Հարուած՝ ցաւ՝ դաւ սէրն խեղդելու չեղան բաւ։

Այս հայկաղնը չունէր սուր,
Այլ կուրծն ունէր հայ՝ խաչ՝ հուր։
Կը կանդնէր սև ու գրգռեակ,
Նա գո՛ւթ ունէր, ո՛չ զըսակ։

Ազա՛տ սիրեց, ազա՛տ գոչեց, չըթաւեց,
Հայն զայն ատեց, հայ մը ձեռքը չը թօթուեց։
Բանտ՝ կախաղան՝ աքսոր՝ Սիպիր և սուսեր
Զը կրցին ձայնն մարել՝ խեղդել իր յոյսեր։
Մինչ «Հա՛յ» կանչեց, բարձն էր գլխուն Մասեաց սար
Նա սիրան ըրաւ հայրենայուշ գոռ քընար։

Արդ հայրենեաց մեր չնչիկ՝
Հով մը կուգայ անուշիկ՝
Վառ ճակատուց այցելու,
Հայուն աչերն սրբելու։

Բա՛ց են թեւեր, բա՛ց են սրտեր, բա՛ց ճակատ,
Եկո՝ օգնել սըկար հայուն ապաքսատ,

Չ'ուր հայրենեաց, եղբայրութեան դու հագա՛գ,
Ջընարահար հայու մը իղձ քեզ հրեշտակ·
Վէս վոսիորին ալիք ըղքեզ բարևեն,
Ցրէ՛, սև ձեռք, սև ամպ, հայոց արևէն։

Արտօսր ու քիրտ թող վալվլին՝
Ջերթ աստղեր հայ երկնքին,
Եւ սրվեգուր հայուն դու
Սիրե՛լ, օգնե՛լ իրարու։

Արտասուաթոր՝ քե՛զ կը նային հայ աչեր,
Սև հղթաներ քեզ ցոյց կուտան դուռ քաջեր,
Մըշոյ կարիճ՝ աղջիկք ի քեզ ապաստան
Հայն ու դամբանն՝ տաճարն՝ հիւղակն՝ Հայաստան·
Թո՛ղ վիլաակաց մոխրէն յառնեն յիշատակք,
Մութ մենաստանք վերափայլե՛ն նախնի փառք···

Լո՛յս, լո՛յս ազգան ամէն աեղ,
Գիտութի՛ւն, լո՛յսն հայ աստեղ,
Լո՛յս հիւղակին, լո՛յս վըհին,
Լո՛յս հայ վտառաց չէջ ջահին։

Ահա սրանայ մեզ ապագայ բոցագէս,
Մեր հայրենի աւերակաց տալ լոյս վէս·
Հարկ չեն մեզի նիզակ և սուր ու վառօդ·
Իրաւունքի՝ սիրոյ՝ լուսոյ ենք կարօտ·
Եղբայրութե՛ան հայն կը յենու, ո՛չ թագի,
Բռնէ ձեռքէն որ չունէ առնէ և հոգի·

Եւ ալ մոռնայ հայկազն հէք
Հին հարուածներն ու խոր վէրք·
Եւ սիրաք ի սրտի որոտան
— կեա՛ց միշտ ՀԱՅՐԻԿ ԽԸՐԻՄԵԱՆ։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Ինձ տեղ տուէք, Սիփան սարե՛ր,
Բռնաւորի լուծն եմ թողեր·
Ազատութի՛ւնս՝ արնով գնած,
Պահէք ձեր ծոցն, ազատ սարե՛ր։

Մասիս ազա՛տ, Մասիս բա՛րձր ես,
Աչխարհիս թանկ, ազատութի՛ւն·
Կեանքի սէրն ես, կեանքի տէրն ես,
Արծըւի պէս բա՛րձր ես թռնում։

Ազատ օրում, ազատ հովում,
Արծըւի պէս ազատ կ'ըլնիմ·
Բայց թևերս թափ—ծափ տալով,
Ախպրատնցս քով կը թռնիմ։

Հա՛յ ախպրատնք, ձեր ժանդ չղթան,
Իմ երկաթէ սուր կտուցով
Ես կը կըտցեմ, կը քըծըծեմ,
Մէկաեղ կ'երգենք ազատ կրծքով· —

— «Ազատութի՛ւն, ազատութի՛ւն,
Կեանքի ա՛րև ազատութիւն·
Մասիս ազա՛տ, արծըւից ազա՛տ,
Աչխարհի տէ՛ր ազատութիւն։

«Արծըւի պէս բարձր ես թռնում,
Մասսից բարձր ազատութիւն.
Դո՛ւ կեանքից վե՛ր, դու լո՛յս—արև,
Ազատութի՛ւն, ազատութի՛ւն» . . .

ՀԱՑ—ԳՈՒՄԱՆ

ՕՐՕՐՕՑԻ ԵՐԳ

Լուսնկան կամար կամար,
Ես կուլամ քեզի համար.
Գառս, եկու կ'ըլլի քնացիր,
Իմ անուշ խաթէրս համար.

Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Օր ըսեմ, օրիկդ չատնայ,
Օրդ ու արևդ չատնայ.
Օրէդ արևէդ տաքնամ,
Քեզի աղէկ եար մը գտնամ:

Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Օրօր ըսեմ քնանաս,
Հաղար փառքի տիրանաս.
Բայց երբ քունդ չգայ,
Ծախու առնեմ քնանաս:

Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Պախճան կապեմ կախ օրան,
Ծառէ ծառ չուքեր վրան.
Շուք ըրէք որ տղաս քնանայ,
Ձագուկ օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Բ Ո Ղ Ո Ք

Ծխում է խունկը աւեր տաճարում
Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,
Տառապեալ հօտը հովւին է կանչում
Արիւնաշաղախ, մերկ, լալահառաչ:

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ
Գերեզմանատան ներքին խանգարած,
Հողակոյտերին են արցունքով ծածկել
Եւ դարձեալ օրհնում քո կամքը, Աստուած:

Բայց ո՞ւր ես Աստուած, ինչո՞ւ չես լսում
Հալածեալ հօտիդ աղերսը արդար,
Որ քո սուրբ անուան համար այս կեանքում
Արիւն արցունք է թափել դարէդար:

Նա, որ ամէն բան պոհել քեզ համար
Վանքեր, տաճարներ կառուցել հքեղ,
Որ իր թանկ որդոց արիւնով արդար
Ներկել քո անուան կուռ դաշտն ահեղ:

Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին
երբ հալածւում է անսիրտ, չարաչար,
կրկին քո դուռն է հայցում լալագին,
Արհամարհելով մարդիկ և աչխարհ։

Նայի՛ր այդ դողդոջ դալուկ շրթներին,
Որոնք քեզ հետ են խօսում այս կեանքից,
Թեզ, որ խոստացար քո հաւատարիմ
Ծառային փրկել չարից, փորձանքից։

Մի՞թէ դժուխեան անգամ մի նշոյլ
Զլանում է քո սիրտը դժառատ.
Եւ մի՞թէ բաւ չէ, որ մնաց նա խուլ
Մարդկային արիւն արցունքի առաջ։

Հատան սալմոսի բառեր ու բարբառ,
Էլ խօսքեր չունին, որով աղօթեն
Պղտոր արտասուաց ակունքը խոպառ
Ցամքեցան և արդ արիւն ծորում են։

Տես, էլ անբարբառ քո սարուկ խեղճ հօտ
Տաճարիդ անգամ փոշին է լիզում,
Փրկուխեան յուսով վէրքերն արիւնոտ
Քո սեղաններուդ քարերին քսում...

Բայց գիտցի՛ր, Աստուած, որ քո ստեղծած
Ամէնատանջուխ ոճրագործն անգամ
Գիտէ յետ առնել սուրը չներկած
Արտասուող ղոհերի արիւնով անպարտ...

Բայց որոնց քայլը դու անիծել ես
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում

Եւ որոնց համար տանջանքով պէս պէս
Դժոխք յարդարել անտի աչխարհում...

Իսկ թէ քո կուրծքը ծարաւի է դեռ
Լծիդ տակ հեծող սարկի արեան,
Ահա պատրաստ եմ, արձակի՛ր վճիռ
Եւ դատապարտիր ինձ անմահութեան։

Թալիր ինձ ողջ ողջ գերեզմանի մէջ
Եւ շրջապատիր անմահ որդերով...
Բորբոքիր խարոյկ դեհենում անչէջ,
Ուր նետւիմ անվախ, այրւիմ դարերով։

Եւ կամ երկնքի բարձրում անկործան
Ինչ անկիր ահեղ փչերից հիւսած,
Ուր ես բևեռած անվերջ, անվախճան
Քաւեմ մեղքերը հօտիդ... չդործած։

Կամ այլ տանջանքներ, որ աստուածային
Միտքը կարող է երևակայել...
Լոկ թէ դրանով հալածեալ հօտին
Մի անկապտելի ապատ կեանք գնեմ։

ՎՏԱՐԱՆԴԻ

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐ

Երբ ես մեծացայ տղամարդ դարձայ,
Ու սիրտս ղբնգաց սիրով վառ—վառման,
Ուզեցայ սիրել աղջիկ սևաչեայ,
Բայց դու գիրկս ընկար, անգի՛ն հրացան։

Ու բոց կարօտով գրկեցի ես քեզ,
Սրմեցի կրծքիս, անգին հրացա՛ն.
Իմ սրտի տէրը, — հարենացուս դարձար,
Աննենգ ընկերս, իմ սէր հրացան...

Երբ թշնամու դէմ կռիւ եմ վազում,
Դո՛ւ՝ կրծքիս սրմած՝ անբաժան հետս ես.
Դո՛ւ ես միշտ սրտիս մրրիկը յայտնում,
Քեզնով եմ վինչում, որտտում վրէժ...

Եւ երբ դաշտերում գլուխս դնեմ,
Կըռւի դաշտերում, կ՛ուզեմ որ փորեն
Քեզնով ինձ մի փոս կըռւի ընկերներ,
Քեզ հետս թաղեն, իմ հա՛րս, իմ ընկե՛ր...

* * *

Սալնոյ ձորերում, կռւի ձորերում
Հայդուկն է ընկեր խոր վէրքը սրտին, —
Վէրքը վարդի պէս բացւած կարմրուն,
Ու ձեռն է քցեր կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծղրիան է ծղրում,
Հայդուկն է ընկեր մահւան խոր քնով,
Հայդուկը հոգում երազ է տեսնում, —
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...

Տեսնում է... արտում հովիւ է չնկչնկում,
Փայլուն գերանդին ղնգում է անո՛ւշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք՝
Հայդուկի վրայ երգելով անո՛ւշ...

Սալնոյ ձորերով ամպեր են անցնում.
Հայդուկի վրայ արծիւն է գալիս.
Ա՛խ, սև աչերը արծիւն է հանում,
Հայդուկի վրայ ամպերն են լալիս...

ՀԱՑ—ԳՈՒՄԱՆ

ՎԻՇՏՔ ՀԱՑՈՒՆ

Փոխանակ քաղցր օրօրներու, հայրենիք,
Որբանիս քով մայրիկս ըզքեզ ողբաց,
Համբուրին հետ չիթ մ'ըզգացի արտասուաց
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:
Ահերակաց ծաղկանցըդ սոսկ այցելու
Զեփիւռն չեկաւ նժդեհ ճակատս չոյելու,
Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,
Մամռոտ աւերք և դամբարան զօրավի՛ք:

Արարատեան հսկայից
Ուր ծոր ճակտով վիրալից
Հեծէ ոգին հայկական...
Բայց ի զո՞ւր, ողբ՝ վայ՝ կական
Եւ արտասուք ու հառաչ
Քեզ սփոփել չեն կարող,
Այլ վեհ ճակատ քրանաչող
Խ'արիւնաբուխ կող ու լանջ:

Մոխիր հագած՝ արիւն ծըծած սև հողեր,
Ուր կը սիրեն սոսկում՝ սխուր յիշատակք,

Ալ թռեր են ծոցէդ յուսոյ քաղցր հրեշտակք
Եւ արիւնոտ դաշինի մ՚անգամ չեն թողեր···։
Սև չղթաներ եղան ինծի խանձարուր,
Մըթնշաղեան մէջ սրտիս վերայ հսկեց սուր,
Միթէ հա՞յ եմ՝ մինչդեռ չես իմս, Հայաստա՛ն,
Եւ հոյակապ՝ վէս կոթողներդ պատանդան·

Օտարաց գահդ՝ յիշատակ,
Ի գլուխ կրես դու պըսակ
Արդ փըշահիւս՝ սև նոճի···
Ալ չըկա՞յ վառ թագդ առլի՝
Որուն ականց տեղ անգին՝
Դառնաթախիծ մըտածմանց
Ցրտաունքներ սառ՝ քար կտրած՝
Կենճռոտ ճակատդ պճնեցին։

Երբոր տեսաւ արիւնլըւայ վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն դողով թռչեցաւ,
Սուգին փափկիկ թևքն արցունքով թրջեցաւ՝
Սկրազեղ լանջք կուսից տեսաւ երբ ի խոց···
Լըռեցին քնար՝ համբոյր՝ գեղգեղ և մրմունջ,
Հրաժե՛շտ տիրեց··· և սիրակաթ շուրթեր մունջ
Համբուրեցին սև հողեր՝ ժայռ և ալիք,
Թոյլ թոյլ՝ բիւր բիւր ոգիք թըռան արտամղիք։

Մատեաց մուսայք դողահար՝
Թողին պսակ և քնար·
Դաշտեր՝ ձորեր և սարեր՝
Ալիք՝ ժայռեռ և սարեր՝
Հէ՛պ հայրենիք Հայաստա՛ն,
Ըղձե՛ղ ըղձե՛ղ ողբացին՝
Որ ուրացողք քեզ բացին
Բիւր բիւր սև սև գերեզման։

Հայն է որ թագըդ գըլորեց փայլարձակ,
Եւ ալևոր ճակտիդ բարդեց սև ամպեր,
Ցեղոյ վայեց՝ երբ գերեզման կըշտապէր,
Այլ չնչասպառ էր՝ չունէր ձեռքը կայծակ
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատէր,
Եւ հայրենիքն չղթաներէ ազատէր·
Նոճեաց խորքը մահուան չունչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած հայն իր երկրէն խուսափեց։

Թողուց աւեր և արիւն,
Թալեց հոն փառք և արիւն·
Արդ կը տեսնէ բօթաբեր
Ներկայն ճիգ մը չի թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անգթայ դարձած դարէ դար,
Զը յիշեր քեզ, չի փութար
Քեզ անձկանօք գրկելու։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՄՇԵՑԻ ՄՕՐ ԱՂԱՋԱՆՔԸ

Թիփի՛, բօ՛րան մութ գիշերին
Կը պատսի ֆէդային,
Պատռօն տաշին խաչ փակ թալած
Ձեռքին թուանք ու սուին։

Ա՛խ, ձեզ մատաղ, չան ֆէդայիք,
Ձեր մէր ձեզի թող մեռնի,

Մշու սուլթան սուրը կարապետ
Ձեղի քօմակ Թող եղնի։

Դուք վախցուցիք քուրդ անօրէն,
Ֆշիք մեր սար ու ձորից,
Ֆաֆըր քրդի աչք վախեցաւ
Ձա՛ն ֆէդայու դուլուլից։

Ա՛խ, ֆէդայիք, ձեր սատաղէն
Ձեր խէտ տարէք ղիմ տղէն
Ձեր խէտ մռնի, ձեր խէտ ապրի
Աղգի մատաղ ղիմ տղէն։

Թող դէն Թողնի խարոր ու մաճ
Իմ մէկ ու ճար ապիղ լաճ,
Ֆիչ Թուանքի խեթ Թող խաղայ
Էլ Թո՛ղ չըտայ քրդին խարճ...

ՉԱՐԽԻ—ՖԱԼԱՖ

Ե Ր Գ.

Վեհ ապատուԹեան սէրը չէ մենակ,
Որ ինձ մղում է կռւի վառ հանդէս, —
Հրեղէն ոխն է, վրէժն՝ անյատակ,
Որ սիրտս է այրում ժահր—Թոյների՞պէս...

Ա՛խ, Թէ լինէի կայծակ հրաբուխ
Մռայլ Տաւրոսի ճակատից վիժած,

Պիտի փչրէի, չանԹէի պիտի
Թշնամու կուրծքը չա՛ր, արիւնախանձ...

Բայց հոգուս խորքում օձեր են զեռում, —
Վրէժի լիժե՛ր — սև՛, կծի՛կ—կծի՛կ.
— Ու ռո՛ւմբ է սիրտս, և պիտի պայԹի,
Թշնամու գլխուն նա՛ պիտի պայԹի...

* * *

Է՛յ, ջա՛ն—հայրենիք, ի՞նչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մէջ.
Ջրերդ անո՛ւշ, հովերդ անո՛ւր,
Մենակ բալէքդ արուն—ծովի մէջ։

Քու հողին մեռնիմ, անգի՛ն հայրենիք,
Ա՛խ, քիչ է, Թէ որ մի կեանքով մեռնիմ.
Երնէ՛կ ունենամ հազար ու մի կեանք,
Հազարն էլ սրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարպին՞ մեռնիմ,
Բալէքդ մատա՛ղ, մատա՛ղ քու սիրուն.
Մենակ մի կեանքը Թո՛ղ լինձի պահեմ, —
Էն էլ քու վառքի գովքը երգելուն։

— Որ արտուտի պէս վե՛ր ու վե՛ր ճախրեմ
Նոր օրւայ ծէգիդ, ալի՛ղ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու պի՛լ գովեմ
Կանանչ արևդ, ազա՛տ հայրենիք...

ՀԱՑ—ԳՈՒՍԱՆ

Մ Ո Ւ Շ

Թո՛ղ պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ երգ չհնչէ Սասնոյ լեռներում.
Թո՛ղ ժպիտ չըգայ հայերուս դէմքին,
Թո՛ղ թախիծ ափրէ հայերուս սրտին:

Հայի ձեռքերը արիւնով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատած.
Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ չուշան,
Հայոց եդեմի դաշտում աննման:

Քանի՛ հայ աղջիկ չէ զարդարելու,
Ծաղկով իր կուրծք չքեղ պճնելու.
Թո՛ղ երգ չհնչէ Մշոյ դաշտերում,
Թող պլպուլ չերգէ Սասնոյ լեռներում:

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԵՐԵԿՈՑԻՆ

Տարեմուտի երեկոյին,
Մայրս թխեց կարկանդակ.
Մէջը դրաւ հոնի կորիչ,
Իբրև բախտի նշանակ:

Կորիզն, ասա՛ց, ո՛ւմ որ ընկնի,
Դովլաթաւոր կը դառնայ.
Ո՛ւր որ գնայ, ի՛նչ գործ բռնի,
Փառք ու պատիւ կ'ստանայ:

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ինկաւ ինձ բաժին,
Եղբայրներս սրանեղելով,
Նախանձեցան իմ բախտին:

«Կոյր է բախտը» ուստ չէ՛ ասած,
Մեծ եղբայրըս փնթփնթաց.
«Մի թէ՞ դա է ամէնիս մէջ,
Աչխատաւոր, բանիմաց»...

Մէկէկն էլ հաւանեցաւ,
Մեծ եղբօրըս ասածին.
«Իրա՛ւ, իրա՛ւ, չէ՛ր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

Մայրըս ասաց, «Խելո՛ք կացէք,
Ահա՛ կը գայ նոր տարին.
Նա որ տեսնէ ձեզ կռւեելիս,
Պարգեւ չի տալ ոչ մէկին:»

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

Թ Ր Ջ Ո Ւ Կ Հ Ի Ն

Երեկոյ է. բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դադաղի պէս յամրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած արուխէ հոն,
Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ո՛վ Աստուած.

Եթէ նայի,
Կ'ըսես — հի՛մա կը մարի։»

Մեղրամամէ անդրխանդի մ'է հանգոյն,
Ի՛նչ դալկահար... կարծես հաչագը վառէ
Պատան մ'է նուրբ ներա վարդի՝կը դժգոյն,
Աստուած ըզնէ զոյգ մ'աչերովը կը վառէ.

Եթէ ժպտի,
Կ'ըսես — ո՛հ, հի՛մա կ'անցնի։»

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կ'նըւադի,
Սիրտը խուճկի պէս կը մըխա՛յ սիրավառ,
Նէ չողերու՝ բոյրերու է թագուհի,
Ոտնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ.

Եթէ չարժի,
Կ'ըսես — հի՛մա կը թռչի։»

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նըման,
Կ'ուզէ սիրե՛լ... համբոյրի մ'հետ նուագիլ,
Մաչիլ, խամրիլ, խանջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.

Եթէ չիկնի,
Կ'ըսես — հիմա կը բռընկի։»

Սրտի մեղո՛ւ, ինչպէս կոչեց Լամարթին՝
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ որ հորիզոն չունի դեռ.

Եթէ խօսի,
Կ'ըսես — հի՛մա կը հասնի։»

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չի հատնիր
Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ,
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէս...

Թէ իսկ մեռնի,
Կ'ըսես — հի՛մա կը ծնի։»

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՀԱՑԴՈՒԿԻ ԵՐԳ

Ճամբէս արուն հետք թողեր, կ'երթայ, —
Արուեստ ճամբէս մեր թշնամու դէմ.
Խէթ—օձը առջեւս ընկեր ու կ'երթայ,
Ու ագռաւները հետս ճամբորդ են.

Ձիս ախուր—տրտում կ'երթայ անգուման,
Ա՛ւ, նա լաւ գիտէ, որ յետ չեմ դառնայ.
Դարդս թաղելու, ցրելու կ'երթամ
Դարդս—վրէժս, ու էլ յետ չեմ գայ...

Է՛հ, ինաք բարև՛, մեր դա՛շտ ու սարե՛ր,
Ուր քօլ ու քարդ մեր արնով ներկւաս.
Ինձ էլ չես տեսնի, իմ խեղճ, ազիզ մէ՛ր,
Ու գերեզմանս էլ չես գտնի բնաւ:

Կարմիր օրերի անդին ընկերնե՛ր,
Իմ տեղս պահէ՛ք, երբ դաք իրար քով.
Ա՛խ, եարիս ասէք, որ ես է՛լ չկամ,
Որ լա՛յ, վրէս լա՛յ անուշ աչքերով...

ՀԱՑ—ԳՕԻՄԱՆ

ԿՏՐԻՃ ԱԽՊԷՐ

Կարիճ ախպէր, պանդուխտ ախպէր,
Բարև քեզի, ինչ կ'ընես.
Քո աշխարքէն նոր եմ եկեր,
Լուրեր ունիմ կը լսե՞ս:

Ի՞նչ ես նստեր, կարիճ ախպէր,
Ա՛յդ օտարին երկիրը.
Քո աշխարհը սև է հապէր,
Արիւն կարեր գետերը:

Քո սիրելիք հոն թողուցիր,
Անգութ չունի բերնի մէջ.
Կ'երթամ ասիր օտար երկիր,
Ձեզ չեմ մոռնար մինչև վերջ:

Կ'երթամ ասիր լացող կնկանդ,
Կ'երթամ նոր ոյժ առնելու.
Որ պաշտպանես Հայաստանդ,
Լաճերդ ազատ ընելու:

Բայց չուտ մոռցար քո խոստումներ,
Մոռքէդ ելաւ քո երդիք.
Կ'երևի քեզ չուտ են խաբեր,
Օտար արևն ու երկինք:

Կարիճ ախպէր, ուշքի եկուր,
Քո հայրենիքն է կանչողդ.
Թուրքին քիւրտին թշուանքն ու թուր,
Հերիք անոր սան ահ դողդ:

Կարիճ ախպէր, ել չուտ երթանք,
Մեր սիրելեաց օգնելու.
Ասպա թէ ոչ մի սև պատանք,
Մօտ է անոնք ծածկելու:

ԽԻԶՕ

ԵՐԳ

Տեսէք աղաւնին Նոյեայ տապանին,
Եկած է կանգնած ի սար Տօրոսին.
Աւետիս կուտայ Հայկայ սերունդին,
Թէ եկաւ գարուն թորգոմայ գարմին:

Արթնցէ՛ք, հայեր, քաջաց զաւակներ,
Առէք միութեան զէնքն ու զրահներ.
Շուտով կազմեցէք սիրուն խմբակներ,
Հագէք միութեան զէնք ու զրահներ։

Երկինք բարկացաւ, հայրենիք լացաւ,
Մեր ջուր ու գինին մեզ արիւն դարձաւ.
Խաչեցեալ Ցխուսս մեզի մոռացաւ,
Հայրենի բաժին թողուց ցիր ու ցան։

Մոռցանք հայրենիք, մոռցանք Հայաստան,
Կորուցինք մեր փառք ու վաստուրական.
Մաս մը Պարսկաստան, մաս մը Ռուսաստան,
Մնացինք թշուառ անտէր անպաշտպան։

Հինգ հարիւրամեայ մի քուն քնացանք,
Ասուած ու եղբայր խպտառ մոռցանք.
Աստղուիթեան ձեռք խաղալիք դարձանք,
Սիրոյ միութեան լոյսեր մերկացանք։

ՀԱՑԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՑ ԾՈՎԻ ՎՐԱՑ

Ուշ գիշերին ծոփն է խաղաղ,
Ջրեր վճիտ ու յստակ.
Ջինջ է երկինք միապաղաղ,
Աստեղազարդ, կապուտակ։

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
Սև ամպերով մռայլեց.
Ջամի լրջաւ, քամի անսանձ,
Եւ ծովակն այլայլեց։

Կուրծքն ուռած ու փրփրուն,
Ալիքներն ահագին.
Սուգ ու հառաչ, գոռ ու գոչիւն
Թռան ծոցից ծովակին։

— Սիրո՛ւն ծովակ, ասա՛ դու մեզ,
Էլ ի՞նչ նորից յուզեցիր.
Այն ի՞նչ բօթ էր, որ բերեց քեզ
Ջամին մոլար, անճանճիր։

Արդեօ՞ք ողբեր ու հառաչանք
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մրմո՞ւնջ, մօր հեծեծա՞նք,
Թէ՞ ճիչ անմեղ մանկիկին...

Արիւնապատ մեր ճորերո՞ւմ
Հիւսել է իր մեղեդին.
Թէ՞ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին...

Ա՛լս այդ ցաւոտ սև երգերով
Մեզ քուն ասին մեր մայրեր,
Ու սարսափի ըղձյցներով
Խլացրին մեր ճիչեր։

Եւ այնուհետ չատ տարիներ
Նոյն երգերը սխրագին
Սև դարձին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին...

Մի անգամ էլ մեր լեռներում
Մի հոգմ փչեց ահաւոր,
Էլ արտասուք նա չէր երգում,
Ոչ ողբ ասում սգաւոր։

Սև լեռների մռայլ ծոցից
Խլած հսկայ գոչիւններ,
Սև ժայռերի գոչիւններից
Նա կազմել էր իր երգեր։

Պղտոր—կարմիր գետը յուզած
Այնաեղ ունէր իր բաժին,
Մայր բնութիւնն էլ զարհուրած
Մնացել էր այդ երգին...

Երբ ժայռերը գոռում էին,
Հայն ի՞նչպէս լուռ կենար,
Երբ լեռները դողում էին,
Մեր սիրտն ի՞նչպէս դիմանար։

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրեր վաղուց մոռացած,
Եւ դուրս ինկանք մեր տներից
Դէպ սուրբ վաթան աւերւած...

Լո՛ւռ կաց, քամի՛, մի փչեր, լո՛ւռ·
Շատ յուզեցիր ծովակին,
Թո՛ղ չչնջայ մեղմիկ զեփիւռ,
Թո՛ղ, հանգիստ թո՛ղ ծովակին։

Լո՛ւր կա՛ց, ծով, դարերի լալկան,
Էլ բաւ այսքան հառաչներ...
Մենք ղօր ունինք սուր, հրացան,
Շուտ վերջ կ՝առնեն քո յաւեր...

Թո՛ղ միայն մեզ չուտով լողանք,
Թո՛ղ որ հասնենք այն ափին·
Տե՛ս, լսում են ձիչ, հառաչա՛նք,
Աղերս ու ողբ անմեղին։

Դէ՛հ, ընկերներ, զարկե՛նք թիեր,
Հզօր բազկով միասին·
Մօտ է ափը, հէ՛, ախպէրներ,
Հա՛, հասանք ձեր հաւարին··

ՇԱՏԱԽՑԻ ՖԻՏԱՑԻ ՇԷՐՕ

Լուսնեակ գիշեր մ՛էր, աստեղք բիւրաւոր,
Փալփլում էին, լո՛ւռ, խորհրդաւոր...
Երկինքը պարզ էր, պարզ, ջինջ կապուտակ,
Պատառ մ՛ամպ չի կար, յստակ էր, յստակ,

Եօթն հսկայ քաջեր, անխօս, անշշուկ,
Ջինւած, զրահւած, մռայլ ու դալուկ·
Իբրև պատգարակ կապած հրացաններին,
Վիրաւոր հայդուկ մը վրան կը տանին։

Անցան չատ տեղեր, ձորեր հովիտներ,
Մինչև որ հասան Դուշմանայ լեռներ·
Օրրան քաջերի, ահաւոր Դուշման,
Իքեզ չատ քաջեր մահ տան ու ստանան։

— «Դէպ ա՛ջ» խուլ ձայնեց մին հայդուկներից,
— «Ճիշդ դէպի Դերիկ» ձայնեց նա նորից.
Ընդ հուպ դէ՛պ Դերիկ քայլերն ուղղեցին,
Եւ Դերիկ հասան ճիշդ կէս գիշերին։

Արիւն քրտինքում չաղախուած Համակ,
Ֆաջերն ուսերից առին պատգարակ.
Զոր քարի վրայ վար դրին մարմինն,
Իրենց արնաներկ ընկեր հայդուկին։

Ցանկարծ ուշաբերեց, տնքած վիրաւորն,
Ցանկարծ նա կանչեց տղերք իր բոլորն.
— «Պուտ մը ջուր, տղերք այրուում եմ մրկուում,
Շո՛ւտ տուէք, քանի չունչ կայ իմ բերնում»։

—«Ինձ Դերիկ տարէ՛ք ո՞ւր եմ, այժմ ո՞ւր եմ,
«Վէրքերն չա՛տ են խոր, պի՛տ մեռնիմ, գիտեմ.
«Կ՛ուզէի քիչ էլ կենդանի մնալ,
«Իսլամի որդոց վէրք տալ ու առնալ։

«Շէ՛րօ, Ջան Շէրօ, արեւիդ մատաղ,
«Դերիկն ես արդէն, հանգիստ կայ խաղաղ.
«Ինը քուրդ լինկան քո գնդակներից,
«Հինգ էլ յոշոտած քո կեռ խէնչարից։

«Շիկակն չէր տեսել այսպէս հարսանիք,
«Մեր ուխտը հոգուց փոխան անարիք
«Շատերը զոհ եղան մեր գնդակներին,
«Շատերը մատաղ եղան մեր սրին։

«Իմինէ ձավչին, ցեղապէտ Սամէն,
«Ամբողջ Մարզիկ ցեղն և Շիկակ Թամէն,
«Էլ չեն մոռանար «կեավուռ» հայդուկին,
«Էլ չեն մոռանար հայ Ջան Ֆէտային։»

Զայն աւին տղերք, մէկը ջուր աւաւ,
Դողդոջուն ձեռքով Շէրօն ջուրն առաւ.
Խմեց իմի ումպ, ծանր հառաչեց,
Իր ընկերներին վերջին խօսքն ասեց։

«Էլ մնաք բարով, ընկերք, հայրենիք,
«Էլ մնաք բարով, անդին, սիրելիք.
«Ինձ Դերիկ թաղէք, Զաթօյի կողքին,
«Այնտեղ պիտի հանգչի իմ սիրտն ու հոգին։

«Կտակս այս է ձեզ, վրէ՛ժ և վրէ՛ժ...
«Կռի՛ւ, պատերա՛զմ, անընդհա՛տ յաւերժ,
«Վրէժս կը թողում ձեզ բաժին փա...ռաց,
«Վրէժ խա...լա...մից, վրէ..ժ ան...մո...ռաց»։

Ասաց և լռեց, լռեց յաւիտեան,
Աւանդեց հոգին, ոսկերքն սառեցան։
Ո՛ լուսին, կաց դու, մի պահ, մի վայրկեան,
Անսուտ վկայ լեր, հերոսի թաղման։

Զկար ոչ տէրտէր, ոչ խաչ Աւետարան,
Ոչ խունկ, ոչ բուրվառ, ոչ էլ չարական.
Զկար քառաձայն երկար աղէ՛ր՛ք...
Ոչ իսկ բահ, բրիչ, ոչ սաղմոսերգուք...

Ֆաջաց հրացանները ահարկու տրաքեն,
Վրէժ, ծուխ, գնդակ, բոց ու հուր ժայթքեն.
Մերկացեալ սրեր բռնած խաչաձեւ,
Կ՛երդնուն ծնկաչոք, վրէժ արդարև։

Ջան—Ֆէտայիներ նորից միաբերան,
Վրէժ, գոռացին վրէժ անսասան.
Վրէժ արձագանգ տւեց Դուշման սար,
Վրէժ... արձագանգ տւին ձոր ու քար։

Դուշմանայ ձորի խուլ Դերիկ վանքում,
Զաթօն ու Շէրօն մինակ չեն հանգչում.
Նրանց աջ ու ձախ մինչիկ կան պառկած,
Զորս զոհ հայդուկներ, զոհեր հայրենեաց:

Ներսէս Իշխանեան կարիճ սիւնեցին,
կարճկանցի Ցակոբ, Մանուկ չաուշցին.
Եւ տէր Մովսէսեան վանեցի կարօն,
Ասպա նրանց քով Զաթօն ու Շէրօն:

Ջան—ֆէտայիներ պինդ գրկեն Դուշման:
Որ ծլին, ծաղկին, հոտ տան հայութեան.
Եւ արշալոյսին թարմիկ մայիսեան,
Նրանք վեր կ'ելնեն խրոխտ յաղթական:

Լուսնեակ գիշեր մ'էր աստղեր բիւրաւոր,
Փայլփլում էին լուռ, խորհրդաւոր.
Երկինքը պարզ էր, պարզ, չինչ կապուտակ,
Պատառ մ'ամպ չիկար, յստակ էր, յստակ:

ՈՍԿԱՆ—ՆԱԶԱՐ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Թէ գիս կանչեն օտարաց,
Արքայական պալատում.
Ա՛յլ կը սիրեմ հայրենիք,
Ուր և լինիմ ես բանտում:

Ցուզուեց և լուսինն, դողայ գալիկահար,
Ամպեր հաւաքեց վրան մութ խաւար.
Ամպրոպք և կայծակք, ահեղ որոտմունք,
Օրհասն է երկրի, չանթ, փայլատակունք:

Ամէնքն մխասին վրէժ, կ'որոտան,
Վրէ՛ժ, արդարև, վրէ՛ժ յաւիտեան.
Վրէժ Շէրօյի, վրէժ Զաթօյի,
Վրէժ Շատախու այդ առիւծների:

Գոռ ահեղ րոպէ սոսկալի վայրկեան,
Վրէժ կը գոռայ բնութիւն համայն.
Երկինք և երկիր իրար խառնուեց,
Ինչ մթութեան մէջ ամէն ինչ թաղուեց:

Անց էր կէս գիշեր, բնութիւն խաղաղ էր,
Լուսինը պայծառ շողեր կաթկթէր.
Շողեր մարմարեայ, շաղեր արծաթեայ,
Աստղունք կայծկլտան յստակ բիւրեղեայ:

Նոյնն էր ամէն ինչ, նոյնն էր և Դերիկ,
Միայն Զաթօյի չիրիմին մօտիկ
Թարմ հողաբլուր մ'կանգնած էր լռին,
Շէրօյին էր դա, հսկայ հայդուկին:

«Զաթօյի կողքին, Զաթօյի կողքին,
«կ'ուզեմ ես հանգչիլ» այս իր խօսք վերջին.
Ո՞ւր էին արդեօք, ո՞ւր եօթը քաջեր,
Չէին երևում... ո՛ւր, ոչ ոք գիտէր:

Պարտքն ու կոչումը վեհ անձնազոհին,
Անմոռաց վրէժն քաջ Շէրօներին.
Ուր, որ կը մղեն եօթնեակ քաջերին,
Ուր, որ կը մղեն ֆէտայիներին:

կ'ասեմ անդադար՝

«Այլ ուր կայ տեղ քաղցրիկ
Մարդուն քան իւր հայրենիք»

կ'ասեմ անդադար (կրկնել)։

Եթէ իս կանչեն թագաւոր,
Հլլալ մի օտար երկրի.
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր և լինիմ ես գերի։

Թէ ինձ մի օտար ձեռք,
Տայ փունջ մի լեցուն ծաղիկ.
Զեմ առներ ղի մեր երկրի,
Փուչն է քան զայն գեղեցիկ։

Թէ իս տանին օտարաց,
Արքայական պալատուս.
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր և լինիմ ես բանտուս։

Թէ ամէնէն ոսկեփայլ,
Երկրի մ'լինիմ բնակիչ.
Այլ կ'երազեմ հայրենիք,
Իր սև բախտով մահակիզ։

ՏԱԼԻՈՐԻԿՑԻ ԿՏՐՏԾԸ

Տալւորիկցի կըսրիճ եմ խորթ,
Քաղքըցու պէս չեմ թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի,
Հին քաջ հայոց եմ մըննացորդ։

Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Զեմ խոնարհիր թուրքին առաջ.
Քարուտ լերանց ես ազատ լանճ,
Զեմ տեսեր ո՛չ արօր, ո՛չ մանճ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Հայ աղբըրաիք, վա՛յ աղբըրաիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրուն համար,
Եկէք դէպ ինձ, յառա՛ջ, յառա՛ջ։

Երբ իմ աչեր բացի յաչխարհ
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչև վախեմ աչքս խաւար
Պիտ չի կոխէ հոս ոտք օտար։

Իմ մամ ծնաւ զիս բալերու ծոց,
Ինձ ընկուզկոճ մ'եղաւ օրրոց.
Տըկլոզ ծընած՝ մեծցայ տըկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց։

Ոտքըս բռպիկ, սիրտըս միչա բաց,
Ի՞նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մրնաց·
Իմ մօտ մէկ է արև՝ բուք՝ ցուրտ,
Բա՛ւ է չ'իշխեր հոս թուրք կամ քուրդ։

Իմ կեանքըս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի վայրէ չեմ վարժ·
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ։

Թող այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վտտ անդունդին հետ լինին հաչտ·
Ես պիտ՝ մընամ միչտ աննըւաճ,
Թէև վրաս պոյ քըսան վաչտ։

Իսկի չեքաշեմ բանի մ'կարօտ,
Քանի ունիմ պընդակ վառօդ·
Աղատ ապրիմ, մեռնիմ ազատ,
Սասնոյ որդին եմ հարազատ։

Ցորենի տեղ կ'ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ պիչեր ցորեկ·
Շինեմ փէշտատ, խոփ, խաչերկաթ,
Ծանր է գաւառս, բայց եմ ազատ։

Հարըստութիւն, ուսում, հանճար,
Պատիւ և վառօք չեն ինձ համար·
Բա՛ւ է ունիմ ջէք, թուր, խանճար,
Բա՛ւ չէ խրոխտար վըրաս օտար։

Ջէնքն է միակ իմ խաղալիք,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ·
Կը սիրեմ որս, կըռիւ, աւար,
Կըսպասեմ ե'րբ ընկնի հաւ՛ր։

Գիչերն ալ զէնք վըրաս քընեմ,
Երազիս մէջ կըռիւ կ'ընեմ·
Կըռիլն ինձի մօտ խաղալ է,
Կըռւով մեռնիլը հալալ է։

Կըռւի մէջը մեռաւ իմ պապ,
(Ա՛յդ կերպ մահն է անուշ մըրափ)·
Կ'ուզեմ ես ալ մահ մէջ կըռւի,
Որ իմ անուն անմահ գըրւի։

Ա՛յս քարուտ տեղ խիստ դժուարին,
Իմ քաջ պապեր երբ ընտրեցին·
Ըսին՝ ազա՛տ որդոց որդի
Քաջաց սերունդ թո՛ղ հոս ապրի։

Եւ իմ խելօք ջո՛ջ պապ Ցարէ
(Աստուած հոգին լուսաւորէ,)
Ինձ կ'ըսէր միչտ· «Ազքատ ապրէ,
Բայց մի՛ ծռէ վիզ, հարկ մի՛ վճարէ»։

Սակայն միթէ կըրնա՞յ ազքատ
Կոչ՝ իլ այն մարդ որ է ազատ·
Միթէ կա՞յ բան մ'աւելի թանգ
Քան անիչխան և ազատ կեանք։

Տալորիկն է սև սև սարեր,
Ծոր մութ ծործորք, սեպ սեպ քարեր·
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն,
Հոգիս մատա՛ղ մեր Մարաբուն։

Մեղնով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս հայոց նըկուն·
Տալորիկ սար, ժէռուտ Ջէյթուն,
Տա՛ն իրարու ազա՛տ ողջոյն։

ՑՈՐԴՈՐԱԿ

Հա՛յ աղբըրտիք, վա՛յ աղբըրտիք,
Տալորիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրուն համար,
Եկէք դէպ ինձ, յառա՛ջ, յառա՛ջ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ԵՐԳ ՌԱՄԿԱԿԱՆ

Ահա մայրիկ, ահա կ'երթամ,
Ազգիս համար մեռնելու.
Ջալ ընկերներով միասին,
Անգութ թուրքը ջարդելու։

Գերեզմանիս քարին վրայ,
Թափէ արցունք, հայր և մայր.
Թափէ արցունք, ցանէ ծաղիկ,
Դեռ պզտիկ եմ ես, մայրիկ։

Գերեզմանիս հողին վրայ,
Թեթև քարեր դիզեցէք.
Ասկից վերջը, խեղճ աղքատներ,
Ջաւակներնիդ սիրեցէք։

Ես երբ Սեբաստիա կ'երթայի,
Երկու օրէն կուգայի.

Երկու օրը կ'ըլլար տարի,
Ես քեզ կը կարօտնայի։

Ելլէի լեռանը վրայ,
Քար մը զարնէի գլխուս.
Իմ գլխուս եկած ձիւնն ալ,
Մասեաց գագաթն ալ չկայ։

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ,
Տեսնողին զարմանք կըտայ.
Հայ քաջերուն արիւնովը,
Կարծես ներկած ճիւղեր կայ։

Արդեօք այս մեր քաջածնները,
Պիտի լսես, ո՛վ Աստուած.
Թէ ողջ պիտի տեսնենք մենք,
Հայու դրօշակը պարզած։

ՀԱՑՈՒՆ ԲԱԽՏԸ

Թըմրած հայը զարթեցաւ,
Ելաւ քաջի պէս ոտքի.
Բայց մարդասէր Եւրոպան
Ջուզեց որ հայն ազատի։

Թնթուեց չըղթանի ամրակուռ,
Բազմադարեան ըսարուկը.
Սակայն Եւրոպ մընաց լուռ.
Ջուզեց որ հայն ազատուի։

Հայն ալ ուզեց մարդկօրէն
Ապրիլ, դառնալ տէր բախտին.
Այլ բըռնակալն անօրէն
Ջուզեց որ հայն ազատուի։

Բըռնութեան կուռքն ալ դըժխեմ
Որուն անուն «ցար» կոչուի,
Մեր սուրբ դասին կեցաւ դէմ,
Ջուզեց որ հայն ազատուի։

Աչխարհակալ այն ոսոխ,
Հայու արեան ծարաւի՝
Ըզմեզ ըրաւ ոանակոխ,
Ջուզեց որ հայն ազատուի։

Ասուն, Պօլիս, ամէն տեղ
Վազեց արեան մեր հեղեղ,
Դեռ վեց հըզօր պետութիւնք
Ջուզեն որ հայն ազատուի։

Հայաստանն է սպանդանոց
Եւ կիլիկեան ալ՝ դըժոխք,
Դեռ իրաւանց այն դըրժողք
Ջուզեն որ հայն ազատուի։

Լերինք, քարինք ողբացին
Հայոց բախտը եղկելի,
Սակայն իչխողք չուզեցին,
Որ ըսարուկ հայն ազատուի։

Ելաւ Զէյթուն քաջարի
Եւ կըռուեցաւ յաղթական,
Վեց պետութիւնք մէջ մըտան՝
Որպէս զի հայն չազատուի։

Արիւնաներկ մահիկը
Ցաղթեց Խաչին—որ պաչուի.
Խաչին կուռքը չամըչցաւ,
Ջուզեց որ հայն ազատուի։

Մի քրիստոնեայ «վեհափառ»
Մարդախօչօչ հետ տոճկի
Դաչինք կըռեց անպատկառ՝
Որպէսզի հայն չազատուի։

Հայ արեան մէջ լողալով
Մեր դահիճն արդ կը հըրճուի
Եւ կը գոչէ անվըրդով՝
«Կոտորե՛նք որ չազատուի»։

Բայց այն ըսարուկն անարգւած
Առիւծ դարձած անվըհատ՝
Կը մըռնչէ երկանց մէջ՝
«Պէտք է լինի հայն ազատ»։

Անգո՛ւթ դահիճ, դու գիտցի՛ր,
Հայը միայ անվըկանդ.
Թէպէտ տաս ջարդ՝ կոտորած,
Պէ՛տք է լինի հայն ազատ։

Թէ բանտ, երկաթ, կառափնատ
Սպառնաս, հայեր հարազատ
Ջըլյան երբեք յուսահատ,
Մինչև լինի հայն ազատ։

Դիւանագէ՛տք անամօթ,
Որ անարգէք մեր գանգատ.
Ձեր աչք քընոյ միայ կարօտ,
Ցորչափ չըլլայ հայն ազատ։

Գիշերէ մինչ առաւօտ՝
Ձեր հաչիւներ ցընդին յօդ.
Բայց կը յաղթէ արդար դատ,
Եւ կը լինի հայն ազատ։

Հայ ազգն ունի մի նպատակ,
Մէկ ուխտ, մէկ յոյս, մէկ հաւատ.
Կա՛մ ամէնքըս նահատակ՝
Կա՛մ կը լինի հայն ազատ։


Ողորմութիւն և կամ գութ
Մէկ այլ ևս չե՛նք ըսպասեր.
Վըրէ՛ժ, կըռի՛ւ — այլ և սէր, —
Եւ կը լինի հայն ազատ։

Մեր սուրբ արեան մենք իլիճ
Բըռնութիւնը կը խեղդենք.
Թէպէտ ջարդես մեզ, Դա՛հիճ,
Մենք մեր արեամբ կը յաղթենք։

Եւ դու գոռո՛զ բըռնակալ,
Որ թագըդ դեռ չը կապած՝
Մեր արեան մէջ թաթխեցիր,
Մեր արտասուքով լըւացիր։

Թող անիծո՛ւի քո անունդ՝
Ցո՛րչափ սուրբ են իրաւունք.
Ցո՛րչափ արև լինի վկայ
Թըշուառութեանց՝ երկրի վրայ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ



ՄԵԼԻՔ ՅԱԿՈԲԵԱՆ (ՐԱՖՖԻ)

ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ ՅԱԿՈԲԵԱՆ (ՐԱՖՖԻ)

Մեր հայ գրողների մէջ և ոչ մէկը կարողացած է հայ միտքերի վրայ այնչափ խորունկ ազդեցութիւն թողնել, իր գրուածներով ժողովրդի կեանքը հիմնապէս ցնցել և նոր մէջ զգալի փոփոխութիւններ առաջ բերել որչափ Րաֆֆին։

Րաֆֆիի գրուածները ոչ թէ իրենց գրական արժանիքին համար այնչափ նշանաւոր են, որչափ ժողովրդի սըրտին այնչափ մօտ նիւթերու վրայ գրուած ըլլալուն. անոնք առաջին անգամէն իսկ ժողովրդին համակրութիւնը գրաւեցին և դինքը ամէնաժողովրդական վիպագիրն ըրին։

Ներեցէք եթէ Րաֆֆին կ'զգայ պէտքը հայ գրականութեան համար նոր ճիւղ մը մշակելու՝ Ազգ. յեղափոխական վիպագրութիւնը և սուերագծել ծրագրեր Հայաստանի ազատութեան համար։ Որչա՜փ երիտասարդները Րաֆֆիի կայծերը կարդալով կարծն, Ասլան և Սագօն իրենց պաշտումին առարկան ըրած և ուզած են քայլ առ քայլ անոնց ուղիին հետևիլ, անոնց բնակած վայրեր բնակիլ, անոնց թափառած լեռները թափառիլ։ Որչա՜փ ոգևորուած երիտասարդները Դաւչմանի ձորերու մէջ որսորդ Աւօյի հետքերը պրպտած և օրերով անոր այրերու մէջ բնակած են։ Րաֆֆիի գրած վէպերուն հայ մտքերու վրայ ըրած ահագին ազդեցութիւնը ինքնին արդէն կ'երևի երբ կը տեսնենք որ հայ յեղափոխական չարժումները սկսան ճիշդ այն ուղղութեամբ, ինչ ուղղութիւն որ ցոյց կուտար Րաֆֆին իր վէպերով։ Բայց ա՛խտ որ այս համակրելի գրողը որ ամէնաընդունակ վիպագիրն էր, շատ երկար չապրեցաւ և մեռաւ ճիշդ այն ժամանակ երբ իր տաղանդը իր հասունութեան աստիճանին հասած էր։

Յակոբ Մելիք Յակոբեան (Րաֆֆին) ծնած է Սալմաստի Բայաջուկ գիւղը, 1835ին։ Հայրը որ քիչ շատ կարող վաճառական էր, փոփաքելով իր այս զաւակին աւելի կանոնաւոր կրթութիւն մը տալ, կը տարկէ ան Թիֆլիս, ընդելախեռանցի դպրոցը և անկէ ալ Թիֆլիսի քաղաքային գիմնազիան։ Պատանի Յակոբը 1857ին իր ուսումնարանական շրջանն աւարտելով կ'ուզէ հօրը առևտրական գործը շարունակել, բայց ինքը աւելի ձգտում ունէր գրելու, քան թէ առևտրով զբաղելու։ Իր առևտրական գործերու համար ըրած ճանապարհորդութիւններէն կ'օգտուէր ուսումնասիրելու երկիրը, ժողովուրդը, բարքերը, և գրելու համար նիւթեր կը պատրաստէր, երբեմն ալ Ս. Նազարեանցի «Հիւսիսափայլ»ին մէջ կը գրէր։ Եւ բնական էր որ իր առևտրական գործերը այնչափ շատ փայլուն վիճակի մէջ չըլլային։

1872ին երկար ճանապարհորդութիւն մը կատարած է Հայաստանի մէջ, անցնելով Աւարպատական, Վան, Ալաթամար, Մուշ, Բաղէշ և այս թուականին է գրած իր գեղեցիկ երգը «Զայն առու ո՛վ ծովակը»ը։ Թիֆլիս վերադարձին ուսաւ իր առաջին հրատարակութիւնը «Փունջեր»։

Երբ Գրիգոր Արծրունին սկսաւ «Մշակ»ը հրատարակել, տեսնելով Րաֆֆիի գրելու ընդունակութիւնը, թելադրեց անոր անգամ մը ընդ միշտ թողնել առևտրական այսպարկեշտը և միմիայն գրականութեամբ զբաղիլ, և այդ նպատակով ալ իր նիւթական և բարոյական օգնութիւնը չխնայեց անոր։ Րաֆֆիի առաջ նոր և ընդարձակ ասպարէզ բացուեցաւ, սկսաւ այդ օրէն փայլիլ մանաւանդ ռուս—թրքական պատերազմէն ետք, հայկ. խնդիրի յուզմամբ Րաֆֆին ամբողջ հոգին նիւթեր ունեցաւ գրելու, խօսելու, ջէլալէտտինին, կայծեր, Դաւիթ Պէկ և այլն։

Րաֆֆին առանձին հատորներով դիւքեր հրատարակեցաւ հանդերձ, պարբերաբար գրած է «Մշակ»ի, «Փարա»ի և ապա «Արձագանգ»ի մէջ մեծ ազգասէր կեղծ անուամբ։

Բայց ինչպէս ըսինք Րաֆֆին որ կոչուած էր հայ վիպա-

գըրութեան մէջ աւելի մեծ դեր մը խաղալու, երկար չապրեցաւ. 1888 ապրիլ 18ին ժողովրդական այս մեծ գրողը կը մեռնի Թիֆլիսի մէջ, թողնելով բաւականին անտիպ գրածներ։ Անոր յուղարկաւորութեան հանդէսը կը կատարի չատ չքեղ կերպով, և մարմինը կը թաղուի Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանոցին մէջ։

Օր գարնանային, օ՛ր թարմ և սիրուն,
Շնչում է արփին, նոր կեանք ջերմութիւն,
Բայց դեռ դաշտերը ձմեռայ քնով
Թմրած, նիրհում են, գարթնել չեն ուզում։

Եւ լի յոյսերով մշակը ժրաջան
Նիհար եզներով վարում է դուրս։
Զարթեցէք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,
Մինչ ե՞րբ պիտ ննջէք՝ ամայի գաշտեր։

— Յաջողութիւն քեզ, ո՛վ անբախտ մշակ,
Մշակ անպատուղ խոպան դաշտերի,
Բարեմաղթում է մշակը մաքերի,
Որ կարեկից է քո դառն վշտերի։

ՐԱՖՖԻ

ՎԱՋԳԻՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայդուկ, մի վախնար քրդի գնդակից,
Նա մահաբեր չէ քաջերիդ համար·
Քո «Ջան—ֆէտայի» ահեղ անունից,
Քիւրդը սոսկում է, ինչպէս դիւահար։

Առէք հրացան ու ելէք հանդէս,
Տանջանքի մէջ է ձեր մայր հայրենիք·
Մի՞թէ չէք լսում, նա կանչում է ձեզ, —
«Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք»···

Ձեր հրացանը վրէժով լցրէք,
Զարդէք թշնամուն, թշնամուն գազան·
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,
Միայն թէ կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան···

ՊԵՏՐՈՍ—ՍԱՄՈՒԷԼ

ԵՂԻՇԷ

Ոսկեծղկի, պեղեցկատիպ
Ո՛վ իմ գրքոյկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբախտ օրը
Դու քարոզող անմրռունչ։

Ո՞վ պիտի տար այն անբսպառ
Սէրն ու դութը դէպ հային,
Թէ որ մարդիկ քեզ, ո՛վ գըրքուկ,
Երբեմըն չի կարդային։

Քեզ կարդալով՝ կը մոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին,
Դէպ հայ եղբարքս դութ ու սիրով
Միշտ կը լցւի իմ հոգին։

Մըտքիս մէջը ես միշտ կ'ասեմ,
«Սերունդք վարդան մեր ֆալին
Անհընար է՝ անփառունակ
Ըսարուկ մընան կամ կորչին»։

Կամ տեսնելով հէգ հայ տէրտէր,
Յուրբ Ղևոնդին կը յիշեմ,
Ու յուսահատ սրտում մըտքեր
Ինձմէն հեռու կը քըշեմ։

Եղիշէին հայք կարդալով,
Նոր յոյսերով կը լցւին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոց առջև կը բացւին։

Հա՛յ պատանի՝ չուտ չուտ կարդա՛
Այս գըրքուկը ոսկեատառ,
Որ համոզւես թէ՝ մեր հայը
Կորչելու ազգ չէ՛ իսպառ։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Ա. Ղ Բ Ի Խ Ր

1. Խլաթի գաւառ,
Սոխորդ գեղ ըսւած,
Իրեն բնակիչ՝
Աղբիւր Ջան,
Բարիքով լցւած։

2. Պօղոս, Գրիգոր՝
Թիւրքին սիրական
Կ'ուզեն վերջացնել,
Աղբիւր Ջան,
Ամբողջ Հայաստան։

3. Պօղոս, Գրիգոր
Խորհուրդ կազմեցին,
Թիւրք ոստիկաններ,
Աղբիւր Ջան,
Ամբողջ կանչեցին։

4. Սանաթ տըւեցին
Նորէն խրկեցին,
Թեղուտ ու Սոխորդ,
Աղբիւր Ջան,
Ցանկարծ պատեցին։

5. Անիծած Դաւիթ
«Աղա—Ջան» կանչեց.
—կեղծուխեամբ ըսաց—
Աղբիւր Ջան,
Թէ զօրք մեզ պատեց։

6. Անիծեալ ըլլայ
Դաւիթ ծնած տեղ.
Աւերակ դառնայ,
Աղբիւր Ջան,
Կոչտան ըսւած գեղ։

7. Սոխորդայ վերև՝
Նումբուտ մեծ սարէն
Ցուցակ տըւաւ մեզ,
Աղբիւր Ջան,
Ջէն մօսիներէն։

8. Բաղէշ վիլայէթ
Անուն Սալվի—Զոր՝
Սօսի կը կանչէ.
«Հոգիս Ջան,
կեանքդ ազդին տուր։»

9. կեցցէ՛ քաջ Աղբիւր
Եւ իր մօսիներն.
Ցիսուն և հինգ զօրք
Աղբիւր Ջան,
Ըրաւ ցան ու ցիր։

10. Անունդ էր Աղբիւր
«Մինչև Ռուսաց Դուռ
—Աչոտ կը գրէր—
Աղբիւր Ջան,
Կորա՛, վհուռ տուր»։

Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ

«Ի՞նչ անենք»... Ամօ՛թ այսպէս ասողին,
Ամօ՛թ, բի՛ւր ամօթ յուսահատուողին...
Մա՛հ, մա՛հ, հազա՛ր մահ հէգ վըճռատուղին..
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ինչ անե՞նք»։

Ասէ՛ք, ի՞նչ կ'անէ ջուրը ինկածը,
Ասէ՛ք՝ ի՞նչ կ'անէ քաղցած—սովածը.
Ասէ՛ք՝ ի՞նչ կ'անէ գերի ընկածը...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Ջըրամոյնք ճըգնին՝ քանի ուժ ունին,
Ջաղցածը մաշէ չէմքը դրացին.
Փախչել կը հնարի կաչկանդած գերին...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Հա՛րուստ՝ հէ՞ր ոսկիդ սընտուկ դըրել ես,
Կըտրիճ՝ ո՞ր օրւայ ուժըդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէ՛ր, ազգըդ սիրել ես...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Հա՛րուստ՝ դիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենին լաւ է, քան թէ ոսկու դէզ,
Թէ մեռնիս՝ ոսկիդ հե՞տդ կը տանես...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Կարի՛ճ՝ ալ կ'անցնի քանի մի տարի,
Այդ թըշնիդ վարդը խոպառ կը խամրի,

Չի թողում միայն յիշատակ բարի...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր ի՞նչ անենք»։

Թէ ուզէ հայը՝ նա չատ բան կ՚անէ,
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։
Հայը կըսոխվէ վեհ պատրիարքին
Յորդորակ սըփռել բոլոր հայ ազգին,
Թոթռւել—զարթեցնել մեր թըմրած հոգին...
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ծովի գոհար հեղ փրփուր,
Լուսեղէն, մանր ու մաքուր.
Ալեաց երկունք քեզ ծնան,
Ալեաց կռիւ քեզ օրրան։

Կապոյտ ծովին ծաւալած,
Ծովի ծաղիկ նորաբաց.
Ջըրի ասող ջրի ժպիտ,
Միլ ծիլ ծըլած խիտ ու խիտ։

Ալեաց մէջև տարուբեր,
Ծովի փըրփուր վաղամեռ.
Մօրըդ ծոցին մէջ արդէն,
Կեանքն ու մահն քեզ կ՚օրրեն։

Ծովի փրփուր մըրրկալի,
Ուր յոյսն արդէն կը հալի.
Ջուր կ՚ոգորիս, կը հևաս,
Օրհասիդ դէմ վերահաս։

Երբ սաւառնիս դէպի վեր,
Եթերքին մէջ մօրդ պատկեր.
Ամպերը քեզ թող չտան,
Երկան հանգիստ մ՚անվախճան։

Իջիր ցօղդ մեղմագին,
Որպէս արցունքն երկնքին.
Լըւա սրբէ չոր արիւն,
Անյայտ չիրմին քաջերուն։

Անոնք ինկան անխռով,
Կեանքի ալեաց կուրծք տալով.
Անոնք փրփուրն հայուքեան,
Ծնած մեռած քեզ նման։

Վ. ՇԱՀԵՆԻ

ՀԱՅՐԵՆԻՔԴ ՄՈՌՑԻՐ

Հայրենիքդ մոռցիր, կ՚ըսեն օտարներ,
Անիծեալ է, լոկ փուշ ունի ու աւեր.
Մեր հող դրախտ, ջուրն օշարակ,
Օդ քաղցր, օդ քաղցր է.

եկուր պանդուխտ, սրտիկդ անոր նետիրէ,
Թէև ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի,
Ես կը սիրեմ Հայաստան, ապրի կարմիճ Հայաստան։

Թող հայութեան առջև լռէ պատմութիւն,
Թող սիեզերք մոռնայ հայուն քաջութիւն։
Ես կը սիրեմ չեմ մոռնար
Աննման, աննման.
Իմ մայրենի այբուբենս կիլիկիան,
Թէև ամուլ ամայի, ըլլայ երկիրս հայրենի,
Ես կը սիրեմ կիլիկիան, ապրի կարմիճ կիլիկիան։

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԿՆԻԿ

Կռիւ կէր վարդենիս Մուսա պէկի դէմ.
Թալան տանելու եկած էր էդ չուն.
Հաւար էձգեցին գեղէն ե'Արտօնքէն
Ամէն մարդ վազեց, մարդ չի մընաց տուն։

Միճակ խորթ կէնճ մը նստած կը ժըղլէր
Քիրիվի մը հետ՝ բուխերիկին խեչ.
Զքրդու թարք չի տւեց, ժըղուլն անուշ էր,
Չի գընաց հաւար, մընաց ուր տան մէջ։

Մէկ մ'լ էնադեհաց եկաւ ուր կնիկ,
Ունքեր պըռըստած, կախած քիթ մըռութ,

Վերուց զուր լաչակ գըլխուց խորոտիկ,
Թալեց վըր էրկայ, ըսեց. «Ա'ռ գըլխուդ։

Ու վերուց ըզթվանկ որ սունէն էր կախ,
Ինքն կ'երթէր հաւար... էրիկ տեղից թռաւ,
Առաւ ղջէք ձեռքից, ու «վա՛խ լըմըն վա՛խ»
Ասելով վազեց, հաւարին հասաւ։

Հազա՛ր ապրին հմալ կըտրիճ կընկըտիք,
Որ կըռւի խրկեն զուրանց էրկըտիք։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Ե Ր Գ

Թամամ աշխարքումս չկայ մին, աննման չան քեզի պէս,

Ճակատը մէյրան քեզի պէս,
Ունքերը քեաման քեզի պէս,
Աչքերը մաստան քեզի պէս,
Պռօչն մարջան քեզի պէս,
Սուրահ կեարտան քեզի պէս.

կին ո՞նց է կարող ծնանիլ մարալ ու ջէյրան քեզի պէս։

Քեզ տեսնողն ասում է սա հոզեղէն չէ, հրեշտակ է

կերպարանքն արեգակ է,
Հուր թուչն մի լուսնակ է,
Աչքերն վառած ճրագ է,
Լեզուն դժոխքի կրակ է,
Բուխազն մեղր ու կարագ է.

Որքան վարավուրդ եմ անում, չկայ էլ ինսան քեզի պէս։

Երեսիդ մարիկ անողն ասում է քաչած պատկեր ես,

Ոսկից ցգլու֊խ դիմի սէր ես,
Ամէն բանից գեր իմէր ես,
Իմաստալիր գլխի տէր ես,
Աչարիչէդ թէ կը սիրես,
Սիամարունքս պիտի ներես.

Որ֊կարենում եմ ասել, չկայ միհրիրան քեզի պէս:

Ինչ տեղով որ անցնում ես, ասում են եարաբ սա ով է,

Հանդերձն դիմի կարմիր մոլ է,
Երեսն մանմարի խոյ է,
Հանդարտութիւնով մին ծով է,
Բերան պէտք է որ գովէ,
Անպատմելի չնորհքով է.

Կենացս մէջ չեմ տեսել սուլթան ու խոզան քեզի պէս:

Գեղեցկութիւն բաժանողից չատ փայ ստանա֊ղ դու ես,

Միշտ ուրախանողն դու ես,
Սմակ իմանողն դու ես,
Դատաստան անողն դու ես,
Մարդոց ջան առնողն դու ես,
Սէյեատ սպանողն դու ես.

Քեամանդարների մէջումն չկայ մին որսկան քեզի պէս:

Պ. Տ. Ց. ՄԱԴԱԹԵԱՆ

ՀԱՑ ՄԱՐԴՈՒ ՀԱՑՐԵՆԻՔԸ

Հայ մարդ, հայ ազգ, ասա՛ արդեօք,
Որ տեղ է քո հայրենիքը.
Կամ ունիս դու որևիցէ,
Ով են արդեօք ազգակիցքդ:

Հայ մարդ ասա՛, ուր է տունդ.
Հայ մարդ ուրտեղ քու կեդրօնդ.
Ունիս մի բան քեզ սեփական,
Ցոյց տուր ինձ դու քո պարծանքդ:

Ի՞նչ հայրենիք, յիմար զքեզ,
Հարցնում ես դու ինձանից.
Ուր եմ ծնած, ա՞յդ ես քննում,
Այս տեղ եկած եմ Թիֆլիզից:

Ես տուն ունեմ և այդ քարեայ,
Երկու յարկով չէնք փառաւոր.
Ծառաներիս թիւը չկայ,
Իմ հիւրերը հարիւրաւոր:

Եղբարք ունիմ, ունիմ որդիք,
Դաշերք և այլ չատ ազգական,
Ընտիր ծանօթք, չատ մեծատունք,
Ունիմ փեսայ և այն իշխան:

Իմ պարծա՞նքը, յիմար զքեզ,
Ցոյց տուր ինձ դու հապա քոնը.
Ճաշ եմ ուտում ազնիւ ընթրիք,
Որ չէ կերել Լուկուլլոսը:

Ես խմռւմ եմ չամպայն, մասիկ,
Ուռչնում ես դու փորդ ջրով·
Ունիմ քանի տեսակ կառքեր,
Բայց դու ման ես գալիս ոտքով։

Ոսկի, արծաթ, գոհարեղէն,
Իմ պարծանքը իմ դանձերը·
Թէ դոյանով չես բաւական,
Տես իմ երկու պատուի նշանք։

Դու ի՞նչ կեդրօն ես հարցանում,
Իմ կեդրօնը է իմ փորը·
Ոսկի, արծաթ, հարստութիւն
Ահա կեանքիս լոկ խորհուրդը։

Բան էք սորվել, յիմար գլեզ,
Թէ հայրենիք պիտի սիրել·
Բայց թէ ինչպէս հարկաւոր էր,
Ամենևին չկամիք լսել։

Ես սիրում եմ հայրենիքը,
Նրան միշտ ու միշտ գովում եմ·
Օտար ազգի առաջևը,
Պակասութիւնք ծածկում եմ։

Թէ մի աղքատ կը գայ իմ քով,
Նըրան կըտամ ողորմութիւն·
Բայց թէ որքան կամ ինչ չափով,
Այդ քո գործ չէ, նեղողութիւն։

Ամենայն օր դուք մեր ազգը,
Բամբասում էք անխղճմտանք·
Ազգի գլխից ձեզ պէսներով,
Եկաւ անցաւ այնքան փորձ

Ողորմելի, դու կարծո՞ւմ ես,
Թէ հայրենիքդ սիրելով·
Բան կը չինես, սխալւում ես,
Այդպէս յիմար մտածելով։

Քո ուսումը չէ կշտացնում,
Իմ, կամ իմպիսիների փորը·
Միշտ պիտոյ է հարստութիւն,
Որ պարարենք մեր մարմինը։

Հոգու համար ուսում պէտք չէ,
Ո՛ր սուրբերը ասել էին
Կրօնի ձևերը պահելով,
Անշուշտ կ՝երթամ արքայութիւն։

Ուրախացիր դու, Հայաստան,
Լսելով քու որդու խօսքը·
Փառք ու պատիւ գլեզ կը բերեն,
Քո մարմնապաշտ մեծատուններ։

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՄՈՒՍՍ. ՊԷԿԻ ԴԱՏԻ ԱՌԹԻԻ

Աւա՛ղ, չկայ մէկ մարդ արի,
Եւ հայութեան արիւնով լի·
Մէկ մարդ միայն հագարնելին,
Որոնք հայու արիւն կրեն·
Հայրենեաց մէջ մէկ հայ ուսան,
Որ չխրկէր Պօլիս Մուսան։

Մեր հայ քրոջ աչքէն թափած,
Դառն արտասուք արեամբ խառնած.
Ջ'ուզեր քիւրդին լըրուէթեան դոհ,
Գայլին մեր քերց պատիւքն ո՛հ.
Սիրա չչարժեց, ով հայ ուսան,
Որ խրկեցիր Պօլիս Մուսան։

Ի՞նչպէս կրցար աչքդ գոցել,
Ջո խեղճ մէրկան մեկնած բազկէն.
Ի՞նչպէս կրցար ականջդ խփել,
Անոր խղճուկ պատառ ձայնէն.
Ջեռքդ չորցաւ, ով հայ ուսան,
Որ խրկեցիր Պօլիս Մուսան։

Ո՛հ եղբայր իմ հայրենասէր,
Գործած սխալս դու մի տեսներ.
Ջի փոխանակ Պօլիս գալու,
Անիրաւին գանգատելու.
Իր տեղ պէտք էր ով հայ ուսան,
Վերջացնել դատն ու Մուսան։

Հայ պատանի, խելքդ ժողվէ,
Եւ Մուսայի դատէն սորվէ.
Թիւրքին չկայ արդարութիւն,
Այլ սուր, թուր և հրացան,
Պիտի գործեն արդարութիւն,
Եւ հայրենեաց ազատութիւն։

ԲԱԶԱԼԵՐ

Մեր փրկութիւն մօտ է հայեր,
Հայք ճանչնան բոլոր ազգեր.
Երկնից մէջէն հայի քաջեր,
Ոյժ թափեցին հայի սրտեր։

Որով և մենք առնենք հրացան,
Մեր թշնամեաց կ'անենք ցիր ցան.
Անի քաղաք և Հայաստան,
Պիտի լինի ջինջ բուրաստան։

Վտեմ փայլով պիտի փայլի,
Մեր հայրենիք արտերով լի.
կ'անցնին օրեր, կ'անցնին դարեր,
Աւելցնելով անոնց փառքեր։

Սէր, միութիւն ասենք բոլոր,
Գործ մը կ'ընենք վայրկենաւոր.
Ազատեցա կ'ըսեմ հսկայ որդոց,
Որ չթողնեն փրկութեան գործ։

Երնեկ տալով մեր վիճակին,
Ցիւրա, պարսիկ և տաճկին,
Կցորդելով հետ մեր բազկին,
Հայ թևոց տակ պիտ ծրարին։

Սրտով հոգով պիտի պաշտենք,
Ինարներով պիտի երգենք.
Բոլոր ազգեր պիտի կանչեն,
Հայի անուն բարձրացնեն։

Ս Տ Ր Ո Ւ Կ

Ձե՞ս տեսներ դու ոսքիդ ղարկած կուռ չղթան,
Է՛հ սարուկ բաց քու աչեր և սթափիր.
Առ քո սուրը ու քո ժանգոտ հրացան,
Թօթուէ լուծը, ազատ ապրիր կամ մեռիր։

Այո՛, սարուկ, ազատ եղիր կամ մեռիր,
Հայրենիքի հողին վրայ քաջաբար.
Ժայռի մը կող, փոսի մը մէջ դուն լինիր,
Բայց մի ծռեր քո գլուխը վատաբար։

Կայծակի պէս խիզախ եղիր, կատաղի,
Բաց քո կուրծքը, քո անդունդներ ահաւոր.
Ծըղդէ լեցուր, խորքերուդ մէջ ծարաւի՝
Արիւնդ ծըծող քո թշնամին դարաւոր։

Դուն չանթի մը եղիր արդարասիրտ անողոք,
Զարկ ըզկաէ բռնութեան սև դրօշակներ.
Հերի՛ք թափես քո արցունքներ ու բողոք,
Սարուկի ճայնն Աստուած անգամ չլսեր։

Ու երբ լեցնի քո վրէժը վըճռական,
Երբ քո սուրը կարմիր ներկած կը բերես.
Համբուրէ հայրդ որ քեզ տուաւ հրացան,
Մայրդ որ ուսուց քո հայրենիք միշտ սիրել։

Ս. Շ.

ԱՆՏԷՐ ՀԱՑՐԵՆԻՔ

Թշուառ հայրենիք, արիւնոտ երկիր,
Որը, անտիրական, ագաւոր, այրի,
Ով է հոգս անում, ով է մտածում,
Քեզ այդ վիճակից ով է ազատում։

Օսմանլին ու քիւրդ քո թշնամիները,
Արին քար ու քանդ քո չէն ու վանքեր.
Ծծկեր մանուկին ջահիլ կոյսերին,
Արին զոհ իրենց դաժան կրքերին։

Մնացիր մինակ, խեղճ անօգնական,
Սուգ ու յաւի մէջ, մայր իմ Հայաստան։
Էլ չկան որդիքդ հարազատ կորիճ,
Որ քեզ հոգս տանին լինեն կարեկից։

Էլ չկան ազնիւ անկեղծ գինուորներ,
Սուրբ ազատութեան արի պաշտպաններ.
Ամէնքն էլ կորան հողի տակ մտան,
Անտէր թողնելով հայն ու Հայաստան։

Հայ երիտասարդն է աննպատակ,
Ոսկու սիրահար կեղտոտ հացկատակ։
Կղեր մի փողի հոգի է ծախում,
Իր հօտի չահին է դաւաճանում։

Հարուստ թուխս նստած ոսկու դէզերին,
Սարուկ է դարձել չար բռնաւորին.
Մէկը մատնում է մէկը սպաննում,
Որ իր չահերին ընաս չհասնի։

Կռիւ է բացւել թշնամիների վրայ,
Գրչով սպառնում տառկին անխնայ.
Ամէնք այս կռւում քաջ են աչուղակ,
Իրենց նպատակն է փառքի պսակ։

Թէ մէկն էլ լինի քեզի կարեկից,
Նա էլ կը զրկւի շուտ իր կեանքից.
Հապա այդ ցաւից քեզ ով ազատէ,
Արիւնոտ վէրքդ ով պիտի դարմանէ։

ՀԱԼԱԾԱԿԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Ւ Ն Ք

Դաստաբանի դաշտում դառը վերջացաւ,
Մեր հայ մանկանց սրտեր յոյսով լեցուեցաւ.
Մեր հայկական մի խումբ կօտօշն անցաւ.
Աբշաւենք, սիրելիս, դէպի վան,
Աբշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան։

Հայդուկների ճամբան Դաւթիկ, Նաւթլան,
Կանչեցէք հայ տղերք պատրաստուած լինճ գան,
Մէջքերնիս պատրօնաշ, ձեռներ հրացան.
Աբշաւենք, սիրելիս, դէպի սիրուն վան,
Աբշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան։

Եկէք դուք, հայ տղերք, վառուած սրտերով,
Ճամբորդել սկսինք քաջ ընկերներով.
Հասնենք վան թուրքին փայլուն գէնքերով.

Աբշաւենք, սիրելիս, դէպի սիրուն վան,
Աբշաւենք, սիրելիս, դէպի Հայաստան։

Կանչեցէք, հայ տղերք, յոյսով հաւաքւած
Ուղղենք մեր մաղթանքներ սուրբ սրտէ բխած,
Մեզի օգնական է աստւած պետական։
Աբշաւենք, սիրելիս, դէպի սիրուն վան,
Աբշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան։

Ե Ր Գ

Խղճա ով Աստւած, հայերիս խղճա,
Առաջնորդիր մեզ, ու մեզ դուրթ արա.
Բացի քեզանից պաշտպան մի ունի՞նք,
Կամ այս մեր հալով, ասա՛, ուր դիմենք։

Ահա հայերս խպատ կոտորեց,
Ղուրանի զաւակ մեր տուն տեղ այրեց.
Հոսած արիւնից գետեր կազմեցան,
Հրդեհի բոցեր երկինք բարձրացան։

Մենք էլ չենք ուզում օտարին խնդրել,
Կամ պարապ յոյսերով աշխարհում ապրել.
Հեռու հեռու օգնութիւն նոցա մեզանից,
Պարլամէնտ, ժողով վատ են ամէնից։

Մեր յոյս ապաւէն եղբայր հայերն են,
Ոմանք Պարսկաստան, ոմանք Կովկասեն.
Սիրտ ու խրախոյս տուր այդ քաջերին,
Որ հասնին մեր այս նեղ ժամ, նեղ օրին։

Պ. ՑԱՐԵԹԵԱՆՑ

ԿԱՑԼԵՐԿ

Ցուսահատեալ մեղք է, ընկեր,
Սրիացիր ոտքի եւ.
Նայիր փայլեց հեռուստ լապտեր,
Մենք էլ կ'առնենք չուտ դադար։

Սրիացիր սիրտ առ, ընկեր,
Շարունակենք մեր ուղին.
Լսիր կարծեմ թէ դանգակներ,
Ղօղանչեցին սարերին։

Ահա բացուեց ազօթարան,
Վստահ ընկեր առաջ քալենք.
Ջինւոր ենք մենք արդարութեան,
Եւ անփորձ տեղ կը հասնենք։

ԴԱՐԴՎԱԴԱՆ

ՍԻՐԱՀԱՐ

Ահա եկաւ լուսինն արծաթ,
Մութ ամպերու տակէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ,
Դուրս սահեցաւ ժայռերէն։

Անուշ հովիկ, փչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր բուրբուրալիք։

Նաւակին մէջ իմ գեղուհին,
Փռւած անփոյթ լուսնի տակ.
կը ճայնակցի իմ կիթառիս,
Հնչուն ճայնով մը յստակ։

Անուշ հովիկ, փչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր ճայնն անուշիկ։

Ճայնով կ'երգէ սէր ու գըգուանք,
Համակ յուզումն ու սարսուռ.
Ալ թոզ աղջիկ երգը ու նազ,
Բոց աչերդ ինձ դարձուր։

Անուշ հովիկ, փչէ ուշիկ,
Ու դէպ ինձ բեր նաւն ու աղջիկ։

ՇԱՆԹ

Մ. ԱԽԵՏԻՍԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Օրհնեալ է վիշտ և անմռառց, զոր պանծալի յիշատակ,
Մեր հայրենեաց դարատաճանի բազմաչարչար ժիր մշակ.
Բարձր տաղանդովդ գիտցար ձեւր մշակելու մեր սրտեր,
Եւ ցանելու ազատութեան գաղափարի քաղցր սերմեր:

Գրչիդ ուժով դու չարժեցիր մեր ղգացմանց նուրբ ջիղեր,
Եւ դէպի կէտ նպատակին ուղղեցիր դու մեր քայլեր.
Մեռնիլ անվախ իսէր ազգին ամէնուրեք ուսուցիր,
Առաքեալի վսեմ սակայն դժուար պաշտօն յանձն առիր:

Ոչ եւրօպա փառք վայելքներ, ոչ նոր երկրի սին հրապոյրներ,
Ոչ կովկասի էքնազ սեռի կամար յօնքեր սևամթոյր.
կարողացան սիրել ազնիւ, առաքինի վեհ հոգւով,
Եւ դնել չափ ընկերց համար տաճած անկեղծ քո սիրոյդ:

Զինուոր էիր, թէ ուսուցիչ, թէ զօրապետ, թէ տեսուչ,
Հեզահամբոյր միշտ պահեցիր քնաւոր սրտիդ վայելուչ.
Պաշտպան օրբոց, ուժ անզօրին հանդիսացար ամէն տեղ,
Թշնամիդ իսկ խոստովանեց իմաստութիւնդ հանճարեղ:

Արմենական գաղափարին լինելով քաջ ախոյեան,
Մինչև վերջին շունչ դու պոռացիր ազգ, հայրենիք, հայասան.
Դու հայ ծնար, իբր հայ մեռար, հայ անուան էլ արժանի,
Թողուցիր մեզ անջնջելի մի յիշատակ պանծալի:

Գ. Պ.

ԿՕՏՕՂԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ցնծա, Հայաստան, ցնծա ուրախ լեր,
Չի ծոցումդ դեռ կան դիւցազունք անվեհեր.
Ոյց համար քաղցր է մեռանիլ ազատ,
Գան թէ ճանչցիլ քեզ անհարազատ:

Եւ դու, ով լուսին, ճչմարիտ վկայ,
Լուր տար եւրօպա և անդ ուր հայ կայ.
Թէ հայ երակաց մէջ գոյօդ կ'եռայ,
Անարատ արիւն դիւցազնին Հայկայ:

Թէ կօտօղայ նեղ ահարկու ձորում,
Ընկան գերդ առիւծ վէրք առած սրտում,
Անձնուրաց Նշան, անվեհեր Ղազար,
Եւ արևն խաչիկ իբրև զոհ արքար:

Հանգչեցէք խաղաղ ոգիք անձնուրաց,
Պատիւ և պարծանք ձեր մայր հայրենեաց.
Որ դառն երկունքով խիստ քիչ կը ծնանի,
Զեզ պէս զաւակներ, ընտիր ու բարի:

Գ. Պ.

Ո Վ՞ Է ՀԱՑԸ

Ո՞վ է հայը· մի՛թէ ա՞ն է,
Որ կը չքէ «ալամօտ»·
Անհրաժեշտ պէտք կը սեպէ,
Հանգնիլ անշուշտ «ռիտէնկօտ»։

Որ փողոցը լուռ կը քալէ,
Ոչ թէ հարը է կամ նազլու·
Այլ դրացին չի կռահէ,
Թէ ինք ծնունդ է հայու։

Ու կը փոխէ հայ անունը,
Ձօրճ կը դընէ կամ Հարաւինկ·
Կոտրըտւելով կը հարցնէ,
«Իթ խս փըրիթի տօնչ եու թինկ»։

Ո՞վ է հայը· մի՛թէ ա՞ն է,
Որ մեղք սեպէ մահացու·
Թէ չունենայ պանքային մէջ,
Հազար կանաչ միշտ պահցու...

Որ անտարբեր ծով ցաւերուն,
Բամպակ թիւէ ականջը·
Որ չըլլայ թէ իրեն հասնի,
Սոված որբին սուր կանչը...։

Ու ժամ կ'երթայ ամէն իրկուն,
Ծնկան չոքած խաչ հանէ·
Մոմ կը վառէ մօրը հոգուն,
Որ Տէրը գործին յաջողէ։

Ո՞վ է հայը· մի՛թէ ա՞ն է,
Որ երկրորդ օրը հոս գալուն·
Մօրուքին հետ պեխն ածիլէ,
Որ նմանի տեղացուն։

Ու կը մոռնայ հայի լեզուն,
Անշուշտ տգեղ ու կոչտ է·
«Պըթըը, մըտը, մըտըը, թտըը»
Մխզխւքի պէս կը հնչէ։

Ու օր մըն ալ սիրտը կուտայ՝
Այրիչի մը աղչկան·
Կը կարգէ տուն տեղ կըլլայ,
Խերը տեսնի... Ամրիկան...

* * *

Ո՞վ է հայը· հայը ա՛ն է,
Որ պինդ Մկպած այր—երկրին·
Արիւն ու կեանք գոհ կը բերէ,
Ազատութեան սուրբ գործին։

Անդրանիկն է, Սերոբն է ան,
Ան Դևեանն է ու վազդէն·
Ան Մարաիկն է, ե՛Ամեխսեան,
Սէմէրճեանն է ու Գուրգէն։

Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի ՑԻՇԱՏԱԿ ՋՈՒԽԻ ԹԱՋԵՐԻՆ,

Թէ թէև լինէր ինձ թռչել կրնայի,
Չէի սպասեր մի ժամ, մի վայրկեան.
Ձու սուրբ հոգեվերը գայի պսակել,
Եւ անբիծ արեանդ վերժը լուծել:

Ամէթ մեզի, ամօ՛թ, ընկերներ,
Մնալ անդէպ և ցարդ անտարբեր.
Ի՞նչպէս ձեր աղնիւ սիրտ կը դիմանայ,
Սիրա՝ որ ազգասէր լինել կը ցանկայ:

Մեր անմահ ընկերն քաջն Ագրիպպասեան,
Վերժ կը կանչէ իր անկեղծ արեան.
Թափուած առ ի սէր մեր թշուառ ազգին,
Եւ առ իսպառ ծանօթ հայրենիքին:

Ողբ, կոծ, աղաղակ չեն մեզ մխիթար,
Եւ ոչ մեր այրած արիւց դեղ ու ճար.
Անոր հեռուէն է առաքինի,
Ընկեր հարազատ, անկեղծ ու բարի:

Այն առիւծասիրտ վեհ Ագրիպպասեան,
Ու իր մտերիմ բախտակից վարդան.
Միմիչ չե՛ն տիպար ընկերասիրութեան,
Կամ մեծ ազատոյց ազգասիրութեան:

Ոչ մի նեղութիւն, վիշտ ու չարչարանք,
Կամ աչխարհային ունայն տենչ, պատրանք.
Ոչ իսկ թշնամուն սուրն ու հրացան,
Զը կրցան խզել սուրբ կապն միութեան:

Ուխտեցին անոնք ապրիլ միասին,
Դարման մը գտնել իրենց մօր վէրքին.
Որ յետ հինգ դարուց կարօտ բժշկի,
Անպատուհաս ցաւօք կը հալի մաշի:

Սրբէ աչերիդ, մայր իմ գթառատ,
Թափած արտասուք քո յորդ և առատ.
Չի տեսանես դու քաջ որդիք ազատ,
Սրի՛, անձնուէր, բարի հարազատ:

Սիրուդ կրակով վառուղներ չատ կան,
Վէրքերիդ վրայ չատեր կը ցաւան.
Կ'ապեւանենք գիմած, Ատուած բարերար,
Որ մեզ կարկառէ իր ձեռքն աստար:

Թէ կը պարծի Խաղտիքն իր Հմայեակով,
Կամ գաշտն Աւարայր իր մեծն Վարդանով.
Հայրենեաց պաշտպան քաջ նահատակով,
Զուխն էլ կը պարծի իր հերոսներով:

Հրճուէ՛ դու, Զուխ լեռ, հրճուէ ուրախ լեր,
Չի կրես իքեզ դիւցազք անվեհեր.
Այդ արեան անուշ բուրումն խնկաւէր,
Հատու խնկարկինս Տիրոջդ ինձէր:

Հանգչեցէ՛ք խաղաղ, ոգիք պարծանաց,
Չի ձեր յիշատակն է միշտ անմոռաց.
Ամէն գլուխն հայ անհատներուն,
Մանուանդ նախնի քո ընկերներուն:

Ուխտած են անոնք լինիլ հեռուզ,
Ձեր սուրբ կատկին ըլլալ կատարուզ.
Եւ կամ ձեզ նման մեռանիլ ազատ,
Թողուլ աչխարհումս անուն անարատ:

Հայր, մայր, քոյր եղբայր, ոչ իսկ ամուսին,
Սրգելք չեն կրնար լինել սոյն ուխտին.
Նոյն իսկ թշնամուն սուրն ու հրացան,
Չեն կրնար խզել սոյն ուխտ միութեան։

Ձեր աչակերտաց ցոյց տւած աւիւն,
Երբեք չի պիտի մնայ ապարդիւն.
Անոնց սրտի մէջ ձեր ցանած սերմերն,
Պիտի պարգևեն առատ պտուղներ։

Ձեր սրտերի մէջ տեսած մեծ կորով,
Կ'օրինակէին ամէնայն փութով.
Հայրենեաց մասին տածած ձեր մեծ սէր,
Կը զօրացնէին անոնց թոյլ սրտեր։

Եւ դուն, ո՛ լուսին, ճշմարիտ վկայ,
Լուր տար Եւրօպա և Ամերիկա.
Թէ հայ երակաց մէջ ցայսօր կ'եռայ,
Անարատ արիւն դիւցազին Հայկայ։

Թէ քաջն Օհաննէս և հայրն Ագրիպպաս,
Գնացին յերկինս Տիրոջ խոպաս։
Անմահ անուննին դրոշմել տալով,
Երկնից տոմարում անեղծ մելանով։

Լուր տա՛ր ի Մարսէյլ, մեծ ազգասէրին,
Տեսնել պտուղներ իր ցանած սերմին.
Խրախոյս տուր անոր, կարդա՛ քաջալերի,
Թէ պիտի քաղես սերմիդ պտուղներ։

Եւրօպ, Ասիա, Ֆրանսա, Զինաստան,
Ուր այժմ կան թափառ մեր ազգ Թորգոմեան.
Բողոքեն բարձր համայն մարդկութեան,
Ընդդէմ Թրքական բռնապետութեան։

Գ. Պ.

ՇԱՀ ԱԶԻԶԵԱՆԻ ԵՐԱԶ

Ես լըսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նըշոյլ ուրախութիւն,
Ա՛հա ափսոս որ երազ էր։

Կարկաջահոս աղբիւր այն տեղ,
Թաւալում էր մարգարիտ.
Նա յըստակ էր որպէս բիւրեղ,
Ա՛հա, ափսոս որ երազ էր.

Եւ մեղեդին սըխուր մայրենին,
Ծիչեց մանկութեանս օրեր.
Մօրըս համբոյր ես ըզգացի,
Ա՛հա, ափսոս որ երազ էր։

Կուրծքին սըղմեց կարօտագին,
Աչերը սըրբեց, շատ թաց էր.
Բայց արտասուք գընում էին,
Ա՛հա, այդ ինչո՞ւ երազ էր։

ՈՂՋՈՅՆ Ա.Ռ ԽՐԻՄԵԱՆ

Թէ ի՛հրացան, դրօշ մահաբեր,
Ա՛յլք ողջունեն իրենց տէրեր.
Կամ իգոռիւն թնդանօթաց,
Ա՛հեղ ողջոյն տան իշխանաց.

Մենք մեր սրտից իրաբանիւն,
Խոնարհ այլ ջերմ սաղմք քեզ ողջոյն.
Եւ թէ չունինք դրօշըս արեան՝
Հեզ ձիթենիք են մեր նշան,

Օ՛հ, Հայրիկին ընդ առաջ,
Երթանք, հայե՛ր, աչ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն,
Ջափըն որդոց հօր լաստէն:
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
»Ողջո՛յն քեզ, ո՛ Սբրիմեան»:

Հրեչատո՛ղ յուսոյ, թռիր առ մեզ,
Շո՛ւտ թառեցար, բո՛ւռ սրտակէզ
Համբ ինոճիս աւերակաց...
Թէ բարեկամ ես ամայեաց՝
Մեր սիրաք ալ են աւեր, թափուր.
Լից ըզնոսա հոգւոյդ ի հուր.
Բոցովդ աչաց սառն արծարծես,
Զանզգայ սիրտս խակ վառես:

Օ՛հ, Հայրիկին ընդ առաջ,
Դիմենք, հայեր աչ ի յաջ,
Հերի՛ք կոհակք անջատեն
Ջափըն որդւոց հօր լաստէն.
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջո՛յն քեզ, ո՛ Սբրիմեան»:

Մեզմ Սատուծոյն հեզ փառասիրեան,
Դու խաչակի՛ր խաղաղութեան,
Շանթից փոխան մեզը հոսէ,
՝Զմեզ վերացու յայս թուխս փոսէ:
Եւ մուխի մէջ, Հայաստանցին,
Թէ կորնչի հեծեծագին՝

Հասցու նմա ջահ լուսաւոր
Զե՞ս դու լուսոյ ուխտեալ պինդ որ:

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ
Վազենք, հա՛յեր, աչ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն
Ջափրն որդոց հօր լաստէն.
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջո՛յն քեզ, ո՛ Սբրիմեան»:

Բախան այս անգամ բանայ գաչեր,
Նահատ արժէքն հանէ ի վեր.
Եւ թէ թաւչէ տայ քեզ գահոյս՝
Լօռուտ գաւերս ածէ ի յուշ.
Եւ գաւազան թէ տայ ոսկի՝
Դու նոյն հովիւն ես պարզ, արի:
Որ ջաղխեցիր ի ցուպդ անփուտ
Գայլըս վայրի, քուրդըս անգութ:

Օ՛ն Հայրիկին ընդ առաջ,
Թռչինք, հա՛յեր, աչ ի յաջ.
Հե՛րիք, կոհակք անջատեն
Ջափըն որդոց հօր լաստէն.
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջո՛յն քեզ, ո՛ Սբրիմեան»:

Մարդ որ հզօր է ի պատժել,
Զի՛ անզօր է ի վարձատրել.
Երկու աւերև, մինչ մեծ արք կեան,
Մի քար՝ երբ չեն. — ա՛յս իր վարձան...
Հայրիկ, քո վարձն է վեհագոյն.
Դէմ սըլաքաց վառ նահանձուն,
Դէմ գընդակաց կոյր խաւարի,
Մեր լանջասպար քեզ կանգնեցի:

Օ՛ն, Հայրիկին մենք առաջ
Սըփռենք մեր իղձ և հառաչ
Մեր երակաց գիտէ թինդ,
Ըզգայ սրտից խոց և խինդ ...
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջո՛յն քեզ, ո՛ Խրիմեան»։

ՄԻՆԱՍ ՁԵՐԱՋ

ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Իջէ՛ք զուարթունք՝ և ի ձեր թևս ապաստան
Ցայց եկցուք այսօր իցանկալին Հայաստան.
Ըզծաղկապսակդ ածէք այսր զքնար՝
Որ երգէր երբեմն ի դրախտն Ադենայ.
Հանդուցեալ այժմիկ իշխրմայ սնար,
Զայն տուք, զարթուցէ՛ք, զորդիս Արամայ։

Ասաի դիւցազունք
Թողեալ զդամբան,
Եւ անաի զուարթունք
Երգեսցեն միաբան
Ողջո՛յը քեզ, ողջո՛յն,
Սէր և միութիւն։

Ո՛վ, որ յեցեալ ի ախուր սաւոր դիւցազանց,
Գլխով յերկինս ածես նամէտ բիրս աչաց։
Ո՛վ Հայաստանեայց ոգի սրբանուէր՝
Ահա հաշտ ակամբ ժպալի քեզ Աստուած,

Պարզի երփներանգ լար կապոյտ յերթեր,
Դառնայ աղաւնեակն ոստով ձիթենեաց։

Եփրատ ու Տիգրիս,
Որմիան առ Սևան,
Տալով աւետիս
Հնչեսցեն միաբան.
Ողջո՛յն քեզ, ողջո՛յն,
Սէր և միութիւն։

Ակ ի յակ, սիրտ ի սիրտ, ոգի խառն յոգի,
Մարտիք, օ՛ն անդր, յասպարէզ, սիրտք հայեցի.
Զի չքնաղ տեսիլ պարզի արդ յաչս իմ...
Ահա «յոյս» և «սէր» որպէս պոյգ հրեշտակք,
Առաջնորդեն մեզ... ո՛վ Տէր... խաբեի՞մ...
Ո՛չ, պայծ֊ծվկայեն սիրոյ այդ բաժակք...

Հայկեանք առ Հայկեանս
Դարք դարուց, որ գան
Տալով արձագանս
Կրկնեսցեն միաբան.
Ողջո՛յն քեզ, ողջո՛յն,
Սէր և միութիւն։

Թ. ԹԵՐՉԵԱՆ

ԿԱՐՆՈՑ ՁԱՅԱԿ

Լուրը հնչեց ի Հայաստան,
Մեծաց հայոց բարձր աշխարհից.
Թրթռաց բոլոր սիրտ հայկական,
Հայն արթնցաւ իր խոր քընից։

Կարնոյ զաւակ ազատութեան
Հնչեց նախկին աւետաց ձայն։

Հայաստանի սարեր, ձորեր,
Ոգի առին սառած սրտեր.
Զի կաշկանդւած հայի բազուկ,
Փշրել փորձէ չղթայ սարուկ։

Կարնոյ զաւակ ղեցայեանի,
Թէ արիւնով չղթան փշրի։

Համբերատար հայ սիրտ ճակատ,
Ո՛հ, երկուցին մինչ ի փոշի.
Իր մարդկային պատիւն ազատ,
Շատ անարգեց ձեռն լրբին,

Երբեաւ ուխտեց, կարնոյ զաւակ,
Արեամբ սրբել սա անարգանք։

Իր իրաւանց, սուրբ պահանջմանց,
Ո՛հ, փոխարէն արդար ձայնին.
Բանտ և չղթայ, հրաւէր մահւան,
Պատրաստեալ է հայ ընտրին։

Կարնոյ քաջաց, չղթայից ձայն,
Հնչեց հայի փրկութեան ժամ։

Սակայն խարդախ, մատնիչ վատակ,
Եղաւ հայուն իր վատ եղբայր.
Թէ չը լինէր ցած սիրտ Զանգակ,
Ղեւոնդ, վարդան, ե՞րբ քաջանար։

Կարնոյ զաւակ, ազգի համար,
Կր պատժէ նաև մատնիչ եղբայր։

Ազգի անմահ նահատակներ,
Ձեր սկզբունք չպիտի մեռնին.
Շղթայ, բանտ, մահ, նորնոր քաջեր,
Ձեզ հետևորդ պիտի ծընին։

Կարնոյ զաւակ, քո վեհ հոգին,
Արդ կը ներշնչէ ողջ հայ որդին։

Ազատութեան մարտիրոսներ,
Ձեր քիրտ, արիւն, վեհ հառաչանք.
Պիտի լինին հայի նոր կեանք,
Դուք հայրենեաց վեհ որդիներ։

Կարնոյ զաւակ, մեծ պարծանք քեզ,
Վատ է այն հայ, որ չէ ընդ քեզ։

Հայոց քաջաց ազնիւ մայրեր,
Դուք մի՛ սգաք, մի՛ արտասուէք.
Ձեր քաջ որդիք ազատարեր,
Փրկիչ ծնաք հայրենեաց հէգ։

Կարնոյ մայրե՛ր, վասն հայրենեաց,
Ծնէ՛ք ազատ որդիներ քաջ։

Ո՛հ, դու հայ մարդ, որ Հայաստան,
Ծնաւ անուց քեզ իր զաւակ,

Եւ հայու կրօն, սուրբ աւազան,
Դրօշմեց խաչով իր նահատակ։

Չե՛ս դու երբեք, չե՛ս հարազատ,
Թէ չպաշտպանես սա հայ սուրբ դատ։

Հայոց ազգն չնչէ ձեզ կեանք,
Հայ դիւցազունք և զօրականք.
Ընդունեցէք իմ համակրանք,
Դուք հայրենեաց վեհ որդիներ։

Ազատն Աստուած երկարդկութեան.
Ձեզ օրինակ ողջ Հայաստան։

Մ. Թ.

ՋՕՐԱԿԱՆԻՆ ԵՐԳ

Խելքս ու միտքս արիւնաչաղաղ,
Օրեր կըսպասեն որ գան անյապաղ.
Այս օրերն են որ աշխարհ կը քանդեն,
Այս օրերն են որ աշխարհ կը վրկեն։

Ձէնքի չառաչիւնը թէ երկինք հասնէ,
Բայց մեր դրօշակը յաղթութիւն յայտնէ.
Հրճւանք ու պարծանք է այն իմ համար,
Ամէն ցանկութիւնքս կ'ստանան կատար։

Սըրնըթաց ձիուս կողերը կը խթեմ,
Որ քաջերի մէջ շուտով հասանեմ.

Հայրենեացս համար չէ՛ լինչ իմ աչքում,
Ոչ վէրք և ոչ մահ և ոչ գերութիւն։

Թէ սուր թշնամուն սիրտս թափանցէ,
Ունիմ ես մի ոգ որ խոցս ծածկէ,
Ունիմ ես մի ոգ որու նէրքը,
Հզօր քան բալսամ կը բուժեն իր վէրքը։

Իսկ թէ թշնամիք գերի լինճ առնուն,
Կըգայ կը գանէ նա լինճ մութ բանտում.
Երկու գեղեցիկ աչկունքը փայլուն,
Կը լուսաւորեն խաւարիս անկիւն։

Թէ մահ հանդիպի պատերազմի մէջ,
Կըգայ իմ հրեշտակ, կինըս սիրատենչ.
Արիւն թաթախս մարմինս լուանալ,
Իր արտասուքով՝ նա չի ձանձրանալ։

Մ. ԲՈՒՏԱԽԵԱՆ

ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆ

Ծագկաւէտ դաշտի վրայ ցօղը կը փայլի,
Առտուան հրաւէրն է քեզ, ո՛վ պատանի.
Օ՛ն, չահէ ջանքովդ ոսկեղէն ժամեր,
Գործելու ատեն է և կուգայ գիշեր։

Կէս օր մօտեցած է, արդ օր հասարակ,
Կէս օրւան յորդորն է քեզ միջահասակ.
Դեռ ևս տաքութիւն կայ, գործդ մի ձգեր,
Բանդի վարձքդ մեծ է երբ որ գայ գիշեր։

Կ'երկննան չուքերը, օր կը վախճանի,
Իրիկւան հրաւէրն է քեզ, ո՛վ ծերունի.
Քիչ է ժամանակը ձեռքդ կը թողնայ,
Կատարէ քու գործերդ դի գիշեր կուգայ։

ԺԱՄԱՆԱԿ ՀՅՑՈՑ

Կար ժամանակ որ և հայերն,
Արքայ իշխող ունէին.
Եւ գինավառ անթիւ զօրքեր,
Իրենց երկրամբ պահէին։

Կար ժամանակ որ և անունք,
Նման ծաղկած պզտերի.
Զարդարելով աշխարհ Հայկայ,
Փայլում էին անուանի։

Բայց այժմ անոնք, անթագաւոր,
Գերի, ծառայ ցաւագին.
Այստեղ, այնտեղ խիստ չքաւոր,
Զարշարուած են գլխովին։

Հիմա անոնք անմխիթար,
Հայրենիքից զրկւելով.
Վա՜յ են կանչում թշւառաբար,
Հալածանքներ կրելով։

Ց. Մ. ՎԱՆԱՆԴԵՑԻ

Հ Ա Ր Ա Զ Ա Ն Ք

Կաց դու վայր մի, բարեկամ,
Իմոյս ցաւոց լեր կցորդ.
Լալօնք աչացս սասակապին,
Ցորդեաց ըստ գարնան հեղեղին։

Լիճ պատյտեայ չուրջ գինև,
Ոսկերս մամուռ ներկեցին.
Ես ափեր էի գաւառացդ,
Որք ծածանին լայնադիր։

Խնամոտ սիրով կաթոգին,
Պահպանէին ըստ աչաց.
Հողմուռուցիկ սկիւթեան,
Փոթորկելով աստ եհաս։

Կամէր լափել զհայրենիս,
Հաւասս առնել տարամերժ,
Որոց զօրուն իդիմաց,
Ոյժ զօրութիւնս ոչ եհաս։

Վասն այն աչխարհ Սեբաստեան,
Գաղթեալ ցաւով չոքան անդ.
Բայց ծայր լերինն վարագայ,
Ոչ ծածկեցաւ յիմ աչացս։

Տիպ տաճարաց աննման,
Որք իմ քրտամբք բարձրացան
Զեզ և. ջնջեալ յիմ մտաց,
Մինչև մահն կալաւ զիս։

Կտակ թողի իմ որդոց,
Զիս մի թաղել օտար հող.
Այլ առ ոտամբ վարագայ,
Որոյ խեր վառեալ կամ։

Ամփոփեցայ ի քնարան,
Եւ դեռ ասա կամ նոյն յուսով.
Սպասեմ աւուրց գարնայնոյ,
Չի ճեաք դրան Արծրուենաց.
Ջիլիճ առեալ ընդ հաւուց,
Կացեն նոր բախտ, նոր արև։

Դ. Ֆ. Ա.

ՄԻ ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Հայրենիքէն ողբի ձայներ կը լսւին,
Որք ապառաժ սիրտերն անգամ կը յուզեն.
Միթէ դուք չէ՛ք լսեր այդ ձայն տխրագին
Զոր ձեր թշւառ մայր կ՝արձակէ իր սրտէն։

«Հայե՛ր, մինչև ե՞րբ զիս պիտի մոռնաք,
«Ձեր հայրենիք ցե՞րբ մնայ աւերակ»։

Ա՛հ, անգութներ, որ հայ անուն կը կրէք,
Բայց այս ձայնին անկարեկիր սիրտ ունիք.
Ձեր մէջ չըկայ հայկի անուն, դուք հայ չէ՛ք,
Ճչմարիտ հայն կը սիրէ իր հայրենիք։

Կեցցէ՛ յաւիտեան մեր հայ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Հնա՞րէ որ մարդ չը սիրէ հայրենիք,
Մինչ գազանն իսկ կը պաշտպանէ իր որջը.
Ի՞նչ անուն տանք այն հային որ է գործիք,
Օտարին ձեռք՝ իր հայրենեաց դաւ լարել։

Կեցցէ՛ յաւիտեան, մեր հայ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Չէ՛, ալ մենք չե՛նք կարող մնալ անտարբեր,
Հայրենիքի երբ ձայնն դէմեզ կը կանչէ,
Մենք բարձրագոչ ձայն տանք, յառա՛ջ, ո՛վ հայեր,
Եւ թող տեսնեն վասպուրականն ալ վատ չէ՛։

Կեցցէ՛ յաւիտեան, մեր հայ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Հայկի թոռնե՛ր, տեսէ՛ք, Մասիս սարերէն,
Քառասուն դարեր կը դիտեն ձեր չարժումները·
Ցառա՛ջ անվախ այն դրօշակի ետևէն,
Ուր կ՝ամփոփուին հայրենասէր քաջ հայեր։

կեցցէ՛ յաւիտեան, մեր հայ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց միութիւն»։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Հ Ա. Ց Ա. Ս Տ Ա. Ն

Հայաստա՛ն, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոց ցեղիս որրան·
Դու և բնիկ իմ հայրենիք,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Իվեհ անուանդ սիրտ իմ ո՛հ յոյժ,
Ոգեւորի ինոր խրախոյս·
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ, յոյս իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Հայաստան, անուն փարելի,
Ի քեզ հանգիստ նոյեան տապան
Եգիտ, և քեզ ապրեցաւ նոյ,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Գետք քաջառողջք ստեներաւղիք,
Զհողդ բարի առնեն յուղիւ·
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
Քե՛ւ, քե՛ւ, պանծամ, փառք իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Հայաստան ծնող դիւցազանց,
Եւ հրաշալեաց հանդիսարան·
Քո գեղիւռն քաղցր է չնչիւն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Զոր չնչեցին և գօրացան,
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան·
Զքեզ, յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն։

Ց. Մ. ՎԱՆԱՆԴԵՑԻ

ԱՌ ՀԱՑՐԻԿՆ ԽՐԻՄԵԱՆ

Հայրի՛կ, Հայրի՛կ, քեզ աւետիք,
Վասպուրական մեր աշխարհ
Փուշը խլեց, քեզ վարդ բերաւ,
Հրճւի՛ր, ցնծա՛, բիւր հազար։

Մայիսն երբեմն սոխակներով,
Եկաւ զարճաւ լալագին·

Երբ գայ հիմա, էլ չի դառնար,
Պիտի երգէ սխրագին։

Հայրի՛կ, Հայրի՛կ, քու վարդերուդ,
Աչքիկ փուչերն սայրասուր.
Վարդին դարձիր, բացւին, բուրեն,
Անմահ թերթերն քաղցրաբոյր։

Եւ են չարփոյր սուր սլաքներ,
Համբերութեանդ գահին տակ.
Գոհար, ակունք դարճած ամէն,
Ցօրինւեր են զարդ ու պսակ։

Հայրի՛կ, Հայրի՛կ, բաց քու վէրքերդ,
Մենք պատրաստ ենք համբուրել.
Սիրոյ աղնիւ պալասանաւ,
Զայն պատւաստել օծանել։

Հայրի՛կ, Հայրի՛կ, թող փարատին,
Քո տապակացած սև ամպեր.
Հերի՛ք հեղեղք դառն արտասւաց,
Գան արտասւել սուրբ այտերդ։

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Պսակ հիւսել քեզ համար.
Ձեռքեր ամէն, սրտեր ամէն,
Պիտ՝ վիճանն քեզ համար։

Հայրի՛կ, Հայրի՛կ, հայուն բունիկ,
Անմահացուր դու մեր կեանք.
Մօտիր, դպիր, կեանք տուր հայուն,
Եւ ասա մերձ է քո փառք։

Նաև երկինք ահա կախէ,
Քեզ թագ վառաց աստեղեայ.

Հայ հայրապետք այն թագին չուրջ,
Շարեն ակունք չափիւղեայ։

Բազմիր աթոռ Լուսաւորչին,
Հայոց մեծաց գերակայ,
Սահակ Պարթև խոնջած յոգնած,
Իր գաւազան քեզ կուտայ։

Հովւիր հօտդ գաւազանաւ,
Սփռէ, ցանէ, նոր կեանք, լոյս.
Ամէն հասակ կ'օրհնէ գքեզ,
Դողդոջ ծերուկ, մատաղ կոյս։

Հ. ՃԱՆԻԿԵԱՆ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ԳԱՆԳԱՏ

Հայ պատանի գանգրահեր,
Սիրուն աչերդ լինճ դարճուր.
Ջոյդ անձկայրեօք սիրատոչոր,
Հալւիմ, մաշւիմ օրից օր։

Եւ քո սիրուն — Հայաստան,
Հարց քաջագանց սրօրան.
Ինինչ քաղցրիկ առին հանդիստ,
Տրդատ, Վարդան և Վահան։

Մի վարանիր աստանդական,
Թափառական սար ու ձոր.
Կա՛ց Հայաստան ի հայրենիքդ,
Ուր կան նախնիքդ բիւրաւոր։

Թէ մեռանիլ հասանիցէ,
Մեռիր մահուամբ և գործքով։
Սիրէ՛, գրկէ՛ հայրենի հող,
Ներկէ՛ քո սուրբ արիւնով.

Այդ ինձ համար և հայրենեաց,
Անմահական յիշատակ.
Չի գոյութիւն և սուրբ անուն,
Դարուց ի դարս կը յարատևէ։

Գ. ՇԷՐԵՆՑ

ՀԱՑՈՒՀԻՆԵՐ

Հեռու ձեզանից, հայուհինե՛ր, տարագրած եմ ես,
Օտար աշխարհում, հայուհիներ, պանդխտած եմ ես.
Աստուած կը սիրէք, օրիորդնե՛ր, պահէք ձեր լեզուն,
Ազգ ու հայրենիք, օրիորդնե՛ր, և մեր հայոց տուն։

Օտարի խելքը, հայուհիներ, մեզ օգուտ չունին,
Օտարն է օտար, հայուհիներ, մեզ միտս ունին.
Երբ լոյս կը բացւի. օրիորդներ, չուտով վեր կացէք,
Ազգ ու հայրենիք եկեղեցի ձեր մաքով բերէք։

Մայրեր կը լինիք, օրիորդնե՛ր, կուենանաք զաւակ,
Պատրաստեցէք անոնց, հայոց մայրեր, մէկ մէկ նահատակ.
Պաշտել սուրբ կրօն, հայուհինե՛ր, սիրել սուրբ ուսում,
Այս է իմ աւանդ, հայուհինե՛ր, զոր ձեզ կը թողում։

Գ. ՇԷՐԵՆՑ

ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳ

Արև արև, դուրս ելիր,
Աչքդ ունքդ ինձ ցոյց տուր.
Ցրտից ճանս դողդում է,
Ձըպլախ որբիս տաքացուր։

Հօրըս մօրըս սպանաւ
Ֆաֆիր Թուրքը, ուր գընամ.
Փարա չունեմ, վայտ առնեմ,
Օճախ վառեմ, տաքանամ։

Արև արև, թէզ արա,
Ռուք բօրանը գալիս ա.
Էս օր ցրտից որ մեռնիմ,
Էլ արևդ ինչիս ա։

ՍԻՄԷՕՆ ՍԱՓԱՐԵԱՆՑ

ԴԱՆԱԿԸ ՈՍԿՐԻՆ ՀԱՍԱԾ

Հայքս Հայաստանում խլամին առջև,
Իսկի չենք տեսել օր կեանք և արև.
Ամէն օր սև լուր, ամէն օր սև լաց,
Ամէն օր արիւն, թարախ մեր ջուր, հաց։

Բաւ է, բաւ է, բաւ մեր արցունք կուց կուց
Զոհւինք վերջանանք կամ թօթւենք թիւրք լուծ։

Թրքին դարաւոր անգութ լծին տակ,
Խեղճ հայոց տունը քանդւեց եղաւ բակ։
Հայքս այժմ զարթած, թօթւել ենք վճռած,
Լուծը դարաւոր, այն անարդ և ցած։

Բաւ է, բաւ է, ևլն.

Զմեաց պատիւ, սրբութիւն և կեանք,
Աչխարհի առջև խայտառակ եղանք.
Դանակը ոսկորնուս հասել է արդէն,
Կամ մահ կամ թիւրքին լուծը թօթւենք դէն։

Բաւ է, բաւ է, ևլն.

Մեր Տէր Քրիստոս եկաւ մեր երկիր,
Փրկութեան օրինակ տւաւ խաչ կարմիր.
Ուզում ենք փրկւիլ լինենք նահատակ,
Զոհ կ'ուզէ ամէն մի մեծ նպատակ։

Բաւ է, բաւ է, ևլն.

Այո՛, մեծ մեղք է ու չատ մեծ ամօթ,
Եթէ չկռւինք ու լինինք վախկոտ.
Երբ ճշմարտութեան սրբութեան պատիւ,
Հարկաւոր լինի պաշտպանել իկռիւ։

Բաւ է, բաւ է, ևլն։

ՀԱՌԱՋԱՆՔ

Սա տխուր վիճակ տարաբախտ ազգիս
Ինչ արիւն արցունք կը հոսեցնէ,
Նոր նոր յոյս տածող հայոցս աչերէն,
Սա մեր անողորմ բախտին հարւածներ։

Քանի սրտառուչ հառաչանքներով,
Ճմլեն հայ սրտերն, դողհար ու երեր
Ով Տէ՛ր, բաւ չէ՞ին ինչ որ մինչև ցարդ
Կրեցին սուր ցաւ, աւեր և աւար։

Ով դու հաչտութեան ծիածան զւարթ,
Մեր սուրբ հայրենեաց երկինք պարզեցիր.
Եւ դեռ չչնորհած զարիւն հայրենի։
Կը զրկես գմեզ աստղէն հայրենի։

Մէկ սիրտ, մէկ հոգի ամէնքս մէկ անուն,
Մէկ յոյս մէկ հաւատք կրող մէկ արիւն.
Մէկ ազգային և ահեղալուծ,
Ինչու չմիանանք իմի յօդ սիրոյ։

Մի՛ զմեզ Տէր, մի պատժեր անաչառ,
կեցուր քու չանթերդ բարկութեան արդար·
Զիրար սիրելու, օգնել իրարու,
Կ'ուխտենք աւասիկ ուխտ սուրբ խորտէ·
Եւ խաղաղութեան թողգ գայ հրեշտակ,
Միութիւն և սէր պահել ի սիրտ մեր։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ


Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Երբոր լինի գարնանամուտ նոր գարուն,
կը բազմանան վտակներդ հայրենիք·
Շար իշար ցնծութեամբ երգով գուարթուն,
Շարժումն են բանակներդ հայրենիք։

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն,
պէս պէս գունով ծաղիկներդ գալարուն·
Զեն գադարիր աշխատելուդ օրն ի բուն,
Քու հարազատ մշակներդ, հայրենիք։

Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քո մէջդդ անմահութեան հոտ կուգայ,
Հազար ափսոս Լուսաւորուած չեն հիմա,
Ժողովուրդդ, գաւակներդ, հայրենիք։

ՍՇՏԳ ՃԻՎԱՆԻ



ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ծնած է 1828ին՝ Կ. Պոլիս, հայ—հռոմէական աղքատ ծնողքէ մը. խրկուած է վենետիկ և աշակերտած է Համբաւաւոր Մուրատ–Ռաֆայէլեան վարժարանին:

Պոլիս վերադարձին դաստատուելեամբ զբաղած է և բնաւ չէ կրցած նիւթական միջոցներ ունենալ՝ իր գրագիտական վաստակները լեցնելու համար. Ծոգնութիւնը և նիւթական զոհողութիւնը, զինքը թոքախտի կ'ենդարկեն, մինչդեռ միւս կողմէ իր գրուածները սկսեր էին արդէն ժողովրդականութիւն գտնել և իր թատերգութիւնները բեմերու վրայ ծափահարուիլ

Իր հիւանդութեան միջոցին բազմաթիւ այցելուներ իր վերջին ժամը կը քաղցրացնէին: Իրեն յաճախ այցելողներուն մէջ կը յիշատակուին ծանօթ անձնաւորութիւններ, որոնք միանգամայն իր մտերիմ բարեկամներն էին Տքթ. Շիշմանեան (Ծերենց), Պատուելի Միսաքեան, Միքայէլ փաշա Փորթուքալեան, Գրիգոր Օտեան, Օր. Սրբուհի վահանեան (Տիկ. Տիւսաբ) և նշ. Հ. Ղեւոնդ Ալիշան և եդուարդ Արքեպ. Հիւրմիւզ ևս անոր մտերիմներն էին, ու մինչ կը թուլթակցէին հեռը:

1868 Նոյեմբեր 29 (Հ. Տ.) կը վախճանի Պէշիկթաշլեան 40 տարեկան հասակի մէջ, և մեծ հանդէսով կը թաղուի: Նշանաւոր անձեր գամբանական խօսեցան, գեղեցիկ չիրիմ մըն ալ կանգնեցին իր գերեզմանին վրայ, որուն գամբանագիրը գրեց եդուարդ Արքեպ. Հիւրմիւզ:

Պէշիկթաշլեան առ հասարակ ամբողջ ազգէն յարգած է և նկատուած է իբր «առաքինի, համեստ, անշահասէր, ճշմարտասէր և ճշմարտախօս» անձ մը: Իր մահէն երկու տարի ետք (1870) Կ. Պոլսի մէջ հրատարակեցաւ իր գործերը: Իր ոտանաւորներէն շատերը գրաբար են, գեղեցիկ ոճերով և բանաստեղծական բարձր թռիչներով, թարգմա-

նած է նաև իտալերէնէ, լատիներէնէ և ֆրանսերէնէ՝ գեղեցիկ ոտանաւորները, ազատ վերածմամբ։

Թողած է չատ մը ողբերգութիւններ հայ պատմական կեանքէն առնւած, և քանի մը կատակերգութիւններ։ Թարգմանած է նաև քանի մը նշանաւոր ողբերգութիւններ իտալերէնէ (Սաւուղ), ֆրանսերէնէ (Վոլթէրի «Մահ կեսարու»), եայլն։

Իր բանաստեղծութիւններուն մէջ ամէնէն աւելի ժողովրդականութիւն գտնող և մեզ ամէնուս սիրելի երգերն են. «Ի բիւր ձայնից», «Ո՛հ ի՛նչ անուշ», «Մնասցես բարեաւ սէր իմ սէր», Զէյթունցիի «Դու զո՞վ խնդրես»ը, «Ոչ փոխ գարկինք»ը, «Դու փափկաթև մանկիկ զեփիւռ», «Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն» ևլն. ևլն։

Իր ինքնագիր և հրատարակուած ողբերգութիւններն են «Կոռնակ», «Արշակ Բ.», «Վահան Մամիկոնեան» և «Վահէ թագաւոր». իսկ կատակերգութիւնները «Աւազակները» և «Երեք քոչերը»,

---

Ծ Ե Ր Վ Ա Ն Ե Ց Ի

Մութէ գիշերս. ինչպէս սիրտս ալ,
Եւ թուխ ալիք մշտափրփուր.
Վանայ ծովուն ծփածաւալ,
Հառաչանօք լի են ալխուր։

Գոց են ամպով աստղունք և յոյս,
Դեռ չատ հեռու է արշալոյս։

Ով նաղուհի գուստր իմ Մեհիկ,
Շուշան և վարդ դաչտաց մերոց.
Եկու, և հօրդ ծերուկ և հէք,
Առաջնորդէ ի Ջորն հայոց։

Գոց են ամպով ևլն.

Գու սիրատարփ կարիճ Արտակ
Տխուր երգեց ո՛հ այս գիշեր.
Սէրն էր երգոց իր նպատակ,
Բայց Թորգոմայ գաղէտսն յիշէր։

Գոց են ամպով ևայլն.

«Ո՛հ, ինչ ան երբ հաճոյք և սէր,
Առանց սուգի պիտի չըլլան».
Այսպէս իքնարն իր նա երգէր,
Եւ արցունքով աչք մեր լցան։

Գոց են ամպով ևլն.

Հոս են չիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամէն դամբան.
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
Հեծեն ննջող ոգւոց փոխան։

Գոց են ամպով ևլն.

Հին են ցաւերս հեծեմ և ես,
Ժամ է իջնամ ի գերեզման.
Երթամ վեհից հայոցն իսես,
Վանայ կոհակք թող գիս ողբան։

Եւ դու Մեհիկ կուլա՞ս անյոյս,
Ո՛հ ալ գնա գայ արշալոյս։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Կեանք մը ունէի մահուան ենթակայ,
Որ ուշ կամ կանուխ պիտի սպառէր.
Իսկ զայն փրկուելեան սեղանին վրայ,
Դնելու սէրս օր քան զօր կաճէր։

Վերջապէս հասաւ վայրկեանը յորում,
Այլ պէտք էր վերջ տալ իմ ներքին կռոյն.
Թողլով սիրելիքս թշուառ ու տրտում,
Աստ անդ թափառիլ մանգալ ծածկանուն։

Փշոտ է ուղիս այլ միշտ հոտաւէտ,
Ծաղկանց բուրումն ունի իր փուչեր.
Ծանր է ուխտս սակայն փրկաւէտ
Կեանքի մը յոյսն է ինծի քաջալեր։

Հալածանք, բանտ, մահ բոլորդ ինձ համար,
Իմ այս նոր կեանքին պարզ նկարներն էք.
Ինչքան էլ սաստիկ ըլլան ձեր տանջանք,
Բնաւ զղջման բառ մը ինձմէ չպատէք։

Զըլլայ որ յաճախ արիւնոտ սրտիս,
Դու անյագ երկաթ տալով նոր խոցեր։
Կամենաս փորձել ընկճելու հոգիս,
Նա վառ բոցերու հնոց մ'է դարձեր։

Դու ալ ով անգութ ժանգոտած չղթայ,
Մի այդքան իշուր չառաչեր ուժգին.
Չի կոչտ օղակներդ միայն կարող են,
Ճմլել հէք մարմինս այլ ոչ իմ հոգին։

Իսկ դու կախաղան, ոհ, քեզ կը ճանչեմ,
Մահուան ցուրտ սարսուռ մը ունիս ինձ տալու.
Բայց մի չտապեր, ես միշտ քուկդ եմ,
Ունիմ չատ պարտքեր դեռ կատարելու։

ՂԱՐԻՊ—ՂՈՒՐՊԷԹ

Ն Կ Ա Ր Ի Զ

Ակնապիշ, անձայն խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ր ես մըտքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վչեայ կտաւը քու հանդէպ փռած։

Շուռ տուր աչերդ, նայէ՛ դէս ու դէն,
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթի՛ր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոխը։

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Ուր ես աչխարհի ունայն չըշուկին...
Ծանկարծ աչերդ փայլեց սուրբ չնորքով,
Հըսկայի սիրտդ թընդաց խիստ ուժգին։

Առիր վրձինը, թաց արիր ներկով,
Շունչդ տուիր անչունչ կոպիտ կտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։

Սէր, պաեւուԹիւն, հանճար, բարուԹիւն,
Տըւիր պատկերին մատիդ չարժւածով·
Ինչ որ չյայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսւածով։

Ապչեց ամբոխը· վազեց, յառաջեց,
Քու կենդանագիր պատկերի դիմաց·
Ծնկաչոք զմուռս ու հալւէ խնկեց,
Գոչեց մեծաձայն. «դա՛ է իմ Աստւած»։

Բայց, ա՛խ, քու անքուն ժամերու ճիգը,
Քանի մի արծաԹ հազիւ գին դրին·
Ստեղծողըդ դարձար քու խեղճ խըրճիԹը,
Ակեր չարեցին չուրջ քու պատկերին։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՄԱՑՐԸ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Այն քաջ մարդու չապիկն է,
Որ իմ ձեռքովս կարեցի·
Արիւնոտ է, կարմիր ներկած,
Արտասուքով լւացի։

Դա չապիկնէ այն քաջ մարդուն,
Որ քեզի հայր կոչւում է·
Վրէժ վրէժ չար ոսոխից
Գերեզմանից կանչում է։

Դէհ մեծացիր, իմ նագելի,
Զարի արիւնը խմէ·
Քո մօր սրտին մխիԹարանք,
ՈւրախուԹիւն պարգևէ։

ՄՇՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ ԱՌԹԻԻ

Խղճայ ով Աստւած հայերիս խղճայ,
Առաջնորդիր մեզ, ու մեզ գուԹ արա·
Բացի քեզանից պաշտպան մի ունի՞նք,
Կամ այս մեր հալով ասա ուր դիմենք։

Ահա հայերս խպառ կոտորեց,
Ղուրանի զաւակ մեր տուն տեղ այրեց·
Հոսած արիւնից գետեր կազմեցան·
Հրդեհի բոցեր երկինք բարձրացան։

Մենք էլ չենք ուզում օտարին խնդրել,
Կամ պարապ յոյսերով աշխարհում ապրիլ·
Հեռու հեռու օգնուԹիւն նոցա մեզանից,
Պարլամէնտ, ժողով վատ են ամէնից։

Մեր յոյս ապաւէն եղբայր հայերն են,
Ոմանք պարսկաստան, ոմանք կովկաստան·
Սիրտ ու խրախոյս տուր այդ քաջերին,
Որ հասնին մեր այս նեղ ժամ, նեղ օրին։

Պ. ՅԱԲԵԹԵԱՆՑ

ԺՈՂՈՎՐԴԻ ԸՍԱԾ ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՄԲԻՆ

Մնաք բարեաւ սուրբ հրացան,
Մնաք բարեաւ ընկերներ.
Անցան օրեր ազատութեան,
Եկան բանտ ու կապանքներ։

Երբ ես վառւած ատելութեամբ,
Դէպ գարշելի բռնութիւն.
Թռչում էի կատաղութեամբ,
Տատ եղբարցս օգնութիւն։

Այնժամ անյապ սիրտս լի էր,
Մաքուր և սուրբ իղձերով.
Կեանքիս գնով նա ուզում էր,
Տալ խեղճ հային սէր գորով։

Բայց թշնամին ինձ թակարթեց,
Պղծեց սէրս սրբալից.
Անպարտութեան դրօշմ դրեց,
Գործի վրայ սխրալից։

Բայց ծանր չեն կապանքներս,
Մութ բանտը չէ ինձ տանջող.
Ո՛հ այլ ևս թշնամու դէմ,
Ձեմ անյողդողդ մարտնչող։

Սակայն նորէն եթէ ազատ,
Վիճակւած է ինձ լինել.
Այն ժամ սուրը ձեռքս առած,
Կրկնեմ նորից մարտնչիլ։

Եւ կատաղած սրտիս յագը,
Այդ սրովը ես կ՝առնեմ.
Եւ թշնամու գարշ վարմունքը,
Իր երեսին կը զարնեմ։

ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թէ թեւ ունէի,
Ո՛հ կը թռչէի
Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին.
Անկէ ձեզ, հայեր,
Կարգայի հրաւէր
Թ՝եկէ՛ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր զընկեր՝ սիրենք կաթոգին։

Թէ դեռ յիմ արիւն
Զը խառնէր թոյն,
Դեռ երակաց մէջ աչխոյժ խաղային,
Ո՛հ, քանի՛ հըպարտ
Կանչէի ազատ
Թ՝եկէ՛ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, ևլն.

Թէ կեանք ունէի,
Ո՛հ կը լարէի
Թել քնարի բախտին հայոց անկենդան,

Որ նա ձեզ խօսէր,
Ձեզ պանդուխտ հայեր,
Թ'եկէ'ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, ալն·

Թէ սէր ըլլայի
կամ անմահ հոգի,
կը կապէի հայոց սրտերն անմեկին,
Ցայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
կ'ըլլան ի մի անչուշտ մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր ըզընկեր, սիրենք կաթոգին։

Ս · Ց · ՅԻԼԼԻԿԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ՇԱՏԱԽՑԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Խաւար բանտում տանջանքներն մէջ,
կամքդ էր երկաթ, եռանդդ էր անչինչ·
Որ մինչ կ'երդէիր սուրբ ապատութիւն,
Արհամարհելով անարդ թշնամուն։

Մինչ վանդակապատ առիւծի նման,
Փչրել կամէիր սարկի չղթան·
Դուրս գալ դէպի գաշտ ղէնքը ի ձեռին,
Մահ տալ կամ առնուլ ի փառս ազգին։

Աւաղ չարչարանք քեզ հալեց մաշեց,
Քո քաղցր կեանքին դառն վերջ տուեց·

Գնացիր պատմել հայ լուսաւորչին,
Անթիւ չարչարանք իր թշուառ հօտին։

Ատա թէ ինչպէս հայոց աշխարհում,
Նոր նահատակներ հրաշք են գործում·
Ատա թէ ինչպէս աքսոր ու գրկանք,
Խանդ կը ներշնչեն յուսահատ հային։

Եւ արիւնարբու դարաւոր ոսոխ,
Սրկն սրբութիւն կ'անէ ոտնակոխ·
Մեր հայրենիքի հերոսների հետ,
Բարեխօս եղէք մեզ առ տէր Յիսուս։

Որ չուտ այդ անէ հայոց աշխարհին,
Մարտիրոսներուս մեր անբախտ երկրին·
Իսկ մենք ուխտ կըգանք քո սուրբ գերեզման,
Յօնել սրտագին կնդրուկ օրհնութեան·
Արցունքով յօղել քո սուրբ նշխարներ,
Անուանդ անմոռաց քաջ հայրենասէր։

Մ · Ե ·

Ե Ր Դ Ո Ւ Մ

Սուրբ օրօրանով զաւակիս կ'երդնում,
կ'երդնում իմ ծնողաց ես գերեզմանով·
Ինձ կեանք պարգևող արգանդով կ'երդնում,
Եւ մկրտութեան սուրբ աւազանով։

Թող լինի վկայ ինձ լեռն Արարատ,
Նոյեան տապանի ամուր պատսանդան.
Եւ Արաքս գետի ջուրը անարատ,
Որով կ'ոռոգւի մայր մեր Հայաստան:

Թող լինին վկայք իմ անուշ երգման,
Պարծանք հայութեան ազգովին նախնիք.
Սուրբ Սահակ, Մեսրոպ, Ղևոնդ, քաջ վարդան,
Ողբերգած Աշոտ, անմոռաց Գագիկ:

Աղջիս սեղանի վրայ ես դրի,
Իբրև ողջակէզ իմ այս սուրբ ուխտին.
Իմ ինչք, կեանք, վայելք աշխարհի,
Աւելի քան զայն քաղցր իմ ամուսին:

Ահա այս սուրբը որ ձեռքումս ցօլաց,
Էլ նա չի մանկիր վերստին պատեան.
Մինչև չդպրի հայի սուգն ու լաց,
Մինչև չազատի մայր մեր Հայաստան:

Կրկին և կրկին չրթունքովս կ'երդնում,
Թող երդւի ինձ հետ ամբողջ Հայաստան.
Զատ թոյլ դադար անգութ թշնամուն,
Մինչև չազատւի սարսուռ Հայաստան:

Իսկ եթէ դրժեմ իմ այս սուրբ երդմունքս,
Ձլինել նահատակ աղջիս ափսոսան.
Անէծքով ինձ թող իմ անունս,
Եւ հայք թող կոչեն զիս երկրորդ վասակ:

ՔԱՄԱՅ—ՔԱԹԻՊԱ.

ԽԵՂՃ ՀԱՑԱՍՏԱՆ

Ցուրտ ցուրտ փչեց հովը հիմա,
Ձիւնը կ'իջնէ երկինքէն.
Սառն է պատեր հայոց աշխարհ,
Ո՛հ, հոն տիրէ սով ու մահ:

Հոն քար ու քանդ սուրբ տաճարներ,
Հոն ամէն ինչ աւերակ.
Երբեմն դրախտ երջանկաւէտ,
Հիմա ախուր անապատ:

Իսկ իմ քոյրեր և հայր ու մայր,
Բռլիկ ոտքով մերկ, տկլոր.
Ոմանք թշւառ են անօթի,
Ոմանք թիւրքին են գերի:

Հոն մեր եղբայր, կարիճ ճիւան,
Հոն մեր մայրեր տարաբախտ.
Կատր կատր յոշոտւեցան,
Ձունին պատանք գերեզման:

Գնացէք ամպեր, գնացէք հուսով,
Ծածկել Մասիս ու Տօրոս.
Սուգի մէջ է մայր Հայաստան,
Եփրատ, Տիգրիս և Սարոս:

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԻՆ ԱՌԹԻՒ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտուն մը,
Ֆէտայիներ դաշնակցական, վրէժխնդիր դառնում են.
Սառկաց քիւրտը, լեղապատառ մազրիկցին,
Չէր ազատեր խսպառ ջնջուիլ Ֆէտայիի գնդակից:

Եամա՛ն, Աստուած, Ֆէտային եկաւ ո՞ւր փախչենք,
Աստղ որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին.
Մի վախեր, հանգիստ եղիր, բալիկ ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրիժառու քաջ Ֆէտան:

Մի ժամուայ մէջ մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանանչ դաշտեր կարմիր ներկուեցաւ.
Հայեր յիշեցէք նաիրական այս օրը,
Ցուլիս ամսի քսան հինգին կատարեցէք մեր ուխտը:

ՎԱՂԱՄԵՒԻ

Աչնան հորցած թփերու հետ,
Հովիկ զայն էլ գլեց տարաւ.
Վաղաթորչամ ծաղիկն անեղծ,
Դեռ չբուրած խսպառ կորաւ:

Սև գերեզման մը փորեցին,
Լացող չեղաւ անոր վրայ.
Սիրոյ համար ծնած հոգին,
Անսիրտ իջաւ իգերեզման:

ՋԻՆԱԳՈՐԾ ՓԱՆՈՍԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Հայրենեաց էր անճնուրաց գինուոր,
Թշնամեաց ազդող սարսափ ահաւոր.
Ողջ ընկերներին էր նա սիրելի,
Եւ իր թշնամեաց իսկ պատկառելի:

Զուներ ան մարմնի ամուր կազմուածքուն,
Բայց հոգու ուներ մեծ արիւնքուն.
Քաղցր ժպիտ միշտ իր երեսին,
Դիւթել գիտէր ան մարդոց սիրտ, հոգին:

Իր շուրջ հաւաքած մի խումբ քաջերով,
Դէպի հայրենիք կը դիմէր փութով.
Մօր և զաւակաց արցունք սրբելու,
Կամ իր արիւնն էլ նրանց խառնելու:

Սարայի ահեղ ճակատամարտում,
Ցոյց տուին նրանք սա ճիշդ համոզում.
Թէ չէ հայն այլևս անարգւած ռայան,
Կամ թիւրքից, քիւրտից անպատուած ֆլան:

Տղերք քաջութեամբ ելէք ի հանդէս,
Ահա մեզ փառքի պատուի ասպարէզ.
Այսպէս ձայն տուեց մեր ուսուց փանոս,
Հայրենեաց սիրով վառուած վեհ հերոս:

Ե Ր Գ

Հայ ազգութեան ազատութիւն,
Պիտի գնենք մեր արիւնով.
Եւ մեր խլած հող, իրաւունք,
Մենք յետ բերենք կարմիր մահով:

Հայոց մայրե՛ր, քաջ զօրական
Ծնէ՛ք դուք վասն ազատութեան:

Մեր հայրենեաց տխրած ճակատ,
Արդ կը ժպտի ուրախ ղւարթ.
Չի հայ ղաւակ ուխտեց յօժար,
Զոհ տալ իր կեանք անոր համար:

Հայոց մայրե՛ր, վասն հայրենեաց,
Զոյգ, զոյգ ծնէք որդիներ քաջ:

Մեզ արդ պատրաստ կայ վառ հանդէս,
Գործել քրանիլ հայ քաջի պէս.
Քաղցր թոզ լինի մեր վէրք, արիւն.
Ատենք կը բերեն ազատութիւն:

Հայոց մայրե՛ր, վասն հայրենեաց,
Տուք կաթ, արիւն ձեր ղաւակաց:

Հայ ընտանեաց պարկեշտութիւն,
Բազբևանդի կոտորածին.
Մեր անմեղ քերց դառն գերութիւն,
Ո՛հ, փրկութիւն, վրէժ սրտագին:

Հայոց մայրե՛ր, ձեզ հայրենեաց,
Փրկիչ անուցէք ձեր որդիք քաջ:

Հայ աղջիկնե՛ր, ձեր քաջ եղբարց,
Նուրբ վիրակապ նահատակաց.
Հիւսէք մազեր ձեր գեղեցիկ,
Եւ արցունքով օծէք մեղմիկ:

Հայոց կուսանք, ձեր հայրենեաց
Փրկիչ, տուք կեանք ձեր քաջ եղբարց:

Մեր տաճարներ երկնանըման,
Պատառ, ամրոց արքայական.
Աւեր, քանդեալ հողաթումբ,
Հեծեծեն, մնջեն, աղեկտուր:

Հայոց մայրե՛ր, հայ մեծութեանց
Կանգնող անուցէք ձեր որդիք քաջ:

Զէ՛, հայն երկար պիտի չըլռէ,
Անարգանաց սա՛բռնութեան.
Իր վաղ պահած արիւն կը զոհէ,
Փչրել չղթան սարկութեան:

Հայոց մայրե՛ր, հայ մեծութեան
Սնուցէք ազատ որդիներ քաջ:

Մ. Թ.

ՎԱՐ ԸՆԿՈՂ ԱՍՏՂԵՐ

Հայրե՛կ, ասաց, դուսարը հօրը,
Կապոյտ երկնքի վրայ
Որքան աստղեր փայլուն են վառ,
Ասես, համար թիւ չըկայ:

Ասում են որ ամենայն մարդ,
Աստղիկ ունի երկնքումը.
Ճշմարի՛տ է, ասա՛, հայրիկ,
Իմս ո՞ր տեղ է փայլում։

— Այո՛. դստրիկ, այդ աստղերը,
Ունեն հաշիւ ու համար.
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իր համար։

— Հայրիկ, տե՛ս, տե՛ս, աստղ թռաւ,
Հեռքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց։

— Ո՛վ իմ դստրի՛կ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր.
Որ իր օրում, իր կեանքումը,
Խիղճ ասաց բան չըգիտէր։

Աղքատները նրա տանից,
Գիշեր ցերեկ հալածւած.
Մի մարդ չըկար նրան ծանօթ,
Որ չըլինէր վշտացած։

— Հայրի՛կ, տե՛ս տե՛ս, աստղ թռաւ,
Հեռքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց։

— Ո՛վ իմ զաւա՛կ, մի վրդովիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իր հօր ու մօր խօսքը,
Իր կեանքումը յարգած չէր։

Նա փախել էր իրենց տնից...
Մուր էր քսել տան վրայ...
Իր ծնողքը լացուցեր էր,
Ինչքը վատնել անխնայ։

— Հայրի՛կ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վար ընկաւ նա երկնքից.
Հայրի՛կ, որի՞ աստղն էր արդեօք,
Որ պրկւեցաւ իր տեղից։

— Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր.
Որ իր օրում ուղիղ մի խօսք,
Մարդու երբեք ասած չէր։

Փարիսական իր ձևերով,
Աչխարհք խաբեց գործեց.
Այդ պատճառով Աստուած նրա
Աստղի լոյսը խաւարցուց։

— Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, մի աստղ թռաւ,
Եւ գիծ անգամ չըթողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց։

— Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր.
Որ աչխարհը իրեն գերի,
Ծնած օրից կարծել էր։

Շատ հալածանք, շատ նեղութիւն,
Պատճառեց նա իր կեանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ պրկեց,
Գութ չունեցաւ իր սրտում։

— Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառուում է.
Նրա մաքուր պայծառ լոյսը,
Զորս կողմը բակ բռնել է։

— Ո՛հ, իմ դասրի՛կ, աղօթք արա՛,
Դա ծերունու մի աստղ է.
Որ իր կեանքում ոչ մի մարդու,
Ոչինչ վնաս տուած չէ.

Այն լուսաւոր բակն է նրա
Առաքինի գործքերը.
Աղօթք արա՛, որ երկարուին
Նրա կեանքի թելերը։

— Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ովի՞ աստղիկն էր որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։

Մինչդեռ լուսին արծաթափայլ,
Լոյս էր տալիս գիշերին.
Խորհրդաւոր մինչ սիրել էր,
Անվրդով խոր լռութիւն։

Մի սրտաթափ, մաղերն արճակ,
Վազեց աղջիկ սգաւոր.
Դէպի գիւղի գերեզմանքը,
Ծուկ չոքեց մի չիրմի մօտ։

— «Հայրի՛կ, աստղիկդ չէ՛ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր»։

«Իմ աստղիկին ասա՛ նոյնպէս,
Որ չի փայլի, հերիք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութ ու խաւար մի բանտ է»։

Մի մարդ չըկար որ նկատէր,
Որ հեռանալ գիշերին.
Պակասեցաւ երկնքիցը,
Մի պայծառ աստղ խնդագին։

Երրորդ օր չանց՝ սգաւորի
Փորեցին մի գերեզման.
Ուր թաղեցաւ իր հօր մօտին,
Մարմինը խեղճ աղջկան։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Թարգմ.)

ԳԱԳԻԿ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ

Հայեաց ի վեր, ուղևոր,
Մի անցաներ ըշտապով.
Իզբօսանաց դաշտային,
Դարձո՛ առ իս գաչս քո։

Ոչ ճանաչես դու արդ զիս,
Յաղուշ կրթեալ քո այդպէս.
Միթէ օտա՞ր եղէ ես,
Որդոյն մօր եղկելւոյս։

Գագիկն եմ ես տարաբախտ,
Բազրատունեաց վերջին ծիլ.
Ժորչակ դաւուն դիս եհար,
Հաս ինձ այսպէս թառամել:

Ձիս քաջ ուղղիլ յարմատոյն,
Ջանգեալ իբաց համրացոյց.
Վեսան այն Սարգիս չարաննենգ,
Լեզուաւն իւր չողոքորթ:

Որ սիգալի ճոխապանծ,
Բարձր իլերինըս հայոց,
Թափով անդուստ վայր անկեալ,
Թաւագլոր հասի աստ:

Ողբամ ես արդ դառնապէս,
Զքնաղ Անին անտերունչ.
Ցորմէ հանին ախրադրուժ,
Ձիս վարեցին իպանդուխտ:

Լացէ՛ք, լացէ՛ք, հայ ազինք,
Ձկախեալ արքայն ձեր Գագիկ.
Ցաւէտ և դու ողբասջիր,
Անշուք Անիպ ամայի:

Հասի՛ր առ իս, աւասիկ,
Վահրամըդ քաջ ծերունի.
Ինձ դկապեալս փոյթ աստի,
Տար ի հայոց աշխարհի:

Տեսէ՛ք, տեսէ՛ք, հայ մանկունք,
Ցուշ ածէք դուք հեծելով.
Ահա է պատուղ դառնութեան,
Անախրատէր որերուն:

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՑ ՋԻՆԻՈՐԻՆ

Մեր հայրենեաց փափուկ հողեր
Արեան գետակ են դարձուցեր.
Եւ այն դաշտերն ազատութեան,
Թշնամեաց սուրք կը չողշողան:

Բռնաւորին սև թևոց տակ,
Ջանի՛ դարեր հեծենք թշուառք.
Արիւն արցունք դիշերն ամէն,
Հերիք լինի մեր աչերէն:

Քաշած ազէտքս ալ կը բաւեն,
Վրէժխնդրութեան հրաւէրք հնչեն.
Ալ չեմ կրնար չղթայից տակ,
Գերի տեսնել իմ քորք, եղբարք:

Այսօր ինձի թող օր մ'ըլլայ,
Ցաղթանակի և կամ մահուան.
Գերի մնալէն քաղցր է ինձ, ո՛հ,
Հանդչիլ նախնեաց փառաւք լիոզ:

Զի ո՞րն արդեօք իմ հայրերէն,
Հանգիստ մահուամբ լուռ ննջած են...
Այլ պատերազմ և չաղթանակ,
Միշտ թողուցին մեզ յիշատակ:

Օ՛ն, խաչանիշ դրօշովս փութամ,
Հայրենավրէժ խպատերազմ.
Վատ ազգերուն դահն կործանեմ,
Եւ չաղթական նւագս երգեմ:

Զի խրախուսեն իմ հարց սուերք,
Ազգիս չզթայք ալ խորտակել·
Իմ հայրենեաց քաղցր ապագան,
Սրախս կուտայ այժ քաջութիւն։

Այո՛, հոն տեղ մահն ինձ քաղցր է,
Ազատութեան երբ փողն հնչէ·
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր,
Պարզել յերթեալ ազատ դրօշներ։

Հոն թշնամուն արիւններով,
Դիակաց վրայ անջինջ գրով·
Իմ հայրենի փառքն դրօշմեմ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ։

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ,
Որ օր մ՚ուրախ արտով տեսնեմ·
Ազատութեան յաղթանակով,
Վերադարձն իմ սուրբ հարցս քով։

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏ

Մեզի յիշեց հայոց պղծը,
Լսում է մեր պաղատանքը·
Զգացել է մեր տանջանքը,
Ասա էլի՞ մենք համբերենք։

Այժմ թիւրքի միաք դէպի հայ,
Ընբռան խմել կ՚ուզէ գերդ չայ·
Հայ եղբայրներ, զգալու ենք,
Ասա էլի՞ մենք համբերենք։

Ցրանգ, ինկլիզ շատ բարի են,
Բայց ախտո՞ւս որ հայ ծնել չեն·
Հայի համար մտածող չեն,
Ասա էլի՞ մենք համբերենք։

Հայի փրկիչ, երկնից Աստուած,
Շնորհեց հային իր կամք գթած,
Այժմ, ասում է, դէ՛հ գործեցէք,
Ասա էլի՞ մենք համբերենք։

Հայ պատանիք հազարներով,
Թիւրք բանակում չարչարելով·
Արնոտ աչքով խնդրում ենք կեանք,
Ասա էլի՞ մենք համբերենք։

Համբերութեան չափն անցաւ,
Հայոց լոյսն ալ նահմացաւ·
Թէ չըփորձենք վերջին փորձ մ՚էլ,
Հայ չի ապրիլ երկու դար էլ։

Մ Ի Ն Չ Ե Ր՞ Բ

Մինչ ե՞րբ մեր վրայ բռնանայ թիւրքը,
Մինչև ե՞րբ կրենք այս անարգ լուծը·
Միթէ հինգ դարեր չըբաւեցա՞ն,
Ցագեցնել նրա փափագ բռնութեան։

Մինչ ե՞րբ, ո՛վ Աստուած, արիւն քրտինքի,
Մեր վաստակովը կերակրենք թիւրքի·
Մինչ ե՞րբ դաժան քիւրտ ծըծէ հայ արիւն,
Մինչ ե՞րբ թալանէ մեր կայքը և տուն։

Մինչ ե՞րբ, ո՛վ փրկիչ, քու տուրբ խաչափայտ,
Օրն իբուն պղծէ վատ ազգն անհաւատ·
Մինչ ե՞րբ անարգուի հայութեան անուն,
Եւ նրա պաշտած տուրբ դաւանութիւն·

Ջէ՛ որ, հայ եղբարք, մենք էլ մարդ ծընանք,
Եւ որչա՛փ ունինք ազգային պարծանք·
Միթէ ամօթ չի՞, մեզ դեռ համբերել,
Եւ այս սարսիւր անարդ լուծը քաշել։

Փշրե՛նք հայ եղբա՛րք, խաւարի չղթան,
Շուտով սփոփենք մեր մայր Հայաստան·
Ջըթողունք երբեք մեր ձեռքից զէնքը,
Մինչև չազատենք մեր հայրենիքը։

Եւ դու, ո՛ Աստուած, որ տէր ես որքին։
Այժմ էլ օգնող լեր թշուառ խեղճ հային·
Մէն մի հայու ձեռք տուր մի հըզօրական,
Եւ անյաղթ բազուկով միշտ լեր օգնական։

ՎԱՀԳԻՆ

Մ Ե Ռ Ի՛ Ք

Մեռի՛ք, ալ մեռիք, անգութ անողք,
Թշնամի՛ք, անտէր կարծէք զայն անոք·
Ձէք կարող ան ձեր ձեռքն անել գործիք,
Մեռի՛ք, ալ մեռիք, մեռի՛ք ալ մեռի՛ք։

Ի՞նչ հարկ է ապրիլ անխղճի, անզգայ,
Հեռացէ՛ք բացւին դռներ թորգոմայ·
Պլպլան մեր աստղեր, ծաղկին մեր դաշինք,

Մեռի՛ք, ալ մեռիք, ևլն·

Փառաց աղաւնին գոտւ իր իջևան,
Գերութեան չղթան փրթուց Հայաստան·
Աւա՛ղ, վաղ քաջերդ եղան խօլ գերիք,

Մեռի՛ք, ալ մեռիք, ևլն·

Աղատութեան դարն մեզ տուաւ արև,
Ձեռնընիդ դեռ չուք թողիք մեր վերև·
Մենք հայ ենք և մարդն է մեր հայրենիք,

Մեռի՛ք, ալ մեռիք, ևլն·

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅՐԻԿի

Մնաս բարեա՛ւ, վաստակաւոր,
Վան հայրենիք իմ, այժմ ախուր.
Ուր ես ծնայ հայ հօր զաւակ,
Ուր մայրս կապեց իմ խանձարուր:

Մնաս բարեա՛ւ, յայնկոյսներու,
Սուրբ աւազան եկեղեցի.
Ուր որ խաչով, հայ մեռոնով,
Մկրտուեցայ ես հայորդի:

Մնաս բարեա՛ւ, վարագայ սար,
Եւ սիրելի իմ մենաստան.
Ուր ձեր ազատ օդով, շնչով,
Ես զարգացայ իյերկն, իրան:

Մնաս բարեա՛ւ, վարագայ սար,
Համբոյր օդդ քո կենսարեր.
Ուսկից Թռուցիկը քու փոքր Հայրիկ,
Գրական արծիւ, սիրտ մարդասէր:

Մնաս բարեա՛ւ, ողջ մխաբան,
Եւ երկրապործ, մշակ, դուխան,
Դուք չէն պահէք վարագայ դաշտ,
Եւ ցանկալի իմ հին վարագ:

Մնաս բարեա՛ւ, մայր—Հայաստան,
Անցեալ փառաց նշխարներով.
Երբե՛ք, երբեք քեզ չեմ մոռնար,
Ա՛հ, համբերէ ազատ յոյսով:

Մնաս բարեա՛ւ, հայրենակից,
Իմ սիրելի հայ ժողովուրդ.
Քեզ չի մոռնար պանդուխտ Հայրիկ,
Դու ես անոր կեանք և խորհուրդ:

Մնաս բարեա՛ւ, մնաս ողջամբ,
Քո հայրենի աշխարհի մէջ.
Մինչ բաց անէ քեզ քո Աստուած,
կա՛ց, Հայաստան քո յուսոյ մէջ:

Մնաս բարեա՛ւ, հայ գիւղական,
Հայոց դաշտի մշակ զաւակ.
Դու պինդ պահիր հոգ ու դուխան,
Տնտեսագէտ լեր համարձակ:

Մնաս բարեա՛ւ, փոքրիկ երգող,
Մի մոռանար երգը ու բան.
կա՛ց ու ապրէ վասն հայրենեաց,
Վան գիւղական ժողովրդեան:

Մ. Թ.

ՊԱՆԴՈՒՏԻ ԵՐԳ

Մայիս ամսու դու ջեփիւռիկ,
Սլանում ես Մշոյ լերինք.
կորուսեր եմ քաղցր հայրենիք,
կուլամ, կ՚ողբամ, չասես հերիք:

Լեառն Մշոյ է նման Մասիս,
Մայրիկս կուլայ կանչում է իս.
Կ'ասէ ինձի, եկուր առ իս,
Բաւ է, որդեակս, դուն թափառիս։

Հոս պանդուխտ եմ օտարութեան,
Ատեն չունիմ որ առ քեզ գամ.
Ցաւերս շատ են, վիշտք յարաժամ,
Գուցէ ասոնց եմ ես արժան։

Ես եմ միայն թշուառ անտէր,
Ձիք կարեկից, ըլլայ ինձ տէր.
Թափառումեմ օտար հողեր,
Բաւ է կրեմ ես այս ցաւեր։

Անբախտ եմ ես տարօնացի,
Շատ ժամանակ պանդուխտ մնացի.
Ցաւօք սրտի ես միշտ լացի,
Մշոյ երկրէն կարօտ մնացի։

* * *

Ո՛հ, դու անգութ, անխեղճ բախտիկ,
Է՛ր չես թողուր գնամ հայրենիք.
Ջունիմ հայրիկ, խակ ոչ մայրիկ,
Բա՛ւ է կրեմ դառն և վշտիք։

Վշտերս թագուն, ցաւերս անհուն,
Ջունիմ ոչ տեղ և ոչ ալ տուն.
Կուլամ, կ'ողբամ գիշերն իրուն,
Հիւանդ եմ ես, ո՛հ, չունիմ քուն։

Հայրենիքս Տարօն—մուշ է,
Ինձ ասում են թէ ապուշ է.
Լաց ու կոծում սըգոյ գոյժ է,
Ան որ կեղծ է՝ վէրք չըբուժէ։

ՎԱՐԴԱՆ ՏԷՐ—ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՏՐԴԱՏ ԱՐՔԱՑ

Ցաղատն իվեր, իմ Մասիս,
Արիք որդիք հայկեան.
Ցրեալքդ իմի խումբ պարու,
Բառիդ հողմոց փող ազդ ու,
Ցաստուածախրախոյս ճայն։

Նախնի կամար բազմերփեան,
Ահա պատի զնուաւ.
Ամպրոպայոյզ մրըրկաց,
Հաշտարան պատերազմաց,
Տարփալին ցոլացաւ։

Ձայն որոտաց, ճայն ահեղ,
Խորանաձև յարկէն.
Արիագունդ տուն Հայկայ,
Ձտապալեալ գահիդ արքայ,
Վերականգնեմ անդրէն։

Երդւեալ յաղեղն երկնածիր,
Բարձի զբաճա ձեր ի միտս.
Թաթ ձեր յեթեր սըլացաւ,
Հակառակորդն սուզաւ,
Իվայր սանդարամէտս։

Դիւցազանց պար Թորգոմեան,
Տխրազգեաց յեղխեանս.
Զլրթագոյն դիմաց մէգ,
Ցասեղաց բոց վառին չէկ,
Ցաւեսեաց հրաւիրանս։

Արդ, իմ արի սպառազէնք,
Տուք կայթս հսկայաքայլ.
Դաշտք ի պղինձ բոցասցին,
Լերինք ինչոյլ հլասցին,
Զոկատիցդ իզեռալ։

Ահա ձեզ հայկ երկնաճեմ,
Հայր ձերում բանակի.
Ասպարափակ հովանեաւ,
Զձեօք իբարձանց փարեցաւ,
Անթափանց նիզակի։

Խումբ պար առեալ զարքայիւ,
Զօրավարք Արամայ,
Բոլորեցէք համերամ,
Պատկ փառաց անթառամ,
Կեցցէ՛ Տրդատ արքայ։

Հ. Ա. Ց. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հ Ա. Ց Ր Մ Ե Ր Ը

Ո՛վ Հայր մեր Հայր, որ ես յերկին,
Սուրբ եղիցի անուն քո յին.
Եկեսցէ մեզ Ա.ստւած հզօր,
Արքայութիւն քո երկնաւոր.
Եղիցին կամք քո խնկելի,
Որպէս յերկինս և աստ յերկրի։

Զհաց հոգւոյն մեր և մարմնոյ,
Տուր և այսօր չնորհիւ քոյ։
Եւ թո՛ղ մեզ, թո՛ղ գմեր պարտիս,
Որպէս և մեք թողումք յաստիս.
Ամենեցուն որ մեզ մեղան,
Կամ ընացին մեզ պարտապան։

Ո՛հ, մի թողուր խփորձութիւն,
Այլ հանապազ հա՛ս օգնութիւն.
Եւ յամենայն չարին մերձմանց,
Փրկեա՛, զմեզ, տէ՛ր գթութեանց.
Զի քո է մինչ արքայութիւն,
Զոր փառք, պատիւ և զօրութիւն։

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐ—ՊԷԳ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Ո՛վ պատանիք, աւերց ներքև,
Ալ մարեցաւ հայուն արև...
Լանջս խոցոտ, սրինքս արիւն
կաթեն, և չիք ինձ փրկութիւն։

ՀԱՑ ՊԱՏԱՆԻՔ

Օ՛հ, անուշ մայրիկ,
Մի քիչ համբերէ.
Թէ այսօր մրրիկ,
Վաղը անդորր է.
Եւ մօտ է վաղն այն,
Մերն է ապագայն.
Մայրի՛կ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն։

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Զեռքս զարկի վերայ չիրմաց,
Եւ կարկեցան սուերք արեաց.
Դէպ կենդանիս դարձի գերեաս,
Կոյր ձևացան լքեալ եմ ես։

ՀԱՑ ՊԱՏԱՆԻՔ

Ո՛չ, անոյշ մայրիկ,
Լքեալ չես բնաւ,
Քեզ հետ մեր հոգիք,
Տխրին կամ անձկաւ.

Օ՛հ, քեզ հետ խայտան,
Մերն է ապագայն.
Մայրի՛կ, հրճուէ դուն
Մօտ է փրկութիւն։

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Շատեր ինձ յոյս չըռայլեցին,
Ամէն խոստում մոռցուց ոսկին.
Եւ ես ճնացի դարձեալ խուզ,
Վախեմ, մանկունք, դըժէք և դուք։

ՀԱՑ ՊԱՏԱՆԻՔ

Անէծք մեր վրայ,
Թէ անարգ ոսկին
Մեր առջև չողայ
Քան արտասուք քոյին.
Երդնուինք մխաճայն
Մերն է ապագայն.
Մայրի՛կ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն։

Մ. ՉԵՐԱԶ

ԵՐԳ

Ողբե՛ր, կոծե՛ր, դառն հառաչանք,
Մեր սիրուն մօր չարձակենք.
Որ ձեռն խծնօտ արցունքի գետք,
Կ՝իջուցանէ յորդառատ։

Ճչմարի՛տ հայ, քու սրտիկըդ,
Ալ ապառաժ դարձուցիր.
Աշնւատուն հայ արիւնըդ,
Գիշ՛ս արեանց հետ խառնեցիր։

Այն փափկասուն իր ձեռները,
Առ ձեզ ի յոյս տարածած.
Գոչէ այսպէս, որդեակք, թոռունք,
Է՞ր զիս այսպէս մոռացաք։

Երկանց ցաւօք ծնայ զձեզ,
Մեծ խնամօք դպուեցի,
Մեղրով, կաթով զձեզ սնուցի,
Այս բոլորն ալ դուք մոռցաք։

Ո՛հ, ձեր կայտռիկ մանկութիւնը,
Դաշտաց անուշ ծաղկանց պէս.
Փունջեր կազմած նւէր իսէր,
Այս բոլորն ալ դուք մոռցաք.

Մեղմիկ զեփիւռ տարուբերէ,
Ձեր ոսկեթել մազերը.
Քաղցրիկ նիրհումն ընդ վարդենւոյն,
Այս ամէնը դուք մոռցաք։

Օր մը պիտեմ, քաղց և ծարաւ,
Պիտի վազէք իմ գիրկը.
Մայրի՛կ, մայրի՛կ, աղաղակաւ
Այս խօսքերըս չըմոռնաք։

Մատոնք քաջաց, ձեր վեհ ճակատին
Գրեցին «Հայ անունը».
Արցունքով տամ ձեզ այս պատւէր
Չըմոռնաք «Հայ անունը».
«Հայ անուն»ը չըմոռնաք։

ՀԱՑԱՍՏԱՆ

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
— Մի՞թէ սա՞ է Ռուսաստան,
Որ իր բռնութեամբ գերել է զաշխարհ,
Ազգին կեանքն, կրօնքն, յաւիտեան կորած.
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է, մեր աշխարհ
Այլ է, մեր աշխարհ այլ է, մեր աշխարհ այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
— Մի՞թէ սա՞ է Պարսկաստան,
Որ իր պատկերն է Սոդոմ Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբելոնեան խմոր.
Չէ՛, չէ՛, չէ՛ չէ՛ սխալ է, ևլն.

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
— Մի՞թէ սա՞ է Տաճկաստան,
Ուր իր փառքերից կանայք են զրկւած,
Կանանոցի մէջ կենդանի թաղւած։
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալէ, ևլն.

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
— Ահա սա՛ է Հայաստան,
Որ իր քաջութեամբ հաւատն ու կրօն,
Պահպանել է մինչև իսկ ցայսօր։
Հա՛, հա, հա՛, հա՛, ճիշդ է, մեր աշխարհ
Այս է, մեր աշխարհ այս է, մեր աշխարհ այս է։

Մ. Փ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ո՛վ սուրբ վայրեր, անհոգ ժամեր իմ կենաց,
Որ մտացս մէջ քաղցր յիշատակ մ՚էք թողած.
Ըսէ՛ք ինձի, չէ՞ կարելի եա դառնաք,
Այրած սրտիկս զովացնել գալ փութաք:

Ի՛նչ քաղցր է սէր դպրոցական ընկերաց,
Որով մարդիկ մանկութենէ հետ միմեանց.
Գաղափարաց սերտ կապով մը կը կապուին,
Եւ այդ կապով միմեանց եղբարք կը լինին:

Բարեկամաց մէջ ամէնէն քաղցրներըն,
են՝ դպրոցի, պատերազմի ընկերներ,
Որոց սիրուն յիշատակներ քան զայլոց,
Թողուն խնիրա՝ կաթօտոյ հուր, բոց և խոց:

Ո՛հ, երջանիկ էք դուք, մանկունք դպրոցաց,
Որ ձեր անմեղ ժամերն ուսման նւիրած.
Մեղուի մը պէս ծաղիկներէն մեղր քաղէք,
Եւ աշխարհիս ո՛չ հոգն, ո՛չ վիշտ կը կրէք:

Կար ատեն մ՚որ ես ալ ձեզ պէս երջանիկ,
Դպրոցին մէջ աշխարհն ու իմ հայրենիք՝
Մի ուրիշ կերպ կ՚երազէի և չէի,
Գիտէր թէ ի՛նչ մեծ ցաւ սրտին տան պիտի:

Բայց երբ անձամբ ի՛մայաստան դիմեցի,
Եւ հայրենի այս թշուառութիւնք դիտեցի.
Ուրախութիւնն հեռացաւ ալ սրտէս,
Հառաչանքով միշտ «ա՛հ» լսի արդ բերնէս:

Ա՛հ, հայրենիքս ինչո՞ւ այդպէս կասթշուառ,
Զրմնաց մէկն որ հոգայ գտնել քեզ մէկ ճար.
Ա՛հ, ամէնքն ալ կը տեսնեմ որ անզգայ,
Անգութ դարձեր, ողբերդ լսող մ՚ալ չի կայ:

Երանի՛ թէ ես ալ մանուկ մ՚ի դպրոց,
Եւ կամ տղայ մ՚որ դեռ հազչի իր մօր ծոց
Ըլլայի և չզգայի այս բիւր ցաւեր,
Մինչ հայրենեացս այսպէս անկար եմ օգնել:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՂԹԱՆՔ

Ո՛վ տէր Աստուած, լուր մեր բարբառ,
Ուղղեալ սրտէ միշտ վչտահար.
Փութա՛, գթա՛, հայոցս թշուառ,
Մի օտարաց լիցին աւար:

Նայեա՛ց տխուր աւերակաց,
Մեր հարց անշուք լքեալ չիրմաց.
Ա՛հա, Հայաստան, մայր սըգաշղեաց,
Իբիւր հառաչս կոծէ իւոց:

Ուր հայ որեարք աքնին պանդուխտ,
Ո՛հ, ընդ վայրս այս բազմակարօտ.
Զունչն պաշտպան, մերձ իկորուստ,
Իվտանգս կրեն հարուածք անգութ:

Տուր չունչ քոյդ հայ արդոյդ համայն,
Իչխք դարձցին, վա՛չ ոսոխք չար·
Եւ իկրօն սուրբ, հայք Հայաստան,
կեցցե՛ն յաւերժ, կացցեն պայծառ։

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ

ԱՐՏԱՇԷՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ալա՛ն, ալա՛ն, յաղթուԹիւնս առիր իմ ձեռքէն,
Ո՞նց դիմանամ, հալուում է Թուրս քո կրակներէն·
Ալա՛ն, ալա՛ն, փառք ու պատիւս առիր իմ ձեռքէն,
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուհիներէն։

Ա՛յ դու անգութ, այրուում է սիրտս քո չոր ծարաւէն,
Տուր լինձ Թևերդ, քո մօտ Թռչիմ կուրի վրայէն·
Ո՞նց դիմանամ, չեմ դովանում կուրի ջրերէն,
Մի ԹիԹեռնիկ դարձայ քո ճրագի լուսէն։

Հազար կըտամ, տասը հազար, անԹիւ գանձերիս,
Ջեզ լինձ կ՚առնեմ հարս, Թագուհի քաջ ալաններդէ·
Ոսկւոյ անձրև չոզ կըտամ քո գլխի վրայէն,
Սէլ կըգնայ մարգարտէ, քո ոտքի տակերէն։

ԿըԹափեմ կուր լայքայ ոսկի կարմիր մորԹերէ,
Ծածկւի ընծայաբեր բարձած ուղտերէ·
Ատա՛ց, հեծա՛ւ, արի արքայն իր սև ձիերէն,
Արծուի նման ճչեց, Թռաւ կուր գետի միջէն։
Հասաւ, հաննց, իր կարմիր Թոկ, օղն ոսկեղէն,
Ձըգեց, ինկաւ Սաթենիկի մէջքի մէջաւղէն։

Թռի՛ր, փախի՛ր, իմ գեղեցիկ սև ձի հրեղէն,
Մէջքիդ մատաղ, որս եմ բռնել կովկաս սարերէն·
Թռի՛ր, փախի՛ր, մեծ է աս իմ բոլոր որսերէն,
Թևիդ վրայի կոյտն եմ խլել քաջ ալաններէն։

Ս. ԳԻԻԼԶԱՐԵԱՆ

Հ Ա Ց Ր Ի Կ

Ո՞ւր գնաս փութով, արծիւդ հայրենեաց,
Մի թէ մոռացա՞ր սէր հարազատաց·
Գիտեմք չես մոռնար դու քո որդիները,
Ինչպէս որ անոնք չեն մոռնար քու սէր։

Մեր անմեղ մանկանց օրօրոցի մօտ,
Մայրերը նստած մինչև առաւօտ·
Հայրիկի անուան քաղցրիկ օրօրով,
Օրօրեն քնքուշ մանուկներ խօրօտ։

Մեր անմեղ մանկանց թոթով լեզուներ,
Առաջին անգամ երբ հնչեն բառեր·
Այդ թոթով ու քաղցր նախկին սիրուն խօսք,
Հայրիկ պիտ՚ լինի, անմահ Հայրիկ մեր։

Մեր աղօթից մէջ ամէն երեկոյ·
Միշտ պիտի յիշենք անմահ անուն քո·
Նոյնպէս և այժմու կամ պատարագի,
Անմոռաց ես դու առաջի Աստուծոյ։

Մաճկալ և հօտաղ արևի առաջ,
երբ արօր բռնած յոգնած ու հանդարտ·
կը վարեն գութան անուշ երգերով՝
Ա՛յն քաղցրիկ երգն է Հայրիկին ձօնած

Արդ գնա՛ս բարով, Հայրիկդ հայրենեաց,
Մեր սրտին մէջն ես անմահ անմոռաց·
Գնաս բարով Արծիւդ, դառնաս բիւր բարով,
Մնանք անձկայրեաց քո սուրբ կարօտով։

Խ· ՍՕԼԱԽԵԱՆ

Հ Ա Ց Ր Ի Կ

Ո՞վ է որ գայ մեզ, ճեղքած օդն, ալին,
Ճակատն գոհարք, աստեղք կը փայլին·
Թագաւոր մ՚է հայ որ ցատկեց չէրմէն·
Ո՛չ, դէմքը վառողք արցունք ըսպի են·
Նա կ՚արհամարհէ ծիրանի փառքեր,

Նա սև է հագեր։

Նա մեր հայ եղբարց արցունքն է քաւեր,
Ցոյց կուտայ մեզի արիւն ու աւեր,
Դիւցազնի է որ դուրս թռաւ դամբանէն,
Ո՛չ, թուր չէ ձեռին, այլ խաչ բռներ արդէն,
Չի ցայտեր աչքէն չանթեր, այլ սէր գութ·

Դողայ անկէ քիւրդ։

Նա կուգայ հայոց մարգերէն կարմիր,
Ազատեց քրդէն հայը վշտակիր,
Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց իր այս ազատութեան փող·
Տեսէ՛ք, քուրճ հագեր, կարծես ինք դրակ,

Բայց սիրտն է կրակ։

Գայ Մասեաց սարէն՝ նա ձախն ու աջը,
Մովսէսի գնարն, Ղեւոնդի խաչը,
Աստղի մը նայուածք, գնարի մը ձայն
Ազեաց խորերէն կը սիրէ նա հայն·
Դեռ չի ճանչցա՞ք այն, ճակատ վշտակոծ,

Հրեշտակն է հայոց։

Ահա կը ննչէ անոր հեշտ սրինգ
Արձագանք կուտան հայոց դաշտք լերինք,
Երթանք իր չուրջը, հայեր արտալած,
Զբխափեր մատներ նա մեզ օտարաց·
Զբսիրեր ոսկի, փառք ու վաստ մարդիկ,

Հայուն է Հայրիկ։

Գլխիկը դրած սգաւոր սրբեմ,
Զբթափեր ճակտէն դեռ ալիք վրսեմ,
Բայց դէմքի վրայ կանուխ են փթթած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց·
Միակ վարձք մ՚ունի, այն է կոչել զինք՝

«Խրիմեան Հայրիկ»։

Պ· ԴՈՒՐԵԱՆ

ԵՐԳԻ ՕԳՈՒՏԸ

Ով կենդանութիւն կամենում,
Հարկաւոր է օդ չնչէ.
Ով վայելչութիւն ցանկանում,
Պարտական է երգ հնչէ։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք,
Մինչ իմաց երգեցէք։

Երգ՝ ամէն օտար զգացումներ
Սրբում իր ազդեցութեամբը.
Եւ ամէնայն վիշտ տառապանքներ,
Նւազում սրա մխիթարութեամբ։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք, ևլն.

Էն մարդու մէջ հոգի չըկայ,
Որ երգերից գարշում է.
Որպէս դիակ նա անզգայ,
Երկրիս վրայ չըլսում է։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք, ևլն.

Ինչ ազգ զուրկ է երգարանից,
Սէր չունէ, բարբարոս է.
Ոչինչ յոյս չըկայ նրանից,
Մարդկան ազգի մարագ է։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք,
Մինչ իմաց երգեցէք։

Մ. փ.

ՍԻՐԱԿԱՆ

Սիրակա՛ն, սիրակա՛ն,
Դու սէր իմ պատւական.
Մինչև ե՞րբ վշտահար,
Ես մաշւիմ սիրավառ։

Ա՛խ, մինչ երբ ես այսպէս,
Տագնապիմ ասստկապէս.
Մինչև ե՞րբ անընդհատ,
Հառաչեմ յուսահատ։

Սիրական, սիրական, ևլն.

Գիշերը քուն չունիմ,
Ցերեկը վիշտ ունիմ.
Բոլոր կեանքս անհանգիստ,
Ինձ չըկայ կաց ու նիստ։

Սիրական, սիրական, ևլն.

Քո սէրը ինձ մաշեց,
Եւ կեանքս խարշատեց.
Միթէ դու, ո՛վ անգութ
Ջես զգում սիրոյս ուխտ։

Սիրական, սիրական, ևլն.

Միթէ՞ դու սէր օտար,
Կը պաշտես քո սրտում.
Իսկ և ինձ այդ կ՝առնես,
Սեաւ մահւան դագաղում։

Սիրական, սիրական, ևլն.

Ո՛հ, խղճա՛ սիրական...
Տուր ինձ յոյս հարանական.
Թող կապրինք մի հոգւով,
Վայելենք սէր սիրով:

Սիրական, սիրական, ևլն.

Ց. Դ.

ՀԱՑԻ ՈՐԴԻ

Վերցուր գլուխդ, ո՛վ հայի որդի,
Տես թէ ինչպէ՞ս քեզ նկատեն.
Մեծ և փոքր ամէն ազգերից,
Որ մի քիչ զգացմունք կը կրեն:

Կը զարմանան խիստ քո վրայ,
Որ ունեցար անցեալ չըքեղ
Վարդանի պէս մարդ մեծ և հսկայ՝
Ու չունի՞ս դեռ սուր և աղեղ:

Հաւատացէ՛ք թէ ամօթ ենք,
Նախատինք ենք մենք մեր նախնեաց:

Ահա կ՛անցնի հինգ հարիւր տարի
Որ կորուսեր ենք մենք մեր իշխան.
Կորուսեր ենք նաև տուն և տեղի,
Սիրտ, ոգի, խելք և միտք բանական:

Չենք մտածեր իսկ թէ ո՞ւր ենք,
Ո՞վ են եղեր մեր նախահարք.
Տաճատ, Խորէն մենք մոռցեր ենք,
Անգգացեր ենք որպէս քար:

Հաւատացէ՛ք թէ ամօթ ենք,
Նախատինք ենք մենք մեր նախնեաց:

Տ. ՊԷՀՀԷՐԵԱՆ

ՎԱՐԴԱՆ

Վարդան մեր քաջ զօրավար,
Թուրը ձեռին ոսկեվառ.
Կանչում էր իր քաջերին՝
Ջարդել գլուխ ճազկերտին:

Հայոց զօրքերն գունդագունդ,
Մեծաբարբառ գոռով թունդ.
Հաւաքւեցան Արտաշատ,
Մայրաքաղաք մարդաշատ:

Հայոց զօրքերն անհամար,
Դրօշակներով պայծառ.
Ամէն կողմից ըլտապած,
Վազվզեցին կատաղած:

Ղևոնդեանց խումբն անմահ,
Անվախ, անդող և անահ.

Խաչը բռնած Քրիստոսեան,
Բորբոքեցին զօրքն հայկեան։

Կանայք հարեաւ, աննըման,
Վառուած սիրով աստուածեան.
Դուրս թափուեցան տըներից
Վազել դաշտը ծաղկալից։

Քաղցրախօսիկ և սիրուն,
Օրիորդներ փափկասուն.
Թողին իրենց ոսկի չորեր,
Երկաթ հագան մահաբեր։

Փա՞ռք և պարծա՛նք յաղթական,
Քեզ սիրելիդ իմ վարդան.
Որ քո սիրով բորբոքիչ,
Հանդիսացար քաջ փրկիչ։

Դու և քու քաջ ընկերներ,
Առիւծաբար անվեհեր.
Զարդեցիք զօրքն պարսկական,
Դրիք գետին անկենդան։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ՀԱՑԻ ՄԱՂԹԱՆՔ

Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս,
Եւ արա զնոսա պայծառ,
կեցո զՀայս։

Զողորմութիւնդ վերին,
Համեաց ճօնել նոցին,
Զի նովիմք մարդասցին

Ապրիլ յաստիս։

Ո՛վ տէր մեր, տէր փութա՛,
Զազգն մեր համայն փրկեա՛,

Իթչնամեաց

կափո՛ զաչս նոցուն,
Հատ զարմատոյ զբուն,
Եւ զազգ մեր պարտասուն՝

Արա՛ հզօր։

Աչովդ համատարած,
Զազգն մեր արտահալած

Փոյթ գուժարեա՛։

Ցաչխարհ Արարատեան,
Իվայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական

Օտար ազգաց։

Իքո իջեալ տեղի,
Զաթոռն հայրապետի՝

Մեր հաստատեա՛։

Ջերկարութիւն կենաց,
Հօրն մեր Աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց՝

Որ գմեզ հովւէ։

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆ

Ի Ղ Ձ Ե Ր

Տեսնե՞մ արդեօք կեանքիս մէջ,
կարօտակէզ իմ իղձեր.
կենացս գարնան օրերուն,
իրագործուած մի առմի.

Գեղատեսիլ Հայրենիքս,
Տեսնե՞մ արդեօք ազատուած.
Եւ անոր սուրբ դրօշի տակ,
Համախմբուած ողջ հայեր

Արդեօք տեսնե՞մ հայ զինուոր,
Հրացան ուսին դէպի մարտ.
Ցառաջաքայլ ընթանայ,
Եւ ջախջախէ բռնաւորն։

Իցի՞ւ արդեօք ամէն հայ,
Ոգևորուած մի տենդով.
Գոհացընէ հայ զօրքին,
Ամէն կերպով լի ու լի։

Ղօղանջէ երբ փողի ձայն,
Զինուորն դիմէ իմարզանս.
Նրա հետ հայ թագաւորն,
Գնայ փառաք վեհապանծ։

Երնէ՛կ, գարուն հասակիս,
Պսակուէին այս իղձերս.
Այլ երբ լինի կը տեսնեմ,
Եւ կը կանչեմ, «Փա՛ռք քեզ Տէր»։

ՎԱԶԳԵՆ

ՀԱՑ ԶԻՆԻՒՈՐ

Տարի մ'ալ անցաւ,
Գնաց սահեցաւ.
Այլ դու հայ զինուոր,
Թափառական մնաս։

Ցերկիր հեռաւոր,
Սուզ անմխիթար
Ջքեզ չուրջ պատած.
Եւ դժբախտ սիրտդ ալ
Ցուսաբեկ եղած։

Սուրդ ու քու տէգդ
Ժանգոտ վար դրած.
Եւ զօրեղ արմունկդ
Տէգիդ յեցուցած։

Դի՛ր դու հայ զինուոր
Քու յոյդ առ Աստուած։
Վեր վերցուր գլուխդ,
Տե՛ս, ո՞վ է կանգնած։

Առ քեզ կ՛ակնարկէ,
Ազատիչն Աստուած.
Ցաղթութեան պսակ,
Իր սուրբ ձեռքն բռնած։

Ա՛ռ, ուրեմն նիզակդ,
Ոտք ելի՛ր, կանգնէ.
Եւ սրտիդ խորէն
Անոր փառք խրկէ։

Մի՛ վհատիր բնաւ,
Քաջ զինուոր դու հայ.
Չի այսուհետեւ,
Էն Աստուած գթած
Ընդ քեզ է յաւէտ։

Ազգասէր եղբայր,
Կուտայ քեզ պսակ,
Բոլոր ճգանցդ փառք,
Ցանկալին ազատութիւն։

Մ. Ս. Ց. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՀԱՑ ՄՕՐ ՄԻ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր իմ Աստուած, քեզ կ՛աղաչեմ,
Տո՛ւր զօրութիւն որդուս բազկին.
Ան պատրաստ է կռւի երթալ,
Մեր ոխերիմ թշնամեաց դէմ։

Պիտի զոհէ իր կարիճ կեանք,
Վասն հայրենեաց ազատութեան.
Պիտի թափէ անգին արիւն,
Իր քերց, եղբարց ազատութեան։

Շատ խնդրեցինք, չատ ողբացինք,
Գիտենք լսեր ես մեր խնդիրք.
Այժմ հասեր է ժամանակ,
Պէտք է ազատի Հայաստան։

Տէ՛ր աղաչանքս ո՛չ, մի՛ մերժեր,
Արիացուր հայ զինուորներ.
Քաջ առաջնորդ կարգիր անոնց,
Որ սատակեն վատ տաճիկներ։

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քընէ՛, քընէ՛, սիրուն որդեակ,
Քու մօր սրտին սփոփանք.
Քեզ օր կասեմ տխուր ձէնով,
Օրօր, օրեր ու չատ կեանք։

Օրօրոցըդ ձեռքով չարժեմ,
Բերնով երեսդ համբուրեմ.
Քեզ չատ օրօր, քեզ չատ օրեր,
Քեզ չատ արև կու երգեմ։

Աչքդ փակէ այդ լուսափայլ,
Աստղի նման փայլածը.
Որ մինչև այդ երկնքումը,
Երևում է ցոլածը։

Աչքիդ չողը սիրաս է ծագում,
Նորոգում է իմ խոցը.
Աչքդ փակէ, իմ սիրական,
Հերի՛ք, սրտիս այրածը։

Աչքդ փակէ, քաղցր քնէ՛,
Քեզ օր կ՝ասեմ ես լալով.
Քու հօր բանը իմաց կ՝անեմ,
Դու ականջ դիր նիրհելով։

Հայրըդ զօրեղ երիտասարդ
Առաւ բակէն գուժանը.
Լծեց երկու զոյդ եզները,
Իր սրածայր արօրը.

Գնաց դաշտը, երգ երգելով,
Երգ ասելով ողբալով.
Քաղցր ձէնով երգ կանչելով,
Երգ երգելով ու լալով.

«Ինչի՞ համար սուգ ես անում,
Սուգ, արտասուք ու լալով».
Ասաց հօրդ հարևանը՝
Աչքէն առուգ վազելով.

«Եզներդ գէր գէր ու պարարտ,
Վազվազեն դէպի դաշտ.
Շատ կու վարին, չատ կու հերկին,
Շատ կու կամնին քու արտը։

«Արեգակը մարը մտած՝
Դու կու դառնաս արօրէն.
Քեզ Զանանը առաջ կուգայ,
Գրկում բռնած երեխէն»։

Գօրգին երգով հարևանին,
Այսպէս տուեց պատասխան.
«Եզներս չեն ինձ մընալու,
Իմ աչքի լոյս հարևան»։

«Օրավարս ես չեմ կարող,
Այսօր վերջը հասցնել.
Պիտի մնայ հող ու արտըս,
Անվարուցան, անայցել»։

«Դիակիս մօտ գէր ու պարարտ,
Իմ եզները, վիզը ծուռ.
Պիտի մնան թէ ո՞վ նոցա,
Երեկոյին կուտայ ջուր»։

Հարևանը աչքը արցունք,
Մեզ սև համբաւը բերեց.
Դէ՛ «չուտ արէ՛ք, եկէ՛ք, տեսէ՛ք,
Թէ ձեր Գսրգին ի՛նչ արեց»։

Ի՞նչ ես արել, գանք ու տեսնենք,
Վա՛յ մեր անբախտ աչքերուն.
Նետը ցցած է սրտիդ մէջ,
Տակդ ճապաղքա արիւն։

Նետը ցցւած քու սրտիդ մէջ,
Օդը պատռեց, գիծ արաւ.
Գիծը սև էր երկնքուումը,
Աչքս ծառի մօտ տարաւ։

Ծառի յետնէն թագ կեցած էր,
Մեր գիւղացւոց թշնամին.
Մեր գիւղացւոց հին առելին,
Տավարի գող եզիդին։

Դո՛ւ սիրական, սիրուն որդի,
Քնէ՛, քնէ՛, զօրանաս.
Քու մօր համար մխիթարիչ,
Ու սփոփիչ մեծանաս։

Մխաքդ պահէ՛ քու հօր արաը,
Գեր ու պարարտ եզները.
Մխաքդ պահէ մաճն ու սաւխք,
Ու սրածայր արօրը։

Երբ մեծանաս երթաս դաշտը,
Ուզես վարել քու արաը.
Քու մօր համար ուռով բերել,
Ցորնի խուրձը ու բարդը...

Առաջ գնա՛, գետը անցիր,
Այն սրահոս երասխէն.
Գնա՛, գտի՛ր, այն եզիդին,
Որ այն ծառի եաևէն։

Նետը քաշեց, օդը պատռեց,
Քու հօր կեանքը սև արեց.
Թող Գօրգիի եզները տայ,
Որ այն օրը փախցըրեց...

Գեր ու պարարտ քու եզները,
Սայլին լծէ՛, սիրական.
Դարձի՛ր, սրբէ՛, քու մօր աչքէն,
Այս արցունքը տրտմութեան։

Քաղցր ձէնով երդ հնչելով,
Երդ երգելով դուն արի...
Ա՛հա, երբ կը լինի որ մեծանաս,
— Իմ բաղձանքը կատարի։

Այժմ քնէ՛, աչքդ խփէ՛,
Հանդստացիր օր, օր, օր.
Թող քու մայրը աչքէն թափէ,
Արտասուքը իր յորդոր։

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քնի՛ր զաւակս, քնի՛ր որդեա՛կ,
Հայն ճիացեր գերութեան տակ.
Քնի՛ր մեծացիր, զօրացիր,
Որ թշնամեաց ձգես գնդակ։

Մեր հայրենեաց նախնի քաջեր,
Զըմռռանաք հայ մանուկներ.
Հայկ, Արամ, Վարդան, Վահաններ,
Ձեզ կը յանձնեն իրենց նետեր։

Աստուածային սուրբ աղօթքով,
Իմ մայրական չարչարանքով.
Ես քեզ պահեմ իմ քաղցր կաթով,
Գնա՛, փրկէ՛, քու ազգ չուտով։

Տարիքդ կը լինի քսաներկուք,
Դու կը նստիս մի ձի նժոյգ.
Իմ մայրական դառն արտասուք,
Կը փարատէ հայոց սև սուգ։

Քնի՛ր զաւակս, քնի՛ր որդեակ,
Ո՛հ, ես կուտամ Աստուծոյ փառք.
Ես քեզ պահեմ մեծացընեմ,
Այդ դասակարգին հասցընեմ։

ԱՌ ԱՐԾԻՒՆ ՀԱՑՐԵՆԵԱՑ

Քու գալուստ բարի, Արծիւն հայրենեաց,
Փութա՛, կաւարուի տուր մեր բաղձանաց.
Գիտենք Հայաստան աշխարհից կուգաս,
Բայց մեզ նրանից ի՞նչ խապրիկ մը տաս։

Վարագայ սուրբ վանքն է քու օթևան,
Ինչպէս ամառուան, նոյնպէս ձմեռուան.
Հայաստան աշխարհ է քու առաջ,
Որոյ դերութիւն յայտնի է քեզ քաջ։

Երկինք խոյանայ ամպերու վերայ,
Քու աչք հայրենեաց միշտ մտիկ կուտայ.
Վանայ գեղեցիկ ու վսեմ երկիր,
Դու ի՞նչպէս թողիր ու հոս տեղ եկիր։

Մենք, պանդուխտ, կռունկ, այս օտար աշխարհ
Կարօտ ենք քաշում հայրենեաց համար.
Զունինք մի վայրկեան հանգիստ մեր կենաց,
Մեզանից Հայաստան միշտ հեռու մնաց։

Բայց դու Հայաստան վեհ աշխարհ թողած,
Հոս տեղ Տփխուում է՞ր կաս զբաղած.
Եւ ի՞նչ նպատակ քո մտքի մէջ կայ,
Փութա՛ պատասխան, մեզ չուտով ասա։

Գիտենք դու եկիր այցելու լինել,
Քու որդոց ցաւեր դու ինքնին դիտել.
Քու աչքեր սուր են, չուտով կը տեսնեն,
Սրտի ցանկութիւն չուտով կը գտնեն։

Բայց դու ո՛վ Արծիւ, որդիդ հարազատ,
Հայրենեաց ցաւոց դու տեղեակ հաստատ.
Մէկ խապրիկ մ՛ասա, մեր մայր աշխարհից,
Սրտերնիս հանգիստ առնենք ձեզանից։
— Տեսնենք ի՞նչպէս է, որ մենք էլ փութանք,
Ձեր կարօտ եղբարց մեզանից լուր մ՛տալ։

Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Քու փափաքով վառուում եմ,
Ագնիւ սիրական, ո՛ւր տեղ ես, ո՛ւր տեղ ես,
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան,
ո՛ւր տեղ ես։

Ի՞նչ պատահեց քեզ, անուշիկ,
Որ հեռացար ինձանից, ինձանից,
Քաղցրահոս անուշ լեզուդ, ա՞հ, կեանքիս պա-
հապան, ո՛ւր տեղ ես:

Դառնակսկիծ ցաւած սրտիս,
Արտասուաթաւալ աչքերուս լոյս չի մնաց,
Ե՛կ երևոյթդ տեսնեմ, աղնիւ սիրական,
ո՛ւր տեղ ես:

Քու մէկ ժպիտը ինձ կեանք է,
Հոգիս հոգուդ ղուրպան էլնի, ո՛ւր տեղ՞ ես,
Ե՛կ համբուրիդ արժանացո՛, աղնիւ սիրական,
ո՛ւր տեղ ես.

Էլ առանց քեզ ես կեանք չունիմ,
Ո՛վ քաղցրիկ սիրականս, սիրականս,
Մայիսի պայծառ արև, կեանքիս պահապան,
ո՞ւ ր տեղ ես:

Մինչև ցերը քեզմէ հեռու,
Քու փափաքովդ չարչարուիմ, չարչարուիմ, ա՛հ,
Սիրտս լեցուած խոր վէրքերով թափառիմ, հրեշտակս, ո՛ւր տեղ ես

ԽԱՆԱՍՕՐԻ ՓԱՑԼԵՐԳԸ

Կուեցէ՛ք, տղերք, կուեցէ՛ք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.
Ցանկալի է մեզ միշտ աղնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը.
Ցառաջ խիզախենք իբրև նահատակ,
Իզուր թող չանցնի մեզնից մի գնդակ:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջերը,
Մեզի կ'սպասեն մեր հէք եղբայրները.
Չի ծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամուն,
Թէ ի՛նչ է հայու ուժն ու քաջութիւնն:

Ահա քիւրդերը փախան սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէք, անդադար կրակ,
Փառք ժողովրդին, առաջ է գնդակ:
Օ՛ն, կուի՛նք տղերք, մինչև չունչ վերջին,
Արժանի լինինք փառքի պսակին:

Մեռնինք յուսալով՝ մերն է ապագան,
Մեռնինք. բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան.
Այսպէս յորդորեց ու ինկաւ արին,
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.
Ահեղ կուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալին կորիճ Մարտիրոս:

Մ. Ե.

Ա. Ո Հ Ն Ձ Ա. Կ

Հեռաւոր երկիր նոտած դու նժդեհ,
Հայրենեաց բախտին մօտուստ ես տեղեակ·
Ցարդ քաջարի նոր սկզբանց վեհ,
Ցեղափոխութեան ձայնատու Հնչակ։

Նոր գաղափարի քո ցանած սերման,
Աղնիւ պտուղներ հասունանան արագ·
Կարին և պօլիս որոտման նման,
Անդրանիկ չարժումնք ծնան քեւ Հնչակ։

Զար բռնակալը, հայոց կեղեքիչ,
Վախէն պահեցաւ ոսկի գահին տակ·
Խուլ Եւրօպայի թնդաց մէն դահլիճ,
Հայը ցնցեցաւ, կարմրեցաւ Հնչակ։

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա,
Հասած կարմրին՝ արեան նմանակ·
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք Հնչակ։

Կոչնակիդ հնչեցո՛ւր, հնչեցուր արեգ,
Թող հայք ոտք ելլեն ծագէ մինչև ծագ·
Փշրի ժանտ չղթան, ծագէ նոր արև,
«ԱԶԱՏ ԵՆՔ» հնչէ ոսկեզօծ ՀՆՉԱԿ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Ա Լ Բ Ա Ի Ե

Ալ բա՛ւ է, հայ եղբարք,
Այս անտարբեր մեր ընթացք·
Հայրենիքը կորաւ,
Հայ ժողովուրդը մեռաւ։

Տուրքի տակ հայ անհատ,
Ճնշըւում է անընդհատ·
Հայ գեղջուկ իր կեանքով,
Ջոհ է դարձել վաւերին։

Հայ գլուխ հինգ փարայ,
Այն էլ լոկ քէֆի համար·
Հայի հոգ ու ոչխար,
Քիւրդի, տաճկի են համար։

Ալ բա՛ւ է, հայ եղբարք,
Թէ կը սիրենք մեր ազգ·
Եւ մեր սուրբ կրօնը,
Թէ պիտ՝ պաշտենք համարձակ։

Մէկ հոգով ի մի սիրա,
Կապւինք հայեր ամրապինդ·
Վատ թիւրքի լծի տակ,
Թող վիզ ծռեն անզգայք։

Զըմռռանք այն հայեր,
Որ հայրենի սուրբ սիրոյն·
Իրենց անձը զոհել
Մեզ օրինակ են դարձել։

Օն ուրեմն եղբայրներ,
Առնենք մեր սուրը—սուսեր·
Զուխա կեսատուկ արիւնոտ,
Մեզ կ'սպասէ անհամբեր։

Տ. Տ·

ՄԻՈՒԹԻՒՆԸ ՋՕՐՈՒԹԻՒՆ Է

Ձիւները հատ հատ երկընքէն վար կը թափին,
Բայց երբ կ'իջնեն, մեղմով կ'սասեն ընկերին·
Դուն ալ, ես ալ, թոյլ էակներ ջրի պէս,
Կը հալինք՝ թէ չըմիանանք պնդապէս·
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երբ մէկտեղինք մենք, լեռն ու դաշտը կը ծածկենք։

Անձրև կուգայ, ջրի փոքրիկ կաթիլներ,
Մէկտեղ կ'իջնեն և կը հանեն մեծ ձայներ·
Կ'սասեն ի՞նչ կայ աւելի թոյլ քան թէ ջուր,
Բայց միութեանս չի դիմանար նոյն իսկ հուր։
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երբ մէկտեղինք մենք, մեծ գետեր կը կազմենք։

Քամին փչեց, թէև ամառ, տերևները,
Դողդըղալով կը փսփսան իրենց մէջ·
Այս քամին մեզ գատ գատ ամէնքս կը թափէր,
Բայց չսաին վրայ կանէ միայն եղ և էջ։
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց մէկտեղ՝ մենք ժարդերն արևէն կը ծածկենք։

Շատ տկար են ծիծեռնակներ, բայց խմբով,
Կը ճամբորդեն գարնան ատեն ապահով·
Երբ գիշակեր թռչուն տեսնեն, խմբովին
Մեծ աղմուկով կը վախցընեն թշնամին։
Այդ աղմուկ մեզ կ'սսէ· մենք մինակ տկար ենք,
Բայց երբ մէկտեղինք մենք, արծիւն ալ կը վանենք·

Բնականէն տրւած է այս մեծ օրէնք,
Որ տկարները թէև չունին ուժ և զէնք,
Միանալով կը զօրանան, կը կուին
Եւ միութեան չի դիմանար թշնամին։
Կը կրկնեն ձիւն, անձրև և տերև և թռչուն,
«Միացէ՛ք, միութեան մէջն է մեր զօրութիւն»։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԿՈՒԻ ՄԵԿՆՈՂ

Մնաս բարեաւ՛ը, քաղցր մայր իմ, ես պիտի գնամ,
Տուր մայրական վերջին համբոյր, սիրտս զովանայ·
Երկնքի երեսի գոյնը կամար է կապեր,
Կարծես հայ տղաներուն սիրտ խաւար է պատեր։

Այ խաղաղի հայ ծնողներ չի՛ լաք իզուր տեղ,
Այլ խնդրեցէք Աստուածանից ձեր վերքին մի դեղ·
Այս ինչ սարսափելի բան էր որ ինծի եղաւ,
Կարծես դիտմամբ սև նօթերը իմ ձեռքս եկաւ։
Արդեօք կը լինի որ կրկին կենդանի ճնամ,
Ուրախ զուարթ գամ հայրենիք նոր կեանք ստանամ

ԱՌ ՀԱՑԱՍՏԱՆ

Օտար երկիր թափառած,
Անքուն աչօք կամ ցաւած,
Իմ սիրելւոյս կարօտցած.
Զըկայ մէկն որ կարեկից
Ըլլայ ցաւած իմ սրտիս:

Ո՛վ հայրենիք իմ սիրուն,
Ա՛հ, տուչորէ զիս անունդ.
Արդեօք պիտի չըտեսնե՞մ,
Քու լուսափայլ զարթ դէմքդ:

Հառաչանք բիւր ի սրտէս,
Արտօսր հեղում աչերէս.
Իմ սիրելւոյս կարօտցած.
Զեն ինձ երբեք մխիթար՝
Ոսկի, պատիւ, սէր օտար:

Այլ ես անոր սիրուն զոհ,
Կ'ընեմ զամենքն սրտով գոհ,
Միայն թէ յոյս մ'ունենամ,
Իմ սէրս տեսնել մի անգամ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ծագեց արև ազատութեան,
Մութ փարատեց հորիզոնին Թորգոմայ տան.

Հրաւէր կարդաց քաջաց հայոց,
Իզէն, իզրահ զինուորութեան.

Գոռ թշնամուն կանգնել հանդէպ իճակատ,
Վանել զոսոխս, նահատակել՝ կանգնել նշան յաղ-
թութեան:

Մեր հայրենեաց անցեալ փառքեր,
Գահ, գայիսոն, թագ, գաւազան ենք կորուսեր.

Հապա մանկունք սիրա սրտի տանք,
Ցեղս նահանջել նախնեաց պարծանք.

Վօթենք արիւն, լուծել չղթայից կապեր,
Ազա՛տ, ազա՛տ, ազա՛տ չարժին մեր թև թիկունք
ու ճեռներ:

Ոսկերք նախնեաց մեր քաջազանց,
Սէգ Տրդատայ, Մխիթարայ վեհապետաց.

Հրճւին նոքա իտապանի,
Ոգիքն բերկրին յերկնից կայան.

Առնունք ասպար, վանել կեղեքիչ վոհմակ,
Կանգնել անդրէն Հայկայ գարմից հին հին փա-
ռաց յիշատակ:

ԱՂՋԿԱՑ ԵՐԳ

Հանգիստ իմ անուշ,
Անցար գնացիր.
Միայն վէրք անբուժ,
Սրտումս թողուցիր։

Սոխակ գեղեցիկ,
կանաչ պարտիզում.
Երգելով քաղցրիկ,
Ինձ չէ գրաւում։

Քեզանով միայն,
Երջանիկ էի.
Տիկին ինքնիշխան,
Ինձ կարծում էի։

Ցերեկը մինակ,
Փակուած սենեակում.
Ողբում եմ անյագ,
Ոչ ոք չի լսում։

Գիշեր է գալիս,
Մահիճս եմ մտնում.
Տրտում է հոգիս,
Քունս չի տանում։

Մազեր թուխ երկայն,
Աչեր գրաւիչ.
Ի՛նչ հասակ, ինչ ձայն,
Ի՛նչ հոգի կտրիճ։

Ո՛հ, սիրտս այրուած,
Ողջ քեզ եմ կանչում.
Ողջ քո անմոռաց,
Անուշդ եմ յիշում։

Անգութ ինձ խաբեց,
Օտարին սիրեց.
Ա՛խ, նա դեռ ինձ վաղ,
Պատրաստեց դագաղ։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԻՄ ՍՈԽԱԿԻՆ

Սոխակ, ինչու դադրեցար,
Քո անուշ երգը երգելից.
Որ քամում էր արտասուք,
Շատ իմ էրւած աչերից։

Մի՞թէ է, երբ ծագում էր,
Արշալոյսը գարնային.
Քանի՛ դու միտըս բերիր,
Իմ առարկան ցանկալին։

Այն յիշատակ անուշ էր,
Որպէս երազ վաղանցիկ.
Որ գէթ վայրկեան մ՛թշուառին,
Դարձնում է նա երջանիկ։

Համակ աչխարհ մոռացած,
Քու ձէնին ունկըս յառած,
Մաքովս թռչում էի ես,
Իմ հայրենին կարօտած։

Ո՞վ կըտայ ինձ թև թռչնի,
Որ բարձրանամ, սլանամ.
Օդն ու ամպերը ճեղքեմ,
Ու տանիմ իս Հայաստան։

Թէ նրա օդը չնչեմ,
Այն կենսատու սուրբ օդից.
Գիտեմ փրկւելու եմ,
Անբուժելի իմ ցաւից։

Գիտեմ, դու էլ ես կարօտ,
Մշտագարուն այն դրախտին.
Որից հեռու մեզ չըկայ,
Քաղցր ժըպիտ մեր բախտին։

Գարուն անցաւ, ա՛ռ սոխակ,
Խօսուն լեզուիդ կապ դըրաւ.
Ու խեղճ վարդի թերթկին հետ,
Շարականդ էլ տարաւ։

Կը բանամ դուռ վանդակիդ,
Ազատութիւն քեզ կըտամ.
Բայց աղաչում եմ քեզի,
Թռիր դէպի Հայաստան։

Վարդ ես ուզում այն տեղ է,
Անամպ երկինք, մեղմ օդեր.
Ճաճանչափայլ արեգակ,
Կարկաչահոս առուներ։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.

ՄԱՑՐ ՀԱՑԱՍՏԱՆ

Ցանած, ցրւած մազերդ առջև ցուրտ հովերուն,
Թափած ոսկի թելերդ, չաղւած խիղմերուն.
Թուխ թուխ աչերդ հոսին պղտոր ջուրից յընթացս,
Եւ վեր հայել չուզես պինչ կոյս մի մերժւած։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Անգարդ գլխուդ մատաղ, ո՞ւր է քո թագ, պսակ։

Շատ մայրեր տեսած եմ, քեզ պէս թշւառ չըկայ,
Շատ վէրքեր տեսած եմ, այլ քոյդ նման չըկայ.
Երբ «ա՛հ որդիք» կանչած վուխս գետնի վրայ,
Բոլոր մարմինդ որդոցդ յարիւն կը լողանայ։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Անաէր գլխուդ մատաղ, ի՞նչու կաս միայնակ։

Որդիքդ իքո ծոցէն խումբ խումբ կը հեռանան,
Վիրացդ վրայ ակնարկ մը ձգել չուզեն անգամ.
Շատեր անունդ հնչեն պի նորութիւն է ան,
Շատերն անկէ զգւին, պի հարքն չատացին զայն։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Լքւած գլխուդ մատաղ, ո՞ւր են քու վեհ սպայք։

Բաժնին գրկէդ հազարն և կէսն հազիւ դառնան,
Դառնան բայց ո՛հ, ինչպէս — հայու մի ուրւական.
Երկուքն ինոցանէ հազիւ քեզ ողջոյն տան,
Եւ այլք իբրև անբան՝ լռիկ անցնին գնան։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Ծռած վզիդ մատաղ, ո՞ւր են քու հարազատք։

Ահ, քու որդւոց չատերն, իրը այր մի անպատկառ,
Բանտ, չղթայ, նախատինք իրրու թէ չեն ղդար.
Ազնւական զաւակ, առողջ անձնեայ և ժիր,
Բայց այլոց փշրանքով լիանալու յօժար։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, այդ ի՛նչ դառն վիճակ,
Պատկառ դէմքիդ մատաղ, ո՞ւր է քու լի բաժակ։

Ո՛ փարթամք, որ գիտէք զայս իմ մայր ցաւագին,
Որ այժմ զուրկ չատ որդոց՝ հեծէ ողորմագին.
Գէթ դուք ողորմեցէք իմ տառապեալ այս մօր,
Գէթ դուք բարձրացուցէք ճակատն ամօթաւոր։

Անուանդ մեռնիմ, մայրիկ, ո՛հ, ձայն տուող չըկայ,
Գիտեն այո՛ զքեզ, բայց ցաւոդդ անզգայ։

— Ցարևմտից թռան հրաշատեսիլ թռչունք,
Որ փուչեր խլելով ցանեն ծաղկանց սերմունք.
Ասեն թէ այն ծաղկունք դեղ են քու խոցերուդ,
Ասեն թէ այն ծաղկունք զարդ են քեզ անկապուտ։

Դու յուսոյ այս գինւով թմրիր առ սակաւիկ,
Մի՛ ասեր թէ յոյսեր, ո՛չ չեն միշտ խաբուսիկ։

Տ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Նստեր եմ սղոմսազին արծաթափայլ լուսնի դիմաց,
Աչերէս սև սև վտակ թափեմ խև գետին իջնաց.
Ալ չկան սիրուն ձագերս, որ հա՛յր, ասեն, մի՛ լար, մի՛ լար,
Ոչ մայրիկս, ոչ սիրականս, որ արցունք խառնենք իրար։

Գիշեր է, հանգչիլ կ՛ուզեմ, բայց ա՛հ ո՞ր են սիրոյ գիրկեր,
Դու աւազ, դուք ապառաժք, կրնա՞ք անոնց փոխանակել.
Ա՛հ, իցիւ թէ քունն անուշ իմ արցունք ցամքեցնէր,
Եւ երազ իւր իր թևերով իս սիրոյ գիրկ հանգուցանէր։

Բայց մորիս, ղինչ կոյս երկչոտ յուզեալ լիծով չիգար իլող,
Ո՛վ ամպեր, դէթ մի ծածկէք լուսնի պատկեր գեղափողփող.
Ինձ քաղցր է ճերմակ իր դէմ, փոյթ չէ թէ վարդ չկայ բոլոր,
Ինձ քաղցր է խօսիլ առ այն, քան հետ ընկերց մատամոլոր։

Երանի՛ քեզ, ո՛ լուսին, որ կը տեսնես աչօք պայծառ,
Այն պատկերք, ոյց յիշատակ ինձ հետ տանիմ խելառ մոլար.
Երանի՛ գի քու չողեր չատ համբուրեն այն երեսներ,
Որոնցմէ ո՛հ, իմ չըթունքս զրկւելով են ցամաքեր։

Ա՛հ, եթէ իմ սիրականքս առ մեծ վշտին մոռնան ճըրագ,
Կամ եթէ վայ ինձ հազար, իւղ գնելու չլինի ճարակ.
Դու լուսին, ծիծաղադէմ իմ ճագերուս ծագէ յերես,
Որ չեղլեն դառնակսկիծ, դոչեն հայրիկ, ո՞ւր ես, ո՞ւր ես։

Ո՛ լուսին, չատ դադարէ, իմ ցաւած հօր չիրմին վրայ,
Ուր թերևս իմ արցունք փշոց վրայ դեռ կը չողայ.
Իմ փոխան դուն համբուրէ՛ այն չորացած օրհնեալ հողեր,
Իմ փոխան դու զովացուր նրա ցամքած աուրը ոսկորներ։

Ո՛ լուսին, չատ լոյս սփռէ նւիրական վեհից չիրմաց,
Որոցմէ ես հեռանամ կարօտամաչ և թաւամած·
Թէ հայեր արտասւաթաւմամ ծաղիկ չթափեն այն հողե-
րուն,
Դու սփռոց արծաթաթել գարդ տուր չիրմանց վեհ
պապերուն:

Երանի՛ որ խաղալիք, հանգչիս այժմեան ափանց վը-
րայ,
Ուր ծիծաղ ծաղիկներէն թռչէր իմ դէմ, մինչ ես տը-
ղայ·
Երանի՛ որ չողչողաս ճերմակ ծաղիկ ծառոց վրայ,
Որ իմ ձեռք մշակեցին, պատուղ չըքաղած ա՛ռ հեռա-
ցայ:

Բայց ահա թուխ ամպերով քօղարկէ սիրուն պատ-
կեր,
Իբրև բախտ հէգ պանդխտիս որ ուերթ ժպտէր գար-
նանագեղ·
Մնաս բարով, ո՛ լուսին, չեմ ուշանար դարձեալ տե-
սոյդ,
Քու վեհ դէմքդ ինձ մխիթար, և պէտք ունիմ ես քու
գեղոյդ:

Տ· ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ՍԻՐՈՒՆ ԹՌՉՆԱԿ

Սիրուն թռչնա՛կ,
Ա՛հ, երջանիկ ծիծեռնակ·
Երբ կը լսեմ քու սուր ճիչերը,
Սրտէս ինչե՞ր կ՚անցնին, ինչե՛ր:

Ա՛հա, ծիծեռնակ,
Երնէկ երբ ես էլ թռչնակ,
Ձեզ պէս թըռիլ, թռչտիլ անհոգ,
Երգել, սիրել գիտէի լոկ:

Սիրուն թռչնակ,
Ալ անցաւ այն ժամանակ·
Ալ թեւ չունիմ ու կը սողամ,
Երգելու տեղ լուռ կը մխամ:

Ալ չունիմ ո՛չ,
Ոչ խօսք, ոչ ձայն, միայն խոհ·
Հոտ, գոյն չունիմ, ալ չեմ ծաղիկ,
Փայլ, փոշի չունիմ, ալ չեմ աստղիկ:

Սիրուն թռչնա՛կ,
Ալ էակ մ՚եմ տարօրնակ·
Կը նաւաղիմ իմի ակնարկ,
Շոգիանամ ժպտի մը տակ:

Սիրուն թռչնա՛կ,
Արդեօք ե՞ս եմ, ես մինակ·
Որ երկրի վրայ սոսկ մի ըստւեր,
Իսկ ճառանչ մը երկրէս իվեր:

Սիրուն թռչնա՛կ,
Գիտե՞ս մարդ մը այս գունակ·
Երբ քուն չունի, երազ ունի,
Ցաւ չըգիտեր ու կը հառնի:

Սիրուն թռչնա՛կ,
Տեսա՞ր ոք ինձ նըմանակ·

Որ նուրբ, վըտիա մոմ մի է ճիշդ,
Ու կը վառի, կը հալի միշտ։

Ի՛նչու, գիտե՞ս,
կուլամ չողի մը իտես.
Ճիւղի մը հետ կը դողդոջեմ,
Տերևաց հետ կը հառաչեմ։

Մերթ հրդեհ մ՛եմ,
կամ մղեղ մը հոդմոց դէմ.
Մերթ չիթ մը ցօղ պիս կը թաղէ,
Մերթ տիեզերքն ալ ինձ նեղ է։

Ո՞ւր թռչնակ, ո՛ւր,
Ինձ թըռիչ մ՛ա՛հ, թրռիչ տուր.
Որ սըլանամ մինչև լծոց,
Արշալուսոյն ճաճանչազօծ։

Գուցէ և նա
Ինձ հրեղէն թևեր տայ.
Թռիմ, ուր սէրն չըտայ վէրք, խոց,
Ուր գեղեցիկ չունի հուր, բոց։

ԱՌԱՔԵԼ ՊԵՏԻԿԵԱՆ

ՍԻՓՆԱ—ՍԱՐԵՐ

Լօ՛, Լօ՛, Լօ՛, Սիփանայ սէգ սարի վրայ,
կարիճներ ըշտապով գալիս են միանուում.
Այն տեղ անյաղթ որդիք, անյաղթ հսկայ լերան,
Ջէնք ու զրահի են ընթանում։

Ի՞նչու վառուում են, գինուում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր.
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում, անցնում անհամբեր։

Քանց Սիփանայ պինդ քամին,
Սըլանում է դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին.
Նա վառում նորանց վըրէժ անմոռաց,
Սհեղ կռի մէջ վառ թըշնամին։

Հասու սուսեր է հանել, ցեղապետին սպանել,
Նա վառում է քաջերին.
Բոլոր ցեղն այժմ ոտքի կանգնած,
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում։

Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում,
Ու թշնամին պարտուած՝ թողնում փախչում սա-
րէ սար.
Ցետ է ձըգում մեծ աւար։

Արիւն թափեցին, արիւնի փոխան,
Արիւն խմեց ծարաւի սուսեր.
Նորան յագեցած դըրեցին պատեան,
Ելնում են հիմա սէգ Սիփանն իվեր։

Սէգ Սիփանայ կանաչ գլխին,
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդում.
Եւ ամպերի բարձրութեան միջից,
Հսկայ Սիփանն է երևում։
Էլ չգայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին։

ՉԻՆԱԳՈՐԾ ԿԱՐՕՑԻՆ

Չարկ չարկ ա՛յ վարպետ չէկ կայծեր թռցուր,
կռանէ սալըդ ձև տուր մետաղիդ.
Քամի տուր փուքսիդ թոքերն ուռեցուր,
Արծարծէ բոցը հանգոծ հընոցիդ։

Ժանգոտ բիրա երկաթըն օճախը խրէ,
Անճև երկաթիդ բերան չինէ սուր.
Դժոխքի բոցով բարկ մետաղը ճըզմէ,
Ձև տուր պողպատին կոփէ վայլեցուր։

Չար բախան երկաթին կապեց մարդ ուս կեանք,
Երկաթն է վճռող ոև ու կարմիր օր.
Առանց երկաթին արդարն անվտանգ,
Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր։

Այդ նենգ ուղին փչոտ ու մթին,
Ցատակագիծը արիւնն է գծած.
Ինեղճ ու զրկեալին ուրուկ գերին,
Իրաւունք վճռող լոկ սուրը միայց։

Երկաթն երկաթին կը փչրէ մէկ օր,
Եոն ու բռնութիւն կը դառնան գերի,
Շուռ կուգայ աշխարհք գերին դարւոր,
Կը փոխէ տէրի և սիրը սէրի։

Ուժով չարկ վարպետ կայծերդ թռցուր,
Հանգոծ հնոցիդ մէջը կատապի.
Ահեղ վրէժի դըժոխք բըռընկեցուր.
Որ չուտով փչրես չղթադ սարկի։

Ա.Վ.Օ

ՀԱՑԹՈՒԿԸ

Ագիլ մէրիկ, քեզի Թողի,
Դարդ ունէի դուրս ընկայ.
Սուրբ վաթանիս ժողովրդի,
Ծէնը կանչեց դուրս ընկայ.

Դուման սարեր տարտղու սարեր,
Դարտ ու դուման մեր վաթան.
Ախ գլուխս քո ուղուրին,
Ախ մեր անուշ մէր—վաթան։

Էյ Սիս, Մասիս ձեզի մեռնիմ,
Իմ Սիս Մասիս ջան տղերք.
Դուք տասի չափ հազարի չափ,
Ձեզի մեռնիմ ջան տղերք։

Առուծի պէս առուն կուգայ,
Բաշը տւած քարերին.
Առուծի պէս հայ ախպրտանք,
Վո՛ւհ վրայ տանք տուշմանին։

Մէկ սիրտ դառնանք, բիւր սուր դառնանք,
Ջարդենք փշրենք դուշմընին.
Ջան տղերք ջան, զարնենք զարկուինք,
Մեր վաթանի ուղուրին։

ՀԱՑ—ԳՈՒՍԱՆ

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Ա.յսօր ծնունդն ի Մայրամա ալէ՛լուեայ,
Մայրամ կնաց դուռն հէրին ալէ՛.
Բեամակն լզար խաչաքեարին ալէ՛.
Ծնաւ եպէ Յիսուս որդին ալէ՛.

Երանէկ քեյ խուռամսիմայ, ալէ՛լուեայ,
Որ Քրիստոսին տատմէր էլար ալէ՛.
Երանէկ քեյ Եպրէսիմայ ալէ՛.
Որ Քրիստոսին օրօր ասիր ալէ՛.

Երանէկ քեյ պիւրթ խանճարուր ալէ՛լուա,
Քրիստոս մէջ քեյ փաթխւթեցին ալէ՛.
Երանէկ քեյ պանցրիկ մսուր ալէ՛.
Քրիստոս մէջ քեյ օրօրեցին ալէ՛.

Երանէկ քեյ պետ Յորդանան ալէ՛լուեայ,
Քրիստոս մէջ քեյ մկրտեցին ալէ՛.
Երանէկ քեյ սուրբ Օվանէս ալէ՛.
Որ Քրիստոսին քավոր ելար ալէ՛.

Վարդանի ճուխն էր ճթացաւ ալէ՛լուեայ,
Բեանց բարտի ծառ էրկընցաւ ալէ՛.
Ախէր կէրաւ ուրախացաւ ալէ՛.
Մէր կէրաւ անմախացաւ ալէ՛.
Քոր կէրաւ, կօտն երեցաւ ալէ՛.

Վարդանի նախիր դաշտից կուգայ ալէ՛լուեայ,
Ինոր ոչխար դաշտ կ'արածայ ալէ՛.

Ինոր կճէթան դաշտ կը ճռայ ալէ՛.
Տունը տեղ լիքն ի ճաշով ալէ՛.
Ինոր մառան լիքն ի գինով ալէ՛.

Եկէ՛ք երթանք, ծառ խնկենին ալէ՛լուեայ,
Սղոց քեաչենք արուն ֆըչայ ալէ՛.
Կացին զարնենք, ծառ կը ճըչայ ալէ՛.

Կարեցինք թըմըմեցինք ալէ՛լուլեայ,
Վեր առինք բարձինք սէլին ալէ՛.
Լծեցինք քառսուն մուսլի ալէ՛.
Եէլ տունք, եէլ խանեցինք ալէ՛.

Պերինք դրինք դէմ տաճարին ալէ՛լուեայ,
Սուն արինք կ'էրկընանէր ալէ՛.
Գերան արինք կը կարճանէր ալէ՛.
Շինեցինք թըմըմեցինք ալէ՛.

Երանէկ էն տարին երուսաղէմ չինեցին ալէ՛.
Զորս պիւղը սուն կայնըցուցին ալէ՛.
Լիւսեզէն կանթեղներ կախեցին ալէ՛.

Օճու լեզուն էրկու ճղէն ալէ՛լուեայ,
Մէյն իբարուն, մէյն իչարուն ալէ՛.
Ճղեր թալէ աչու ճախու ալէ՛.
Բարուն էլնի վեր էսայ տան ալէ՛.
Ջարուն էլնի վեր սարեթաց ալէ՛.

Մամի՛կ, մամի՛կ, էն ի՛նչ կանես ալէլուեայ,
— Պիւրդ կը դղեմ, պիւրթ կը մանեմ ալէ՛.
Սարկաւագաց չապիկ կանեմ ալէ՛.
Վարդապետաց կնկիւղ կ'անեմ ալէ՛.

Մամի՛կ, մամի՛կ, ես քեյ ծառայ ալէ՛լուեայ,
Ոլեր հագե որ ճռվըռայ ալէ՛.

Զիւմ մառանի դիւռ մէյլար կնայ ալէ՛։
Իմ ընկերներ ճամխի արա ալէ՛։
Մեր փայը պէ, քոն թողմնա ալէ՛։

Թէ կուտաք, տուք չէն կենաք ալէ՛լուեայ,
Թէ չի տաք աուն չէն կենայ ալէ՛։

Ա Ղ Ո Ւ Է Ո

Աղուէսն եկաւ տափիկ մափիկ,
Քանց մեր կատուն կանափըտիկ։
Աղուէսն եկաւ կէօմշայ դարէն,
Եկաւ մտաւ մեր գիւղաքարէն։
Փչրուկ կերաւ թափեց վէրէն,
Աչխարհն ելաւ ուր թամաշէն։

Աղուէսն եկաւ սարէն՝ լալով,
Ոիրտ կը տիէր ջուխտ մ'քեարով։
Աղուէսն ասաց իմ տեղ նեղ ի,
Խաւու ճիտեր փորիս դեղ ի։

Մե խաւ մը կէր վիզն էրկէն էր,
Ճետերն եաև տասնըմէկ էր։
Աղուէսն եաւէն կը մէրմըկէր։
Աղուէսն նստե վեր տախտըկին,
Պոչն ի տնկե տեխ տանտըկին։

Աղուէսն իրե տափիկ մափիկ,
Քանց մեր կատուն կանափըտիկ։
Խաւու ճետերն արաց խորտիկ։

Ե Ր Գ

Ելէք, տեսէք, վոյնը ի կերե մեր ուլ,
— էծն ի կերե մեր ուլ։
Էծն էր ուլուն,
Ուլն էր Թըփան,
Թուփն էր իգիւն,
Իգն վարապայ,
Տակն ակիւկեայ,
Ինչ որ ասես վըրէս կուկեայ
Հալէլէր, ճանալէր,
Ինչ բարի տարեկ մ'էր եկաւ վեր մե
կեօ վար մե, կէօ վար մե։

Ելէ՛ք, տեսէք, վոյնը ի կերե մեր էծ,
— Գէլն ի կերե մեր էծ։
Գէլն էր էծուն,
Էծն էր ուլուն,
Ուլն էր Թփան,
Թուփն է իգուն, ևլն։

(Շուն, արջ, խոզ, օձ, խաւք, Թվանք, ժանգ, մուկ, կատու ևլն. վերիններու պէս հետզհետէ կարգաւ մէկիկ մէկիկ չարելու և երգելու է)։

Փ Ե Մ Ի Մ Է Ր

Թագաւորի մէր տես էլի քեյ ի՛նչ վի՛նչ եմ պերե,
Քեաղցր ու բաղաքջով արե, արաղի վարջով արե.
Թագաւորի մէր տիւս արե, ճրագ մոմերով արե,
Քեաւորկներով արե, բարեկամներով արե։

Թագաւորի մէր տիւս արե, ձեռըդ խեննայ դիր արե,
Աչքերդ սեղ տիր արե, թայլիկ սօլերով արե.
Թագաւորի մէր տիւս արե, արե, արե, տիւս արե,
Քեյ ինչըվինչ եմ պերե, տախտ աւելոդ եմ պերե։

Թագաւորի մէր տիւս արե, արե, արե տիւս արե,
Քեյ ինչըվինչ եմ պերե, գլէօխս լվացող իմ պերե ևլն.

Քեյ նուշ ծաղիկ ենք պերե,
Քեյ կէօլի կաղ ենք պերե,
Լվաց արող ենք պերե,
Գրդնակ արող ենք պերե։

Ծառ թախթըփող ենք պերե,
կաղալ աւլող ենք պերե,
Քեախանք արող ենք պերե,
Եմիչ ժողվող ենք պերե։

Քեյ գլէօխս տմփող ենք պերե,
կարկտան արող ենք պերե,
Ծամ խաղկող ենք պերե,
Սօլեր չիտկող ենք պերե։

Ոչխար կըթող ենք պերե,
Պիւրդ կտրող ենք պերե,
Ջախրակ մանող ենք պերե,
Քեյ վարդ ըռահան ենք պերե։

Տախտ աւելոդ ենք պերե,
Թօնէր վառող ենք պերե,
Տեղջիւլ իսկող ենք պերե,
Խեռ ու խեռնակ ենք պերե։

Էք բարև, հայէ՛ք բարև,
Թագաւորին չատ բարև։

Ռ Ո Ւ Ս Ի Օ Ր Է Ն Ք

Իսկզբանէ բըռւաւ լուսին,
Թաղդ քանդըէր վեր ըռուսին.
Սալատդ կուզի թուանք ուսին,
Տէ՛ր իմ Աստուած, մէկ ճար արա։

Մակար սրբազան օծեցին,
Հայոց ճրագներ ընցուցին.
Տէ՛ր իմ Աստուած, մէկ լուս մ'արա,
Հայն նեղ տեղէն ազատ արա։

Թագաւորն ինամի թախտին,
Աչըդ ես, Մակարի բախտին.
Ձեռնագիրն իսւի վախտին,
Ո՛վ աէր Աստուած, մէկ ճար արա։

Թագաւորն իդրե իր թագ,
Հայ աղդն իսկե եաման կրակ.
Ընցաւ հայոց պայծառ ճրագ,
Տէ՛ր իմ Աստւած մէկ լուս մ'արա։

Էս Ըռուսի թովիչները,
Էջմիածնայ վանքի չըները.
Աւերաւ մեր հայոց տներ,
Տէ՛ր իմ Աստւած մէկ ճար մ'արա։

Էջմիածնայ կանթեղ վառեցին,
Ոսումնարաններ փակեցին.
Սալտաստաց գրեր գրեցին,
Հայրեր նստան կսկծացին։

Հապէշն ի կայնե հայոց տէր,
Քեաշկէ Խրիմեան օճւէր կեէր.
Աստւած կորի Ըռուսի խէր,
Տէ՛ր իմ Աստւած, մէկ ճար արա։

Խեղճ սալտաղներ թւանքորւան,
Սալտաղաց մայրեր չիւարան.
Հայոց աղայք ժողվին, տարան,
Տէ՛ր իմ Աստւած, մէկ ճար արա։

Ա՛խ, ես Սարգիսն եմ վաննեցի,
Զեռքէս էկածն արեցի.
Գիշեր ցերեկ նստայ լացի,
Ցիսուս տիրոջն աղաչեցի։

Տէ՛ր իմ Աստւած, մէկ ճար արա,
Հայն նեղ տեղէն աղատ արա։

Ս. ՎԱՆԵՑԻ

ՃՆՃՂՈՒԿ

Կօտ ու կէս կորեկ ունիմ ցանելու համար,
Ճնճղուկներ ժողվան էկան ուտելու համար.
Կզվա գետին քէար ժողվեցի դարնելու համար,
Թռան կեացին բերդի տանիս կեայտելու համար։

Ըռէսներ ժողվան էկան դատելու համար,
Կասպներ ժողվան էկան մորթելու համար,
Էրէցներ ժողվան էկան օրհնելու համար,
Տղէյներ ժողվան էկան թամաշի համար։

Ժամհարներ ժողվան էկան լափելու համար,
Պառվըներ ժողվան էկան փետուրի համար,
Նոր խարոններ ժողվան էկան տեղմաշկի համար,
Աղջկըներ ժողվան էկան տեղտըրի համար։

Ա՛յ ճնճղուկ,
Սիվատակ փորիկ,
կարմիր տօտիկ,
Ուտեն կըտիկ,
Խմեն ջըրիկ,
Առի եղրիկ,
Պատիկ, մատիկ.

Փախնեն երթան ման գալու համար։

Կօտ ու կէս գարի ունեմ ցանելու համար,
Տուն երկու մարդ տուեցէք ցանելու համար,
Տուն երկու եզ լծեցէք վարելու համար,
Տուն երկու մարդ տուեցէք տափելու համար։

Տուն երկու մարդ աւեցէք ջրելու խամար,
Տուն երկու մարդ ժողվեցէք քեաղելու խամար,
Տուն երկու մարդ ժողվեցէք կալելու խամար,
Ձնճղուկներ չէլնի ցրվին ուտելու խամար։

Ա՛յ ճնճղիկ,
Սիվտակ փորիկ,
կարմիր ոտիկ,
Ուտեն կաիկ. ալն.

Մ Ո Ն Թ

Մե պստըտիկ հայիկ մը կէր,
Անապատայ վանք կը ծնէր.
Օր կորեկէ կուտ մը կուտէր,
կէտն աղբատաց բաժին խանէր։

Տկլոզ քեամկով գեաղ կը կրէր,
Պէօպիկ ոտնով փուշ կը քեաղէր.
Ինք կը գրէր, ինք կը կարդէր,
Ջիւմ իրիկուն աղօթք կանէր։

Օրն էր չաբաթ, լոս կիրակի,
Բաժկին պակսաւ պատարագի.
Ջիւմ վան քաշաք մէկ կընացի,
Գլխիկս դրի կնքիկ մ'առի։

Ոտնակուտոր ճամբեցին էլայ,
կիւղ ախպրի մ'էռաստ էկայ.

Երեք հատ գողղ իմ դէմս էլան,
— Մէկն ատաց զարնենք թիւլգուցենք։

Մէնն ատաց զարնենք կուրցուցենք,
— Ո՛չ կուրցուցենք, ս՛չ թիւլգուցենք.
Սալչուն սէրն իսկենք վէրէն,
Քառսուն տարի թող դպայ վէրէն։

Կտոր մը տեղ որ կընացի,
Սաղմոսարանս կըլորեցի.
Կտոր մը տեղ էլ կընացի,
Աւետարանըս խորեցի։

Կտոր մը տեղ ես կընացի,
Ժամագիրքս թաղեցի.
Կտոր մը տեղ էլ կընացի՝
Ջիւմ «խար մեղէն»էլ մոռացի։

Քեարվան մ'երե Ամդայ դաչաէն,
Մէջ էն քեարվանին ջորի մը կէր.
Վեր էն ջորուն սնտուկ մը կէր,
Մէջ էն սնտուկին ախչիկ մը կէր։

Ախչի՛կ, ախչի՛կ, անունդ ի՞նչ ի։
կրօշի տարած տավիտ ի՞նչ ի.
Իմ անունն ի Սալչուն փաչայ,
Իմ խէր չի տայ պատռելդ ի՞նչ ի։

— Սալչուն փաչայ ես քե գերի,
կրակդ եննկե սիրտս կ'էրի.
Պալանաբոց բերնէս կ'էլնի,

— Ծօ՛ Օվանէս «կեաւուր օղլի»։
«Պէտն միւսիւլման, սէտն էրմանի»,

Քեռ սէրն մօտ ծիկ ինչ բան ունի·
Իմ խէրն իմանայ քե կ'սպանի,
Արունդ խեռ գինուն կը խմի։

Մէրիկ, մէրիկ, որ ես մեռայ,
Վաղ Օվանէս օրտիւից գայ,
Ինոր Ջիւյապ էն վո՞վ կուտայ։

— Քեռ սևաւոր ծուռ մասկարա,
Որ Օվանէս էօրտիւից գայ
Տաճկըցուցենք կ'անենք մօլլայ,
Ուրբաթ օրեր կ'ճամբենք կարդայ·

— Էն լայկդ չի էլնի մօլլայ,
Էն լայեղ ի էլնի քախանայ,
Բուրվառն իմեռ, խունկն իվերայ։

Ա՛խ, Օվանէս մօր մէկ որդի,
Կրօղը մախ քե չը խորտի·
Ժամու չապիկ քե կարեցի,
Փիլոնը ռէջ փաթիւթեցի։

Զ Ա Խ Ր Ա Կ

Ոստանայ պալաք սարեր,
Զե՛մ կանայ Չախրակ մանե·
Զախրկի ոտն կէօ ուռ էր,
— Զախրակ մանող կէօ ծուռ էր։

Զախրկի ոտ բարտ էր,
Զախրակ մանող նամարտ էր·
Զախրկի ոտ փուչ էր,
Զախրակ մանող պիւպիւչ էր։
Զախրկի ոտ տանձ ի,
Զախրակ մանող կուտան ծի·
Զախրկի ոտ նուշ էր,
Զախրակ մանող անուշ էր·
Զախրկի ոտ նուռ ի,
կարմիր աղջիկ ծուռ մուռ ի։

Ա՛րե քե տանիմ Ոստան,
Քե կարեմ ճանֆաս ֆստան·
Ա՛րե քե տանիմ Սըվազ,
Քե առնեմ օխկէմ կիլազ։

Ա՛րե քե տանեմ Իգին,
Ոսկի չարեմ քո ճակտին·
Ա՛րե քե առնեմ քեամար,
Քե կ'առնեմ սրախս խամար։

Վ Ի Ճ Ա Կ

Ջան վիճակ Ջան, Ջան,
Վիճակ նստե վեր իշուն,
Վիճկի փեշերն ի նկուն,
Ազաբ լաճեր վիճկի չուն,
Ջան վիճակ, Ջան, Ջան։

Վիճակ նստե պով կանի,
Վարդն երեսին խով կանի.
Ջան վիճակ, Ջան Ջան։

Կէս լեռնգառի վարդ եմ ես,
Ետրոջ խամար պացվայ ես.
Ջան վիճակ, Ջան Ջան։

Վիճակ նստե կար կանի,
Ասեղ կոտրաւ վըշ կանի.
կեսուր մեռաւ թըշ կանի,
Ջան վիճակ, Ջան Ջան։

Վիճակ սրե քե տանեմ,
Տանսէ տանիս քե խանեմ.
Լէն անթարով քե պախեմ,
Ջան վիճակ, Ջան Ջան։

Տեսէք վիճակն ի՞նչ կանի,
Սրտի ուզածն ի՞նչ կուզի.
Ոտրերով ցորեն կուզի,
Աբռերով գարի կուզի։
Ջան վիճակ, Ջան Ջան։

Վիճակն ինկեր ի գերի,
Ազաբ լամերաց ձեռն ի.
Տուն երկու ձու կը ժողվեմ,
Քե գերուԹինից կը խանեմ։
Ջան, Ջան, վիճակ Ջան։

Վիճակ, վիճակ տիւս ելաւ,
Վիճկի վերէն լոս իջաւ.
Իմ նազլու եարոջ խաԹրին,
Էն ի՛նչ աղէկ բախտ ելաւ։
Ջան, Ջան, վիճակ Ջան։

ԵՂՍՕ

Սօլեր խագի երԹանք ժամ, եղսօ Ջան, եղսօ Ջան, (կրկ.)
Օհ օհ օհ օ, էհ էհ էհ է, ահ ահ ահ ա եղսօ Ջան, եղսօ Ջան.
Փօռ Թօմպան, Թօռ խօնջան, մալեա միւաեր քե կուբպան,
Ֆո Թէօմպընին ի՛նչ կէր նչան եղսօ Ջան ևլն.

Շիլայ ԹէօմպանԽաե կըրընկան եղսօ Ջան,
Թուխ կարկըտան վերև ծնկան եղսօ Ջան, եղսօ Ջան.
Փաչա բերան, կարմիր կայԹան եղսօ Ջան,
Դիւ գեկ արիր խեդճ փարիշան, եղսօ Ջան ևլն.

Դիւ խագեր ես կարմիր Ֆստան եղսօ Ջան,
Ծաղիկ քաղես, դաստա չինես եղսօ Ջան.
Ես քե խամար կես կը մեռնիմ եղսօ Ջան,
կէօ քե խամար խոգիս կելնի եղսօ Ջան ևլն.

ՍԻՐԱԿԱՆ

Վարդն ե բացվէ վանայ քեաղքի էկէստար,
Աստուած սիրես, մէկ օրօկի ծիկը տար.
Քեա՛ նազերով, քեա՛ խօրօտիկ, տիւ վի՛րն ես,
Աչխարհ գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես։

Վարդն ի բացվե առաւտըման խաւխաւտոց,
Իմ եար բաղչէն կայնե էրկու ծեռնը ծոց.
Վարդն ի բացվե առաւտըման չաղերով,
Իմ եար բաղչէն վարդ կը քաղէ մաղերով:

Վարդն ի բացվե, վարդէվրի կիրակին,
Ջես սէրն ինկե ժէջ իմ սրտի պըրակին.
Ջեա՛ նազերով, քեա՛ խօրօտիկ ախ վի՛րն ես,
Աչխարհ դիտի, ալամ դիտի ախ իմն ես:

Պ Ա Ր Ե Ր Գ

Տուն մ'եմ չինե գետի բերան,
Վերէն թալե ջուխտ մ'գէրան.
Մէկն ի խօխէ, մէկն ի ծիրան,
Ծիրան փթխաւ եարէջ պէրան:

Էլայ տանիս թաւի քէլիցի,
Կարմիր խնձոր կըլորիցի.
Լանդեով զարկի, էրտիս բացի,
Կղվայ վերէն իրիչ կիցի:

Թօնէրն ընցաւ ձայն չըթալիցի,
Կաթը եռաց չըմէրեցի.
Տղէն ի լաց չօրօրիցի,
Իմ եար տուն չէր նստայ լացի:

Ճ Ղ Օ Ր Ի Ե Ր Գ

Ջիւֆ ջիւֆ, դարա դարա,
Ես ելայ բերդի պարա,
Կանչեցի տէր Զաքարայ.
Ձուռնկը մոմ հազըր արա,
ԵՒռաւտուն պաշտօն մ'արա,
Իրիկուն խըթում արա:

Փիւէնապուճախ, փիւէնապուճախ,
Մեր քեավորոնց մեղրի պուճախ,
Շէն կէնայ իմ խօր օճախ:

Ջիւֆ ջիւֆ, դարա դարա,
Ես էլա բերդի պարա.
Իմ ախպէր վերէն բերդին,
Ոսկի թուր վերէն թիվին.
Կէրթայ խաղայ դէմ լիւսնըկին,
Լիւսնակ սըփեց ժէջ իրեսին:

Փիւէնապաճախ, փիւէնապաճախ, ևլն.

Ջիւֆ ջիւֆ, կէրթամ կուկամ,
Իմ ախպօր կընիկ ճարեմ.
Ձուստ ճարեմ, յուստ չը ճարեմ,
Վարագայ սարէն ճարեմ:

Փիւէնապուճախ, փիւէնապուճախ, ևլն.

Դուռ սըփեմ մարմար քեարով,
Մտնեմ ներս զարդարանքներով.

Ախր խապեմ թաս մ՚արաղով,
Մէր խապեմ մաս մ՚խինով,
Ախպէր խապեմ պօլաս ձիով,
Ախջիկ պերեմ խաղար բարով։

Փիւէնապուճախ, փիւէնապուճախ, ալն։

Ես պապաճիկ, ախ պապաճիկ,
Քեավորկին ինկաւ ախճիկ։
Քեավորն էկաւ ախտս կը խանէր,
Ոանէն լվեր սև կը խանէն։

Թիւէնապուճախ, թիւէնապուճախ, ալն։

Էշ քեաչեցին թօրվան պէրան,
Ոաքերն արեն սուն ու գերան։
Գըլէօխ դրին փաչայ կերան
Ուսկոռն արին կողվի մէրան։
Կաչին արին ախճ նաղարայ,
Կռպօն զանի, ախպօն խաղայ։

Փիւէնապուճախ, փիւէնապուճախ, ալն։

Քիւֆ քիւֆ, մեր ըղէն,
Կախվեր ի ծառի ճըղէն։
Ծառ չինարի խէրիկն էր,
Ջենար բաժիկ մէրիկն էր,
Ճօղ մր ռըհան քեռին էր։

Փիւէնապուճախ, փիւէնապուճախ, ալն։

Լ Ա Ճ Ո Ւ Մ Է Ր

Ախց գեաղընցան, մաքուց թացան,
Պերէ՛ք ուտի, լաճ ի պերե՛ լա՛ճ։
Ջըռ գեօրմասա, տարեկն է խաց,
Պերէ՛ք ուտի, քեաճ ի պերե, քեա՛ճ։

Լաճու մօր ալ կարեցէք, թիվքերը կումաչ,
Լաճ ի պերե լա՛ճ, ոսկի բռչամ լաճ։
Ախջըկայ մօր չալ կարեցէք, թիվքերը պակաս,
Քեաճ ի պերե քեա՛ճ։
Լաճն էր աղա, լաճն ամիրա,
Խօրօտ մօրօտ ոսկի բռչամ լաճ։

Մչակներ դուռ կը վրձիջան,
Ձիեր փակախ կը խրխնջան։
Մէր լաճ դրե վեր ծնկան,
Ձեռներ թալե ոսկե բռչամ։

Լաճու մօր կուժն ի լալա, կանթ փէօրէօզա,
Մչկով իլին վարդ վեր պէրնին։
Աղջկայ մօր կուժն ի կավէ, կանթն ի կույէ,
կիտր մ՚անլուայ պիւրթն ի պէնին։

Էսա լաճուն աուն չինեցէք, խօրն ի գարպաս,
Էն աղջկան տուն չինեցէք առիք պակաս։
Էսա լաճուն ձին թամբեցէք, խօրն ի ճորի,
Էն աղջկան գըռուտ իշվանք, նալեր պակաս։

Էսա լաճուն ոսկէ մզրաղ ծէրն մարգրիտ,
Էն ախջկան սև սև անթրոց ծէրն ի պակաս։

Էսա լաճուն ճղմա պերէք, խօրն եամանի,
Էն ախջկան կտոր մ'լակաշ, իրես պակաս։

Էսա լաճուն ալ կարեցէք, խօրը կէյմայ,
Էն ախջկան չալ կարեցէք, թեվքեր պակաս։
Էսա լաճուն գեատայ պիրէք, խաւ խօրաւած,
Էն ախջկան ակռաւակօ սև գեաբէ խաց։

Էրկնքով աղցած։
Խլօենց խօվ թօնէր թըխած,
Ախջկայ մօր կիրիցուցած։
Խաց գեաբընցան, մաքուց թացան,
Պերե՛ք ուտի, լաճ ի պերե Լա՛ճ։

ԱԼԵԿՕՇԵԱԼՆ ԾՈՎՈՒ

Նաւով Աղթամարայ էլանք,
Դէպ Աւանուց ճամպաին իննկանք։
Ոստանայ դէմ երբ մենք հասանք,
Սև օրւայ սև արև սեսանք։

Թուխ ամպեր երկինք պատեցին,
Աստղ լուսնակ մէկտեղ կորուսին։
Պինդ պինդ քամիներ փչեցին,
Ափը ցամաք աչքէս խըլեցին։

Գոռաց երկինք, գոռաց գետին,
Խռովեցաւ ջուր կապոյտ ծովին։

Զորս կողմից կրակաց երկին,
Սև սարսափ իջաւ իմ սրտին։

Երկինք կայ, գետին չերևայ,
Գետին կայ, երկինք չերևայ։
Սարի պէս ջընդղներ կուգայ,
Ինր անդունդ առջևս կը բանայ։

Ծո՛վ, դու եթէ Աստուած կը սիրես,
Խեղճ անճարիս գութ մի անես։
Ինձ քաղցր արևէս չըհանես,
Քարէսիրտ մահին չըմատանես,

Ամա՛ն ծովեր, ահե՛ղ ծովեր,
Ինձ մի տանիք պաղի հովեր։
Ձեզ կ'աղաչեն իմ արցունքներ,
Ու սրտիս հազար բիւր ցաւեր։

Ծով գազանն իսկի ողորմ չունի,
Պլած սրտիս ճէնիկ չըլսի։
Արիւն երակներս կը պաղի,
Սև գիշեր աչքերս կ'իջնի։

Գնացէ՛ք, ասէ՛ք իմ ծնողին
Թող նստի լայ իր սև որդին։
Թէ Հանէս կուլ եղաւ ծովին,
Թռաւ գնաց արև կորճին։

ՄՕՐ ՄԸ ՈՂԲ

Սեւ սարիկէ մը զուլալ զուլալ կը խաղան,
Խաղան թաւիեն արծաթակող աւազան.
Աւազանէն վեր ղպդ վարդի փունջերուն,
Փունջեր ցօղեն վեր մարմարէ քարերուն:
Օրօր որդեակ, օրօր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր որ քեզ չըտեսնէր էդպէս քուն:

Արեւ մօտ է, ոսկի թելեր ժողվելու,
Շուտով գառնայ սև սև սուգեր հանելու.
Ա՛հ, իմ արև էլ չեմ գիտեր երբ կուգայ,
Թէ գայ կեանքիս, թէ սև հողիս լոյս կուտայ:

Օրօր որդեակ, օրօր կարիճ, ևլն.

Աստուած, ինչի՞ մօրս մը ծովով գութ տուիր,
կաոր մ'թևիկ ինոր վէրէն չի տուիր.
Որ ղարիպին կարօտամաչ չըմնէր,
Որ Թէ մեռնէր, աչքիկ խեղճ խեղճ չը հայէր:

Օրօր որդեակ, օրօր կարիճ, ևլն.

Աստուած, ինչի՞ սիրտս գեհէն վառեցիր,
Ու դու սարի աղբիւրի պէս ճնացիր.
Ա՛հ, ես մեղայ, ներէ՛ մարդ եմ, տկար եմ,
կինեմ, մայր եմ, որդիս ողջ ողջ կը թաղեմ:

Օրօր որդեակ, օրօր կարիճ, ևլն.

Ա՛յ եղանի՛կ, մի լար ճագերդ Թէ չըկան,
Շուտով կ'ածես, չուտով կանես մտահան.

Ա՛հ, ես ցամքած, մէկ հատիկս էլ հեռանայ,
Ու ճար չկայ Թէ իմ սրտիկս հովանայ:

Օրօր որդեակ, օրօր կարիճ, ևլն.

Որդեա՛կ, որդեակ, Թէ գաս բարով ձիերով,
Մէրիկ կանչես, ասեն — մեռաւ կարօտով.
Աստուած սիրես իմ գերեզման չըմոռնաս,
Քանի մ'արցունք չոր հողերուս ընծայ առս:

Օրօր որդեակ, օրօր կարիճ, ևլն.

Տ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ՋՈՒԱ ԿԵԱՏՈՒԿ

Վախ լէ, լէ, լէ, առաւտըման բարի լուսուն,
Ակօ, Աւագու խէրը մէր ինկեր են անուշ քունն.
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք,
Իսկի չեն ասե Ակօն, Աւագ ճնացեր են քամպախ ուսին,
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Խապար տարէք քեակածի վան,
Զուա կեատուկի տակ ճնացեր են սայսան'ւ երկու Ջան.
Վաթսուն 'ւ երկու Մախին ա քսան Խայ ա,
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Աստուած քակէր Մամատանից Ռաւօի տուն,
Որ Ակօն, Աւագ տարաւ էլ չիպե տուն.

Խապար տարէք քակած Բաղէշ,
Որ Ակօ, Աւագու խէր ու մէր չէլնեն սավսալիկէժ.
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Զուա կեատուկ չայիր չիման,
Բեամին ելաւ արաց պուրան.
Վեր մե պիրեց սև ու տուման,
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Մեր տուն, ձեր տուն խանայ խանայ,
Ծօ տնաւէր տէրտէր էլի.
Աստուած կանչէ, անձևը գայ գեամին.
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Զուա կեատուկ աւազ քար ա,
Վո՞վ ի տիսե ըսկնէ մ'տարի.
Մէջ մէկ տան երկու տէկէրկին որբեվէրնայ,
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

Առաւտըման բարե լուսուն,
Ես կարօտ մնացի Ակօ, Աւագու տիսուն.
Մըլա մարէ, մըլա մարէ մենք մէնակ չենք:

ԿԻԿՕԻ ՔԱՐՈԶ

Ականջ դըրէք իմ խօսքերուն,
Քարոզ կուտամ ես առչերուն.
Ծօ տիւք անտաչ, կոչտ չինական.
Հէրիք չէլաւ մնաք անբան:

Մէկ իրիկէք ձեր քօլօշներ.
Նման են սարի սուրուխ ծէրեր.
Ասա էտա քեազախկընէր,
Չե արեր են մէկ մէկ տէվեր:

Չիւմ իրիկուն կը ճենճռատաք,
կուզեաք մէջ խողին բալկըտաք.
Ծօ տիւք մանկեար էչ է՞ք զարձե,
Չէ՛ Աստուած ձե մարդ խաեղծե:

Շներ կուտեն ձեր անո չ՝ կաթ,
Չեր կիրաճն ի անեղ կէօրօմաստ.
է՛, ի՞նչէս էլնի պազի էլ թան,
Պազի պինդ թան, պազի չորթան:

Պախա օր կուտէք անխամ վըռօչ,
Ինոր խամար կաֆէյդ ի պօչ.
Արտից կ'խանէք սուսուռ ցորէն,
Չեր կերացն ի տարեկնէն.
Ցորէն կուտի վանա խօճէն,
Ու տիւք խակե չէք ացե ծէն,

Թէ որ խօճայ քիւրդ մ'պայ ձեր տուն,
Դառնաք առջև թէօլնկի չուն.
Հիչ չէ՛ք ասե որ մենք չէլնենք,
Սև օր կուգեայ ինոնց գէխուն:

Թէ բռթընի խատնի կռատան,
կը լըփռատէք քանց գեղի չան.
Չեր ոչխարներ կուտեն աղէք,
Դիւք քանց ապուշ իշու կը նայէք:

Մարդ որ բռթնի ձեր կուշա նսաի,
կույեա խոտու կը խեռըլի.

Էչ կը թրքի, կով կը կուլեի,
Ոտան ինչի՞ ձեր մօտէն բիւրի։

Ձեր չապկընէր թէ չուն ծամի,
Քառսուն տարի սիրտ կը խառնի։
Վանայ մունտառ կեամու ելքեան,
Քեանց էն հաղար կաթ աղէկ լ՝։

Կասէք ըստեղ որ չարչարւենք,
Առքեաւուն ալ ժան կ՝էլնենք։
Առքաւուն քե ի՞նչ, տաւար,
Ատուած չարե իշու խամար։

Քրիստոս առջև ձեր կը քըֆրեն,
Կասէք «աստամ, հա թող խաճեն»։
Շուն իր սիրոջ թարաֆ կ՝էլնի,
Քրիստոս ինչի՞ ձեր ումուր չի։

Ապա Քրիստոս էլ ի՞նչխա անի,
Որ ձե չի տայ սադայէլի։
Ծօ դրախտ մանկեար անտէր չայիր լ՝,
Որ էչն էրթայ մէջ թաւալի։

Հալա չատ բան պիտի ասի,
Աման իմ ջան դենի կուշի։
Քիչ մ՝էլ քեաւոր աղէն դէզի,
— Էտ ինչ պեզ լ՝, էտ ի՞նչ չէնք լ՝։

Որը թսթան, որ կարմիր կեազ,
Որն էլ ցից ցից քանց խողու մազ։
Էտա էլաւ չէնք, էտա էլաւ հալ,
Գետին մանի էտա ձեր պաժ։

Մէկ իրիշկէք եսոնց մազեր,
Մանեն մէյմէկ խառնած կածեր։
Ոճիլ մէջ վայլէվան դարձե,
Սանար, սապոն ե՞րբ ե տեսե։

Տ. Ամիրջանեան

Ս Օ Ս Ը Ն

Սարի ուսին պըլեր ա,
Պըլեր ա, պլպըլեր ա։
Սըսօն կեօ տակ պառկեր ա,
Քեանց քեաֆուր վարդ բացեր ա։

Եար մ՝ունիմ վերին թաղէն,
Եար մ՝ունիմ ներքին թաղէն։
Վըրին, ներքինին ղուրպան,
Ներքին վարդ ա ու ըռհան։

Երթանք, քաղենք մանուշակ,
Պերենք, չինենք մի տոշակ։
Պառկենք վրէն լաճանակ,
Մեզ պըտի թուրը, դանակ։

ԼՈՒԻ ԵՐԳ

Լուռը, ճանճ, ոչիլը, անիծ,
Լուն չըխառնեաւ ճանճի բանից·
Ճանճ թըռաւ ինկաւ մէջ թանին,
Առայ կըտէլ կայնայ ջանին,
Ջարկեցի չում խոգին խանի։

Էլայ կեացի չում մեր վլխուս,
Լըվերն եկան ժողվան գլխուս·
Ջըթողեցին ընկերի լուս,
Կէս գիշերին մըտեցին տիւս։

Էլայ կեացի չում Մըլխար,
Լըվերն էկան կանթար, կանթար·
Ջարկին գետին փաչի թամթար,
Հէրիկդ օրհնած ռէս Մըխիթար։

Տեղիկ մը տուր ինձի սըթար,
Տեղ մ'խուր նըման էր հալնիս·
Քառասուն ծակ կէր թող ըզէրախս,
Շրներն ինե կ'էնէն խարսնիս։

Էլայ կեացի չում մեր անջան,
Լըվերն էկան կը խըրնջան·
Ջիս լարեցին տուին քընջան,
Միսս կէրան խօգիս առան։

Էլայ կեացի չում մեր մառան,
Լըվերն էկան տեղըս թառան·
Ցերէկ կէլնեն սըներն իվեր,
Գիշեր կիջնեն ճղվերս իվեր։

ՀԱՌԱՋԱՆՔ ԱԳՐԻՊՊԱՍԵԱՆ

Դու ով ցանկալի վան իմ հայրենիք,
Սիրուդ կարօտով մաշեիմ ես հերիք·
Թողի գործերս օտար երկիրներ,
Գայի գրկել քեզ անցկալի հոգիս։

Թէպէտ չունիմ ես կարօտաչ մայր,
կամ որդիասէր մի հոգատար հայր·
Բայց սիրոյդ կարօտ միշտ կը տանջէ զիս,
Գայի քեզ գրկել անցկալի հոգիս։

Մանկական օրերս, ո՛հ, ուրախ ժամերս,
Ձեր քաղցր յիշատակ մաքէս չէ անցեր·
Իմ զբօսանաց դուք ո՛վ սուրբ վայրեր,
Գայի չնորհել ձեզ սիրուս համբոյրներ։

Սար ու ձոր, դաչտեր, պարտեզ, այգիներ,
Արդեօք կը յիշէք ձեր նախկին ընկեր·
Որ միշտ կը ցանկար ձեզի այցելել,
Իր ընկերներով զբօսնուլ ու հրճուիլ։

Արդեօք ինձի դուք անիծեցիք·
Զիս հայրենիքէն դուք հեռացուցիք·
Այնքան չարչարանք այնքան նեղութիւն,
Բոլոր տարեցի հայրենեաց սիրուն։

Հազար երանի այն քաղցր օրերուն,
Երբ կը սովրեցնէի հայ մանուկներուն·
Բոլոր նրբութեամբ գրել հայ տառեր,
Նոր նոր ձևերով գծել պատկերներ։

Ես այն ժամանակ միայն ղպայի,
Տրամաբթիւն ու հոգ միայն սիրեցի.
Բայց լինչ էր պատճառ այդ իմ արամաբթեան,
Հոգի ունէի վրէժխնդրաբթեան։

Շատ տարի առաջ հայրս մեռած էր,
Աբրիւնաբբու քիւրդ ղինք սպանած էր.
Մխթէ հնար էր ծնողատէր որդոյն,
Ջըլուծել վրէժ իր հօրը մահուն։

Ահա այն օրէն այս էր իմ խորհուրդ,
Մեռնիլ կամ մեռցնել աբրիւնաբրուս քիւրդ.
Լուծել սիրելի հօրս մահուան վրէժ,
Որով ազատուիմ իմ պարտքէս հաւերժ։

Բայց բախտ չթողուց իմ նպատակիս,
Փչեց ու քշեց մինչև ի Տիփղիս.
Ուր ժամանակ մի ինձ կենալ լաւ էր,
Զի թուրք անդադար ղիս կը հալածեր։

Անցան ամիսներ, անցան տարիներ,
Բայց ղիս հալածող երբեք չէր դադրեր.
Հայրենիքիս մէջ չմնաց մի մարդ,
Որ հանգիստ ապրէր այն օրէն մինչ ցարդ։

Բայց բաւ է ըսի հայրենեաց սիրուն,
Երթամ ու մեռնիմ իր սուրբ արեւուն.
Բուռ մի հարչարանք հայրենասիրին,
Կընէ հայրենեաց ղինք հաւատարիմ։

Ըսի ու բոլոր գործերս ձգեցի,
Դէպ քեզ հայրենիք ճամբայ փնտռեցի.
Զի ինձ հնար չէր մտնել տաճկաստան,
Եւ քեզ ցանկալի հայրենիքդ իմ վան։

Կը մնար միայն պարոկաստանի հողդ,
Որմէ անցայ ես առանց ահ ու պողդ.
Գոհ եմ քեզմէ ով դու բարի հողդ,
Որ ղիս անցուցիր առանց ահ ու պողդ։

Հասուցիր մինչ վանքն Բարդուղիմէի,
Ուր երկու ընկերք ալ հետս ունէի.
Ջերմ համբոյրներով ուխտ կատարեցինք,
Հրաժեշտ տալով վանքն ալ թողուցինք։

Ալ ևս մթնած էր ամէնուս աչքեր,
Ելևէջ կընէինք լեռներ ու ձորեր.
Մինչև որ հասանք այս կիրճն Ջուխա,
Ուր թաւալգլոր մարմինս կը մնայ։

Անգութ տաճիկն այս ձոր գտաւ ղիս,
Հրացան ուղղակի չեչտեց մէջ կրծքիս.
Աբրիւնաթաւալ ղիս գետին փռեց,
Ջէնքս ու ոսկիներս բոլոր կողոպտեց։

Աղբակու գաւառ, Աղբակու գաւառ,
Ինձ միայն անգութ դու դառնեցար.
Հայրենեաց սիրով վառած պատանին,
Ջըթողիր հասնէր իր նպատակին։

Ագրիպպաս հայր իմ, բայց ինձ քո գիրկդ,
Ընդունէ փոքրիկ սիրելի որդիդ.
Թէպէտ հեռու է նահատակուած տեղդ,
Բայց երկնքի մէջ կը լինենք մէկտեղ։

Թող մեզ չմոռնայ մայր մեր Հայաստան,
Թէ հայր և որդի նահատակ եղանք.
Երկուքս ալ վառած հայրենեաց սիրով,
Աւա՛ղ, ահեր ցիտուս չուտ կանչեց իր քով։

Ուր ես դու վարպան, ևկ այժմ ինձ գրկէ,
Հայրենասէրի երգեր ինձ երգէ.
Քանի որ հոգիս դեռ իմ մէջս է,
Քանի որ խելքս դլխէս պացած չէ։

Երգէ ինձ վարպան, ազնիւ ընկեր իմ,
Երգէ ինձ օրօր մինչև որ հանդչիմ.
Իզուր մի ջանար արիւնս դադրեցնել,
Կարևէր վէրքս մաքրել դարմանել։

Թո՛ղ, թող որ հոսի կողքերէս արիւն,
Եւ ներկուին այս դաշտ անմշակ հայուն.
Մինչև որ այս հող կարմիր չդառնայ,
Հայու սիրտ անոր վրան չաաքնայ։

Այլևս կը դադրի իմ լեզուս վարպան,
Դու զիս մի մոռնար մինչև յաւիտեան.
Ցիշէ՛, միշտ յիշէ քո այժմեան ընկեր,
Որ այս անբնակ դաշտի մէջ թողիր։

Աստց և լռեց, երկու աչերից
Ցօղեցին արցունք լինել ցօղ երկնի.
Կաթիլ մը ջուր միայն առաւ իր բերան,
Եւ ննջեց իր քուն յաւիտենական։

ՎԱՋԳԷՆ

ՊԱՐԵՐԳ

Պէօշ պաղրկեան եկեր ի,
Մեր կալատեղն լցեր ի.
Թօփով պատմա սլեր եր ի,
Էն ալ եարոջ լաեղ ի։

Խօրօտ եազմա սլեր եր ի,
Ատլաս չապիկ սլեր եր ի.
Զարպաֆ իչլիկ սլեր եր ի,
Կուժնի գըպուն սլեր եր ի.

Ոսկի քեամար սլեր եր ի,
Ծաղկուն տալմայ սլեր եր ի.
Նխչուն թաթեր սլեր եր ի,
Դեղին թայլիկ սլեր եր ի,
Կարմիր սօլեր սլեր եր ի,
Ամաս մատնիկ սլեր եր ի։

ՏԷՐՏԷՐ

Երէկ մեր տէրտէր ձիկ ասաց,
Ի՞նչ խօրօտիկ աչքեր մ՛ունիս.
Ես էլ մեր տէրտրոջն ասեցի,
Տեղդիր մը տուր գընեմ իմնէ։

Երէկ մեր տէրտէր ձիկ ասաց,
Ի՞նչ խօրօտիկ ծամեր մ՛ունես.
Ես էլ մեր տէրտրոջն ասեցի,
Սանտրիկ մը տուր գարնեմ իմնէ։

— Ի՛նչ կըլորիկ գըլէօխ մ՛ունես,
— Եագմէ մը բեր խակեմ իմնէ.
— Ի՛նչ պատըակիկ բերան մ՛ունիս,
— Տանձիկ մը տուր գընեմ իմնէ.

— Ի՛նչ բարակեկ մէջքիկ մ՛ունես,
— Քամար մը բեր կապեմ քնէ։
— Ի՛նչ մարմարէ ջանեկ մ՛ունես,
— Շապիկ մը բեր խայնեմ քնէ։
— Ի՛նչ չինարի պաժիկ մ՛ունես,
— Դալմէ մը բեր խայնեմ քնէ։
— Ի՛նչ չոզչողուն մատներ մ՛ունես,
— Մատնիկ մը բեր ընդուցեմ քնէ
— Ի՛նչ խօրօտիկ բրլակ մ՛ունես,
— Բլազիկ մը բեր ընդուցեմ քնէ։
— Ի՛նչ բարակեկ ձեռներ մ՛ունես,
— Թաթպան մը բեր մատուցեմ քնէ։
— Ի՛նչ խօրօտիկ ոտներ մ՛ունես,
— Սօլիկ մը բեր խայնեմ քնէ։

Երէկ մեր տէրտէր ձիկ ասաց,
Ի՛նչ կարմըրիկ երես մ՛ունես,
Ես էլ մեր տէրտրոջն ասեցի,
— Բևրանըզ բեր քրանեմ քնէ։

Պ Ա Ր Ե Ր Գ

Շուն եկաւ չակալ բերան, մատնանք էն վոզի էր
Ջախաւել դրան եռև » » »
Էն մկները, պատի տակները » » »
Էն լուսին, պանցրիկ լուսին » » »
Էն մոմեր, կանաչ մոմեր » »
Էն մոմեր, դեղին մոմեր »
Էն դուրէք, կանաչ դուրէք մատնանք էն վոզի էր
Էն թոնիր, չէկ—բոց թոնիր » » »
Էն թոնիր, տես—մուխ թոնիր, » » »
Էն բերդեր պանցրիկ բերդեր » » »

— Շուն էկաւ չակալ բերան՝ գեղի գլխէն էր,
— Ջախաւել դրան եռև՝ գղրի կընիկն էր,
— Էն մկներ պատի տակներ՝ գղրի ճըժերն են,
— Էն լուսին, պանցրիկ լուսին՝ գեղի էրէցն էր,
— Էն մոմեր, կանաչ մոմեր՝ գեղի աղջիկներն են,
— Էն մոմեր, դեղին մոմեր՝ գեղի հարսներն են,
— Էն դուրէք, կանաչ դուէք՝ հայ ըրհէլներն են,
— Էն թոնիր, չէկ—բոց թոնիր՝ գեղի կընիկն էր,
— Էն թոնիր, տես-մուխ թոնիր՝ գեղի պառաւն էր,
— Էն բերդեր, պանցրիկ բերդեր՝ գեղի դէղերն են

Ա. Պ Ր Ի Կ Ի Ն Ց Օ Ն

Շատուռ սարեր անուշ ղօշան,
Մէջի քրդեր ղըմէն գաղան։
Էն օր վեր մի սև պերեցին,
Որ քուրա ասքար սահմընեցին։

Շատուռ կեալին չատ կաքաւ կէր,
Քուրդն հայու չան կը մրկէր։
Խէր չը տեսնէր այն Օսմանլուն,
Որ քրդու ձեռ չդնէր այնալուն։

Շատխուռ սարեր բացվի աւսուն,
Էնոր մէջի հայեր թօսուն.
Ա՛խ, ի՛նչ անեմ որ ձեռ դատարկ,
Զուլմի ձեռ ինկեր են կըրակ։

Շատխուռ սարի ջրերն ի պաղ,
Շատխուռ հայեր արընճապաղ.
Սօնա պաժնով չինարի պէս,
Մահ կուլ աւին Աբէլի պէս։

Թաղի գըլօխ ախպիւր չըռայ,
Տաք տաք արուն մէջ կը եռայ.
Լըցէք չուչէք էտա չարպաթ,
Զորս նահատակ պիրեն արդար։

Շատխուռ սարեր չէր հալե ձիւն,
Արուն արցունք Շատախ լեցուն.
Զորիք բարձին կաթար կաթար,
Զուռ Ըստամպօլ ճամբէք թաթար։

Ագիգ, Ապրիկ ջուխա մ'ընկերով,
Ծանրիկ քընեն կեօ ծառի խավ.
Վարդեր բացվան ինոնց չուռ ծոց,
Շատուց հովցաւ իրենց պարկ խոց։

Եղերովայ ընցաւ քարվան,
Շատխուռ հայեր էկած են վան.
Վանայ խօջէն թող քէֆ անի,
Էն գանկըտից չէր բռաղի։

Աղթամարա կաթուղիկոս,
Թող նա քընի անուն ախոռս,
Պարէմ ինոր արէք ակա,
Թէ ավերաւ Մոկս ու Շատախ։

Աղթամարա կղզին կըռէմ,
Թէ որ կըղէրմ էլնէր մեր մէջ.
Եա կը պերէր հայուն ֆարման,
Եա մեր ցաւին կանէր դարման։

ՎԱՉԳԷՆ

Ա Ն Է Ծ Ք

Օխնեմ, օխնեմ, օղօճկես,
Ոանէդը վեր պօղօճ կես.
Երթաս քաղաք աղ առնես,
Զէթիկ, մէթիկ ցաւ առնես։

Տայտ փոխին թանձր թաղիս,
Վիրէն պառկես քառասուն ամիս.
Ռեանց կալէ մաղ կալկըլվես,
Ռեանց փոկէ մաղ ձարձրվիս։

Նռան խատ ուտես ամիս մը,
Շաքրի կատր չիւմ խինկ ամիս.
Վանայ ծով չէթ էլնի,
Զայիր չիման ճրագ էլնի.
Մաճիթ մատրասէն պատրոյգ էլնի,
Գիլեր ցերէկ հա վասվի,
Ծոկիւտ թողուքիւն չէլնի։

ԿՈԼԷ

Կոլէն էլի կերթայ կանգալ,
Կոլէ հօյնար, հօյնար, հօյնար·
Ծամերն եաև խանկեալ, խանկեալ,
Կոլէ հօյնար, հօյնար, հօյնար։

Կոլէն կուգայ պէրատեղէն,
Ուր կը վոխի չօրօրալէն·
Կոլէն էլի կերթայ խաչեր,
Ճռվըռուն սոլէր ոտներ։

Կոլէ էլի նստի կեաւին,
Կիրիչկա վեր ամկու տարին·
Կոլէն նստե վեր պանկր քարին,
Զղզըղալէն կուկէր քամին·
Կոլէն նստէ դէմ աղօթքան,
Նըշանց կուտայ ջուխտ մ'չամամ։

ՕՐՕՐ

Քե ըլնեմ ոսկի ուրուրոց,
Վէրէդ քաշիմ մարգրտէ ծածկոց·
Շուտով քնես, բարով զարթնես,
Իմ վարդ որդի խոզխուտ եմ ես։

Տա՛ր, տա՛ր որդի իմ, տա՛ր տա՛ր,
Քեռ մէրիկն էր պրինտար։

Էրկնուց անանկ քեռ պնաին թել,
Վէրու ոչխար քե աթաղ տէր·
Վարդիս երես չուշան ծաղկեր,
Քեամին ուրուրոցդ օրօրէր։

Օրօր որդի իմ, տա՛ր տա՛ր,
Քեռ մէրիկն էր պրինտար։

Ձեռաց խինի վէրէն պառկի,
Մեր հայրենեաց սիւգը ծըծի·
Աստուած քեզի զրկէր չախէր,
Ձիւմ քեռ մէրիկն խանք առնէր։

Օրօր որդի իմ, տա՛ր տա՛ր, ևլն·

Քե չատ օրեր տա՛ր տա՛ր ասեմ,
Բացախ իմ վարդ քե մեռնիմ·
Բահն ու փէտատ առնես տանիս,
Սփինիք թըփեր բորես ցանես։

Օրո՛ր իմ վարդ տա՛ր տա՛ր, ևլն·

Դ՛ար տա՛ր, իմ վարդս ու օրօր,
Աստուած քե տայ ուրախ օր·
Առնես կիւթան ու խարօր,
Ամց վաստըկիս քեռ խօր մօր։

Օրո՛ր ասեմ քե տա՛ր տա՛ր, ևլն·

Սուր գերըզնաին ու մանգազ,
Դիր վեր թեվիդ գնա՛ գաշտ·

Կարիճ հէօնած ցորեն քաղ,
Պէքօլ արա՛ դու իմ վարդ։

Օրօ՛ր ասեմ քե տա՛ր տա՛ր, ալն։

Օրան կըրի սէլերով,
Բե լից կալ խաղ ասելով։
Ցորեն ծեթի խով տանով,
Խայտն արա՛, ի՛չ արա։

Օրօ՛ր ասեմ քե տա՛ր տա՛ր, ալն։

Ա՛խ, երբ կէլնի պըրինտար,
Քեռ մէրն, ուտի վարդի պար։
Օրօ՛ր իմ վարդ, ի՛չ նանիկ,
Պրինտարէ քեռ մէրիկ։

Օրօ՛ր ասեմ քե տա՛ր տա՛ր, ալն։

Ա՛խ, երբ կէլնի կըտրիճնաս,
Ծիլ ծալէ ծալ փայլկըտաս։
Եւ ինորից թէօլդ առնես,
Որ մեր եզին աւերես։

Օրօ՛ր ասեմ քե տա՛ր տա՛ր, ալն։

Որ նորատունկն մեր խըլես,
Որ պինիից մեզ զրկես։
Որ բարութինից մեզ լօպկես,
Որ սէլ սանին կոտրտես։

Օրօ՛ր որդի իմ տա՛ր տա՛ր։

Որ մեր պիւթան լեխըռատես,
Որ մեր խարօրըն առես։

Որ մեր դաչտեր օղօղես,
Որ մեր տուն տեղ կործանես։

Օրօ՛ր որդի իմ տա՛ր տա՛ր, ալն։

Որ խօրօխպէրդ ըսպաննես,
Որ մեր երկիրն էլ ճռփես։
Է՛հ իսոնք, երբ որ տեսնամ,
Մեղրէն անուշ քե կաթ տամ։

Օրօ՛ր որդի իմ տա՛ր տա՛ր, ալն։

Հայոց հրեչտակ, սիրուն վարդ,
Օրօր կասեմ քե՛ ղըվարթ,
Քե՛ չատ օրօր ու նանիկ,
Երջանիկ է քեռ մէրիկ։

ՀՈՎԻ

Մէ էրկնկիկ հովիւ մը կէր,
Միրզա ադի տուն կը մընէր։
Ինոր գառներ էն կարածէր,
Զուտ իրիկուն տարեր չուռ տէր։

Վիրէն ունէր մէկ կեապանակ,
Ձեռն էլ ունէր կօռ մը մէնակ։
Որը տուներ, համ ուր տանիս,
Համ կեապանակ, համ ուր տաղիս։

Մխրճա աղէն էլաւ գնաց,
իր ճըժերաց ըսկնայ ասաց·
Օրն ի չաբաթ, լոս կիրակի,
վաղը ժամու պատարագի

Տօ աղա, Թումաս, տօ տղա Մինաս,
Գացէք մեր հովիւ պերէք տաս·
Մահ մեռնելը խանին ի,
Տարէք ժամը թող մտնի:

Հովիւ բերին կեսպանակով,
Ձեռը բռնած էրկէն կօտով·
ժամ որ մտաւ, տեսաւ մարգեր,
Ավա՛ր, սա ինչ չանավարներ:

Մինաոն ասաց ձէն չըհանես,
Խուտա խըլիս էստեղ կայնիս·
Հովիւ կայնած վեր կիրիչկէր,
Տերտէր սեղան պատարագէր:

Մէկ էլ տեսաւ «ողջոյն»ի գեսպ,
Մարդեր ղըմէն խառվան իրար·
Համան կօռը թևից քաշեց,
Մէմէկին մէկ փէտ չօմըխեց:

Ասաց տեսէք, ինչ որ էլաւ,
Պանցր կայնած մարդուց բռթաւ·
Իր հովւական պանճր ձէնից,
Ձըմէնի աչք տեղ ուր դարճուց:

Տօ տիւք թողէք ես իմ կօտով,
Ֆաշիմ պերիմ ցածըր չուտով·
Շուտ մը կապենք ինոր թևէն,
Ես կը տանիմ մօտ իմ աղէն,
Աղէն կուգայ ինոր հախէն:

Ձլախ, կապի թալի հաւչին,
Շնեբն ուտեն միսը կաչին·
Մարդեր որ լըսան էտա բան,
Որ աւօթ էր իրենց ժամտան:

Ձըմէն մէկէն խիստ բարկացան,
Որը լեանգով, որը կօտով·
Որը սէլով, որ չալափով,
Տմսուկ ուին, տիւս խանեցին,
կեսպանակն էլ չուտ առեցին:

Ա Ս Ք Ը Վ Ն Ե Ր

Կաքըվներ, կաքըվներ,
Ելէք երթանք ճաղցըններ·
Ճաղցի առուն ջուր կուկէր,
Ախջիկ լաճուն տիւր կուկէր·
Ճաղցի առուն կանաչ էր,
Ախջիկ լաճուն ճանաչ էր:

Ճաղցի տանիսը վոս էր,
Ֆեար կը թալիմ կը սոսէր·
Սեռիկն իլին եղ էր,
Իմ եար թուխ աչք, թուխ պեխէր:

Ճաղցի առուն աւազ էր,
Ախջիկ լաճուն կավազ էր·
Իմ ծոցի կուրթին թուճ էր,
Իմ եարոջ երես պուճ էր·

Սարերն իլլին ասեղ էր,
Իմ եար կէօ նոր խասեր էր։

Սարերն իլլին ալաչ էր,
Իմ եար ալաչ քալաչ էր։
Դարի տակի պըտըտուր,
Իմ եար քեանց քեան խավտուն։

Կաքըվներ, կաքըվներ,
Շիլայ չապիկ ծալ արէք։
Կարմիր երես խալ արէք,
Ձեր պագ ծի խալալ արէք։

Պատճի տակէն խոտ կուկէր,
Տեղն խակիցի վոնթ կուկէր։
Կաքըվներ, կաքըվներ,
Ելէք երթանք ճաղցներ։

ՍԻՐՈՑ ԵՐԳ

Մտեր ես իգին խաղող կը քաղես,
Շամամ ծծւերով չաքար կը մաղես։
Ալմաստ խէննջարով սրտիկս կը տաղես,
Աչքով ունքերով սիւ ծի կը մաշես։
Սրե՛, եար սրե՛, խռով մի մնա,
Սատըվորիս մալ ծիկ քե չի մնա։

Ելեր ես իգին աւուղ ջուր կուկայ,
Քեաֆուր վարդ բացւի անուշ խոտ կուկայ։
Իմ խէրանց իգին վարդ խազար թավուր
Մէջէն վարդերաց իմ վարդն ի քեաֆուր,
Շահ պլպիւլն էջաւ վեր իմ վարդին խուր։

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм ССР
Ա. Մեսրոպի անվան

ԵՐԳԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ

Ա։	Երես
Աղնիւ ընկեր մեռանում եմ	17
Ազատ Աստուած այն օրից	248
Ազիզ մէրիկ քեզի թողի	549
Ազատութեան քաջ պինեորը պատանին	349
Աչխոյժ նաւատին	24
Ալ թող դադրին արցունք հայուն աչերէն	206
Այիշան (կենսագրական)	181
Ալան, ալան յաղթութիւնս առիր իմ ձեռքէն	510
Ալ բաւ է հայ եղբարք (վազգէն)	533
Ամ վասպուրական տխուր Հայաստան	335
Ածու մ'եմ ցանի, սատա նարգիզ ի	167
Ակռաի մեծ կարասին	25
Ակնապիշ անձայն խորհուրդ ճակատիդ	475
Ականջ դրէք իմ խօսքերուն	572
Ահա սուրհանդակի սայլակը	22
Ահա աղաւնին Նոյեան տապանին	33
Ահա հրեշտակ ոսկեփեթուր	194
Ահա եղբարք ինչպէս պատմեմ	198
Ահա բաժակ ուրախութեան	204
Ահա ծագեց կարմիր արև	221
Ահա մօտեցան մահուան ժամերս	244
Ահա մայրիկ ահա կերթամ	410
Ահա եկաւ լուսինն արծաթ	439
Աղօթարանը բացուեցաւ	17
Աղջիկ նազերով քալաչ ծամերով	139
Աղջկերք պար բռնեցէք	275
Աղէտն եկաւ տափիկ մափիկ	552
Ամեն տեղ ախրած (Զայն տուրով ծովակ)	20
	38

	երես
Ամպ դէպի ո՞ւր այդքան	147
Այն ինչ ազգ է	25
Այն որ ծանօթ է պատմութեան ազգին	170
Այն սգալի սև սև նոճեաց հաւէն	378
Այն քալ մարդու չապիկն է	476
Այս օր ծնունդն ի Մարիամայ	550
Անհոգ ես չես գիտեր	23
Անուշ քնակ աչերն առեր	29
Անի քաղաք նստեր կուլայ	34
Անմահ անուշ դու գինի	161
Անձրևն էկաւ չողալէն	311
Աչնան չորցած թփերու հետ	484
Ապառաժուտ լերան մը կող	183
Առիւծի պէս գետին ինկած (վազգէն)	65
Առ ընկալ ի գիրկդ մայրդ	193
Առտուն կանուխ թէ ելնենք	202
Առ քեզ, ով բոյնդ չքնաղ վարագ	205
Առաւօտեան քաղցր և անուշ հովերը	223
Ատուածծ կը սիրէք ինծի մօտ եկէք	199
Ատուածծ վկայ որ մենք կը յաղթէինք	222
Արիք հայկազունք յառաջ ընթանանք	18
Արկածք հայոց ժամանակին	30
Արևելք առաջին	86
Արի իմ սոխակ, թող պարտէզ մերին	32
Արիք ընկերք քաջակորով	198
Արի Ատուածծ հարցն մերոց	347
Արև արև դուրս ելիր	465
Աւերակաց երկրի մը մէջ	196
Աւարայրի մէջ խելար և մոլար	202
Աւաղ չկայ մէկ մարդ արի	431
Ափսոս քեզ հայոց խեղճուկ ժողովուրդ	250

Բ.

Բարի գեղեցիկ առաքինի ընկերը	31
Բաժակներ առնունք եղբարք	36

	երես
Բացան դրունք գարնանային	208
Բաւական է մեզ մտաց ղբաղմունքն	314
Բամբ որոտան բարձուստ	26
Բերդից դուրս ելայ Ալակէօզ	225
Բոլոր աշխարհում լսեց քո անուն	253

Գ.

	37
Գարունն է եկել գեղեցկատեսիլ	175
Գարունն էր կենացս դեռ	125
Գամառ—Քաթիպա (կենսագրական)	369
Գըլգըլալով ջուրն է իջնում	37
Գողթան մանկտիք ահա ձեզ	209
Գոհ ենք քեզնից ով բարերար	316
Գրօղ տանի քիւրդ Աբօյին	

Դ.

	436
Դատարանի դաշտում	357
Դեռ նոր հայրենիք	38
Դու զով խնդրես մայր իմ անուշ	45
Դու խելօք հաշւով	109
Դու վտիտկաթև մանկիկ գեփիւռ	577
Դու ով ցանկալի վան իմ հայրենիք (վազգէն)	

Ե.

	40
Եթէ դժգոյն մահու հրեշտակ	16
Ելիք երթանք Զուխա կեատուկ (վազգէն)	214
Ելէք եղբարք բոլորուելու	553
Ելէք տեսէք վոճը ի կերե մեր ուլ	127
Եկաւ ժամանակ բարեկամ բախտին	217
Եկել է գարուն սոխակը սիրուն	367
Եկէք մխաքանինք լուր մը լսելու	265
Եղբարք այժից ընկած	

	երես
Ես Մշեցի ճամբորդ եմ	43
Ես հայրենեաց նահատակ	219
Ես խօ լեզուով չաա բան ըրի	251
Ես քեզ տեսի բանտում խաչած	264
Ես լսեցի մի անուշ ձայն	447
Երբ ալեկոծ ծովու վրայ	107
Երբ ալ չկայ ինձ խաղաղ օր (վազդէն)	317
Երբ որ ապգին գահը կորաւ	158
Երբ որ-բացւին դռներն յուսոյ	69
Երբ որ ես մեծցայ ազամարդ դարձայ	385
Երբ որ լինի դարնանամուտ նոր գարուն	468
Երբ որ հողից մարդ դարձայ	210
Երեկոյեան երբ որ մի հով	187
Երկիր քաջանց քանի սուք աչեր	212
Երկրի մը մէջ երբ ամէն ինչ	213
Երբ կը լսեմ հայաստանիս անուն	215
Երնէկ թէ այս նոր տարին	226
Երեկոյ է բոցավառ հորիզոն	394
Երէկ մեր աէրատէր ձիկ ասաց	581

Զ.

Զարթիր որդեակ ուշ ըեր վեր կաց	41
Զարթիր զարթիր հերիք	134
Զարթիր մանուկ իմ նազելի	267
Զարկ զարկ այ վարպետ	548
Զէ յիշուննի ենք մենք քաջազունք	256

Է.

Է ճիաք բարով Աստուած և արև	145
Էն արծիւն էր թռաւ գնաց	376
Էս հակոտնեայ աշխարհում	47
Էր հեռանաս քո մայրենի աշխարհից	172

Ը.

	երես
Ընցաւ տարին հայոցս էլ բախտն	76
Ընդ աստեղօք օտար ափանց	78
Ընկալ դու զիս Հայաստան	268
Ընկերք յաղթութեան ժամն է	269

Թ.

Թագաւորի մէր դուրս էլի	554
Թամամ աշխարքումս չկայ մին	427
Թէ հայրենեաց պատկադիր	44
Թէ իմս հայրենեաց քնար սքաւոր	131
Թէպէտ վտար քաղքէ քաղաք	173
Թէ իմ ալևոր հէրքը սևնային	270
Թէ տային ինձի	359
Թէ զիս կանչեն օտարաց	405
Թէ Թև լինէր ինձ թռչիլ կրնայի	444
Թէ ի հրացան դրօշ մահաբեր	447
Թէ Թև ունէի, ոհ կը թռչէի	479
Թիւի բօրան մուԹ գիշերին	389
Թմրած հայը զարթեցաւ	411
Թշուառ հայրենիք արիւնոտ երկիր	435
Թուրքը հասաւ ելնեմ երթամ	61
Թող կորնչին տաճիկները	95
Թողէք զիս անէծք ոճիրք մշտաւև	111
Թող սխալէր Թող որ իմ սիրտ	230
Թող բարձրացնեն ճռինչ աղաղակ	271
Թող փչէ քամին պազ պազ երեսին	272
Թող պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում	392

Ժ.

Ժամ է հայեր արիք ձեր բախտն ողջունել	165

Ի ·

	էջ
Ի վիւռ ձայնից բնութեան չքեղ	46
Ի գէն հայեր իսուր և ի հրացան	49
Ի գէն ի վրէժ գոռան հայեր	157
Ի դուռն հոգմոց արտասահման	233
Ի քեզ անկայ Հայաստան	273
Իմ հայրենիք պիս կը կանչէ	50
Իմ հայրենեաց հոգի վարդան	52
Իմ սիրելի զաւակունքս	56
Իմ հայրենիք թշւառ անտէր	103
Իմ գլխու ֆութէն կիտամ	228
Ինչու ապչած են լճակ	53
Ինձ համար չէ գարնան գալը	62
Ինչու ես լալիս որպէս մուրացկան	189
Ինձ համար չէ գերեզման	302
Ինկեայ թաղէ թաղ աղչէ մը ճարեցի	319
Ինձ մի տանջել մի չարչարել սիրական	360
Ինձ տեղ տուէք Սիփան սարեր	381
Ինչ անենք, ամօթ այսպէս ասողին	423
Իչխք զօրթունք և ի ձեր թիւս	450
Իսլամական գոռ վաչաերը կատաղի	242
Իսկզբանէ բըռւաւ լուսին	555

Լ ·

	էջ
Լուսնակն անուշ հովն անուշ	62
Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ	263
Լուսնակ գիշեր մ'եր աստեղք բիւրաւոր	401
Լուսնկան կամար կամար	382
Լուրը հնչեց ի հայաստանի	452
Լունը ճանճ, ոճիլն էր անիծ	576
Լռեց ամպերը եկան ծածկեցին	234
Լռէ թռչնիկ սիրահար	321
Լո, լո, լո, Սիփանց սէգ սարին վրայ	546

Խ ·

	էջ
Խաղաղ գաչափ որդիք լեռները ելնենք	257
Խաւարը բանտում տանջանքների մէջ	480
Խաց գարընցան մաքուց թացան	567
Խելքս ու միտքս արիւնաշաղաղ	454
Խլաթ գաւառ	422
Խղճայ ով Աստուած հայերիս խղճայ	477
Խորէն եպիսկոպոս Նար—Պէյ (կենսագրական)	341
Խրիմեան Հայրիկ (կենսագրական)	299

Ծ ·

	էջ
Ծաղկաւէտ գաչափ վրայ	455
Ծագեց արև ազատութեան	537
Ծըծվերս եամրուզ էր	185
Ծիծեռնակ ծիծեռնակ	99
Ծխում է խունկը աւեր տաճարում	383
Ծմակներում քաղցած գէլեր	307
Ծուխը ամպի պէս կելլէր գէպի վեր	126
Ծովի գոհար հեզ փրփուր	424

Կ ·

	էջ
Կապոյտ երկնքում աստղերն են փայլում	282
Կար ժամանակ որ և հայեր	456
Կաց դու վայր մի բարեկամ	457
Կարկուտ աեղաց Ստանասօրայ դաչտումը	484
Կաթըվիներ կաթըվիներ	591
Կեանք մը ունէի մահևան ենթակայ	474
Կը հաւատամ որ աշխարհի վրայ	120
Կոչէն էլի կերթայ կանգալ	586
Կուսանք հայոց նոր չուշան	283
Կռունկ ուսաի կըգաս	140

	էջ
Կռիւ կէր Վարդենիս	426
Կռւեցէք տղերք կռւեցէք քաջ քաջ	531
Կարիճ ախպէր պանդուխտ ախպէր	396
Կրամքամբուլին էն օղին է	288
Կօտ ու կէս կօրեկ ունիմ ցանելու համար	557

Հ.

Հայր մեր երկնաւոր	64
Հայրենիք սրբազան	84
Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ	108
Հայկ ու Լևոնին մոռանանք եղբարք	135
Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր	153
Հայ ապրինք եղբարք	162
Հայկազունք պար բռնենք	177
Հայկ ու Տիգրանին յիշենք	191
Հայը բանտէն չվախնար	255
Հազիւ լրացաւ քսան մէկ տարիս	290
Հապա քաջազունք հայոց գաւակունք	290
Հայրիկ հայրիկ քո հայրենիք	295
Հայաստանի աւերակներ էր ամայի մնացիք	356
Հայ չէ՞ք մի, մի թուլնաք	362
Հազար բարով հպարտ սարեր	370
Հայթուկ մի վախնար քրդի գնդակից	420
Հայրենիքդ մոռցիր կըսեն օտարներ	425
Հայ մարդ հայ ազգ ասա արդեօք	429
Հայրենիքէն ողբի ձայներ կը լսւին	459
Հայաստան երկիր դրախտավայր	460
Հայրիկ հայրիկ քեզ աւետիք	461
Հայ պատանի գանգրահեր	463
Հայքս Հայաստանում խլամին առջև	466
Հայրենեաց էր անձնէէր պինւոր	485
Հայ ազգութեան աղատութիւն	486
Հայրիկ ասաց դուստրը հօրը	487
Հայեաց ի վեր ուղեւոր	491

	էջ
Հանգիստ իմ անուշ	538
Հերիք որդեակք այսքան տարաբայ	93
Հեռու եմ քեզմէ օտար երկրի մէջ	154
Հեռացել եմ իմ հայրենի աշխարհից	294
Հերիք ալ հայեր այսչափ լռութիւն	355
Հեռու ձեղանից հայուհիներ	464
Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ	532
Հիմի ի՞նչ լռենք եղբարք հիմի ի՞նչ	59
Հիմի էլ չուտենք	67
Հիմի էլ խօսենք	292
Հուր բարկութեան	102

Զ.

Զայնը հնչեց էրզրումի հայոց լեռներէն	150
Զեռներս կապած ոտներս չղթայ	234
Զէթ իմ ածել ականջներուդ	159
Զիւները հատ հատ երկնքէն վար կը թափին	534

Ճ.

Ճամբէս արիւնի հետք թողեր կերթայ	395

Մ.

Մայր Արաքսի ափերով	81
Մայրենի լեզու մայրենի բարբառ	96
Մայր իմ մեր գոռ ճակատ կազմ կայ	100
Մասիսի ճակտին ամպրոպ պատռեցաւ	113
Մարտըն կուգար ծաղիկներով	323
Մայրս մանէ մանածս	337
Մանկութեան օրեր երազի նման	365
Մայիս ամսոյ դու գեփիւռիկ	499
Մեր սիրուն հայրենեաց	85

	էրես
Մեր հայրենիք թշուառ անտէր	129
Մեր լեզո ազգը ուսում չունի	184
Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի	236
Մեր նախնիքը ազգի համար	237
Մենք այ աղուոր աղջիկ եկեր ենք ձերը	338
Մեղի յիշեց հայոց ազգը	494
Մեր քաջ հայոց զօրութեան	348
Մեղի մոռցաւ հայոց ազգը	363
Մեր փրկութիւն մօտ է հայեր	433
Մեր հայրենեաց փափուկ հողեր	493
Մեռիք ալ մեռիք անգութ անողոք	497
Մէ պըսաբկիկ խայիկ մը կէր	558
Մէ երկնկէկ հովիւ մը կէր	589
Մինչ բնութիւնն էր զուարթ	57
Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն	137
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր	138
Միքայէլ Նալբանդեան (կենսագրական)	247
Միութեան թերութիւնը	361
Մինչ երբ մեր վրայ բռնանայ թուրքը (վազգէն)	496
Մկրտիչ Պէշիկթաշլեան (կենսագրական)	471
Մնասցես բարեաւ սէր իմ սէր	364
Մնաք բարեաւ սուր և հրացան	478
Մնաս բարեաւ վասպուրական	498
Մնաս բարեաւ քաղցր մայր իմ	535
Մուխ է գիշերս ինչպէս սիրտս ալ	472
Մտաւ արև երջանկութեանս	75
Մտեր ես իգին խաղող կը քաղես	592

Ց.

Ցառաջ հայեր հայրենիքի	118
Ցաղատն իվեր իմ՝ասիս	501
Ցուսահատիլ մեղք է ընկեր	438

Ն.

	էրես
Նատեր եմ ազորմագին	542
Նաւով ազիամարայ երանք	568

Շ.

Շատխուռ սարեր (վազգէն)	583
Շնորհակալութիւն վեհափառ սուլթան	354
Շուրջիս տափակ ցամքած	98
Շուն եկաւ չակալ բերան	582

Ո.

Ոլոր մոլոր կուրն է գալիս	115
Ոհ ինչ անուշ և ինչպէս զով	72
Ողջոյն աւէք իմ հայրենեաց	104
Ողջոյն ընդ քեզ Հայաստան	114
Ողբեր, կոծեր գառն հառաչանք	505
Ոնց գաս իմ լուսնակ	177
Ոչ փող գարկինք	92
Ոչ եղբարք ոչ օտարէն չկայ յոյս	344
Ոսկէ գագաթը բանձրիկ Նէմրութայ	309
Ոսկեճըղիկ գեղացկատիկ	420
Ոստանայ պալաք սարեր	560
Ով մեծասքանչ դու լեզու	70
Ով ես որ գաս առանձին	79
Ով ծիծեռնակ վարանած թռչնիկ	80
Ով իր հարազատ եղբօրն է մատնում (վազգէն)	105
Ով դու բարեկամ	122
Ով քաջազունք ձեզ հրաւէր	164
Ով հայկազունք ով գիւցազունք	238
Ով դու նժդեհ ծիծեռն անմեղ	239
Ով կեբակրեց իս տալով կաթ անուշ	277

	Երես
Ով հայրենիք երբ կը տեսնեմ քեզի լաւ	331
Ով է հայրը միթէ նա է (Գ. Բ.)	351
Ով է հայը միթէ նա է (Ա. Ց.)	442
Ով հայը մեր հայը որ ես յերկինս	503
Ով պատանիք աւերց ներքև	504
Ով սուրբ վայրեր անհոգ ժամեր	508
Ով տէր Աստուած լուր մեր բարբառ	509
Ով է որ գայ մեզ ճեղքած օդն	512
Ով կենդանութիւն է կամենում	514
Որն է աշխարհ Հայաստան	507
Ուղիղ գիւնանից ես տուն եմ գառնում	156
Ուշ գիշերին ծուիլը է խաղաղ	398
Ուր գնաս փութով արծիւդ հայրենեաց	511

Զ.

Զես տեսներ դու ոտքիդ գարկած	434
Զիք, գնդակ վառօթ փամփուշտս հատաւ	148

Պ.

Պետրոս Դուրեան (կենսագրական)	373
Պզտիկ տղայ չեմ օրօրիլ	53
Պօշ պագըրկան իկեր ի	580

Ջ.

Ջան վիճակ ջան	561

Ռ.

Ռուսական պետութի ն հայեր ըսաւ	324

Ս.

	Երես
Սար ու ձոր լինած	259
Սարի լանջն է մահճակալ	281
Սասուն վազեց արեան գետեր	325
Սա տխուր վիճակ տարաբաղդ ազգիս	467
Սարի ուսին պլեր ա	575
Սև սարեկէ մը գուլալ գուլալ	570
Սիրէ հայը թէ ըլլայ	55
Սիրահեղիկ սիրուն աղջիկ	174
Սիրական սիրական	515
Սիրուն թռչնակ	544
Սուրբ տեղերով լուկ ծարաւած	375
Սուրբ օրօրանով գաւակիս կերթամ	481
Սոխակ ինչու դադրեցար	539
Սևորակ աչեր, աչեր սևորակ	74
Սօլեր խակի էրթանք ժամ	563

Վ.

Վարդի ջրով եար մազերդ	377
Վարդան մեր քաջ զօրաւար	517
Վարդն ի բացւեւ վանայ քաղքի	563
Վախ լէ, լէ, լէ, առաւտըման	571
Վերջին վարդ	116
Վեհ ազատութեան սէրը է մենակ	390
Վերցուր գլուխդ ով հայի որդի	516
Վիշերնիս ճկած սրտով խոնարհինք	326

Տ.

Տանիքն էլնիմ ինչ անիմ	350
Տարևմուտի երեկոյին	392
Տալ օրիկգի կարիճ եմ խորթ	407

	Երես
Տարի մը ալ անցաւ	521
Տեսնեմ արդեօք կեանքիս մէջ (վազգէն)	520
Տէր ողորմեայ հայոց ազգին	241
Տէսէք ազաւնին Նոյեան տապանին	397
Տէր կեցո, դու ղհայս	518
Տէր իմ Աստուած քեզ կաղաչեմ	523
Տիգրան Տէրօեան (վազգէն կենսագրական)	9
Տխրալի օր մը էր թէև գարնանի	305
Տղայք ժողովին հեռուէն ու մօտէն	73
Տուր ձեռքդ եղբար	63
Տուն մը եմ չինե գետի պէրան	564

Ր.

«Րաֆֆի» Մելիք Ցակոբեան (կենսագրական)	417

Ց.

Ցամաք յարդի վրայ պառկած	279
Ցանած ցրւած մաղերդ առջև	541
Ցնծայ Հայաստան, ցնծայ ուրախ լեր	441
Ցուրաը փչեց ձմեռ սաստիկ	142
Ցուրաը փչեց հովը հիմա	483

Փ.

Փառք Աստուծոյ հայի արիւն ալ	166
Փոխանակ քաղցր օրօրներու հայրենիք	387

Ք.

Քաղցր հայրենեաց ազատութեանը համար	117
Քեզ չեմ մոռնար սիրուն վարդ (վազգէն)	318
Քեզ սպասող չ[illegible]ացը	330

	Երես
Քընէ քընէ իմ հայրենիք	327
Քընէ քընէ սիրուն որդի	523
Քե դընեմ ոսկի ուրուրոց	586
Քնիր զաւակս քնիր որդեակս	527
Քուն եղիր պալաս աչքերդ խուփ արա	151
Քու գալուստ բարի արծիւդ հայրենեաց	528
Քու փափաքով վառուում եմ ես	529
Քուֆ քուֆ դարա դարա	565

Օ.

Օխնեմ օխնեմ օղօճկես	585
Օն փութացէք հասեալ է ժամ	66
Օտար ափունք ցրւած խափիւռս	97
Օտար աստեղց տակ կը հեծէ պանդուխտը	118
Օտար երկիր օտար պանդուխտ	279
Օտարուհին լինճ ասաց հէր ես լալիս	333
Օտար երկիր թափառած	536
Օր գարնանի օր թարմ և սիրուն	419
Օրհնեալ է միշտ և անմոռաց	440